New York Times-ի #1 բեսթսելեր հեղինակ

ՆԻԿՈԼԱՍ ՍՊԱՐՔՍ

ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

1915.info

- Իսկ դո՞ւ, երբևէ հիշե՞լ ես մեր մասին:
- Չեմ էլ մոռացել երբեք:

ՆԻԿՈԼԱՍ ՍՓԱՐԲՍ

ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

ԵՐ

ՀՏԴ 821.111(73)-31 Սփարքս
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44
Ս 988

Անգլերենից թարգմանեց Տաթևիկ Թումանյանը

Սփարքս Նիկոլաս
Ս 988 Հուշատետրը / Ն. Սփարքս.- Եր.: Էդիթ Պրինտ, 2023.- 208 էջ:

Նիկոլաս Սփարքսն ամենաճանաչված հեղինակներից է ամբողջ աշխարհում: Նրա գրքերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով ու վաճառվել միլիոնավոր օրինակներով: Սփարքսի սիրավեպերն առավել հայտնի են դարձել էկրանավորման շնորհիվ: Դրանցից է նաև «Հուշատետրը»: Այն պատմություն է արտասովոր սիրո մասին, որն անտարբեր չի թողնի ընթերցողին: Ամեն առավոտ Նոյը՝ կյանքի մայրամուտին հասած դողդոջուն մի ծերուկ, արթնանում է հույսով, որ իր միակ սերը՝ Էլլին, կճանաչի իրեն: Եվ այդ հույսով էլ նա ամեն առավոտ նստում է նրա անկողնու մոտ և բացում հուշատետրը: Երբեմն նրան հաջողվում է հասնել իր ուզածին, երբեմն էլ հիշողություններն այդպես էլ մնում են փողերի արանքում բանտարկված:

Սա պատմություն է սովորական մարդկանց մասին, որոնք, թաթախված անմնացորդ սիրով, ունակ են պայքարելու, անգամ երբ չեն ներում ուժերը, հաղթելու անպարտելիին, որոնք քանիցս շրջանցել են մահն ու վայելել սիրո բերկրանքը կյանքի վերջալույսին:

ISBN 978-9939-969-40-4

ՀՏԴ 821.111(73)-31 Սփարքս
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Գրքի պատճենահանման, լուսանկարման, էլեկտրոնային (pdf, epub, word և այլ ֆորմատներով) տարբերակների ստեղծման միջոցով համացանցում անօրինական տարածման կամ վաճառքի դեպքում տվյալ անձը ենթակա է պատասխանատվության «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ամբողջ խստությամբ (հոդված 158):

© 1996 by Willow Holdings, Inc.

© «Էդիթ Պրինտ»

թվագրված 5 1915. հոկտ կայտ

ՀՐԱՇՔՆԵՐ

Ո՞վ եմ ես: Եվ հետաքրքիր է, ինչպե՞ս կավարտվի այս պատմությունը:

Արևն արդեն երկնակամարում է, իսկ ես նստած եմ պատուհանի մոտ՝ մշուշված հեռացող կյանքի շնչից: Ինչ էլ տեսք ունեմ այս առավոտ. երկու շապիկ կա հագիս ու հաստ տաբատ, իսկ պարանոցս գրկում է տաք շարֆը, որի երկու ծայրերն անհետանում են բրդյա սվիտերիս տակ, որ դստերս նվերն է ծննդյանս օրվա առթիվ: Երեսուն տարի է՝ կրում եմ այն: Թեև թերմոստատն ամենաբարձր ջերմաստիճանի վրա է, բայց անմիջապես թիկունքումս մի փոքրիկ տաքացուցիչ էլ է դրված: Այն մերթընդմերթ ճտճտում է, գռմռում ու տաք օդ արձակում, ինչպես հեքիաթներում հանդիպող ահարկու մի վիշապ, բայց, միևնույն է, դողում եմ ցրտից. այդ դողն այլևս երբեք չի լքի ինձ՝ ութսուն տարեկան ծերուկիս: Ութսո՛ւն տարի. սարսափել կարելի է: Ու թեև այդ փաստն ինձ վաղուց այլևս չի վախեցնում, միևնույն է, զարմանում եմ՝ ինչու մարմինս չի տաքանում այն օրից ի վեր, երբ Ջորջ Բուշը նախագահ դարձավ: Հետաքրքիր է՝ իմ հասակակիցնե՞րն էլ են նույն բանը զգում:

Ինչի էր նման իմ ապրած կյա՞նքը... դժվար է խոսել նման բաների մասին: Պատկերացումներիս համապատասխան վառ գույներով

լցված չի եղել կյանքս: Հազիվ թե իմ կյանքի պատմությունից մարդու շունչ կտրվի, բայց ձանձրալի էլ այն չես համարի: Ինձ այն ամենից շատ հիշեցնում է բաժնետոմսերի գնման հաջող գործարքի, որ բավականին կայուն եկամուտ է բերում, ժամանակի հետ ավելի շատ շահում ես, քան կորցնում, իսկ որոշ ժամանակ անց պարզապես վայելում օր օրի աճող դիվիդենդները: Բախտն ամենքին չի այսպես ժպտում, և հազիվ թե շատ մարդիկ լինեն, որոնք նույնը կարող են ասել իրենց կյանքի մասին: Բայց սխալ չհասկանաք ինձ. ես բացառիկ չեմ՝ մի բան, որ վստահ կարող եմ ասել: Ես ամենասովորական մարդն եմ՝ ամենասովորական մտքերով և ամենասովորական կյանքով ապրող: Ինձ հուշարձաններ չեն ձոնվի, իսկ անունս շուտով կմոռացվի: Այսուհանդերձ, ես սիրել եմ, սիրել եմ ողջ սրտով և հոգով, ու ինձ համար դա բավական է եղել՝ գիտակցելու, որ կյանքս զուր չեմ ապրել:

Երազողները իմ ապրած կյանքը սիրո պատմություն կանվանեին, ցինիկները՝ ողբերգություն: Իսկ ինձ համար կյանքը բանի պետք չէր լինի, եթե նրանում տեղ չգտնեին թե՛ մեկը, թե՛ մյուսը, և ինչ անուն էլ տաս՝ պատմությունս լսելուց հետո, միևնույն է, դրանից չեն փոխվի ո՛չ իմ ապրած կյանքը, ո՛չ էլ ընտրածս ճանապարհը: Երբեք չեմ զղջացել ընտրությանս համար, ուր էլ այն հասցներ ինձ կյանքում: Հազարավոր այլ պատճառներ կգտնվեն ափսոսանքի ու գանգատների համար, բայց իմ կյանքի ուղին միշտ եղել է միակ ճիշտ ընտրությունը: Եվ երբեք մտքովս անգամ չի անցել, որ ամեն ինչ կարող էր այլ կերպ դասավորվել:

Ժամանակը, ցավոք, վատ ընկեր է և միշտ փորձում է շեղել ճանապարհից: Իմ առջև նույն ուղիղ ճանապարհն է, սակայն այժմ, ինչպես երբեք, ծածկված է քարերով ու մանրախճով, որոնք կուտակվել են ողջ կյանքի ընթացքում: Երեք տարի առաջ դեռ կարելի էր ուշադրություն չդարձնել դրանց, բայց այժմ արդեն անհնար է: Մարմնիս տկարութ-

յունն է տիրել. ինձ արդեն ոչ ուժեղ կարելի է համարել, ոչ էլ առողջ, իսկ օրերս գլորվում են խնջույքից հետո անկյունում մոռացված հին փուչիկի պես՝ թորշոմած, կծկված և օր օրի ավելի թույլ ու անկամ:

Հազում եմ ու կկոցում աչքերս ձեռքիս ժամացույցի վրա: Հասկանում եմ, որ ժամանակն է գնալու: Վեր եմ կենում պատուհանի մոտից ու քստքստացնելով շարժվում առաջ, կանգնում գրասեղանի մոտ ու ձեռքս առնում հուշատետրը, որ հարյուր անգամ վերընթերցել եմ: Չեմ բացում այն: Փոխարենը՝ դնում եմ թևիս տակ ու շարունակում ճանապարհս:

Քայլում եմ հախճասալիկների վրայով. սպիտակ հատակին տեղ-տեղ փայլին է տալիս մոխրագույնը: Ճիշտ և ճիշտ մազերիս նման. ասենք՝ այս տան բոլոր բնակիչների մազերն են այդպիսին: Թեև այս առավոտ, բացի ինձնից, ոչ ոք չկա միջանցքում: Բոլորն իրենց սենյակներում են, հեռուստացույցն է նրանց միակ մտերիմը, բայց նրանք, ինչպես և ես, սովոր են այդ միայնությանը: Մարդն ամեն ինչի էլ սովորում է, միայն ժամանակ է հարկավոր:

Հեռվից ինձ են հասնում զսպված լացի ձայներ: Ես գիտեմ՝ ով է արտասվում: Ինձ նկատում են բուժքույրերը: Մենք ժպտում ենք ու ողջունում իրար: Վաղուց արդեն ընկերացել ենք նրանց հետ և հաճախ ենք զրուցում դեսից ու դենից, բայց ես վստահ եմ, որ նրանց ավելին է հետաքրքրում իմ ու այն մասին, թե ինչի միջով եմ ես անցնում ամեն օր: Նրանց կողքով անցնելիս լսում եմ՝ ինչպես է մեկը փսփսում երկրորդին. «Ահա, նորից է գնում»: Հետո մյուսը. «Հուսամ՝ այսօր ամեն ինչ լավ կլինի»: Բայց նրանք ուղիղ ոչինչ չեն ասում ինձ: Վստահ եմ՝ նրանք կարծում են՝ վաղ առավոտյան այդ մասին խոսելը ցավ կպատճառի ինձ, և ինձ ճանաչելով՝ կարող եմ ասել, որ նրանք թերևս ճիշտ են:

Մեկ րոպե անց հասնում եմ սենյակին: Ամեն օրվա պես դուռը բաց է ինձ համար: Սենյակում երկու բուժքույր էլ կա: Ինձ տեսնելով՝

նրանք նույնպես ժպտում են: «Բարի լույս»,- ողջունում են նրանք ինձ խինդով, իսկ ես չեմ մոռանում հարցնել երեխաներից, դպրոցներից ու առաջիկա արձակուրդներից: Մենք զրուցում ենք՝ ասես ուշադրություն չդարձնելով լացի ձայնին: Այստեղ դա սովորական բան է, բոլորն են սովորում այդ ձայնին. ես էլ բացառություն չեմ:

Հետո նստում եմ հարազատ դարձած աթոռի վրա, որ սկսել է նմանվել տիրոջը: Բուժքույրերն արդեն գրեթե ավարտում են իրենց գործը. սենյակի բնակչուհին արդեն հագնված է, բայց շարունակում է արտասվել: Բուժքույրերի հեռանալուց հետո նա կհանդարտվի, գիտեմ: Առավոտյան պրոցեդուրաները վշտացնում են նրան, և այսօր էլ բացառություն չէ: Վերջապես անկողինը ծածկող վարագույրը բացվում է, և բուժքույրերը դուրս են գալիս: Երկուսն էլ կողքովս անցնելիս ձեռքը դնում են ուսիս ու ժպտում: Հետաքրքիր է՝ ինչ են ուզում ասել դրանով:

Նստած եմ ու մի ակնթարթ չեմ կարողանում հայացքս պոկել նրանից, սակայն պատասխան հայացք այդպես էլ չեմ ստանում: Ես հասկանում եմ նրան. չէ՞ որ նա չգիտի՝ ով եմ ես: Ես օտար եմ նրան: Հետո շրջում եմ հայացքս, խոնարհում գլուխս ու լուռ աղոթում՝ Աստծուց հայցելով անսահման ուժ, որի կարիքը վստահաբար կունենամ: Միշտ անսասան հավատ եմ ունեցել Աստծո և աղոթքի ուժի նկատմամբ, բայց եթե անկեղծ լինեմ, երդվյալ հավատացյալ լինելով հանդերձ՝ բազմաթիվ հարցեր են ծագել սրտումս, որոնց պատասխանները, անշուշտ, կուզենամ ստանալ, երբ վրա հասնի իմ ժամը:

Պատրաստ եմ արդեն: Ակնոցս քթիս է, գրպանիցս հանում եմ խոշորացույցն ու մի պահ դնում սեղանին, մինչև կբացեմ հուշատետրը: Ստիպված եմ երկու անգամ թրջել ծոմռված մատս, որ կարողանամ շրջել հնամաշ շապիկն ու բացել առաջին էջը: Այնուհետև կրկին ձեռքս եմ առնում խոշորացույցը:

Եվ ինչպես միշտ, նախքան կսկսեմ կարդալ, միայն մի միտք է հուզում ինձ. կհաջողվի՞ ինձ արդյոք այսօր: Չգիտեմ, երբեք էլ վստահ չեմ եղել, թեև, ասենք, դա կարևոր էլ չէ: Հավանականությունն է ինձ ստիպում կանգ չառնել, ոչ թե վստահությունը. ինձ երբեմն խաղամոլի եմ նմանեցնում: Ինձ կարող եք երազող կամ հիմար համարել կամ էլ ուրիշ մի բան, բայց ես հավատում եմ, որ ամեն բան հնարավոր է:

Հասկանում եմ՝ բախտն ու գիտությունը իմ դեմ են: Բայց կյանքն ինձ ցույց է տվել, որ գիտությունը նույնպես չունի բոլոր պատասխանները: Եվ այդ փաստը թույլ է տալիս ինձ հավատալ, որ հրաշքները, որքան էլ անբացատրելի ու անհավանական, իրական են և կարող են տեղի ունենալ մեզ հետ՝ անկախ ամեն ինչից: Ուստի սովորականի պես հերթական անգամ սկսեցի բարձրաձայն կարդալ հուշատետրը, որպեսզի նա՝ արտասվող կինը, լսի. հույս ունեի, որ մի անգամ կյանքումս տեղ գտած հրաշքը նորից կայցելի ինձ:

Գուցե, այո՛, գուցե հենց այդպես էլ լինի:

ԱՆՑՅԱԼԻ ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐԸ

1946 թվականն էր՝ հոկտեմբերի սկիզբը: Նոյ Քելհունն իր՝ ագարակատուն հիշեցնող տան ծածկապատշգամբից հետևում էր՝ ինչպես էր մարող արևն անհետանում երկնակամարի հետևում: Նա սիրում էր իր երեկոները վայելել՝ ծածկապատշգամբում նստած, հատկապես ողջ օրը տքնաջան աշխատելուց հետո, և թույլ տալ՝ մտքերն աննպատակ թափառեն: Այդպես էր նա թոթափում հոգնությունը, ինչպես մի ժամանակ անում էր նրա հայրը:

Նոյը հատկապես սիրում էր նայել ծառերին ու գետի ջրերում երերացող նրանց արտացոլանքին: Հյուսիսային Կարոլինայի ծառերը գեղեցիկ են խոր աշնանը. կանաչի, դեղինի, կարմիրի, նարնջագույնի բոլոր երանգները՝ մեկ տեղում: Արևի տակ փայլին տվող այդ գույների գեղեցկությունը պարզապես կուրացնում է, և Նոյ Քելհունն արդեն հարյուրերորդ անգամ մտաբերում է նախկին տանտերերին. հետաքրքիր է՝ նրանք նո՞ւյնպես երեկոներն անցկացնում էին ծածկապատշգամբում նստած ու նույն մտքերով տարված:

Տունը կառուցվել էր 1772 թվականին: Նյու Բեռնի ամենահին ու ամենաընդարձակ տներից մեկն էր: Ի սկզբանե գործող պլանտացիայի գլխավոր տունն էր, իսկ Նոյը գնել էր այն անմիջապես պատերազմի ավարտից հետո և ամբողջ տասնմեկ ամիս ու իր ոչ

մեծ ունեցվածքն էր ծախսել այն տեսքի բերելու համար: Մի քանի շաբաթ առաջ «Ռոլի» թերթի թղթակիցը մի հոդված էր գրել այդ մասին, նշելով, որ առաջին անգամ է տեսնում տան նման հոյակապ վերականգնում: Համենայն դեպս, նրա հետ չհամաձայնելը սխալ էր: Տնամերձ տարածքն էլ մի ուրիշ պատմություն էր, և հենց այդտեղ էլ Նոյն անցկացրել էր հերթական օրվա մեծ մասը: Տունը կանգնած էր Բրայս Քրիք վտակին սահմանակից տասներկու ակր հողատարածքի վրա: Նոյն աշխատում էր հողատարածքը մյուս երեք կողմից շրջափակող փայտե ցանկապատի վրա՝ ստուգելով սնկերի կամ տերմիտների[1] առկայությունը և հարկ եղած դեպքում փոխելով վերջնականապես փտած տախտակները: Գործի պակաս չկար, հատկապես արևմտյան հատվածում: Եվ մի կողմ դնելով գործիքները՝ Նոյը մտքին դրել էր զանգահարել ու էլի տախտակներ պատվիրել: Նա մտել էր տուն, մի բաժակ քաղցր թեյ խմել, ապա սովորության համաձայն՝ օրվա ավարտին ցնցուղ ընդունել. ջուրն իր հետ տանում էր ոչ միայն կեղտը, այլև հոգնությունը:

Այնուհետև նա մազերը հետ էր սանրել, մի հնամաշ ջինսե տաբատ ու երկարաթև կապույտ շապիկ հագել, ևս մեկ բաժակ քաղցր թեյ լցրել իր համար և դուրս եկել ծածկապատշգամբ, որտեղ էլ նստած էր հիմա, որտեղ նստում էր ամեն երեկո: Նա ձգեց ձեռքերը դեպի վեր, ապա տարածեց աջ ու ձախ՝ թոթվելով ուսերը: Այժմ արդեն լավ էր զգում իրեն՝ մաքրված, թարմացած: Մկանները հոգնած էին, և նա գիտեր, որ վաղը ցավի զգացում է ունենալու, բայց, միևնույն է, գոհ էր, որ մտքին դրածը գրեթե ամբողջովին հասցրել էր անել:

Նոյը ձգվեց դեպի իր կիթառն ու հորը հիշեց: Ա՛խ, որքա՜ն էր

---

1 Տերմիտ - փաք երկրների թաղանթաթև համայնակենցաղ միջատ (փայտանյութի վնասատու):

նրան կարոտել: Նա սահեցրեց մատները լարերի վրայով, ձգեց դրանցից երկուսը, ապա նորից ստուգեց հնչողությունը: Ամեն ինչ կարգին էր. կարող էր արդեն նվագել: Մեղմ, խաղաղ մեղեդին լցրեց շուրջը տիրող դատարկությունը: Սկզբում Նոյը պարզապես մրմնջում էր քթի տակ, ապա սկսեց երգել ահագնացող խավարին ընդառաջ: Նա շարունակեց նվագել ու երգել այնքան, մինչև երկինքը տարրալուծվեց մութի մեջ, իսկ արևի հետքն իսպառ չքացավ:

Ժամը յոթն անց էր, երբ նա դադարեց նվագել: Մեջքը հետ տարավ ու սկսեց ճոճվել աթոռին: Սովորության համաձայն՝ հայացքը հառեց երկնքին ու տեսավ Օրիոնը, Մեծ Արջը, Երկվորյակներն ու Բևեռային աստղը, որ փայլին էին տալիս աշնանային երկնքում:

Սկսեց հաշվարկներ անել մտքում, բայց շուտով հոգնեց: Նա գիտեր, որ գրեթե ամբողջ խնայողությունը արդեն ծախսել էր այդ տան վրա և շուտով ստիպված էր լինելու կրկին աշխատանք փնտրել: Սակայն նա շատ արագ հեռու վանեց այդ միտքն իրենից ու որոշեց վայելել վաստակած հանգիստն առանց դրա համար մտահոգվելու: Նա գիտեր, որ այդ հարցում բախտը կբերի. միշտ էլ բերում էր: Բացի դրանից՝ փողի մասին մտածելը ծանձրալի զբաղմունք էր: Նոյը վաղ էր սովորել հաճույք ստանալ հասարակ բաներից, որոնք փողով չես գնի, և նրա համար դժվար էր հասկանալ այն մարդկանց, որոնք այլ կերպ էին մտածում: Եվս մի հատկանիշ, որ նա ժառանգել էր հորից:

Հայտնվեց Քլեմը՝ Նոյի որսորդական շունը, ու նախքան կտեղավորվեր տիրոջ ոտքերի մոտ, լիզեց նրա ձեռքը:

- Հեյ, աղջնակ, ինչ կա,- հարցրեց Նոյը՝ շոյելով շան գլուխը:

Քլեմը մեղմիկ վնգստաց ու բարի կլոր աչքերը հառեց տիրոջ վրա: Չարաբաստիկ վթարի պատճառով շունը կորցրել էր մի ոտքը, բայց դա չէր խանգարում նրան վազվզել ու ընկերակցել տիրոջը խաղաղ երեկոներին, և այդ օրն էլ բացառություն չէր:

Նոյը երեսունմեկ տարեկան էր. տարեց նրան չէիր համարի,

բայց վաղուց արդեն ժամանակն էր ընտանիք կազմելու: Սակայն այդ կողմերը վերադառնալուց ի վեր նա կանանց հետ հանդիպումների չէր գնում. ոչ մի կնոջ չէր հաջողվել հետաքրքրություն առաջացնել նրա մեջ: Ինքն էր մեղավոր, գիտեր: Կար մի բան, որ թույլ չէր տալիս ոչ մի կնոջ մոտենալ իրեն, մի բան, որ փոխելն իր ուժերից վեր էր, թեկուզ եթե փորձեր: Եվ պատահում էր՝ երբ պառկում էր քնելու, նրան սկսում էր տանջել նույն հարցը. միթե առհավետ դատապարտված է միայնակ լինելու:

Տաք ու հաճելի երեկոն սկսում էր նահանջել: Նոյը, ծղրիդների երգին ու տերևների սոսափին ականջալուր, մտածում էր՝ ոչ մի ավտոմեքենա կամ ինքնաթիռ չի կարող մարդու մեջ արթնացնել ավելի շատ հույզեր, քան բնությունը: Բնությունից զատ՝ ինչը կարող է առավել իրական լինել: Բնությունն ավելի շատ տալիս է, քան վերցնում, իսկ նրա ձայները միշտ հիշեցնում էին Նոյին՝ ինչպիսին պետք է լինի մարդն իրականում: Պատերազմի ժամանակ՝ հատկապես ծանր մարտերից հետո, Նոյը հիշում էր այդ պարզ ձայները: «Դրանց ականջ դնելը կօգնի, որ չխենթանաս,- ասել էր նրան հայրը պատերազմ ճանապարհելիս,- դա Աստծո մեղեդին է. այն քեզ տուն կվերադարձնի»:

Նոյը խմեց, վերջացրեց թեյը, ներս մտավ, ինչ-որ գիրք վերցրեց, ապա վերադարձավ ծածկապատշգամբ՝ ճանապարհին միացնելով լույսը: Նորից տեղավորվեց աթոռին ու հայացքը հառեց գրքին: Հին, մաշված գիրք էր, շապիկը՝ պատռված, թերթերի վրա՝ տեղ-տեղ կեղտաջրի հետքերով: Ուոլթ Ուիթմենի «Խոտի տերևներ» գիրքն էր, որ պատերազմի ամբողջ ընթացքում անբաժան էր եղել Նոյից: Մի անգամ նույնիսկ նրա փոխարեն գնդակն իր վրա էր առել:

Նոյը սրբեց շապիկի փոշին ու պատահական էջ բացելով՝ սկսեց կարդալ.

«Սա քո ժամն է, օ, Հոգի,
Քո ազատ ճախրանքը դեպի անբարբառը՝
Հեռու գրվածից, հեռու վրձնածից:
Օրը հուշ դարձավ,
Հետ չես նայում այլևս՝
Դասը մեկընդմիշտ սերտած
Հեզ աշակերտի պես,
Լուռ հայացքդ է գալիս փաստելու միայն,
Որ մտքիդ տերերն են նորից
Գիշերը, քունը, մահն ու ասպղերը»:

Նոյի շուրթերին ժպիտ հայտնվեց: Չգիտես ինչու, Ուիթմենը միշտ հիշեցնում էր նրան Նյու Բեռնը. նա ուրախ էր, որ վերադարձել է: Թեև տասնչորս տարի ոտք չէր դրել հարազատ հողի վրա, բայց գիտեր՝ սա էր իր տունը, այստեղ նա շատերին էր ճանաչում, հիմնականում՝ երիտասարդ տարիներից: Զարմանալի չէ: Հարավային փոքր քաղաքներին բնորոշ է. մարդիկ այստեղ երբեք չեն փոխվում, միայն մեծանում են:

Վերադառնալուց հետո նրա լավագույն ընկերն է դարձել Գասը՝ յոթանասնամյա սևամորթը, որի տունը հարևան փողոցում էր: Նրանք ծանոթացել էին մի քանի շաբաթ անց այն օրից, ինչ Նոյը գնել էր իր տունը: Գասը հայտնվել էր՝ տնական լիկյորն ու բրանսուիկյան ձևով շոգեխաշած մսով ուտեստը ձեռքին, և նրանք նշել էին իրենց ծանոթությունը՝ խմելով ու միմյանց տարբեր պատմություններ պատմելով:

Եվ այդ օրից ի վեր Գասը շաբաթական մեկ-երկու անգամ այցելում էր Նոյին, սովորաբար երեկոյան՝ ութի կողմերը: Չորս երեխաների ու տասնմեկ թոռների հետ ապրելով՝ նա պարզապես փախչում էր տնից. Նոյը չէր կարող մեղադրել նրան: Գասը սովորաբար

չէր մոռանում իր շրթհարմոնը, և մի փոքր զրուցելուց հետո նրանք սկսում էին նվագել իրար հետ, պատահում էր՝ ժամերով:

Գասը Նոյի համար փոխարինում էր ընտանիքին: Նոյն ուրիշ ոչ ոք չուներ, համենայն դեպս այն օրից, երբ մահացավ նրա հայրը. մեկ տարի էր արդեն: Քույր, եղբայր չուներ: Մայրը մահացել էր հարբուխից, երբ Նոյն ընդամենը երկու տարեկան էր: Նա երբեք չէր ամուսնացել, թեև մեկ անգամ փորձել էր:

Սիրել, սակայն, Նոյին բախտ վիճակվել էր. դրանում նա վստահ էր: Մեկ անգամ... միայն մեկ անգամ, այն էլ շատ վաղուց: Այդ սերը նրան փոխել էր առհավետ: Իսկական սերը միշտ փոխում է մարդուն, իսկ Նոյը սիրել էր իսկական սիրով:

Առափնյա ամպերը դանդաղորեն սկսեցին լողալ երեկոյան երկնքում՝ արծաթին տալով լուսնի լույսի տակ: Արծաթը սկսեց թանձրանալ, իսկ Նոյը հետ գցեց գլուխն ու հենվեց ճոճաթոռին: Նրա ոտքերը մեխանիկորեն պոկվեցին գետնից, ու սովորության համաձայն՝ նա սկսեց ճոճվել՝ պահպանելով համաչափ ռիթմը: Եվ ինչպես սպասելի էր, նա կրկին վերադարձավ այն տաքուկ երեկոն՝ տասնչորս տարի առաջ:

1932 թվականն էր: Հենց նոր էր ավարտել դպրոցը: Ամենամյա փառատոնին էր մասնակցում՝ Նյուս գետի վրա: Ողջ քաղաքը դրսում էր. ըմբոշխնում էր համադամ կերակուրներն ու զանազան խաղերը: Օրը խոնավ էր այդ երեկո. չգիտես ինչու, Նոյը շատ լավ էր հիշում այդ փաստը: Նա մենակ էր եկել տոնին և, ընկերներին գտնելու հույսով, ամբոխը ճեղքելիս նա հանդիպեց Ֆինին ու Սառային՝ իր մանկության ընկերներին: Նրանց հետ ևս մի աղջիկ կար, որին Նոյը չէր ճանաչում: «Գեղեցիկ է»,- մտածեց Նոյն ու մոտեցավ նրանց: Աղջիկը մշուշոտ հայացքը հառեց նրա վրա:

- Ողջույն,- պարզապես ասաց նա՝ հայացքը չկտրելով Նոյից ու նրան մեկնելով ձեռքը,- Ֆինին շատ է պատմել քո մասին:

Սովորական հանդիպում էր, և Նոյը շուտով կմոռանար դրա մասին, եթե նրա փոխարեն մեկ ուրիշը լիներ: Բայց այն պահից, երբ նա սեղմեց աղջկա ձեռքն ու հանդիպեց այդ անկրկնելի զմրուխտե աչքերին, իսկույն հասկացավ՝ եթե անգամ մնացած ողջ կյանքը ծախսեր, չէր գտնի այդպիսի երկրորդի: Նա այնքան սքանչելի էր, այնքան անթերի՝ տաքուկ սյուքի պես, որ սլանում է՝ շոյելով ծառերը:

Այդ պահից էլ սկսվեց փոթորիկն ու իր գիրկն առավ Նոյին: Նա Ֆինից իմացավ, որ աղջիկն ամառը Նյու Բեռնում է անցկացնելու իր ընտանիքի հետ, քանի որ նրա հայրը «Ռ. Ջ. Ռեյնոլդս» ընկերությունում էր աշխատում: Լուրն իմանալով՝ Նոյը միայն գլխով արեց, բայց աղջկա հայացքում նա տեսավ, որ իր լռությունը սխալ չի ընկալվել: Ֆինը ծիծաղեց. նա հասկանում էր՝ ինչ է կատարվում, իսկ Սառան առաջարկեց բալի համով կոլա գնել: Եվ այդպես՝ նրանք որոշեցին չորսով նշել փառատոնի բացումը, և այնքան թափառեցին փողոցներում, մինչև ամբոխը սկսեց ցրվել, իսկ խանութները՝ փակվել գիշերվան ընդառաջ:

Նոյն ու անծանոթուհին հանդիպեցին հաջորդ օրը, ինչպես նաև դրա հաջորդ օրը, և շատ շուտով անբաժան դարձան: Ամեն առավոտ, բացի կիրակի օրերից, երբ ստիպված էր եկեղեցի գնալ, Նոյը հնարավորինս արագ ավարտում էր գործերն ու անմիջապես սլանում «Ֆորտ Տոտեն» զբոսայգի, որտեղ նրան արդեն սպասում էր նա, ով այդքան կարճ ժամանակում գրավել էր նրա միտքն ու հոգին: Աղջիկը նորեկ էր այստեղ և նախկինում երբեք չէր եղել փոքր քաղաքում, ուստի ամեն ինչ նոր էր նրա համար: Նոյը սովորեցնում էր նրան կարթով ձուկ որսալ և տանում էր զբոսնելու «Քրոաթան» անտառի խուլ թավուտներում: Նրանք նավարկության էին գնում գետի երկայնքով և ըմբոշխնում ամառային ամպրոպը: Եվ Նոյին թվում էր՝ իրենք մի ամբողջ կյանք գիտեն իրար:

Բայց աղջիկն էլ Նոյին սովորեցնելու բան ուներ: Նրա շնորհիվ ծխախոտի ամբարներից մեկում անցկացվող երեկույթի ժամանակ Նոյը սովորեց վալս և չարլստոն պարել, ու թեև սկզբում այնքան էլ վարժ չէր պարում, աղջկա համբերատարությունն ի վերջո վարձատրվեց, և նրանք պարեցին ողջ երեկո, մինչև երաժշտությունը լռեց: Երեկույթից հետո Նոյը նրան տուն ճանապարհեց, ու երբ նրանք կանգ առան ծածկապատշգամբում՝ միմյանց բարի գիշեր մաղթելու, Նոյը համբուրեց աղջկան: Դա նրանց առաջին համբույրն էր, որը ստիպեց Նոյին ափսոսալ այդքան երկար սպասելու համար: Ամառն արդեն ավարտին էր մոտենում, երբ մի երեկո Նոյն աղջկան այս տուն բերեց ու հայացքը կիսավեր խարխլանքին՝ ասաց նրան, որ մի օր կգնի այն ու տեսքի կբերի: Նրանք ժամերով զրուցում էին իրար հետ, կիսվում երազանքներով՝ Նոյի՝ աշխարհը տեսնելու, աղջկա՝ նկարիչ դառնալու, և օգոստոսյան տամուկ մի օր էլ վերջապես տրվեցին միմյանց: Երեք շաբաթ անց աղջիկը մեկնեց՝ տանելով իր հետ Նոյի սիրտն ու ամռան վերջին ջերմությունը:

Լույսը հազիվ էր բացվել. անձրևում էր: Ողջ գիշեր աչք չփակելուց հետո Նոյը հայացքով ուղեկցեց գնացքը, որ տարավ նրան, ապա գնաց տուն ու հավաքեց իրերը: Հաջորդ շաբաթը նա մեն-մենակ անցկացրեց «Հարքեր» կղզում:

Նոյը ձեռքերը սահեցրեց մազերի միջով ու նայեց ձեռքի ժամացույցին: Ութն անց տասներկու: Նա վեր կացավ տեղից, մոտեցավ պատուհանին ու հայացք գցեց ճանապարհի վրա: Գասը չէր երևում: Նոյը որոշեց, որ նա չի գա այդ երեկո, վերադարձավ ու նորից նստեց իր ճոճաթոռին:

Հիշեց Գասի հետ զրույցներն իր սիրո մասին: Երբ առաջին անգամ հիշատակել էր աղջկա անունը, Գասը թափահարել էր գլուխն ու ասել. «Ահա՜ թե ով է այն ուրվականը, որ այսքան ժամանակ հանգիստ չի տալիս քեզ»: Իսկ երբ հարցրել էր՝ ինչ նկատի ուներ

նա, Գասը պատասխանել էր. «Ինքդ էլ գիտես՝ ինչ նկատի ունեմ: Անվանի՛ր՝ ինչպես կուզես, անցյալի ուրվական կամ հիշողություն: Դժվար չէր նկատել, որ օրուգիշեր այնքան ես աշխատում, որ ժամանակ չունենաս շունչ քաշելու: Մարդիկ այդպես են վարվում երեք պատճառով: Կա՛մ նրանք խենթ են, կա՛մ հիմար, կա՛մ էլ փորձում են բթացնել հիշողությունը: Ոչ խենթ ես, ոչ էլ հիմար, մնում էր երրորդ տարբերակը. դու փորձում էիր մոռանալ, միայն թե չէի հասկանում՝ ինչ»:

Նոյը հիշեց Գասի խոսքերն ու հասկացավ, որ նա ճիշտ էր: Նյու Բեռնն ուրվականների քաղաք էր դարձել: Այնտեղ ապրում էին *Նրա* մասին հիշողությունները: Նոյը տեսնում էր *Նրան* ամեն անգամ «Ֆորտ Տոտեն» զբոսայգու կողքով անցնելիս՝ իրենց մշտական տեղում: Տեսնում էր *Նրան*՝ նստարանին նստած կամ էլ դարպասի մոտ կանգնած՝ ժպիտը շուրթերից անբաժան, բաց վարսերը քնքշորեն իջնում էին ուսերին, զմրուխտե հայացքը՝ գամված հեռուն:

Երբ Նոյը նստում էր ծածկապատշգամբում ու ձեռքն էր առնում կիթառը, նորից հայտնվում էր *Նա*, նստում էր Նոյի կողքին ու լուռ ականջ դնում՝ ինչպես էր լարերի արանքով հոսում սիրելիի մանկության մեղեդին:

Եվ այդ զգացողությունն ամենուր անբաժան էր Նոյից. երբ նա մոտակա խանութն էր գնում կամ թատրոն, կամ էլ երբ աննպատակ թափառում էր փողոցներում: Ուր էլ գնար, տեսնում էր *Նրա* պատկերը. ամեն ինչ այդ քաղաքում *Նրան* էր հիշեցնում:

Դա նորմալ չէր. Նոյը գիտեր այդ մասին: Նա մեծացել էր Նյու Բեռնում. այստեղ էր անցկացրել իր կյանքի առաջին տասնյոթ տարիները: Բայց երբ մտածում էր Նյու Բեռնի մասին, կարծես ոչինչ չէր հիշում՝ բացի վերջին ամառվանից, որը միասին էին անցկացրել: Կյանքի մյուս իրադարձությունները պարզապես ցիրուցան եղած պատառիկներ էին հիշողության մեջ, որոնցից թերևս ոչ մեկը

որևէ զգացմունք չէր արթնացնում Նոյի սրտում:

Այս մասին մի երեկո նա պատմեց Գասին: Եվ անսպասելիորեն նա ոչ միայն հասկացավ Նոյին, այլև առաջին մարդն էր, որ կարողացավ բացատրել՝ ինչու է այդպես: Նա պարզապես ասաց. «Հայրս ասում էր՝ առաջին սերն առմիշտ փոխում է մարդու կյանքը, և որքան էլ փորձես, այդ սերը մոռանալ չի հաջողվի: Այդ աղջիկը քո առաջին սերն է եղել: Եվ ինչ էլ անես, ամբողջ կյանքում նա քեզ հետ է լինելու»:

Նոյը թափ տվեց գլուխը՝ փորձելով հեռու վանել հիշողությունները, և միայն երբ *Նրա* պատկերը սկսեց տարրալուծվել երեկոյի մեջ, նա վերադարձավ Ուիթմենին: Մոտ մեկ ժամ կարդաց՝ ժամանակ առ ժամանակ բարձրացնելով հայացքը՝ վտակի մոտ դեսուդեն վազող ջրարջերին ու պարկամկներին աչք ածելու համար: Ինն անց կեսին նա փակեց գիրքը, բարձրացավ ննջասենյակ և օրագրում շարադրեց օրվա իրադարձությունները՝ չմոռանալով նշել տան վերանորոգման աշխատանքների մասին: Քառասուն րոպե անց նա արդեն քնած էր: Քլեմը բարձրացավ սանդուղքով, հոտոտեց քնած տիրոջը, ապա մի քանի պտույտ գործելուց հետո վերջապես տեղավորվեց նրա մահճակալի ոտքերի մոտ:

Ավելի վաղ՝ այդ երեկո, հարյուր մղոն այն կողմ՝ ծնողների տան ծածկապատշգամբում՝ ճոճին, միայնակ նստած էր *Նա՝* մի ոտքը ծալած: Ճոճի նստարանը թաց էր. հորդ ու ծակծկող անձրև էր տեղացել, բայց ամպերն արդեն ցրվում էին, ու աստղերն էին սկսել երևալ: Եվ հայացքը երկնքին՝ աղջիկն անվերջ մտորում էր՝ արդյոք ճիշտ էր իր որոշումը: Արդեն քանի օր էր՝ նա ծանրութեթև էր անում այն, և այս երեկո էլ երկար երկմտելուց հետո ի վերջո հասկացավ, որ երբեք չի ների իրեն՝ մտքին դրածն իրագործելու հնարավորությունը ձեռքից բաց թողնելու համար:

Լոնը հաջորդ առավոտյան նրա մեկնելու իրական պատճառի մասին անգամ չէր էլ կասկածում: Մեկ շաբաթ առաջ հարսնացուն խոսքի մեջ ասել էր, որ ուզում է առափնյա հնարժեք իրերի մի քանի խանութ այցելել: «Ընդամենը մի քանի օր,- ասել էր նա,- բացի դրանից՝ ինձ հարկավոր է մի փոքր հանգստանալ նախահարսանեկան այս թոհուբոհից»: Փեսացուին խաբելը տհաճ էր, բայց նա գիտեր, որ չի կարող ճշմարտությունն ասել Լոնին: Մեկնելու ցանկությունը որևէ կապ չուներ նրա հետ, իսկ իրական պատճառը փեսացուն հազիվ թե հասկանար, բացի դրանից՝ անարդար կլիներ դրա համար խնդրել նրան:

Քաղաքը, ուր մեկնում էր նա, հեռու չէր Ռոլիից. մեքենայով երկու ժամից մի փոքր ավելի ճանապարհ: Դեռ ժամը տասնմեկը չկար, երբ տեղ հասավ: Կանգ առավ քաղաքի կենտրոնում գտնվող մի փոքրիկ իջևանատանը, բարձրացավ համար, բացեց ճամպրուկը, կախեց զգեստները պահարանում, մյուս իրերը դասավորեց դարակներում: Այնուհետև արագ ճաշեց, հարցուփորձ արեց մատուցողուհուն մոտակա հնաոճ իրերի խանութների մասին և առաջիկա մի քանի ժամն անցկացրեց՝ գնումներ անելով: Չորսն անց կեսին նա դարձյալ իր համարում էր:

Նա նստեց անկողնու ծայրին, վերցրեց հեռախոսն ու զանգեց Լոնին: Փեսացուն երկար խոսել չէր կարող, պետք է ներկայանար դատի, բայց մինչ խոսափողը կախելը, աղջիկը փոխանցեց նրան իջևանատան հեռախոսահամարը և խոստացավ հաջորդ օրը նորից զանգել: «Հիասքանչ է,- մտածեց նա՝ կախելով խոսափողը,- առօրյա խոսակցություն էր, ոչ մի արտասովոր բան, որ կարող էր նրան կասկածելու առիթ տալ»:

Չորս տարի է արդեն՝ ճանաչում էր նրան: 1942 թվականն էր, երբ հանդիպեցին. աշխարհին վաղուց պատերազմն էր տիրում, իսկ վերջին տարում Ամերիկային նույնպես չհաջողվեց խուսափել

դրանից: Ամեն ոք օգնում էր, ինչով կարող էր. ինքն էլ կամավորագրվել էր կենտրոնի հիվանդանոցում: Բացի դրանից, նրա կարիքն այստեղ շատ ունեին, նաև գնահատում էին այն, ինչ նա անում էր: Բայց ամեն ինչ սպասվածից շատ ավելի բարդ էր: Վիրավոր երիտասարդների առաջին ալիքներն իրենց հետ բերեցին առաջին խեղված մարմիններն ու բզկտված հոգիները, որոնց հետ նա անցկացնում էր իր օրերը: Երբ Լոնն իր ողջ մեղմ հմայքով ներկայացավ նրան Սուրբծննդյան մի երեկույթի ժամանակ, նա տեսավ նրա մեջ այն ամենը, ինչի կարիքն ուներ. ապագայի նկատմամբ վստահություն և հումորի զգացում, որին հաջողվում էր ի չիք դարձնել բոլոր իր վախերը:

Լոնը հմայիչ էր, խելացի ու նպատակասլաց: Ութ տարով էր մեծ իրենից, բայց արդեն հաջողակ փաստաբան էր ու նվիրված էր իր կոչմանը. բազմաթիվ դատական գործեր էր շահել և մեծ անուն ապահովել իր համար: Աղջիկն ընդունում էր հաջողության ու փառքի նրա ձգտումը, քանի որ թե՛ հայրը, թե՛ իր շրջապատի տղամարդկանց մեծ մասը նույն մտածելակերպն ունեին: Լոնը նույնպես մեծացել էր հարավին բնորոշ կաստայական հասարակությունում, որտեղ ընտանիքի անունն ու ձեռքբերումները հաճախ ամենակարևոր գործոնն էին ամուսնության վերաբերյալ որոշում կայացնելիս:

Թեև մանկուց աղջիկը լուռ ընդվզում էր այս մտքի դեմ, ու նրա ընտրությունը նույնիսկ մի քանի անգամ կանգ էր առել այնպիսի երիտասարդների վրա, որոնց լավագույնս կնկարագրեր «անխոհեմ» բնորոշումը, սակայն նա շատ արագ հայտնաբերեց, որ Լոնի պարզությունը հրապուրում է իրեն, և հետզհետե տարվեց նրանով: Չնայած Լոնը ստիպված էր շատ աշխատել, բայց նա միշտ ուշադիր էր հարսնացուի նկատմամբ: Նա իսկական տղամարդ էր՝ հասուն և պատասխանատու: Պատերազմի սարսափելի տարիներին, երբ աղջիկը կարիք ուներ հենարանի, նա միշտ պատրաստ էր աջակ-

ցելու նրան: Աղջիկն իրեն վստահ էր զգում Լոնի կողքին ու գիտեր՝ նա էլ իրեն է սիրում, այդ պատճառով էլ ընդունեց ամուսնության նրա առաջարկը:

Հիշողությունները ստիպեցին նրան մեղավոր զգալ այդտեղ գտնվելու համար: Նա գիտեր, որ պետք է հավաքի իրերն ու հեռանա, քանի դեռ չի փոշմանել: Նա մի անգամ էլ էր նման բան արել, տարիներ առաջ, ուստի վստահ էր՝ եթե հեռանար այդ պահին, երբեք այլևս ուժ չէր գտնի իր մեջ կրկին վերադառնալու այդտեղ: Նա ձեռքն առավ պայուսակը, մի պահ վարանեց և արդեն ուզում էր դուրս գալ, երբ կրկին մտաբերեց, որ պատահականությունն էր նրան այդտեղ բերել, և նորից ցած դրեց պայուսակը՝ դարձյալ գիտակցելով, որ եթե հիմա հեռանար, ողջ կյանքում նրան կտանջեր հարցը՝ իսկ ինչ կլիներ, եթե... վստահ էր, որ չի կարող այդ բեռն ուսերին ապրել:

Նա գնաց լոգասենյակ ու բացեց ծորակը: Համոզվելով, որ ջուրը բավականաչափ տաք է՝ վերադարձավ սենյակ՝ զարդասեղանի մոտ՝ ճանապարհին հանելով ոսկյա ականջօղերը: Գտավ հարդարման պարագաների պայուսակը, բացեց այն, մի կտոր օճառ ու ածելի հանեց, ապա մերկացավ հայելու առջև ու սկսեց ուսումնասիրել մարմինը:

Նրան բոլորը գեղեցիկ էին անվանում, երբ դեռ ընդամենը դեռատի աղջիկ էր: Հայելու մեջ նա տեսնում էր իր ձիգ ու համաչափ մարմինը, բոլորակ կուրծքը, հարթ որովայնն ու նրբագեղ ոտքերը: Նա ժառանգել էր մոր բարձր այտոսկրերը, հարթ մաշկն ու բաց խարտյաշ վարսերը, բայց ամենից գրավիչը, որ յուրահատուկ էր դարձնում նրան, աչքերն էին՝ օվկիանի ալիքների նման, ինչպես Լոնն էր սիրում ասել:

Վերցնելով ածելին ու օճառը՝ նա կրկին գնաց լոգարան, փակեց ծորակը, մոտեցրեց սրբիչը, որպեսզի լոգանքից հետո հեշտությամբ

հասնի դրան, և զգուշորեն մտավ ջուրն ու սուզվեց: Ջուրը հաճելիորեն թուլացնում էր նրա մարմինը: Երկար ու ծանր օրվանից հետո լարվածություն էր զգում մեջքին, բայց նա ուրախ էր, որ հաջողվել էր այդքան արագ ավարտել գնումները: Չէր կարող դատարկաձեռն վերադառնալ Ռոլի, և բոլոր գնումները տեղին էին: Նա մտքին դրեց իմանալ Բոֆորտի մի քանի այլ խանութների անուններ, հետո, սակայն, փոշմանեց: Միթե դրա կարիքը կար. միևնույն է, Լոնն այն մարդը չէր, որ կստուգեր իրեն:

Նա ձեռքը տարավ դեպի օճառը, վերցրեց այն, ապա մի լավ օճառվելուց հետո անցավ գործի: Եվ մինչ սափրում էր ոտքերը, հիշեց ծնողներին: Ինչ կմտածեին նրանք իր արարքի մասին: Անկասկած, հավանություն չէին տա, հատկապես մայրը: Նա այդպես էլ չընդունեց տեղի ունեցածն այն ամռանը, որն անցկացրել էին այստեղ: Չընդունեց այն ժամանակ, չի ընդունի և հիմա, որքան էլ փորձեր բացատրել պատճառը:

Մի փոքր էլ լոգանքը վայելելուց հետո նա դուրս եկավ և սրբիչով չորացրեց մարմինը: Ապա գնաց պահարանի մոտ՝ զգեստ ընտրելու. ի վերջո ընտրեց մի երկար, դեղին, առջևից մի փոքր ցած իջնող զգեստ՝ հարավի ոճով: Հագավ այն ու կանգնեց հայելու դիմաց, թեքվեց աջ, հետո՝ ձախ: Զգեստն ընդգծում էր նրա նրբագեղ մարմինն ու կանացիություն հաղորդում, բայց, ի վերջո, նա որոշեց հանել այն և նորից կախել պահարանում: Փոխարենը՝ ավելի առօրյա ու ավելի համեստ, բաց կապույտ ժանյակազարդ մի զգեստ հագավ՝ դիմացը շարված կոճակներով: Ու թեև այս մեկն այնքան գեղեցիկ չէր, որքան առաջինը, բայց, ըստ աղջկա, ավելի պատշաճ տեսք հաղորդեց իրեն: Թեթև դիմահարդարումը լրացրեց այն. ընդամենը աննշան ստվերաներկ աչքերն ընդգծելու համար: Օծանելիք, կրկին աննշան: Նուրբ ականջօղեր: Հագավ մուգ գույնի ցածրակրունկ ծովափնյա ոտնամաններ, որ վաղուց չէր հագել: Այնուհետև սանրեց

բաց խարտյաշ վարսերը, ամրացրեց այն ծամակալով ու կրկին նայեց հայելու մեջ: Ո՜չ, չափազանց էր: Նա նորից արձակեց վարսերը: Ա՜յ հիմա լավ էր:

Ավարտելով՝ նա քայլ արեց հետ, որ գնահատի իր տեսքը: Այն, ինչ պետք էր. ոչ չափազանց շքեղ էր, ոչ էլ չափազանց սովորական: Նա չէր ուզում ուշադրություն գրավել իր արտաքինով: Ի վերջո, նա չգիտեր ինչ սպասել: Այնքա՜ն ժամանակ էր անցել... գուցե չափից ավելի շատ... և այնքան բան կարող էր տեղի ունեցած լինել, գուցե նաև այնպիսի բաներ, որոնց մասին մտածել անգամ չէր ուզում:

Նա հայացքը կախեց. ձեռքերը դողում էին: Ծիծաղեց ինքն իր վրա: Տարօրինակ էր. սովորաբար նա այսպես չէր հուզվում: Միշտ ինքնավստահ էր, ինչպես և Լոնը, դեռ մանկուց: Այդ ինքնավստահությունը նույնիսկ խնդիրների առիթ էր տալիս, հատկապես սիրային հանդիպումների ժամանակ, քանի որ վանում էր իր հասակակից տղաների մեծ մասին:

Նա վերցրեց պայուսակն ու մեքենայի բանալիները, ապա ձեռքն առավ սենյակի բանալին, սկսեց պտտեցնել այն ձեռքում: Տատանվում էր: Ասաց ինքն իրեն. «Արդեն շատ հեռուն ես գնացել, չես կարող հետ կանգնել որոշումիցդ»: Բայց դուրս գալու փոխարեն նա նորից նստեց անկողնու վրա: Նայեց ձեռքի ժամացույցին: Շուտով վեցը կլիներ: Պետք է գնար. չէր ուզում վերադառնալ, երբ արդեն մութն ընկած կլիներ: Բայց նրան մի փոքր էլ էր ժամանակ հարկավոր:

- Գրողը տանի,- շշնջաց նա,- ի՞նչ եմ անում այստեղ: Չպետք է գայի: Պատճառ չունեմ այստեղ լինելու:

Բայց նա գիտեր, որ դա ճիշտ չէ: Գիտեր՝ ինչն է բերել իրեն այստեղ, և ինչ հարցերի պատասխաններ է ուզում գտնել:

Նա բացեց պայուսակը ու խարխափելով լրագրի մի թերթ գտավ: Այնուհետև շատ դանդաղ հանեց՝ վախենալով վնասել այն:

Բացեց թերթի այդ կտորն ու մի քանի րոպե հայացքը չէր հեռացնում դրանից:

- Ահա՛ թե ինչու,- վերջապես ասաց նա ինքն իրեն,- ահա թե ինչու եմ այստեղ:

Նոյն արթնացավ ժամը հինգին և սովորության համաձայն՝ օրը սկսեց Բրայս Քրիք վտակով մեկ ժամ իր մակույկով զբոսանքից: Այնուհետև հագավ աշխատանքային հագուստը, տաքացրեց նախորդ օրվանից մնացած բլիթներից, մի երկու խնձոր կրծմրծեց, նախաճաշի վրայից էլ երկու բաժակ սուրճ խմեց:

Եվ անցավ գործի. կրկին ցանկապատն էր նորոգում՝ փոխարինելով փտած տախտակները նորերով: Տապին դիմակայելն իսկական փորձություն էր, ջերմաստիճանն ութսուն աստիճանի էր հասնում, ուստի կեսօրին, արդեն քրտնած ու հոգնած, Նոյը մեծ ուրախությամբ ընդմիջում արեց:

Նա ճաշեց վտակի ափին՝ հաճույքով հետևելով՝ ինչպես են կեֆալները[1] երեք-չորս անգամ ցատկոտում ջրի երեսին, ապա անհետանում աղիավուն ջրի մեջ: Չգիտես ինչու, նրան միշտ ուրախություն էր պատճառում այն փաստը, որ այդ արարածները պահպանել են իրենց բնազդը անգամ հազար, գուցե և տասը հազար տարի անց:

Իսկ մարդկանց բնազդներն արդյոք փոխվե՞լ են նույնքան ժամանակում՝ մտորում էր երբեմն նա և միշտ այն եզրակացությանն էր գալիս, որ՝ ոչ: Համենայն դեպս ամենապրիմիտիվ դրսևորումներում մարդը նույնն է: Նա միշտ զավթող է, միշտ իշխելու ծարավ, միշտ փորձում է ղեկավարել աշխարհը և դրանում գոյություն ունեցող ամեն բան: Եվրոպայում և Ճապոնիայում բռնկված պատերազմը դրա հերթական ապացույցն էր:

---

1 Կեֆալ – երկարավուն և սեղմված կողերով ձուկ, երկայնաձուկ:

Ժամը երեքն անց էր, երբ Նոյն ավարտեց աշխատանքն ու ուղղվեց դեպի փոքրիկ ցախատունը, որ կանգնած էր նավամատույցի մոտ: Ներս մտնելով՝ նա գտավ իր ձկնորսական կարթը, մեկ-երկու խայծ և մի քանի ծղրիդ բռնելով՝ դուրս եկավ ափ, խայծը դրեց կարթին ու այն ջուրը գցեց:

Ձկնորսությունը միշտ ստիպում էր նրան մտորել իր կյանքի մասին: Այս օրն էլ բացառություն չէր: Մոր մահից հետո Նոյը հիշում էր՝ ինչպես էին իրեն տնից տուն քարշ տալիս: Երեխա ժամանակ նա սաստիկ կակազում էր և միշտ ծաղրի ենթարկվում դրա համար: Նա սկսել էր օրեցօր ավելի քիչ խոսել, և երբ հինգ տարեկան էր, բոլորովին չէր խոսում: Երբ նա սկսեց դպրոց հաճախել, ուսուցիչները մտածեցին՝ նա իր հասակակիցներից հետ է մնում զարգացման մեջ, ուստի խորհուրդ տվեցին հանել դպրոցից:

Սակայն նրա հայրն այդ հարցի լուծումն իր ձեռքը վերցրեց: Նա ոչ միայն չհանեց տղային դպրոցից, այլև դասերից հետո ստիպում էր նրան իր հետ մասնակցել անտառահատման աշխատանքներին: Նոյն օգնում էր հորը, քարշ տալիս ու դասավորում փայտը:

- Լավ է, որ միասին ժամանակ ենք անցկացնում,- ասում էր հայրը, երբ նրանք աշխատում էին կողք կողքի,- ինչպես ես ու հայրս էինք անում ժամանակին:

Միասին անցկացրած ժամերի ընթացքում Նոյի հայրը զրուցում էր նրա հետ թռչունների ու կենդանիների մասին կամ էլ պատմում էր նրան Հյուսիսային Կարոլինայում տարածված պատմություններն ու առասպելները: Մի քանի ամիս չանցած՝ Նոյը կրկին սկսեց խոսել, թեև ոչ այնքան լավ: Այդ ժամանակ հայրը որոշեց նրան կարդալ սովորեցնել բանաստեղծությունների ժողովածուներով.

- Սովորի՛ր կարդալ սրանք բարձր, և դու կկարողանաս սրտիդ ուզածն արտասանել:

Եվ կրկին Նոյի հայրը ճիշտ էր: Հաջորդ տարի Նոյն արդեն չէր

կակազում: Բայց նա շարունակում էր հոր հետ աշխատանքի գնալ պարզապես նրա կողքին լինելու համար: Եվ ամեն երեկո նա բարձրաձայն կարդում էր Ուիթմենի ու Թենիսոնի բանաստեղծությունները, մինչ հայրն օրորվում էր ճոճաթոռին: Այդ ժամանակից ի վեր նա սիրում է բանաստեղծություններ կարդալ:

Մի փոքր մեծանալուց հետո Նոյն իր հանգստյան օրերի ու արձակուրդների մեծ մասն անցկացնում էր միայնակ: Նա իր առաջին կանոեով զբոսանքի էր դուրս գալիս և ուսումնասիրում «Քրոաթան» անտառը՝ մոտ քսան մղոն նավարկելով Բրայս Քրիք վտակով, իսկ երբ տեղանքն արդեն անանցանելի էր դառնում, մնացած ճանապարհը՝ ընդհուպ մինչև ափեզրը, ոտքով էր կտրում: Անհայտ վայրերով դեգերելն ու նոր եզերքներ բացահայտելը նրա տարերքն էին: Նա ժամերով նստում էր անտառում՝ կաղնիների ստվերում, ու մեղմ շվշվացնելով՝ նվագում իր կիթառը կուղբերի, վայրի սագերի ու երկնագույն ձկնկուլների համար: Հարցրու՛ ցանկացած բանաստեղծի, և նա կասի՝ որքան է միայնությունը՝ հեռու մարդկանցից ու արհեստական իրերից, հարստացնում հոգին:

Թեև Նոյը սուսիկ-փուսիկ տղա էր, այդուհանդերձ անտառահատման ծանր աշխատանքի տարիներն արել էին իրենց գործը, և նա հաջողություններ էր գրանցում սպորտում՝ արդյունքում ակամա հեղինակություն ձեռք բերելով: Նա սիրում էր մասնակցել ֆուտբոլային մրցախաղերին և վազքի մրցումներին, ու թեև նրա թիմակիցներից շատերը իրենց ազատ ժամանակը ևս միասին էին անցկացնում, նա հազվադեպ էր միանում նրանց: Նոյին չճանաչողը նրան ամբարտավան կհամարեր, բայց բոլորն էլ հասկանում էին, որ նա հասակակիցներից ավելի վաղ է մեծացել: Աղջիկների հարցում նրա բախտը նույնպես չէր բերում, ու թեև մի քանի ընկերուհիներ էր ունեցել դպրոցում, բայց նրանցից ոչ մեկին չէր հաջողվել գրավել նրա սիրտը: Բացառությամբ մեկի, որին նա հանդիպեց դպրոցն ավարտելուց հետո միայն:

Եվ այդ մեկը Էլլին էր, իր Էլլին:

Նոյը հիշեց իրենց ծանոթության առաջին երեկոն ու իր զրույցը Ֆինի հետ: Ֆինն այդ ժամանակ ծիծաղել էր ու երկու բոլորովին տարբեր կանխատեսումներ արել. կամ նրանք կսիրահարվեն միմյանց, կամ յուրաքանչյուրը կգնա իր ճանապարհով:

Կարթը թեթևակիորեն ձգվեց: Նոյին թվաց՝ խայծը կտցել են: Երանի՜ պերկես[1] լիներ, բայց թպրտոցն ի վերջո դադարեց, Նոյը ստուգեց կարթը, ապա դատարկ հանելով այն՝ նորից գցեց ջուրը:

Ի վերջո, Ֆինի երկու կանխատեսումներն էլ ճիշտ դուրս եկան: Ողջ ամռան ընթացքում Էլլին ստիպված էր շարունակ պատրվակ փնտրել Նոյին տեսնելու համար: Այնպես չէր, որ Նոյը դուր չէր գալիս Էլլիի ծնողներին. պարզապես նա այլ միջավայրից էր, չափազանց աղքատ էր, և նրանք երբեք հավանություն չէին տա նրա և իրենց դստեր հարաբերություններին:

- Ինձ համար միևնույն է՝ ինչ են մտածում իմ ծնողները,- անվերջ կրկնում էր Էլլին,- մենք միասին լինելու որևէ ճանապարհ կգտնենք:

Բայց, ի վերջո, նրանք բաժանվեցին: Սեպտեմբերի սկզբին՝ ծխախոտի բերքահավաքից հետո, Էլլին ստիպված էր ընտանիքի հետ վերադառնալ Ուինսթոն Սելեմ. այլ ելք չուներ:

- Ընդամենը ամառն է վերջացել, բայց ոչ մեր սերը,- ասել էր Էլլիին Նոյը նրա մեկնելուց առաջ,- մեր սերը հավերժ է:

Սակայն ժամանակը հակառակն ապացուցեց: Նոյի համար անհասկանալի պատճառներով Էլլին չպատասխանեց իր և ոչ մի նամակին:

Ի վերջո նա որոշեց հեռանալ Նյու Բեռնից, որ կարողանա հանել նրան իր մտքից: Բացի դրանից էլ՝ Մեծ ճգնաժամը գրեթե ան-

---

1 Պերկես - պերկեսազգիների ընտանիքին պատկանող քաղցրահամ ջրերի ձուկ:

հնար էր դարձրել Նյու Բեռնում ապրուստ վաստակելը:

Սկզբում նա բնակություն հաստատեց Նորֆոլքում: Վեց ամիս աշխատեց ոչխարաբուծական ֆերմայում, այնուհետև նրան ազատեցին աշխատանքից, և նա տեղափոխվեց Նյու Ջերսի. լսել էր՝ այնտեղ աշխատանք գտնելն ավելի հեշտ էր:

Նյու Ջերսիում նա անմիջապես աշխատանքի անցավ մետաղաջարդոնի պահեստում, որտեղ զբաղվում էր մետաղաջարդոնը մնացած թափոններից առանձնացնելով: Պահեստի տերը՝ Մորիս Գոլդմեն անունով մի հրեա, ձգտում էր հնարավորինս շատ մետաղաջարդոն հավաքել՝ համոզված լինելով, որ Եվրոպայում պատերազմ է սկսվելու, և Ամերիկան կրկին կներքաշվի դրա մեջ: Նոյին, սակայն, պատճառները չէին հետաքրքրում: Երջանիկ լինելու համար նրան բավական էր այն, որ աշխատանք ուներ: Անտառահատման աշխատանքներին մասնակցելու տարիները կոփել էին նրան. ծանր աշխատանքը չէր վախեցնում, և նա ջանք չէր խնայում: Աշխատանքը ոչ միայն օգնում էր Նոյին մտքից հանել Էլլիին գոնե օրվա ընթացքում, այլև թույլ էր տալիս իրեն մարդ զգալ: Չէ՞ որ մանկուց հայրը սովորեցրել էր նրան. «Ջանք մի՛ խնայիր: Վարձատրությանդ դիմաց քիչ աշխատելը գողության հավասար է»: Աշխատանքին նման վերաբերմունքը դուր էր գալիս նրա ղեկավարին: «Դու պետք է հրեա ծնված լինեիր,- ասում էր Գոլդմենը,- շատ լավ տղա ես ախր»: Իսկ դա լավագույն հաճոյախոսությունն էր, որ կարելի էր լսել այդ հրեայի շուրթերից:

Երեկոյան Էլլիի մասին մտքերը վերադառնում էին: Նոյը շարունակում էր գրել նրան ամիսը մեկ անգամ, բայց Էլլին այդպես էլ չպատասխանեց նրա ոչ մի նամակի: Եվ վերջապես մի վերջին նամակ էլ գրելուց հետո նա ստիպեց իրեն ընդունել, որ իրենց կապող միակ բանը միասին անցկացրած ամառն էր:

Այնուամենայնիվ, Նոյին այդպես էլ չհաջողվեց մոռանալ Էլլիին:

Վերջին նամակից երեք տարի անց նա գնաց Ուինսթոն Սելեմ՝ այնտեղ նրան գտնելու հույսով: Նա գնաց Էլլիի տուն, բայց պարզվեց՝ նրանք տեղափոխվել են: Հարևաններին հարցուփորձ անելուց հետո, ի վերջո, Նոյը զանգահարեց «Ռ. Ջ. Ռեյնոլդս», որտեղ նրա հայրն էր աշխատում: Հեռախոսազանգին պատասխանող աղջիկը նորեկ էր ընկերությունում, և Նոյի հաղորդած անունն անծանոթ էր նրան, սակայն անձնական գործերի մեջ փնտրելուց հետո աղջիկը հայտնեց, որ Էլլիի հայրը հեռացել է ընկերությունից, և ոչ մի հասցե նշված չէ, թե ուր է նա տեղափոխվել: Նոյի՝ Էլլիին գտնելու առաջին և վերջին փորձն էր:

Առաջիկա ութ տարիներին Նոյը շարունակեց աշխատել Գոլդմենի մոտ: Սկզբում Նոյը շարքային աշխատող էր: Գոլդմենն ընդամենը տասներկու աշխատող ուներ, բայց տարիների հետ ընկերությունն աճեց, և 1940 թվականին Նոյն արդեն գործնականորեն ողջ բիզնեսն էր վարում: Նրա ենթակայության տակ երեսուն մարդ էր աշխատում: Գոլդմենի փոքրիկ պահեստը դարձավ Արևելյան ափի՝ մետաղաջարդոն հավաքող ամենամեծ ընկերությունը:

Այդ ընթացքում Նոյի կյանքում մի քանի տարբեր կանայք եղան: Հարևան սրճարանի՝ թանձր կապույտ աչքերով ու սաթի պես սև մազերով մատուցողուհու հետ նրա հարաբերությունները նույնիսկ բավականին լրջացան: Այդ հարաբերությունների երկու տարիներին, սակայն, նա այդպես էլ չզգաց այն, ինչ տածում էր Էլլիի հանդեպ ու թերևս շարունակում էր տածել:

Կապուտաչյա թխահերը մի քանի տարով մեծ էր նրանից, և հենց նա էլ սովորեցրեց Նոյին ինչպես հաճույք պատճառել կնոջը, որտեղ է պետք դիպչել ու համբուրել, որտեղ շոյել, ինչ շշնջալ ականջին: Պատահում էր՝ նրանք ողջ օրն անցկացնում էին անկողնում և զբաղվում սիրով, որ հագեցնում էր երկուսին էլ:

Բայց աղջիկը գիտեր՝ կգա այն օրը, որ իրենք կբաժանվեն:

Հարաբերություններն արդեն մարելու շեմին էին, երբ մի անգամ ասաց Նոյին.

- Երանի՜ կարողանայի տալ քեզ այն, ինչ անվերջ փնտրում ես, բայց ես չգիտեմ ախր՝ ինչ է դա: Քո սրտի նվիրական անկյունները փակ են բոլորի առաջ: Ինձ նույնպես անհասանելի են դրանք: Երբ միասին ենք, դու կարծես ինձ հետ չլինես: Մեր երկուսի միջև միշտ կա ուրիշ մեկը:

Նոյը փորձեց հերքել, բայց՝ ապարդյուն:

- Ես կին եմ, և ինձ չես կարող խաբել: Երբեմն ինձ թվում է՝ ինձ նայելիս դու ուրիշին ես տեսնում քո դիմաց: Կարծես սպասում ես՝ հանկարծ ինչ-որ տեղից կհայտնվի *Նա* ու հեռու կտանի քեզ այս ամենից:

Մեկ ամիս անց կապուտաչյա թխահերը այցելեց Նոյի աշխատավայր և ասաց նրան, որ մեկ ուրիշին է հանդիպել: Նոյը հասկացավ: Նրանք բաժանվեցին որպես ընկերներ, և մեկ տարի անց Նոյը բացիկ ստացավ նրանից, որով հաղորդում էր, որ ամուսնացել է: Այդ օրից ի վեր Նոյն այլևս ոչ մի լուր չստացավ նրանից:

Նյու Ջերսիում ապրելու տարիներին Նոյը տարին մեկ անգամ՝ Ծննդյան տոներին, այցելում էր հորը: Միասին գնում էին ձկնորսության ու երկար զրույցի բռնվում միմյանց հետ, երբեմն էլ ուղևորվում էին զբոսնելու ափեզրին՝ Օկրակոկի մոտակայքում:

1941 թվականի դեկտեմբերին, երբ Նոյը քսանվեց տարեկան էր, սկսվեց պատերազմը, ինչպես Գոլդմենն էր կանխատեսել: Մեկ ամիս անց Նոյը ներկայացավ Գոլդմենին, տեղեկացրեց նրան զինվորագրվելու իր որոշման մասին, ապա վերադարձավ Նյու Բեռն՝ հրաժեշտ տալու հորը: Հինգ շաբաթ անց նա արդեն ռազմական ճամբարում էր: Մի օր էլ այնտեղ նամակ ստացավ Գոլդմենից, որում նա շնորհակալություն էր հայտնում Նոյին կատարած աշխատանքի համար: Նամակի հետ նա ուղարկել էր նաև վկայականի

պատճենը, որի համաձայն՝ Նոյը ոչ մեծ տոկոսաբաժնի իրավունք էր ստանում այն դեպքում, եթե երբևէ Գոլդմենի ընկերությունը վաճառվեր: «Առանց քեզ ես հաջողության չէի հասնի,- գրում էր Գոլդմենը,- դու ամենահիանալի երիտասարդն ես, որի հետ երբևէ բախտ է վիճակվել աշխատել. ճիշտ է՝ հրեա չես, բայց հոգ չէ»:

Հաջորդող երեք տարին Նոյն անցկացրեց գեներալ Պատոնի երրորդ բանակի կազմում՝ դեգերելով Հյուսիսային Աֆրիկայի անապատներում և Եվրոպայի անտառներում՝ երեսունկիլոգրամանոց զինամթերքը մեջքին: Հետևազորը ցանկացած պահի պետք է պատրաստ լիներ մարտական գործողություններին: Նրա աչքերը տեսան և՛ ընկերոջ մահ, և՛ այն, թե ինչպես էին ոմանք գտնում իրենց գերեզմանը հարազատ տնից հազարավոր մղոններ հեռու: Մի անգամ էլ Ռեյն գետի մոտակայքում՝ խրամատում թաքնված՝ նրա աչքին կրկին երևաց Էլլին:

Վերջապես պատերազմն ավարտվեց, նախ՝ Եվրոպայում, իսկ մի քանի ամիս անց՝ Ճապոնիայում: Զորացրվելու նախօրեին Նոյը նամակ ստացավ Նյու Ջերսիում աշխատող մի փաստաբանից, որը ներկայացնում էր Մորիս Գոլդմենի շահերը: Հանդիպելով փաստաբանի հետ՝ Նոյը պարզեց, որ Գոլդմենը մահացել էր մեկ տարի առաջ, իսկ նրա ընկերությունը դադարել էր գործել: Ընկերության վաճառքից Նոյին պատկանող տոկոսաբաժինը գրեթե յոթանասուն հազար դոլար էր: Այդ լուրը, սակայն, Նոյն ընդունեց տարօրինակ անտարբերությամբ:

Հաջորդ շաբաթ նա վերադարձավ Նյու Բեռն և գնեց այն տունը, որի մասին վաղուց էր երազում: Մի քանի օր անց այնտեղ բերեց հորը, ցույց տվեց՝ ինչ փոփոխություններ է ուզում անել տան վրա: Հայրը տկար էր երևում, հազում էր, ձայնը խռպոտ էր: Սակայն նա շտապեց հանգստացնել Նոյին՝ վստահեցնելով, որ մտահոգվելու կարիք չկա, ընդամենը մրսածություն է:

Մեկ ամիս չանցած՝ նա մահացավ թոքերի բորբոքումից: Նրան թա-

ղեցին կնոջ կողքին՝ տեղի գերեզմանոցում: Նոյը հաճախ էր այցելում նրանց, ծաղիկներ դնում գերեզմանին, երբեմն էլ երկտող էր թողնում: Իսկ ամեն երեկո առանց բացառության աղոթում էր հոր համար՝ մի մարդու, որ սովորեցրել էր իրեն այն ամենը, ինչ կարևոր է այս կյանքում:

Փաթաթելով կարթը՝ Նոյը կողքի դրեց այն ու վերադարձավ տուն: Տանը նրան էր սպասում հարևանուհին՝ Մարթա Շոուն: Ի նշան շնորհակալության՝ նա երեք բոքոն տնական հաց ու թխվածքաբլիթներ էր բերել: Նրա ամուսինը զոհվել էր պատերազմում՝ երեք երեխաների հոգսը թողնելով կնոջ ուսերին: Նրանք մի խարխլված տանն էին ապրում, եթե կարելի էր դա տուն անվանել: Ձմեռը սարերի հետևում չէր, և Նոյը մի քանի օր անցկացրել էր նրանց տանիքը նորոգելու, պատուհանների կոտրված ապակիները փոխելու, մյուսներն ամրացնելու և փայտե վառարանը սարքի գցելու վրա: Փառք Աստծո, նրանք արդեն պատրաստ էին ձմռանը:

Մարթային ճանապարհելուց հետո Նոյը նստեց իր «Դոդջ» բեռնատարն ու գնաց Գասի տուն: Նա միշտ կանգ էր առնում ծերուկի տան մոտ, որովհետև Գասի ընտանիքը մեքենա չուներ, և նրա դուստրերից մեկը սովորաբար Նոյի հետ ուղևորվում էր գնումներ կատարելու: Տուն վերադառնալով՝ Նոյն անմիջապես մթերքները դասավորելու փոխարեն ցնցուղ ընդունեց, մի շիշ «Բուդվայզեր» գարեջուր վերցրեց, Դիլան Թոմասից մի հատոր ու տեղավորվեց ծածկապատշգամբում:

Միևնույն է, նա դեռ չէր կարողանում հավատալ, թեև ապացույցը ձեռքում էր:

Երեք շաբաթ առաջ էր՝ կիրակի: Ծնողների տանն էր: Խոհանոց էր գնացել մեկ բաժակ սուրճի հետևից, իսկ երբ վերադարձել էր սեղանի մոտ, հայրը, ժպիտը դեմքին, ցույց էր տվել լրագրի հոդվածներից մեկին կից նկարն ու ասել. «Հիշո՞ւմ ես»:

Հայրը նրան էր մեկնել լրագիրը: Անտարբեր մի հայացք գցելուց հետո նկարի մեջ ինչ-որ բան գրավել էր դստեր ուշադրությունը: Նա ավելի ուշադիր էր նայել: «Չի կարող պատահել»,- շշնջացել էր նա և աննկատ թողնելով հոր զարմացած հայացքը՝ նստել ու լուռ կարդացել հոդվածը: Նա նույնիսկ չէր նկատել՝ ինչպես էր մայրը մոտեցել իրեն ու նստել դիմացը: Երբ վերջապես լրագիրը մի կողմ էր դրել, մայրը նրան էր ուղղել նույն հարցախույզ հայացքը, ինչ հայրը՝ րոպեներ առաջ:

- Ամեն ինչ կարգին է,- հարցրել էր մայրը՝ մի կում խմելով սուրճից,- գունատ ես երևում:

Դստեր պատասխանն անմիջապես չէր հետևել: Ինչպե՞ս կարող էր պատասխանել. ասես պապանձվել էր, իսկ ձեռքերն այնպե՞ս էին դողում:

Հենց դրանից էլ սկսվել էր ամենը:

«Եվ հենց այստեղ էլ ամեն ինչ կավարտվի այսպես, թե այնպես»,- կրկին շշնջաց նա, ծալեց թերթի պատառիկն ու նորից պայուսակը դրեց՝ հիշելով՝ ինչպես էր այդ օրը վերադարձել հայրական տնից՝ լրագիրը ձեռքին, որ հետո կարողանար կտրել հոդվածն ու պահել: Այդ երեկո՝ քնելուց առաջ, նորից էր կարդացել այն՝ փորձելով ըմբռնել պատահականության ուժը: Կարդացել էր նաև առավոտյան, կարծես ուզում էր համոզվել, որ այդ ամենը երազ չէր: Իսկ այժմ՝ երեք շաբաթ միայնության մեջ երկար զբոսանքներից հետո, երեք շաբաթ կասկածներին ու հուսահատությանը տրվելուց հետո, ի վերջո, համարձակություն էր հավաքել գալու:

Նրա հուզմունքը չէր կարող աննկատ մնալ շրջապատից: Նա իր անհավասարակշիռ պահվածքը վերագրում էր լարվածությանը. բոլորի համար բավականին ընդունելի արդարացում էր, այդ թվում՝ Լոնի: Ահա թե ինչու նա չառարկեց, երբ հարսնացուն մի քանի օրով

մեկնելու ցանկություն հայտնեց: Հարսանեկան պատրաստությունները միշտ էլ լարվածության առիթ են տալիս: Գրեթե հինգ հարյուր մարդ էր հրավիրված, այդ թվում՝ նահանգապետը, սենատորներից մեկը և Պերուում ԱՄՆ դեսպանը: Հարսնացուի կարծիքով՝ դա չափազանց էր, բայց չէ՞ որ նրանց հարսանիքը մեծ իրադարձություն էր, որին սպասում էին բոլորը: Բոլոր թերթերը դրա մասին էին գրում արդեն վեց ամիս՝ այն օրից, երբ նրանք հայտարարել էին իրենց նշանադրության մասին: Պատահում էր՝ նա պարզապես ուզում էր փախչել ու ամուսնանալ Լոնի հետ առանց ավելորդ աղմուկի: Բայց գիտեր՝ Լոնը չէր համաձայնի: Ինչպես ցանկացած քաղաքական գործիչ՝ նա նույնպես սնափառություն ուներ և ձգտում էր ուշադրության կենտրոնում լինել:

Աղջիկը խոր շունչ քաշեց և նորից վեր կացավ տեղից: «Կամ հիմա, կամ երբեք»,- շշնջաց նա, ապա վերցրեց պայուսակն ու ուղղվեց դեպի դուռը: Միայն դուռը բացելուց առաջ մի պահ վարանեց, բայց հաջորդ պահին նա արդեն իջնում էր սանդուղքն ի վար: Իջևանատան աշխատակցի կողքով անցնելիս նա որսաց նրա ժպիտը ու տանելով իր հետ նրա հայացքը՝ դուրս եկավ և մոտեցավ իր մեքենային: Նստելով ղեկին՝ նա մի վերջին անգամ էլ նայեց իրեն հայելու մեջ, ապա գործի գցեց շարժիչն ու թեքվեց աջ՝ դեպի Ֆրոնթ Ստրիթ:

Զարմանալի չէ, որ նա լավ էր հիշում փողոցները: Թեև երկար տարիներ չէր եղել այստեղ, բայց փոքր քաղաքում կողմնորոշվելը բարդ չէր: Հնաոճ բացովի կամրջով Թրենթ գետն անցնելուց հետո նա թեքվեց մանրախճով պատված մի փողոց, որ տանում էր դեպի իր ճամփորդության վերջնանպատակը:

Հարավը գեղեցիկ էր ինչպես միշտ: Ի տարբերություն Փիդմոնտի, որտեղ անցել էր նրա մանկությունը՝ գետինն այստեղ խորդուբորդ չէր, բայց նույն տղմոտ բերքառատ հողն էր՝ կատարյալ՝ բամ-

բակ ու ծխախոտ աճեցնելու համար: Հենց այդ երկու մշակաբույսերն ու բնափայտն էլ կերակրում էին երկրի այս հատվածը՝ լրացնելով փոքրիկ այդ քաղաքների անսահման գեղեցկությունը, որն ի սկզբանե ձգում էր մարդկանց դեպի իրեն:

Արևի սեթևեթ շողերը ճեղքում էին սև կաղնիների ու հարյուր ոտնաչափ բարձրությամբ ընկուզենիների բազմությունը՝ նոր շունչ հաղորդելով աշնան գույներին: Իսկ ձախ կողմում երկաթագույն գետն էր եզերում ճանապարհը, այնուհետև կտրուկ շեղվում էր, նախքան կյանքը կտար մեկ այլ՝ ավելի մեծ գետի, որպեսզի մեկ մղոն այն կողմ անհետանար իսպառ: Իսկ խորդուբորդ ճանապարհն ինքը քմահաճ գալարվում էր հին ագարակների միջև, որոնցից շատերում զարմանալիորեն կյանքն ամենևին չէր փոխվել դեռ տերերի նախնիների ժամանակներից: Ծանոթ տեսարաններն արթնացրին քնած հույզերը, ու հիշողությունները հեղեղի պես դուրս հորդեցին իրենց թաքստոցից. սիրտը սկսեց սեղմվել վաղուց մոռացված վայրերով անցնելիս:

Ճանապարհի ձախ կողմում արևն էր կախվել ծառերի վրա: Շրջադարձ անելով՝ մեքենան հայտնվեց մի հին վանքի առաջ՝ վաղուց լքված, բայց դեռևս կանգուն: Այդ ամռանը նա հասցրել էր լինել այստեղ, երբ հուշ-իրեր էր փնտրում նահանգների միջև պատերազմի ժամանակներից, և երբ մեքենան անցավ վանքի կողքով, հիշողություններն այնպես շունչ ստացան, որ թվաց՝ այդ ամենը դեռ երեկ էր եղել:

Այնուհետև գետի ափին երևաց փառահեղ կաղնին՝ տոթակեզ օրերի վառ հիշողությունների ևս մեկ վկա: Նույն կաղնին էր, ինչպես տարիներ առաջ. ճյուղերը, ծանրությունից կքած, հասնում էին գետնին, իսկ դրանցից կախ ընկած իսպանական մամուռը շղարշում էր ծառի տակ պատսպարվողներին: Մի հուլիսյան շոգ օր էլ այն իր ստվերի տակ էր առել իրենց: Հիշում էր՝ նստած էին ծառի

տակ, և նա իրեն էր նայում այնպիսի կրքով, որ մոռանալ էր տալիս աշխարհում ամեն բան: Հենց այդ օրն էլ նա հասկացավ, որ սիրահարվել է: Սիրահարվել է առաջին անգամ:

Տղան իրենից երկու տարով էր մեծ: Եվ հիշողությունների հետևից սլացող աղջկա համար նրա պատկերը կրկին իրական դարձավ: Աղջիկը հիշեց, որ տղան այն ժամանակ էլ իր տարիքից ավելի մեծ էր երևում: Նա նման էր հոգնատանջ ռամիկի, որ տուն էր վերադառնում ժամեր շարունակ դաշտում աշխատելուց հետո: Ձեռքերը կոշտուկներով էին պատված, լայն ուսերը վկայում էին, որ նա այն մարդկանցից էր, որոնք ծանր աշխատանքով են վաստակում իրենց ապրուստը, իսկ մութ աչքերի շուրջը սկսել էին երևալ առաջին հազիվ նշմարվող խորշոմները. աչքեր, որոնցից անհնար էր թաքցնել անգամ սեփական մտքերը:

Նա բարձրահասակ էր ու հաղթանդամ, բաց շագանակագույն մազեր ուներ: Նա հմայիչ էր յուրովի, բայց աղջիկն ամենից հստակ հիշում էր նրա ձայնը: Այդ օրը նա կարդում էր իր համար. նրանք պառկած էին ծառի տակ, և նա կարդում էր մեղմ ու սահուն ձայնով, տողերը մեղեդու պես ծորում էին նրա շուրթերից: Այդպիսի ձայնն արժանի էր ռադիոյով հնչելու: Այն կախվում էր օդում, ու բավական է՝ աչքերդ փակեիր, ու ձայնը թափանցում էր ուղիղ սիրտդ:

Այն սպիպում է ինձ շոգու պես կախվել վերջալույսից,
Ես ճախրում եմ որպես եթեր արևաբույր,
Եվ նորեն վազող հրե գնդի հետևից
Կոհակվում են գանգուրներս ծյունաթույր...

Նա թերթում էր հին գրքերի մաշված էջերը, որոնք արդեն հարյուրավոր անգամ էր կարդացել: Որոշ ժամանակ կարդում էր, ապա դադար առնում, և նրանք սկսում էին զրուցել: Աղջիկը պատմում էր՝

ինչ է ուզում այս կյանքում, իր երազանքների մասին ու ապագայի հետ կապված հույսերի, իսկ տղան լսում էր՝ անհագորեն բաց չթողնելով ոչ մի բառ, այնուհետև խոստանում, որ դրանցից ոչ մեկն անկատար չի մնա: Եվ ասում էր դա այնպես, որ աղջիկը հավատում էր անվերապահորեն, և այդ պահերին նա հասկանում էր՝ որքան կարևոր է այդ երիտասարդն իր համար: Երբեմն էլ տղան էր պատմում իր մասին, երբ աղջիկը հարցնում էր, կամ էլ սկսում էր բացատրել՝ ինչու է հենց տվյալ բանաստեղծությունն ընտրել կարդալու, ինչ կարծիք ունի դրա մասին: Իսկ մնացած ժամանակ նա հիմնականում լուռ էր, ու վառվող աչքերը չէր հեռացնում աղջկանից:

Նրանք միասին վայելում էին մայրամուտն ու ընթրում աստղերի ներքո: Բայց հանկարծ աղջիկը հիշում էր, որ ծնողները կբարկանան, երբ իմանան՝ որտեղ է ինքն այդ ուշ ժամին, և տղան նրան տուն էր ուղեկցում: Ողջ ճանապարհին աղջիկն անվերջ մտածում էր յուրահատուկ մարդու կողքին անցկացրած յուրահատուկ օրվա մասին, իսկ տղան իր ձեռքերի մեջ էր առնում նրա ձեռքը, ու այդ ջերմությունը լցնում էր նրա սիրտը, մինչև նրանք կհասնեին տուն:

Եվս մեկ շրջադարձ, և աղջիկը վերջապես տեսավ հեռվում կանգնած տունը: Այն անճանաչելի էր դարձել: Դանդաղեցնելով մեքենայի ընթացքը՝ նա դուրս եկավ երկար անմշակ ծառուղին: Ճանապարհի ծայրին էլ երևում էր հենց այն տունը, որը հասցրել էր նրան այստեղ Ռոլիից:

Նա չէր շտապում մոտենալ, թեև չէր կարողանում կտրել հայացքը տնից: Շունչը սկսեց կտրվել, երբ ծածկապատշգամբում նկատեց նրան, որ ուշադիր հետևում էր իր մեքենային: Նա սովորական էր հագնված: Հեռվից նույն տեսքն ուներ, ինչ տարիներ առաջ: Մի պահ, երբ արևի լույսը գրկեց նրան հետևից, թվաց՝ ուր որ է՝ նրա կերպարանքը կտարրալուծվի շուրջը տիրող բնապատկերում:

Մեքենան շարունակում էր անշտապ առաջ ընթանալ, այնու-

հետև վերջապես կանգ առավ կաղնու տակ, որ ստվեր էր գցում տան առաջամասի վրա: Նա պտտեց բանալին՝ հայացքը չհեռացնելով հարազատ կերպարանքից, և շարժիչը շչալով լռեց: Տղան դուրս եկավ ծածկապատշգամբից և սկսեց մոտենալ կաղնուն և հանկարծ քարացավ, երբ աղջիկը դուրս եկավ մեքենայից: Երկար ժամանակ նրանք, անշարժ կանգնած, միմյանց էին նայում. ուրիշ ի՞նչ կարող էին անել:

Էլլիսոն Նելսոնը՝ քսանինը տարեկան ազնվակիրթ օրիորդը, որ եկել էր իր հարցերի պատասխանների հետևից, և Նոյ Քելիունը՝ երեսունմեկամյա երազողը՝ կարկամած անցյալի ուրվականի առջև, որ ժամանակին հիմնովին փոխել էր նրա կյանքը:

ՀԻՆ ԾԱՆՈԹՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Երկուսն էլ քարացել էին տեղում. նրանցից ոչ մեկը չէր հավատում աչքերի տեսածին:

Նոյը պապանձվել էր, և մի պահ Էլլիին թվաց՝ նա չճանաչեց իրեն: Հանկարծ նա մեղավոր զգաց հենց այնպես՝ առանց զգուշացնելու հայտնվելու համար, և խոսելն ավելի ծանր դարձավ: Մինչև գալն Էլլին կարծում էր՝ ամեն ինչ շատ ավելի հեշտ կլինի, երբ տեսնի Նոյին, և բառերն իրենք կհոսեն: Բայց նա նույնպես պապանձվել էր: Բոլոր բառերն ունայն ու ավելորդ էին թվում:

Միասին անցկացրած ամռան հիշողությունները կրկին վերադարձան: Էլլին նկատեց, որ Նոյը գրեթե չէր փոխվել իրենց վերջին հանդիպումից ի վեր: Նա լավ տեսք ուներ: Հին գունաթափ ջինսե տաբատի մեջ խցկած վերնաշապիկը փորձում էր թաքցնել նույն լայն ուսերը, նեղ կոնքերն ու հարթ փորը: Թխացած մաշկը ստիպում էր մտածել, որ ողջ ամառ նա կարծես արևի տակ է աշխատել, ու թեև մազերը փոքր-ինչ նոսրացել էին, բայց ընդհանուր առմամբ նա նույն տեսքն ուներ, ինչ տարիներ առաջ:

Վերջապես Էլլին համարձակություն հավաքեց, խոր շունչ քաշեց ու ժպտաց.

- Ողջո՛ւյն, Նո՛յ, ուրախ եմ, որ քեզ նորից տեսնում եմ:

Այդ խոսքերն ասես արթնացրին Նոյին, և նա հիացմունքով նայեց Էլլիին: Այնուհետև շփոթված տարուբերելով գլուխը՝ երկչոտ ժպտաց:

- Ես նույնպես...- կմկմաց նա:

Նոյը ձեռքը տարավ կզակին, և Էլլին նկատեց, որ նա սափրված չէր:

- Իսկապե՞ս դու ես: Աչքերիս չեմ հավատում:

Նա դեռ ցնցված էր. ձայնը մատնում էր նրան: Որքան էլ զարմանալի թվար, դա Էլլիին վստահություն ներշնչեց, որ այստեղ գալը, նրան հանդիպելը ճիշտ որոշում էր: Ինչ-որ բան ներսում շարժվեց, վաղուց և շատ խոր թաղված մի բան, որից մի պահ նույնիսկ գլխապտույտ առաջացավ:

Էլլին զգաց, որ կորցնում է վերահսկողությունը: Նա չէր սպասում, որ նման բան տեղի կունենա... չէր ուզում: Նա նշանված է ուրիշի հետ: Նա սրա համար չէր եկել այստեղ... սակայն...

Սակայն...

Սակայն որքան էլ ջանք գործադրեր, միևնույն է, զգացմունքները հաղթում էին իրեն: Մի կարճ ակնթարթ նա իրեն նորից տասնհինգամյա աղջնակ զգաց: Ասես չէին եղել այդ բոլոր տարիները, և իր երազանքները դեռ կարող էին կյանքի կոչվել:

Ասես վերջապես տուն էր վերադարձել:

Առանց որևէ բառ արտասանելու նրանք մոտեցան իրար, կարծես հենց այդպես էլ պետք է լիներ, և Նոյը, գրկելով Էլլիի մեջքից, սեղմեց նրան իրեն: Նրանք ամուր գրկել էին իրար՝ փորձելով հավատալ, որ այդ ամենը երազ չէր, և թույլ տալով, որ բաժանումի տասնչորս տարիները լուծվեին թանձրացող մթնշաղում:

Նրանք երկար ժամանակ չէին շարժվում տեղից: Վերջապես Էլլին հետ գնաց, որ կարողանար տեսնել Նոյին: Ավելի մոտիկից արդեն տեսանելի էին այն փոփոխությունները, որոնք առաջին հայացքից

աննկատ էին մնացել: Նոյն իսկական տղամարդու էր վերածվել, իսկ դիմագծերը կորցրել էին պատանեկան մեղմությունը: Աչքերի շուրջը հազիվ նշմարելի խորշոմներն ավելի խոր էին դարձել, իսկ կզակին սպի էր հայտնվել, որ չկար նախկինում: Հայացքն էր այլ: Նրանում չկար նախկին անմեղությունը, փոխարենը՝ առավել զգուշավոր էր դարձել: Եվ այդ ամենի հետ մեկտեղ նա այնպես էր սեղմել իրեն Էլլիին, որ տարիների կարոտն ավելի ուժեղ սկսեց խեղդել:

Էլլիի աչքերին արցունքներ հայտնվեցին, երբ նրանք վերջապես բաց թողեցին իրար: Նա ջղային ծիծաղեց՝ մաքրելով աչքերի անկյուններում ծվարած արցունքները:

- Ամեն ինչ կարգի՞ն է,- հարցրեց Նոյը՝ զսպելով հազարավոր այլ հարցեր տեղալու ցանկությունը:

- Կներես, չէի ուզում արտասվել...

- Ներողություն խնդրելու կարիք չկա,- ասաց Նոյը՝ ժպիտը դեմքին,- դեռ աչքերիս չեմ հավատում, որ այստեղ ես: Ինչպե՞ս գտար ինձ:

Էլլին հետ քաշվեց՝ փորձելով հավաքել իրեն ու սրբելով վերջին արցունքները:

- Մի քանի շաբաթ առաջ տեսա «Ռոլի» թերթի հոդվածն այս տան մասին և որոշեցի այցելել քեզ:

Նոյի դեմքին կրկին լայն ժպիտ հայտնվեց:

- Ուրախ եմ, որ եկել ես,- ասաց նա ու մի փոքր հետ գնաց,- Աստվա՜ծ իմ, հրաշալի տեսք ունես: Ավելի ես գեղեցկացել:

Էլլին զգաց՝ ինչպես են այրվում այտերը տասնչորս տարի առաջվա պես:

- Շնորհակալ եմ, դու նույնպես հոյակապ տեսք ունես:

Այդպես էլ կար, անկասկած: Տարիները գթացել էին Նոյին:

- Իսկ որտե՞ղ էիր այս տարիներին: Եվ ի՞նչն է քեզ այստեղ բերել:

Նոյի հարցերը Էլլիին նորից իրականություն վերադարձրին՝ ստիպելով նրան գիտակցել՝ ինչ կարող է պատահել, եթե նա

կորցնի իրեն: «Թույլ չտաս նման բան»,- ասաց նա ինքն իրեն: Նա հասկանում էր՝ որքան երկար մնար այնտեղ, այնքան ավելի դժվար կլիներ հեռանալ: Իսկ նա չէր ուզում ամեն ինչ ավելի բարդացնել:

Բայց, Աստվա՛ծ իմ, այդ աչքերը: Այդ մեղմ ու մութ աչքերը...

Էլլին հեռացրեց հայացքը և խոր շունչ քաշեց: Ախր ինչպե՞ս ասեր:

- Նո՛յ, չեմ ուզում՝ սխալ հասկանաս,- վերջապես ասաց նա. նրա ձայնը հաստատակամ հնչեց,- ես իսկապես ուզում էի քեզ նորից տեսնել, բայց բանը միայն այդ չէ,- նա մի պահ լռեց, ապա շարունակեց,- ես այստեղ եմ, որովհետև պատճառ կա: Ես քեզ ասելու բան ունեմ:

- Ի՞նչ:

Էլլին նորից հեռացրեց հայացքը՝ զարմանալով՝ ինչու չի կարողանում ասել այն, ինչ վաղուց էր ուզում ասել: Նոյի սիրտը սեղմվեց: Ինչ էլ որ Էլլին ուզում էր ասել, հազիվ թե դա ցավ չբերեր իր հետ:

- Չգիտեմ ինչպես ասել: Կարծում էի՝ գիտեմ, իսկ հիմա վստահ չեմ:

Ջրարջի սուր ձայնը հանկարծ ճեղքեց օդը, և ծածկապատշգամբի ներքևից հայտնվեց Քլեմն ու սկսեց հաչել: Երկուսն էլ շրջվեցին դեպի ձայնը: Էլլին ուրախ էր, որ խոսակցության թեման փոխելու առիթ ընձեռվեց:

- Քո շո՞ւնն է այս համարձակ տղան,- հարցրեց նա:

Նոյը գլխով արեց. սիրտը շարունակում էր սեղմվել:

- Միայն թե աղջիկ է: Քլեմենթինա է անունը: Իմն է, ուրիշ էլ ո՞ւմը պետք է լինի:

Երկուսն էլ լուռ հետևում էին՝ ինչպես Քլեմը թափ տվեց գլուխը, ձգվեց ու վազեց ձայնի ուղղությամբ: Էլլիի աչքերը չռվեցին, երբ նա նկատեց, որ շունը կաղում է:

- Ի՞նչ է պատահել նրա ոտքին,- հարցրեց նա՝ փորձելով ժամանակ ձգել:

- Մեքենայի տակ է ընկել մի քանի ամիս առաջ: Բժիշկ Հարի-

սոնը՝ անասնաբույժը, կանչեց ինձ իր մոտ և հարցրեց՝ արդյոք չեմ ցանկանա պահել նրան, որովհետև նախկին տերը հրաժարվել էր նրանից: Երբ տեսա՝ ինչ է պատահել, չկարողացա թույլ տալ, որ քնեցնեն նրան:

- Միշտ էլ բարի ես եղել,- նկատեց Էլլին՝ փորձելով թոթափել լարվածությունը: Նա մի պահ լռեց, ապա հայացք գցելով տանը՝ ասաց.- Հսկայական աշխատանք ես տարել: Սքանչելի տեսք ունի, ինչպիսին միշտ պատկերացրել եմ:

Նոյի հայացքը սահեց Էլլիի հայացքի ուղղությամբ, սակայն նրան հանգիստ չէր տալիս այն միտքը, թե ինչ էր ուզում ասել Էլլին իրեն:

- Շնորհակալ եմ: Ճիշտն ասած՝ չէի պատկերացնում, որ այսքան ծանր կլինի այն տեսքի բերելը: Եթե իմանայի, ոչ մի դեպքում հանձն չէի առնի:

- Համեստություն մի՛ արա,- ասաց Էլլին:

Նա գիտեր՝ ինչ մեծ նշանակություն ուներ այդ տունը Նոյի համար: Գիտեր նաև՝ ինչպես է նա վերաբերվում ցանկացած աշխատանքի, համենայն դեպս գիտեր երկար տարիներ առաջ:

Այդ միտքը ստիպեց նրան գիտակցել, որ այդ ժամանակից ի վեր ամեն ինչ փոխվել է: Այժմ նրանք կանգնած էին իրար դիմաց որպես երկու օտարներ և այլ աչքերով էին նայում միմյանց: Տասնչորս տարի հեռու իրարից: Սաստիկ երկար է: Չափազանց երկար:

- Ի՞նչ է պատահել, Էլլի,- դիմեց Նոյը աղջկան՝ փորձելով գրավել նրա հայացքը, բայց Էլլին աչքը չէր կտրում տնից:

- Հիմարի պես եմ ինձ պահում, չէ՞,- հարցրեց Էլլին՝ փորձելով ժպտալ:

- Ի՞նչ նկատի ունես:

- Այս ամենը: Հայտնվել եմ հենց այնպես, չգիտես ինչու, չգիտես որտեղից: Ու ինքս էլ չգիտեմ՝ ինչ եմ ուզում ասել: Կմտածես՝ խենթ եմ:

- Դու խենթ չես,- սփոփեց նրան Նոյը, բռնեց նրա ձեռքն առանց

որևէ դիմադրության հանդիպելու և շարունակեց.- Թեև չգիտեմ՝ ինչու, բայց տեսնում եմ, որ քեզ համար հեշտ չէ: Գնանք զբոսնելու:

- Ինչպես տարիներ առաջ:

- Այո: Կարծում եմ՝ երկուսիս էլ չէր խանգարի:

Էլլին վարանեց ու հայացքն ուղղեց տան մուտքին:

- Որևէ մեկին զգուշացնելու կարիք կա՞:

Նոյն օրորեց գլուխը:

- Ոչ: Ոչ ոք չկա: Այս տանը միայն ես ու Քլեմն ենք ապրում:

Հենց նման պատասխան էլ սպասում էր Էլլին, թեև ներքուստ չգիտեր՝ ինչպես վերաբերվել դրան: Նորությունը Նոյին հայտնելը շատ ավելի հեշտ կլիներ, եթե նա մենակ չլիներ:

Նրանք ուղղվեցին դեպի գետն ու շուտով հայտնվեցին գետափով ձգվող արահետին: Ի զարմանս Նոյի՝ Էլլին բաց թողեց նրա ձեռքը և շարունակեց քայլել նրանից բավականաչափ հեռու, որպեսզի անգամ պատահաբար նրանք չդիպչեին իրար:

Նոյն աչքը չէր կտրում նրանից: Էլլին առաջվա պես գեղեցիկ էր, փարթամ վարսեր ուներ ու մեղմ աչքեր և այնքա՞ն նրբագեղ էր քայլում, ասես ճախրում էր: Նոյը գեղեցիկ կանանց շատ էր հանդիպել, կանայք, որոնց կողքով անհնար էր անտարբեր անցնել: Բայց այդ կանանցից ոչ մեկը չուներ այն, ինչ Նոյն ամենից շատ էր գնահատում: Խելք, ինքնավստահություն, ոգու ուժ, կիրք. հատկանիշներ, որոնք ոգեշնչում են մյուսներին ձգտել վեհության, հատկանիշներ, որոնց ձգտում էր հենց ինքը՝ Նոյը:

Էլլին ուներ այդ ամենը: Նոյը գիտեր այդ մասին: Տարիներ անց նրա կողքով քայլելիս նա նորից զգում էր այդ վեհությունը՝ քողարկված աննման գեղեցկությամբ: «Քայլող բանաստեղծություն». ահա թե ինչ բառերով էր նա նկարագրում Էլլիին:

- Որքա՞ն ժամանակ է՝ վերադարձել ես այստեղ,- հարցրեց Էլլին, երբ նրանք բախվեցին խոտածածկ ոչ մեծ մի բլրի:

- Անցյալ դեկտեմբերից: Որոշ ժամանակ հյուսիսում աշխատեցի, իսկ վերջին երեք ամիսը Եվրոպայում էի:

Էլլին հարցախույզ հայացքը հառեց նրան:

- Պատերազմ:

Նոյը գլխով արեց: Էլլին շարունակեց.

- Գիտեի, որ այնտեղ կլինես: Ուրախ եմ, որ քեզ ոչինչ չի պատահել:

- Ես նույնպես,- ասաց Նոյը:

- Ուրախ ես, որ վերադարձել ես հարազատ քաղաք:

- Այո: Այստեղ են իմ արմատները: Այստեղ պիտի լինեմ ես,- Նոյը հանկարծ լռեց, ապա հարցրեց.- Իսկ դո՞ւ: Քո մասին ի՞նչ կասես:

Նոյն անվստահ ուղղեց հարցը՝ կարծես վախենալով լսել պատասխանը:

Էլլին պատասխանեց միայն երկար լռությունից հետո:

- Ես նշանվել եմ:

Նոյը իջեցրեց հայացքը: Հողը կարծես փախավ ոտքերի տակից: Ահա թե ինչ պետք է ասեր նա իրեն:

- Շնորհավորում եմ,- վերջապես ասաց նա՝ փորձելով համոզիչ հնչել,- իսկ հարսանիքը ե՞րբ է:

- Երեք շաբաթից: Լոնը ցանկացավ՝ նոյեմբերին նշենք:

- Լո՞նը:

- Լոն Համոնդ Կրտսեր: Նշանածս է:

Նոյը չզարմացավ: Համոնդները նահանգի ամենահզոր ու ազդեցիկ ընտանիքներից մեկն էին՝ բամբակի արտադրությամբ հարստացած: Ի տարբերություն իր սեփական հոր՝ Լոն Համոնդ Ավագի մահը բոլոր լրագրերի շապիկին էր հայտնվել:

- Լսել եմ նրանց մասին: Նրա հայրը հսկայական հարստություն էր կուտակել: Լոնը շարունակո՞ւմ է նրա գործը:

Էլլին օրորեց գլուխը.

- Ոչ, նա փաստաբան է: Նա իր սեփական ընկերությունն ունի քաղաքի կենտրոնում:

- Իր ազգանվան պարագայում հաճախորդների պակաս չի ունենա:

- Այդպես էլ կա: Նա շատ է աշխատում:

Նոյին թվաց՝ Էլլիի ձայնի մեջ տխրություն կար, և անմիջապես հետևեց հաջորդ հարցը.

- Նա քեզ լա՞վ է վերաբերվում:

Էլլին անմիջապես չպատասխանեց, կարծես առաջին անգամ էր մտածում այդ հարցի շուրջ:

- Այո, նա լավ մարդ է,- ասաց վերջապես,- Նո՛յ, նա քեզ դուր կգար, եթե ճանաչեիր նրան:

Այս անգամ ևս Նոյն անտարբերություն զգաց նրա պատասխանում, կամ, համենայն դեպս, նրան այդպես թվաց: Իսկ գուցե նա պարզապես այդպե՞ս էր ուզում մտածել:

- Ինչպե՞ս է հայրդ,- հարցրեց Էլլին:

Նոյը մի քանի քայլ արեց, նախքան կպատասխաներ:

- Մահացել է: Տարեսկզբին՝ իմ վերադառնալուց անմիջապես հետո:

- Ցավում եմ,- փորձեց սփոփել Էլլին՝ իմանալով՝ որքան էր Նոյը սիրում նրան:

Նոյը գլխով արեց, և նրանք լուռ շարունակեցին ճանապարհը:

Հասնելով բլրի գագաթին՝ նրանք կանգ առան: Հեռվում երևում էր կաղնին, որի հետևում փայլին էր տալիս արևի նարնջագույն սկավառակը: Էլլին հետևում էր մայրամուտին, մինչդեռ Նոյի հայացքը միայն մի հասցեատեր ուներ:

- Որքա՞ն հիշողություններ են ապրում այդ ծառի տակ, Էլլի:

- Գիտեմ,- ասաց Էլլին ժպիտով,- տեսա ճանապարհին, երբ քեզ մոտ էի գալիս: Հիշո՞ւմ ես այն օրը, որ անցկացրինք այդ կաղնու տակ:

- Այո,- պարզապես ասաց Նոյը:

- Հաճախ ես հիշում:

- Պատահում է,- պատասխանեց Նոյը,- հատկապես երբ աշխատում եմ մոտակայքում: Չէ՞ որ այն հիմա իմ հողատարածքում է գտնվում:

- Գնե՞լ ես:

- Ես պարզապես չէի կարող հանգիստ նայել՝ ինչպես են մի օր կտրում ծառն ինչ-որ խոհանոցի կահույք պատրաստելու համար:

Էլլին թաքուն ծիծաղեց. չգիտես ինչու, Նոյի խոստովանությունը բավարարվածություն բերեց նրա հոգուն:

- Բանաստեղծություններ դեռ կարդո՞ւմ ես:

Նոյը գլխով արեց.

- Այո: Երբեք չեմ դադարել: Դա իմ արյան մեջ է:

- Գիտե՞ս՝ դու իմ երբևէ հանդիպած միակ բանաստեղծն ես:

- Ես բանաստեղծ չեմ: Միայն կարդում եմ. փորձը ցույց տվեց, որ ինձնից գրող դուրս չի գա:

- Միևնույն է, դու բանաստեղծ ես, Նոյ Թեյլոր Քելհուն,- քնքշորեն ասաց Էլլին,- ես հաճախ եմ հիշում՝ ինչպես էիր կարդում ինձ համար: Դու առաջին մարդն էիր, որ բանաստեղծություններ էր կարդում ինձ համար, ասենք՝ առաջինը և միակը:

Այդ խոսքերը երկուսին էլ ստիպեցին թաթախվել հիշողություններով, և նրանք անշտապ բռնեցին տունդարձի ճանապարհը՝ անցնելով նավամատույցի մոտով ձգվող նոր արահետով: Արևն ավելի էր իջնում՝ ներկելով երկինքը նարնջագույնով:

- Որքա՞ն ես մնալու այստեղ,- հարցրեց Նոյը:

- Չգիտեմ: Կարճ ժամանակով եմ եկել: Հավանաբար կմեկնեմ վաղը կամ մյուս օրը:

- Նշանածդ նո՞ւյնպես այստեղ է գործով:

Էլլին օրորեց գլուխը.

- Ոչ, նա Ռոլիում է:

Նոյի հոնքերը վեր ձգվեցին.

- Նա գիտի՞, որ այստեղ ես:

Էլլին նորից տարուբերեց գլուխն ու անվստահ ասաց.

- Ոչ: Ես ասել եմ նրան, որ որոշ գնումներ ունեմ անելու: Նա չէր հասկանա այստեղ գալուս պատճառը:

Նոյը նման պատասխան չէր սպասում: Մի բան էր այցելության գալը, բոլորովին այլ բան՝ թաքցնել ճշմարտությունը նշանածից:

- Կարիք չկար այստեղ գալ նշանդրեքիդ լուրը հայտնելու համար: Կարող էիր պարզապես գրել կամ թեկուզ զանգել:

- Այո, բայց, չգիտես ինչու, ուզում էի անձամբ հայտնել:

- Ինչո՞ւ:

Էլլին վարանեց:

- Չգիտեմ...- հազիվ կմկմաց նա, բայց Նոյը հավատաց նրան:

Նրանք շարունակեցին քայլել լռության մեջ: Մանրիկ քարերը ճռթճռթում էին նրանց ոտքերի տակ:

- Էլլի, սիրո՞ւմ ես նրան,- հանկարծ հարցրեց Նոյը:

- Սիրում եմ,- մեխանիկորեն ասաց Էլլին:

Պատասխանը ցավեցրեց Նոյին, բայց կրկին հարազատ ձայնում նա տխրություն զգաց, կարծես Էլլին ինքն իրեն ուզում էր համոզել, որ ճշմարտությունն է ասում: Նոյը կանգ առավ ու քնքշորեն իր ձեռքերի մեջ առավ նրա ուսերն ու ուղիղ աչքերի մեջ նայեց: Արևի նահանջող լույսն իր արտացոլանքը գտավ Էլլիի աչքերում:

- Եթե դու երջանիկ ես, Էլլի, և սիրում ես նրան,- ասաց Նոյը,- ես չեմ խանգարի, որ վերադառնաս նրա մոտ: Բայց եթե սրտումդ թեկուզ աննշան կասկած կա, ապա մի՛ արա դա: Հետդարձի ճանապարհ չի լինելու:

Գրեթե անմիջապես հետևեց Էլլիի պատասխանը.

- Իմ որոշումը ճիշտ է, Նո՛յ:

Նոյը մի պահ չգիտեր՝ հավատա՞ր լսածին, թե՞ ոչ: Ապա պարզապես գլխով արեց, և նրանք շարունակեցին զբոսանքը: Շատ չանցած՝ նա նորից հարցրեց.

- Ես ավելի եմ բարդացնում ամեն ինչ, այնպես չէ՞:

- Ամեն ինչ կարգին է,- ասաց Էլլին՝ հազիվ ժպտալով,- ես իրավունք չունեմ քեզ մեղադրելու:

- Ամեն դեպքում՝ ների՛ր:

- Կարիք չկա: Դու պատճառ չունես վատ զգալու: Այդ ես եմ, որ պետք է ներողություն խնդրեմ: Երևի պետք է պարզապես գրեի:

- Անկեղծ ասած՝ ուրախ եմ, որ եկել ես: Անկախ ամեն ինչից: Քեզ նորից տեսնելը երջանկություն է:

- Շնորհակալ եմ, Նո՛յ:

- Ի՞նչ ես կարծում, մենք կարո՞ղ էինք ամեն ինչ նորից սկսել:

Էլլին շփոթված նրան նայեց:

- Դու երբևէ իմ ունեցած լավագույն ընկերն ես եղել, Էլլի,- շարունակեց Նոյը,- կուզենայի՝ ընկերներ մնանք, անգամ եթե նշանված ես, ու անգամ եթե մի քանի օր ես մնալու այստեղ: Գուցե նորի՞ց սկսենք ճանաչել իրար: Ի՞նչ կասես:

Էլլին մտքերով տարվեց, չգիտեր՝ որն է ճիշտ. մնա՞լը, թե՞ հեռանալը: Բայց քանի որ Նոյն արդեն գիտեր նշանդրեքի մասին, մնալու որոշումը թերևս սխալ չէր ընկալվի նրա կողմից: Համենայն դեպս ոչ մի վատ բան չկար դրանում: Էլլին մեղմ ժպտաց ու գլխով արեց.

- Համաձայն եմ:

- Շատ լավ: Ընթրե՞նք միասին: Մի լավ վայր գիտեմ, որտեղ քաղաքում ամենալավ ծովախեցգետինն են պատրաստում:

- Գայթակղիչ է հնչում: Որտե՞ղ է:

- Իմ տանը: Ողջ շաբաթ թակարդներ եմ լարել, մի քանի օր առաջ ստուգեցի դրանք. բավականին առատ որս էին ապահովել: Ի՞նչ կասես:

- Հիանալի միտք է:

Նոյը ժպտաց ու բթամատով ուսի վրայով ցույց տվեց թակարդները:

- Շատ լավ: Դրանք նավամատույցի մոտ են: Մի քանի րոպեից կվերադառնամ:

Էլլին ուղեկցեց նրան հայացքով և նկատեց՝ լարվածությունը, որ ծագել էր իրենց՝ երկուսի միջև նշանդրեքի լուրը հայտնելուց հետո, սկսեց նահանջել: Փակելով աչքերը՝ նա սահեցրեց ձեռքը մազերի միջով և թույլ տվեց՝ սյուքը շոյի իր այտերը: Նա ագահաբար ներս առավ օդը, մի քանի վայրկյան շունչը պահեց, ապա դանդաղ արտաշնչեց՝ զգալով՝ ինչպես է թուլանում ուսերի լարվածությունը: Այնուհետև վերջապես բացեց աչքերն ու սկսեց վայելել գեղեցկությունը, որ շրջապատում էր իրեն:

Նա սիրում էր այսպիսի երեկոները, երբ մեղմ հարավային քամիներն ամենուր տարածում էին աշնան տերևների նուրբ բույրը: Սիրում էր ծառերն ու նրանց սոսափը, որն իր հետ տանում էր լարվածության վերջին նշույլները: Հանկարծ նա շրջվեց դեպի Նոյն ու նրան նայեց բոլորովին նոր աչքով, ասես առաջին անգամ էր տեսնում նրան:

Աստվա՜ծ իմ, որքա՜ն գեղեցիկ էր նա, այն էլ այսքան տարիներ հետո...

Էլլին չէր կարողանում հայացքը կտրել նրանից: Նոյը ձեռքը մեկնեց դեպի ջրի մեջ կախված պարանը, սկսեց քաշել այն, և չնայած թանձրացող մութին՝ Էլլիի աչքից չվրիպեց՝ ինչպես պրկվեցին Նոյի բազկի մկանները, երբ նա ջրի միջից բարձրացնում էր վանդակը: Նոյը մի պահ թույլ տվեց՝ վանդակը կախված մնա գետի վրա, ապա մի լավ թափահարեց այն, որ միջի ջուրը թափվի: Վանդակն ափ հանելուց հետո բացեց այն, սկսեց մեկ առ մեկ հանել ծովախեցգետիններն ու տեղավորել դույլի մեջ:

Էլլին քայլերն ուղղեց դեպի Նոյը՝ ականջ դնելով ծղրիդների ձայնին ու, չգիտես ինչու, հիշեց՝ ինչպես էին որոշում օդի ջերմաստիճանը, երբ դեռ երեխա էին: Նա հաշվեց, թե մեկ րոպեում քանի անգամ ծղրիդները ձայնեցին, ապա այդ թվին գումարեց քսանինը: «Վաթսունյոթ աստիճան,- մտածեց նա ու ժպտաց,- չգիտեմ՝ որքան հստակ է, բայց ճշմարտանման է թվում»:

Էլլին հասցրել էր մոռանալ՝ որքան թարմ է օդն այս կողմերում, և որքան գեղեցիկ է ամեն ինչ: Հեռվում երևում էր տունը: Նոյը մի քանի սենյակներում վառ էր թողել լույսը, և թվում էր՝ հարևանությամբ ուրիշ տներ չկային: Համենայն դեպս, շուրջն այլ լույսեր չէին երևում: Գուցե էլեկտրականությունն չկար: Քաղաքից այն կողմ նման երևույթները սովորական էին: Հազարավոր գյուղական տներում էլեկտրական լուսավորությունն անթույլատրելի ճոխություն էր դեռ համարվում:

Էլլին բարձրացավ նավամատույց, և տախտակները ճռճռացին նրա ոտքերի տակ ջութակի ժանգոտած լարերի պես: Նոյը բարձրացրեց գլուխը, աչքով արեց, ապա շարունակեց ստուգել ծովախեցգետինները՝ համոզվելու համար, որ դրանք շատ փոքր չեն: Էլլին մոտեցավ ճոճաթոռին, որ նույնպես նավամատույցում էր, ու ձեռքը սահեցրեց թիկնակի վրայով: Պատկերացրեց՝ ինչպես էր Նոյը նստում դրա վրա, ձուկ որսում, միտք անում, կարդում: Ճոճաթոռը հին էր, գունաթափ ու կոպտացած: Հետաքրքիր է՝ որքա՞ն ժամանակ էր անցկացնում Նոյը՝ այդ աթոռին նստած, միայնության մեջ, և ի՞նչ մտքեր էին այցելում նրան:

- Հայրիկի աթոռն է,- ասաց Նոյը՝ առանց գլուխը բարձրացնելու:

Էլլին գլխով արեց: Երկնքում չղջիկներ երևացին, իսկ ներքևում ծղրիդների երեկոյան ներդաշնակ խմբերգին միացան գորտերը:

Նա անցավ նավամատույցի մյուս կողմը՝ տարօրինակ թեթևություն զգալով ներսում: Նրան այստեղ էր բերել անհաղթահարելի

ցանկությունը, և երեք շաբաթվա մեջ առաջին անգամ այն այլևս չէր անհանգստացնում նրան: Էլլիի համար կարևոր էր, որ Նոյն իմանա իր նշանդրեքի մասին, հասկանա իրեն, ընդունի այդ փաստը: Այժմ ավելի քան համոզված էր, որ ճիշտ էր վարվել՝ այստեղ գալով: Եվ կրկին Նոյի մասին մտքերը տարան նրան դեպի միասին անցկացրած ամռան օրերը: Գլուխը կախած՝ նա դանդաղ շրջանցեց նավամատույցը, մինչև գտավ տախտակներից մեկի վրա փորագրված սիրտը՝ ներսում գրված. «Նոյը սիրում է Էլլիին»: Նոյը փորագրել էր այն Էլլիի մեկնելուց մի քանի օր առաջ:

Սյուքը խախտեց շուրջը տիրող լռությունը: Էլլիի մարմնով թեթև դող անցավ: Նա ձեռքերը կրծքին խաչեց և այդպես կանգնած՝ մերթ փորվածքին էր նայում, մերթ գետի ջրերին: Քիչ անց Նոյը մոտեցավ նրան: Էլլին զգում էր նրա շունչը, նրա ջերմությունը:

- Այստեղ այնքա՜ն խաղաղ է,- ասաց նա երազկոտ ձայնով:

- Գիտեմ,- հաստատեց Նոյը,- հաճախ եմ գալիս այստեղ, թեկուզ պարզապես ջրին մոտ լինելու համար: Այն խաղաղեցնում է հոգիս:

- Ես նույնպես քո փոխարեն այդպես կանեի:

- Գնանք: Շուտով մոծակները կհայտնվեն, բացի դրանից էլ՝ ընթրիքի ժամն է:

Երկինքը մթնեց: Նոյը քայլերն ուղղեց դեպի տուն՝ տանելով Էլլիին իր հետ: Լռության մեջ Էլլիի միտքը դեգերում էր, իսկ Նոյի կողքից քայլելով՝ նա թեթև գլխապտույտ զգաց: Հետաքրքիր էր՝ ինչ էր մտածում Նոյն իր հանկարծակի հայտնվելու մասին: Նա ինքն էլ չգիտեր՝ ինչու էր եկել այստեղ: Մի քանի րոպե անց նրանք արդեն տան մոտ էին: Քլեմը դիմավորեց նրանց՝ թաց քթով քսմսվելով նրանց ոտքերին: Նոյը նշան արեց նրան հեռանալու, և խեղճ շունը պոչը քաշելով չքվեց:

- Վերցնելու ինչ-որ բան ունե՞ս,- հարցրեց Նոյը՝ ցույց տալով Էլլիի մեքենան:

- Ոչ, ես առավոտյան եմ եկել և իրերս իջևանատանն եմ թողել:

Էլլիին սեփական ձայնն անճանաչելի թվաց, ասես ապրած տարիները հանկարծ ի չիք էին դարձել:

- Շատ լավ,- ասաց Նոյը՝ բարձրանալով ծածկապատշգամբի սանդուղքով:

Նա ցած դրեց դույլը դռան մոտ, ապա ներս մտավ և գնաց խոհանոց, որ անմիջապես մուտքի աջ կողմում էր՝ ընդարձակ և թարմ փայտի բույրով լցված: Դարակներն ու հատակը կաղնու փայտից էին: Մեծ պատուհանները նայում էին դեպի արևելք՝ առավոտյան ներս թողնելով արևի լույսը: Ամեն ինչ ճաշակով էր արված և չափի մեջ՝ ի տարբերություն շատ հին տների, որոնք տեսքի բերելու համար տանտերերը չափն անցնում են:

- Դեմ չե՞ս, եթե շրջեմ տանը:

- Ոչ, իհարկե: Քեզ ազատ զգա: Իսկ ես կզբաղվեմ մթերքներով, որ դեռ առավոտյան եմ գնել ու չեմ հասցրել դասավորել:

Նրանց հայացքները մի կարճ ակնթարթ նորից հանդիպեցին: Էլլին զգում էր իր վրա Նոյի հայացքն անգամ խոհանոցից դուրս գալիս: Սիրտը դարձյալ սկսեց թրթռալ:

Էլլին շրջեց բոլոր սենյակներում՝ հիանալով դրանց նրբաճաշակությամբ: Տան նախկին տեսքը հիշելու համար ջանք էր պետք գործադրել: Էլլին իջավ սանդուղքով, գնաց դեպի խոհանոց և տեսավ Նոյի կիսադեմը: Մի պահ նա Էլլիին նորից նույն տասնյոթ տարեկան պատանին թվաց. նա քարացավ տեղում: «Գրողը տանի,- ասաց նա ինքն իրեն,- հավաքի՛ր քեզ: Մի՛ մոռացիր, որ նշանված ես արդեն»:

Նոյը կանգնած էր սեղանի մոտ, դարակներից մի քանիսը բաց էին մնացել, իսկ հատակին ընկած էին մթերքների մի քանի դատարկ տոպրակներ: Նա ցածրիկ շվշվացնում էր: Նա ժպտաց Էլլիին, ապա ևս մի քանի տուփ տեղավորեց դարակներում: Էլլին

կանգնեց նրանից մի քանի քայլ հեռավորության վրա, հենվեց սեղանին, մի ոտքը գցեց մյուսի վրա և հիացած օրորեց գլուխը:

- Աչքերիս չեմ հավատում, Նոյ: Որքա՞ն ժամանակ պահանջվեց տունն այսպես վերականգնելու համար:

Դատարկելով մթերքների վերջին տոպրակը՝ Նոյը գլուխը բարձրացրեց և ասաց.

- Գրեթե մեկ տարի:

- Ի՞նքդ ես ամեն ինչ անում:

Նոյը քթի տակ ծիծաղեց:

- Ոչ, երբ երիտասարդ էի, մտածում էի՝ այդպես էլ կլինի: Այդ մտքով էլ սկսել էի: Բայց աշխատանքը չափազանց ծանր էր: Տարիներ էին պետք գործն ավարտին հասցնելու համար: Այնպես որ, ի վերջո, ես մարդիկ վարձեցի, որոնք ինձ օգնեցին... իրականում բավականին մեծ թվով մարդիկ: Թեև նույնիսկ նրանց հետ շունչ քաշելու ժամանակ չունեի, գրեթե միշտ աշխատում էի մինչև կեսգիշեր:

- Ինչո՞ւ էիր այդպես տանջում քեզ:

«Ուրվականների պատճառով»,- ուզում էր ասել Նոյը, բայց լռեց:

- Չգիտեմ: Երևի պարզապես ուզում էի արագ ավարտել: Մինչ ընթրիքը պատրաստ կլինի, խմելու ինչ-որ բան կուզե՞ս:

- Իսկ ի՞նչ կա խմելու:

- Ոչ մի յուրահատուկ բան, իրականում: Գարեջուր, թեյ, սուրճ:

- Թեյ կխմեմ:

Նոյը հավաքեց մթերքների դատարկ տոպրակներն ու մի կողմ դրեց դրանք, ապա գնաց խոհանոցին կից փոքրիկ սենյակը և վերադարձավ՝ մի տուփ թեյ ձեռքին: Թեյի մի քանի փաթեթիկ հանեց, դրեց դրանք վառարանի կողքին, ապա ջուր լցրեց թեյնիկի մեջ, դրեց վառարանին ու վառեց լուցկին: Էլլիի ականջին հասան կյանք ստացած բոցի ձայները:

- Մեկ րոպեից պատրաստ կլինի,- ասաց Նոյը,- այս վառարանը բավականին արագ է տաքացնում:

- Հիանալի է:

Երբ թեյնիկը սկսեց սուլել, Նոյը երկու բաժակ թեյ լցրեց և բաժակներից մեկը փոխանցեց Էլլիին:

Էլլին ժպտաց, մի կում խմեց թեյից և ձեռքով պատուհանը ցույց տալով՝ ասաց.

- Գրազ կգամ՝ խոհանոցում պարզապես հիասքանչ է առավոտյան, երբ արևի լույսը թափանցում է ներս:

Նոյը գլխով արեց:

- Այդպես էլ կա: Հենց դրա համար էլ տան արևելյան կողմում մեծ պատուհաններ եմ տեղադրել: Նույնիսկ ննջարաններում:

- Վստահ եմ՝ հյուրերդ գնահատում են դա, եթե իհարկե նրանք չեն սիրում երկար քնել:

- Իրականում դեռ ոչ ոքի չեմ հյուրընկալել: Հորս մահից հետո չգիտեմ նույնիսկ ում հրավիրել իմ տուն:

Դատելով Նոյի տոնից՝ կարելի էր ասել, որ նա պարզապես պատասխանում է իրեն տրված հարցերին: Սակայն Էլլին, չգիտես ինչու, զգաց՝ որքա՞ն միայնակ է նա: Նոյը կարծես թե գլխի ընկավ, որ ձայնը մատնել է իրեն, ուստի շտապեց փոխել խոսակցության թեման:

- Շոգեխաշելուց առաջ անհրաժեշտ է մարինացնել ծովախեցգետինները,- ասաց նա՝ դնելով իր բաժակը սեղանին:

Նա գնաց դեպի պահարանն ու մի մեծ կաթսա հանեց՝ շոգեխաշման հարմարանքով և կափարիչով: Ջուր լցրեց դրա մեջ ու դրեց վառարանին:

- Կարո՞ղ եմ քեզ որևէ բանով օգնել:

- Իհարկե,- պատասխանեց Նոյը ուսի վրայով,- գուցե բանջարեղենը կտրատես ռագուի համար: Սառնարանից վերցրո՛ւ, ամեն տեսակի կա, իսկ թասերն ահա այստեղ են:

Նա ցույց տվեց լվացարանակոնքի կողքի դարակը: Էլլին ևս մի կում թեյ խմելուց հետո դրեց բաժակը սեղանին և հանեց թասը: Նա մոտեցավ սառնարանին և ներքևի դարակում գտավ բամիա, ցուկինի, սոխ և գազար: Նոյը միացավ նրան սառնարանի դիմաց, և Էլլին մի կողմ քաշվեց, որ տեղ ազատի նրա համար: Նոյի կողքին կանգնած՝ Էլլին զգում էր նրա բույրը՝ անխառն ու այնքան ծանոթ. երբեք ոչ մի ուրիշ բույրի հետ չէր շփոթի: Իսկ երբ Նոյն առաջ խոնարհվեց ու ձեռքը տարավ դարակի ներսը, Էլլին իր ձեռքի վրա զգաց նրա մատների հպումը: Նոյը գարեջուր հանեց սառնարանից և մի շիշ կծու սոուս, ապա վերադարձավ վառարանի մոտ: Նա բացեց գարեջուրն ու լցրեց այն կաթսայի մեջ, ապա ավելացրեց կծու սոուսը ու մի քանի այլ համեմունքներ: Մի լավ խառնելուց և համասեռ զանգված ստանալուց հետո նա հետնամուտքով դուրս եկավ ծովախեցգետինների հետևից: Նախքան ներս մտնելը նա մի պահ կանգնեց և սկսեց հետևել, թե ինչպես էր Էլլին կտրատում գազարը: Նոյը նորից մտքերով տարվեց. հետաքրքիր է՝ ինչու էր Էլլին այստեղ եկել, հատկապես այն դեպքում, երբ արդեն նշանված էր: Տարօրինակ էր: Թեև Էլլին միշտ էլ անկանխատեսելի է եղել:

Նոյը ժպտաց՝ հիշելով՝ ինչպիսին էր Էլլին նախկինում՝ տաքարյուն, հանդուգն ու կրքոտ, ինչպիսին լինում են իսկական նկարիչները. համենայն դեպս այդպիսին էր պատկերացնում նրանց Նոյը: Իսկ Էլլիի տաղանդը կասկածի առիթ չէր տալիս. Աստված առատաձեռն էր գտնվել նրա հանդեպ: Նրա աշխատանքները չէին զիջում այն կտավներին, որոնք Նոյը տեսել էր Նյու Յորքի թանգարաններում:

Էլլին իր կտավներից մեկը Նոյին էր նվիրել հեռանալուց առաջ՝ նույն ամռանը: Այժմ այն կախված էր հյուրասենյակում՝ բուխարու վերևում: Էլլին այն իր երազների արտացոլումն էր համարում, իսկ

Նոյն այնքան զգացմունք էր տեսնում այնտեղ: Երբ նա հայացք էր գցում կտավին երեկոյան ժամերին, գույներն ասես շունչ էին ստանում, և Նոյին թվում էր՝ եթե ավելի ուշադիր նայեր, կարող էր պատկերացնել՝ ինչ էր մտածել Էլլին ամեն անգամ վրձինը կտավին հպելիս:

Հեռվում շան հաչոց լսվեց, և Նոյը հանկարծ սթափվեց՝ հասկանալով, որ արդեն բավականին երկար ժամանակ կանգնած էր շեմին: Նա արագ փակեց դուռն ու վերադարձավ խոհանոց՝ փորձելով կռահել՝ արդյոք Էլլին զգացել էր իր երկար բացակայությունը:

- Ինչպե՞ս են գործերը,- հարցրեց Նոյը՝ տեսնելով, որ Էլլին գրեթե վերջացրել է:

- Հոյակապ: Գրեթե վերջացրի: Էլ ինչ ունենք ընթրիքի համար:

- Տնական հաց:

- Տնակա՞ն:

- Հարևանուհիս է բերել,- ասաց Նոյն ու խեցգետիններով դույլը դրեց լվացարանակոնքի վրա:

Նա բացեց ծորակն ու սկսեց լվանալ ծովախեցգետինները՝ նախ պահելով դրանք ջրի տակ, ապա թույլ տալով՝ լվացարանակոնքի վրայով այս ու այն կողմ վազեն, մինչ ինքը կլվանար հաջորդը: Էլլին վերցրեց բաժակն ու մոտեցավ նրան:

- Ինչպե՞ս ես ձեռքդ առնում դրանք, չե՞ս վախենում, որ կխայթեն:

- Ոչ, եթե նրանց այսպես բռնես,- պատասխանեց Նոյն ու ցույց տվեց՝ ինչպես է պետք վերցնել ծովախեցգետինները:

- Միշտ մոռանում եմ, որ ամբողջ կյանքդ սրանով ես զբաղվել,- ասաց Էլլին ժպտալով:

- Նյու Բեռնը փոքր քաղաք է, բայց այստեղ սովորում ես կարևոր բաները:

Էլլին կռթնեց սեղանին՝ Նոյին մոտ և խմեց, վերջացրեց թեյը:

Բոլոր ծովախեցգետինները մաքրելուց հետո Նոյը դրանք լցրեց կաթսայի մեջ: Ապա սկսեց լվանալ ձեռքերը՝ միաժամանակ զրուցելով Էլլիի հետ.

- Չե՞ս ուզում ծածկապատշգամբում նստել մի քանի րոպե: Լավ կլիներ կես ժամ սպասել, մինչև ծովախեցգետինները մարինացվեն:

- Իհարկե,- ասաց Էլլին:

Նոյը չորացրեց ձեռքերը, և նրանք միասին դուրս եկան ծածկապատշգամբ: Նոյը վառեց լույսը և նստեց հին ճոճաթոռին՝ նորն առաջարկելով Էլլիին: Իսկ երբ նկատեց, որ նրա բաժակն արդեն դատարկ է, նորից ներս գնաց և վերադարձավ ևս մեկ բաժակ թեյով՝ նրա համար և մի շիշ գարեջրով՝ իր համար: Բաժակը մեկնեց Էլլիին: Վերջինս վերցրեց և, նախքան կդներ այն սեղանին, որ աթոռների կողքին էր, մի կում խմեց թեյից:

- Այստեղ էիր նստած, չէ՞, երբ եկա:

- Այո,- պատասխանեց Նոյը՝ ավելի հարմար տեղավորվելով աթոռին,- երեկոներս այստեղ եմ անցկացնում, սովորություն է դարձել:

- Արդեն հասկանում եմ՝ ինչու,- ասաց Էլլին՝ նայելով շուրջը,- իսկ ինչո՞վ ես զբաղվում հիմա:

- Իրականում հիմա, բացի տան վրա աշխատելուց, ուրիշ ոչինչ չեմ անում: Ստեղծագործական եռանդս այդտեղ եմ ներդնում:

- Բայց ինչպե՞ս... նկատի ունեմ...

- Մորիս Գոլդմեն:

- Չհասկացա...

Նոյի դեմքին ժպիտ հայտնվեց:

- Իմ նախկին ղեկավարը հյուսիսից: Նա ինձ իր բիզնեսից մի մաս առաջարկեց, երբ ես կամավորագրվեցի պատերազմ գնալու համար, իսկ երբ պատերազմն ավարտվեց, նա արդեն մահացել էր: Նահանգներ վերադառնալուն պես նրա փաստաբանն ինձ կլորիկ

գումարով չեկ հանձնեց, որը բավական էր այս տունը գնելու և վերանորոգելու համար:

Էլլին քթի տակ ծիծաղեց.

- Միշտ ասում էիր՝ որևէ միջոց կգտնես այս տունը գնելու և վերականգնելու համար:

Երկուսն էլ մի պահ լռեցին՝ ընկնելով հիշողությունների գիրկը: Էլլին ևս մի կում թեյ խմեց:

- Հիշո՞ւմ ես՝ ինչպես էինք դեգերում այս կողմերում, երբ առաջին անգամ պատմեցիր ինձ այս տան մասին:- Նոյը գլխով արեց, և Էլլին շարունակեց.- Այդ երեկո սովորականից մի փոքր ուշ վերադարձա տուն: Ծնողներս սաստիկ զայրացած դիմավորեցին ինձ: Մինչև այսօր աչքերիս առաջ է այդ պատկերը. հայրս ծխելով հետուառաջ էր անում հյուրասենյակում, մայրս նստած էր բազմոցին՝ հայացքն առջևում ինչ-որ կետի: Երդվում եմ՝ նրանք այնպիսի տեսք ունեին, ասես հարազատներից մեկն էր մահացել: Առաջին անգամ նրանք գիտակցեցին մեր հարաբերությունների լրջությունը: Այդ երեկո մայրս երկար զրույց ունեցավ ինձ հետ: Շատ լավ եմ հիշում նրա խոսքերը. «Քեզ, անկասկած, թվում է՝ ես չեմ հասկանում՝ ինչ ես զգում, բայց սխալվում ես, ես շատ լավ եմ հասկանում ամեն ինչ: Բայց երբեմն մեր ապագան կանխորոշվում է նրանով, թե ով ենք մենք՝ անկախ նրանից, թե որն է մեր ուզածը»: Մորս խոսքերն ինձ մեծ ցավ պատճառեցին:

- Հաջորդ օրը դու պատմեցիր ինձ այդ մասին: Ինձ համար նույնպես տհաճ էր դա լսելը: Ծնողներդ դուր էին եկել ինձ, և մտքովս անգամ չէր անցնում, որ նրանք չեն համակրում ինձ:

- Հարցը դա չէր: Նրանք պարզապես կարծում էին, որ դու ինձ համապատասխան չես:

- Ի՞նչ տարբերություն:

Նոյի ձայնի մեջ դառնություն հնչեց, և Էլլին գիտեր, որ նա ճիշտ

էր: Մատները սահեցնելով մազերի միջով և հետ տանելով աչքերին ընկած մազափնջերը՝ նա հայացքն ուղղեց աստղերին:

- Ճիշտ ես, չկա տարբերություն: Այն ժամանակ էլ գիտեի այդ մասին: Գուցե դա էր պատճառը, որ ես ու մայրս հեռացանք իրարից:

- Իսկ հիմա ի՞նչ ես մտածում:

- Նույնը, ինչ այն ժամանակ: Սխալ է, անարդար է, սարսափելի: Չի կարելի աղջկան նման բան ասել... որ դիրքն առավել կարևոր է, քան զգացմունքները:

Նման պատասխանը ստիպեց Նոյին քնքշությամբ ժպտալ, բայց նա ոչինչ չասաց:

- Ես երբեք չեմ մոռացել քեզ ու մեր միասին անցկացրած ամառը:

- Իսկապե՞ս:

- Մի՞թե չես հավատում,- անկեղծորեն զարմացավ Էլլին:

- Դու չէիր պատասխանում իմ նամակներին:

- Ի՞նչ նամակներ:

- Տասնյակ նամակներ, որ գրել եմ քեզ: Գրել եմ երկու տարի շարունակ՝ այդպես էլ չստանալով գեթ մեկ պատասխան:

Էլլին տարակուսած օրորեց գլուխն ու իջեցրեց հայացքը:

- Ես ոչինչ չգիտեի...- վերջապես արտաբերեց նա հազիվ լսելի ձայնով:

Նոյի համար ակնհայտ էր՝ ինչու նամակներն Էլլիին չեն հասել: Նա միշտ էլ կասկածել էր, որ դրանք կարող էին նրա մոր ձեռքն ընկնել: Այժմ արդեն Էլլիի համար նույնպես պարզ էր ամեն ինչ:

- Մորս կողմից մեծ սխալ էր այդպես վարվելը, Նո՛յ, և ես ցավում եմ դրա համար: Բայց փորձի՛ր հասկանալ: Մեր հեռանալուց հետո նա, հավանաբար, կարծում էր՝ ինձ համար ավելի հեշտ կլինի, եթե ոչինչ չհիշեցնի քեզ: Մայրս չէր կարող պատկերացնել՝ որքան կարևոր ես դու ինձ համար, և եթե անկեղծ լինեմ, նույնիսկ չգիտեմ՝

արդյոք նա երբևէ սիրե՞լ է հորս այնպես, ինչպես ես էի սիրում քեզ: Այդկերպ նա պարզապես ցանկանում էր պաշտպանել ինձ, և իր կարծիքով դա անելու լավագույն տարբերակը ինձնից քո նամակները թաքցնելն էր:

- Նա իրավունք չուներ նման որոշում կայացնելու,- ասաց Նոյն անվրդով:

- Գիտեմ:

- Բայց որևէ բան կփոխվե՞ր, եթե ստանայիր նամակներս:

- Իհարկե: Միշտ ցանկացել եմ իմանալ՝ որտեղ ես, ինչ եղավ քեզ հետ:

- Նկատի ունեմ մեզ. ամեն ինչ այլ կե՞րպ կարող էր դասավորվել:

Էլլին անմիջապես չպատասխանեց:

- Չգիտեմ, Նո՛յ: Իսկապես չգիտեմ, և դու էլ չգիտես՝ կարծում եմ: Մենք այլևս առաջվանը չենք: Երկուսս էլ փոխվել ենք, մեծացել:

Նա լռեց: Նոյը նույնպես լուռ էր: Էլլին հայացքն ուղղեց դեպի գետը:

- Թեև, այո, Նո՛յ,- վերջապես շարունակեց նա,- կարծում եմ՝ ամեն ինչ այլ կերպ կարող էր դասավորվել: Համենայն դեպս կուզենայի հավատալ դրան:

Նոյը գլխով արեց, հայացքը իջեցրեց, ապա հարցրեց՝ չնայելով Էլլիի կողմը.

- Ինչպիսի՞ն է նա... Լոնը:

Հարցն անսպասելի էր Էլլիի համար: Լոնի անունը հիշատակելով՝ Նոյն արթնացրեց նրա մեջ մեղքի աղոտ զգացումը: Էլլին մի պահ չգիտեր ինչ պատասխանել: Նա ձեռքը մեկնեց դեպի իր բաժակը, վերցրեց այն, մի կում էլ խմեց թեյից և ականջ դրեց փայտփորիկի՝ հեռվից հասնող թակոցներին:

- Լոնը գեղեցիկ է, հմայիչ, հաջողակ,- վերջապես ասաց նա ցածրիկ ձայնով,- ընկերուհիներս սաստիկ նախանձում են ինձ:

Նրանք կարծում են՝ Լոնը կատարյալ ամուսին կլինի, և շատ առումներով նրանք ճիշտ են: Նա բարի է իմ նկատմամբ, հումորի զգացում ունի, և ես գիտեմ՝ նա յուրովի է սիրում ինձ,- Էլլին լռեց՝ փորձելով հավաքել մտքերը, ապա շարունակեց.- Բայց մեր հարաբերություններում միշտ ինչ-որ բան պակասում է:

Էլլին ինքն էլ զարմացավ իր պատասխանից, բայց նա գիտեր՝ ճշմարտությունից փախչել չէր կարող: Գիտեր նաև, որ Նոյը հենց այդ պատասխանին էր սպասում:

- Ինչո՞ւ,- հարցրեց նա:

Էլլին հազիվ ժպտաց և թոթվելով ուսերը՝ գրեթե շշուկով պատասխանեց.

- Երևի ես դեռ այնպիսի սեր եմ փնտրում, ինչպիսին մեր միջև ծնվեց այն ամառ:

Նոյը երկար ժամանակ լուռ էր. խորհում էր Էլլիի խոսքերի շուրջ և հերթով հիշում բոլոր հարաբերությունները, որ ունեցել էր նրանից բաժանվելուց հետո:

- Իսկ դո՞ւ,- հանկարծ հարցրեց Էլլին,- երբևէ հիշե՞լ ես մեր մասին:

- Չեմ էլ մոռացել երբեք:

- Հանդիպո՞ւմ ես որևէ մեկի հետ:

- Ոչ,- պատասխանեց Նոյը՝ բացասաբար շարժելով գլուխը:

Երկուսն էլ կարծես փորձում էին հանել մտքից այն, ինչ տեղի էր ունեցել տարիներ առաջ, բայց ապարդյուն: Նոյը գլուխը քաշեց գարեջուրը՝ ինքն էլ զարմանալով՝ որքան արագ դատարկեց շիշը:

- Գնամ՝ ծովախեցգետինները կրակին դնեմ: Ինչ-որ բան բերե՞մ քեզ համար:

Էլլին օրորեց գլուխը: Նոյը գնաց խոհանոց, ծովախեցգետինները դրեց շոգեխաշվելու, իսկ հացը՝ ջեռոց: Այնուհետև մի փոքր եգիպտացորենի ալյուր գտավ, թաթախեց բանջարեղենը դրա մեջ, և տապակի մեջ մի փոքր կարագ դրեց: Ցածր միացնելով կրակը՝

նա կարգավորեց ժամանակաչափը և սառնարանից ևս մեկ շիշ գարեջուր վերցնելով՝ վերադարձավ ծածկապատշգամբ: Եվ ամբողջ ընթացքում նրան չէին լքում մտքերը՝ Էլլիի և այն սիրո մասին, որ բացակայում էր իրենց՝ երկուսի կյանքից էլ:

Էլլին նույնպես մտածում էր: Նոյի մասին, իր մասին, շատ բաների մասին էր մտածում: Մի պահ նա նույնիսկ զղջաց, որ նշանվել է, բայց հետո արագ հավաքեց իրեն: Ո՛չ, նա Նոյին չէ, որ սիրում էր, նա միասին անցկացրած օրերի հիշողություններն էր սիրում: Բացի դրանից՝ նման զգացողությունները բնական էին: Չէ՞ որ Նոյը նրա առաջին իրական սերն էր, միակ տղամարդը, որին տրվել էր. ինչպե՞ս կարող էր մոռանալ նրան: Բայց մի՞թե բնական էր այն թրթիռը, որ պատում էր նրա սիրտն ամեն անգամ, երբ Նոյը մոտենում էր նրան: Մի՞թե բնական էր խոստովանել նրան այն ամենը, որ նա երբևէ ոչ ոքի չէր պատմել: Մի՞թե բնական էր այստեղ գալը, երբ նրա հարսանիքին ընդամենը երեք շաբաթ էր մնացել:

«Ոչ, դա բնական չէ,- վերջապես շշնջաց Էլլին ինքն իրեն՝ հայացքն ուղղելով մթնող երկնքին,- ոչինչ էլ բնական չէ»:

Հենց այդ պահին էլ կրկին հայտնվեց Նոյը, և Էլլին ժպտաց նրան: Նա ուրախ էր Նոյի վերադարձի համար, քանի որ այլևս չէր ուզում մտածել այդ ամենի մասին:

- Մի քանի րոպե, և ընթրիքը պատրաստ կլինի,- ասաց Նոյը՝ կրկին տեղավորվելով աթոռին:

- Հիանալի է: Ես դեռ այնքան էլ քաղցած չեմ:

Նոյը քնքշությամբ նայեց նրան:

- Ուրախ եմ, որ եկար, Էլլի,- ասաց նա:

- Ես նույնպես, թեև գրեթե հետ էի կանգնում որոշումիցս:

- Իսկ ինչո՞ւ եկար, այնուամենայնիվ:

«Չէի ների ինձ, եթե չգայի»,- ուզում էր ասել Էլլին, բայց փոխարենը՝ պարզապես ասաց.

- Ընդամենը ուզում էի տեսնել քեզ, իմանալ՝ ինչով ես զբաղվում, ինչպես ես:

«Ընդամենը»,- մտածեց Նոյը, բայց չշարունակեց այդ թեման:

- Ի դեպ, ուզում էի հարցնել՝ դեռ նկարո՞ւմ ես:

- Այլևս ոչ,- գլուխը ճոճելով՝ պատասխանեց Էլլին:

- Ինչո՞ւ,- զարմացավ Նոյը,- ախր դու մեծ տաղանդ ունես:

- Չգիտեմ...

- Գիտես: Դու դադարել ես նկարել, որովհետև պատճառ ես ունեցել:

Նոյը չէր սխալվում: Կար պատճառ:

- Երկար պատմություն է:

- Ոչինչ, ողջ գիշերն առջևում է,- ասաց Նոյը:

- Իսկապե՞ս կարծում էիր, որ ես տաղանդ ունեի,- մեղմ ձայնով հարցրեց Էլլին:

- Գնանք,- ուշադրություն չդարձնելով նրա հարցին՝ ասաց Նոյն ու բռնեց նրա ձեռքը,- ուզում եմ քեզ մի բան ցույց տալ:

Էլլին վեր կացավ և Նոյի հետևից գնաց հյուրասենյակ: Նոյը կանգ առավ բուխարու դիմաց և ցույց տվեց դրա վերևում կախված նկարը: Էլլին զարմանքից քարացավ տեղում: Ախր ինչպե՞ս ավելի շուտ չէր նկատել:

- Ուրեմն պահե՞լ ես:

- Իհարկե, պահել եմ, սքանչելի նկար է:

Էլլին թերահավատությամբ նայեց նրան:

- Երբ նայում եմ այս նկարին, զգում եմ, որ ապրում եմ,- ասաց Նոյը,- այնքա՞ն իրական է այն, որ երբեմն վեր եմ կենում և ձեռք տալիս: Իրական են թվում անգամ պատկերները, ստվերները, գույները: Նույնիսկ երազումս եմ տեսնում երբեմն: Անկրկնելի կտավ է, Էլլի. ժամերով կարող եմ աչքս չկտրել դրանից:

- Լո՞ւրջ,- հարցրեց Էլլին՝ զարմանքից քարացած:

- Ավելի լուրջ երբեք չեմ եղել,- ասաց Նոյը. Էլլին լուռ էր,- ուզում ես ասել, որ ոչ ոք նախկինում չի՞ ասել քեզ այս ամենը:

- Պրոֆեսորս էր ասում,- վերջապես պատասխանեց Էլլին,- բայց ես նրան չէի հավատում:

Նոյը գիտեր, որ դրանով պատմությունը չէր ավարտվում: Էլլին հայացքը հեռացրեց կտավից ու շարունակեց.

- Նկարել սկսեցի, երբ դեռ երեխա էի: Մի փոքր մեծանալուց հետո սկսեցի մտածել, որ կարողանում եմ: Ինձ դուր էին գալիս իմ նկարները: Այս կտավի վրա մեր միասին անցկացրած ամռան ընթացքում եմ աշխատել: Ամեն օր ինչ-որ բան էի ավելացնում, փոխում՝ մեր հարաբերությունների զարգացման հետ: Արդեն չեմ էլ հիշում՝ ինչպես սկսեցի կամ ինչ էի ուզում ստանալ, բայց ստացվեց այն, ինչ ստացվեց... Հիշում եմ՝ այդ ամռանն այստեղից հեռանալուց հետո օրուգիշեր նկարում էի: Երևի այդկերպ փորձում էի մեղմել մեր բաժանման ցավը: Արդյունքում արվեստը կյանքիս անբաժան մասը դարձավ, քոլեջ ընդունվեցի: Ամբողջ սրտով զգում էի, որ նկարիչ լինելն արյանս մեջ է: Հիշում եմ՝ երկար ժամեր էի անցկացնում արվեստանոցում լիակատար միայնության մեջ և վայելում էի ամեն մի րոպեն: Ես սիրում էի այն ազատությունը, որ զգում էի նկարելիս. ազատություն, որ թույլ էր տալիս արարել գեղեցիկը: Սիրտս ուրախությամբ էր լցվում այդ պահերին: Քոլեջն ավարտելու շեմին էի, երբ պրոֆեսորս, որ նաև քննադատական հոդվածներ էր գրում թերթում, ասաց՝ շատ տաղանդավոր եմ ու պետք է անպայման բախտս փորձեմ այս ոլորտում: Բայց ես չլսեցի նրան:- Էլլին լռեց՝ փորձելով հավաքել մտքերը, ապա շարունակեց.- Ծնողներս կարծում էին՝ ինձ նման ազնվակիրթ աղջիկը չպետք է իր ապրուստը նկարելով վաստակի: Քոլեջն ավարտելուց կարճ ժամանակ անց դադարեցի նկարել: Երկար տարիներ է արդեն՝ ձեռքս չեմ վերցրել վրձինը:

Էլլին հայացքը կրկին հառեց կտավին:

- Կարծում ես՝ երբևէ նորից կնկարե՞ս,- հարցրեց Նոյը:

- Վստահ չեմ: Երկար ժամանակ է անցել:

- Իսկ ես վստահ եմ, որ կարող ես, Էլլի: Դու տաղանդ ունես, իսկ տաղանդը ներսում է. մատներն ընդամենը սրտի թելադրածն են հանձնում կտավին: Այդ տաղանդը չի կարող իսպառ չքանալ: Շատերը միայն երազել կարող են դրա մասին: Դու իսկական նկարիչ ես, Էլլի:

Անկեղծությունը, որով Նոյն արտաբերում էր այս խոսքերը, միայն վստահություն էին ներշնչում, որ նա սոսկ սիրալիրությունից դրդված չէր ասում այդ ամենը: Նա իսկապես հավատում էր Էլլիի տաղանդին: Էլլին հանկարծ զարմանքով հայտնաբերեց, որ այդ հավատն ավելի կարևոր էր իր համար, սպասվածից ավելի կարևոր: Ինչ-որ անբացատրելի բան տեղի ունեցավ, որ ավելի զորեղ էր, քան այն անդունդը, որ Էլլին էր ստեղծել՝ ցավն ու վայելքը միմյանցից բաժանելու համար: Անդունդը սկսեց չքանալ, և այդ պահին Էլլին զգաց, որ պատրաստ չէ ընդունել ավելին:

Նա դարձավ դեպի Նոյը, մեկնեց ձեռքն ու վարանոտ, քնքշորեն հպվեց նրա ձեռքին: Նա չէր դադարում զարմանալ, որ անգամ երկար տարիներ անց Նոյը հստակ գիտեր՝ ինչ խոսքերի կարիք ունի ինքը: Երբ նրանց աչքերը հանդիպեցին, Էլլին դարձյալ զգաց՝ որքան յուրահատուկ էր նա:

Եվ ընդամենը մի անցողիկ պահ, մի աննշան ակնթարթ, որ կախվեց օդում ամռան երկինքը լուսավորել փորձող կայծոռիկի պես, Էլլիին թվաց, որ նա կրկին սիրահարվեց Նոյին:

Խոհանոցում թույլ զնգաց ժամանակացույցը, և Նոյը շրջվեց ձայնի ուղղությամբ՝ ընդհատելով երկու հոգիների կարոտակեզ ճախրանքը: Նա չգիտեր՝ ինչպես վարվեր, այդ ամենն այնքան անսպասելի էր ու այնքա՛ն տարօրինակ: Էլլիի աչքերը կարծես շշնջում

էին այն, ինչ նա տենչում էր լսել, թեև Նոյի գլխում դեռ հնչում էր նույն հարազատ ձայնը, որը, սակայն, բարբառում էր այլ սիրո մասին: Նոյը քայլերն ուղղեց դեպի խոհանոց՝ լուռ անիծելով ժամանակացույցը: Նա հանեց հացը ջեռոցից, և քիչ էր մնում՝ այրեր մատները: Հացը նրա ձեռքից ուղիղ սեղանին ընկավ, և այդ պահին նա նկատեց, որ տապակի կարագն արդեն եռում է: Նա տապակի մեջ լցրեց բանջարեղենը, որն անմիջապես սկսեց ճրթճրթալ: Ապա քթի տակ փնթփնթալով՝ Նոյը սառնարանից կարագ հանեց, մի փոքր տարածեց հացի վրա, մյուս մասն էլ հալեցրեց խեցգետինների համար:

Էլլին նույնպես նրա հետևից գնաց խոհանոց՝ մաքրելով կոկորդը:

- Սեղանը գցե՞մ,- հարցրեց նա:

- Իհարկե, ափսեներն այնտեղ են,- ասաց Նոյը՝ հացի դանակով ցույց տալով ափսեների տեղը,- իսկ մյուս պարագաներն ու անձեռոցիկը՝ այնտեղ: Անձեռոցիկների հարցում չխնայես, մենք դրանց կարիքը շատ կունենանք խեցգետիններն ուտելիս:

Խոսելիս Նոյն այդպես էլ չկարողացավ նայել Էլլիի կողմը. վախենում էր հասկանալ, որ քիչ առաջ նրանց միջև տեղի ունեցածն ընդամենը պատրանք էր: Նա չէր ուզում մտածել, որ սխալ է հասկացել:

Էլլիի մտքերը նույնպես անդադար վերադառնում էին դեպի այդ կարճատև պահը, և նրա սիրտն անասելի ջերմությամբ էր լցվում: Մինչ նա փնտրում էր սպասքն ու սեղանը գցելու համար անհրաժեշտ մյուս պարագաները, նրա ականջներում շարունակ հնչում էին Նոյի խոսքերը: Վերջապես նա գտավ ամեն բան, ինչպես նաև աղ և պղպեղ: Երբ սեղանն արդեն պատրաստ էր, Նոյը նրան փոխանցեց հացը, և նրանց մատները մի կարճ ակնթարթ հպվեցին իրար:

Նոյը վերադարձավ վառարանի մոտ, շրջեց տապակվող բանջարեղենը, ապա ստուգեց խեցգետինները. դեռ մի փոքր էլ կարիք ունեին շոգեխաշվելու: Հավաքելով իրեն՝ նա սկսեց անկարևոր բաներից խոսել:

- Երբևէ փորձե՞լ ես խեցգետիններ:

- Մեկ-երկու անգամ միայն, այն էլ միայն աղցանների տեսքով:

- Ուրեմն՝ քեզ նոր արկած է սպասում,- ծիծաղեց Նոյը,- մի րոպե սպասի՛ր:

Նա բարձրացավ սանդուղքով՝ մի պահ անհետանալով, ապա վերադարձավ՝ կոճակներով մի մուգ կապույտ վերնաշապիկ ձեռքին:

- Ահա, հագի՛ր սա,- ասաց նա՝ մեկնելով վերնաշապիկը Էլլիին,- զգեստդ չկեղտոտվի:

Էլլին հագավ այն և անմիջապես զգաց բույրը... նրա բույրը, որ ոչ մի ուրիշ բանի հետ չէր շփոթի:

- Մի՛ վախեցիր, այն մաքուր է,- ասաց Նոյը՝ նկատելով՝ ինչպես փոխվեց Էլլիի դեմքը:

- Գիտեմ,- ծիծաղեց Էլլին,- այն պարզապես հիշեցրեց ինձ մեր առաջին ժամադրությունը: Դու ինձ քո պիջակը տվեցիր, հիշո՞ւմ ես:

- Հա, հիշում եմ,- ասաց Նոյը գլխով անելով,- Ֆինն ու Սառան նույնպես մեզ հետ էին: Քեզ տուն ուղեկցելիս Ֆինը ողջ ճանապարհին շարունակ արմունկով հարվածում էր ինձ՝ փորձելով հասկացնել, որ բռնեմ ձեռքդ:

- Բայց դու այդպես էլ չբռնեցիր:

- Չբռնեցի:

- Բայց ինչո՞ւ:

- Ամաչում էի երևի կամ էլ վախենում, չգիտեմ: Կարծում էի՝ դեռ ժամանակը չէ:

- Ամաչկոտ երիտասարդ էիր, փաստորեն:

- Ոչ թե ամաչկոտ, այլ նրբանկատ,- պատասխանեց Նոյն ու աչքով արեց՝ վաստակելով Էլլիի ժպիտը:

Բանջարեղենն ու ծովախեցգետինները գրեթե միաժամանակ պատրաստ էին արդեն մատուցման:

- Զգո՛ւյշ եղիր, տաք են,- ասաց Նոյը՝ փոխանցելով կաթսան ու տապակը Էլլիին:

Նրանք տեղավորվեցին փոքրիկ փայտե սեղանի շուրջը՝ միմյանց դեմ դիմաց: Այնուհետև նկատելով, որ թեյը մնացել է խոհանոցի սեղանին՝ Էլլին վեր կացավ և բերեց այն: Նոյն ափսեների մեջ բանջարեղեն և հաց դրեց, ապա դրանց ևս մեկական ծովախեցգետին ավելացրեց: Էլլին աչքերը չռած նայում էր ափսեին և չէր համարձակվում դիպչել:

- Բզեզի տեսք ունի:

- Ես կասեի՝ շատ համեղ բզեզի,- ասաց Նոյը,- հիմա ցույց կտամ՝ ինչպես է պետք ուտել այն:

Նա ճկուն շարժումներով արագ մաքրեց խեցգետիններից մեկը, ասես դա ամենևին էլ դժվար չէր, և առանձնացնելով միսը՝ դրեց այն Էլլիի ափսեի մեջ: Սակայն Էլլիի առաջին մի քանի փորձերն անհաջող ավարտ ունեցան: Չանչերը դժվարությամբ էին պոկվում, իսկ միսը պատյանից նա ստիպված էր մատներով առանձնացնել: Սկզբում Էլլին անհարմար էր զգում այն բանի համար, որ Նոյը նկատում էր իր ամեն մի սխալը, բայց հետո հասկացավ, որ զուր է մտահոգվում. Նոյը երբեք ուշադրություն չէր դարձնում նման բաների վրա:

- Իսկ ինչո՞վ է զբաղվում Ֆինը,- հանկարծ հարցրեց Էլլին:

Նոյը մեծ դժվարությամբ պատասխանեց հարցին.

- Ֆինը զոհվեց պատերազմում: Ականակիր նավը, որտեղ գտնվում էր նա, տորպեդահարվեց քառասուներեքին:

- Ցավում եմ,- ասաց Էլլին,- գիտեմ՝ նա քո լավագույն ընկերներից էր:

- Այո, նա լավ ընկեր էր,- հաստատեց Նոյը. նրա ձայնն անսովոր ցածր հնչեց,- պատերազմից հետո շատ եմ մտածում նրա մասին: Մտքիցս դուրս չի գալիս մեր հանդիպման վերջին օրը:

Ճակատ մեկնելուց առաջ այստեղ եկա հրաժեշտ տալու: Ֆինի հետ փողոցում հանդիպեցինք: Բանկում էր աշխատում իր հոր պես: Հաջորդող շաբաթը գրեթե անբաժան էինք իրարից: Երբեմն ինձ թվում է՝ այդ ես համոզեցի նրան պատերազմ մեկնել: Չեմ կարծում, որ նրա մտքով երբևէ նման բան կանցներ, եթե չլինեի ես:

- Անարդար ես քո հանդեպ,- ասաց Էլլին՝ զղջալով այդ թեման բացելու համար:

- Ճիշտ ես: Ես պարզապես կարոտում եմ նրան:

- Նա ինձ նույնպես դուր էր գալիս: Անհնար էր չծիծաղել նրա կատակների վրա:

- Նրան միշտ էլ հաջողվում էր ծիծաղեցնել բոլորին:

- Գիտեմ՝ նա սիրահարված էր ինձ,- խորամանկ հայացք գցելով Նոյի կողմը՝ խոստովանեց Էլլին:

- Գիտեմ: Նա ասել էր ինձ այդ մասին:

- Իսկապե՞ս: Իսկ ի՞նչ էր ասել:

Նոյը թոթվեց ուսերը:

- Անհեթեթ բաներ, ասենք՝ ինչպես և միշտ: Որ հազիվ է պրծել ձեռքիցդ: Որ շարունակ հետապնդում էիր նրան: Մի խոսքով՝ նման հիմարություններ:

- Իսկ դու հավատո՞ւմ էիր,- ժպիտը դեմքին՝ հարցրեց Էլլին:

- Իհարկե,- պատասխանեց Նոյը,- ինչո՞ւ չպետք է հավատայի:

- Դուք՝ տղամարդիկդ, միշտ պաշտպանում եք իրար,- նկատեց Էլլին՝ շոյելով Նոյի ձեռքը, ապա շարունակեց.- Իսկ այժմ պատմի՛ր ինձ ամեն բան՝ ինչով ես զբաղվել և ինչերի միջով ես անցել մեր բաժանումից ի վեր:

Եվ այդպես նրանք զրույցի բռնվեցին՝ փորձելով հետ բերել կորցրած ժամանակը: Նոյը պատմեց Նյու Բեռնից հեռանալու, նավաշինարանում, ապա Նյու Ջերսիում՝ մետաղաջարդոնի պահեստում աշխատելու տարիներից: Նա ջերմությամբ հիշեց Մորիս Գոլդմենին, անդրադարձավ նաև պատերազմի տարիներին՝ խուսափելով մանրամասներից, խոսեց հորից ու այն մասին, թե որքան է նրա կարիքը զգում: Իսկ Էլլին պատմեց քոլեջ ընդունվելու, նկարելու և հիվանդանոցում կամավոր աշխատանքի մասին: Խոսեց իր ընտանիքից, ընկերներից և այն բարեգործություններից, որոնցում ներգրավված էր: Բայց ոչ Նոյը, ոչ էլ Էլլին չհիշատակեցին նրանց, ում հետ սիրային հարաբերություններ էին ունեցել իրենց բաժանումից հետո: Նույնիսկ Լոնի մասին ոչինչ չասվեց, ու թեև երկուսն էլ նկատեցին այդ բացթողումը, բայց ոչ մեկը չխոսեց այդ մասին:

Ավելի ուշ Էլլին փորձեց հիշել՝ երբ էր վերջին անգամ Լոնի հետ նման անկեղծ զրույց ունեցել: Թեև Լոնը լսել գիտեր և հազվադեպ էր վիճում տարբեր հարցերի շուրջ, բայց նա այն մարդը չէր, որի հետ կարելի էր այսքան անկեղծ լինել: Ինչպես Էլլիի հայրը, Լոնը նույնպես անհարմար էր զգում որևէ մեկի հետ կիսել իր մտքերն ու զգացմունքները: Էլլին փորձել էր բացատրել, որ միմյանց առաջ հոգին բացելը կօգնի իրենց ավելի մտերմանալ, բայց, երևում է, դա ոչինչ չէր փոխել:

Եվ հիմա այստեղ նստած՝ Էլլին հասկանում էր՝ ինչն էր իրեն պակասում:

Երկինքն ավելի էր մթնում գիշերվան ընդառաջ, իսկ լուսինը՝ անխոնջ բարձրանում աստղերն ի վեր: Եվ նրանք՝ երկուսն էլ, առանց նկատելու, վերագտել ու բաց չէին թողնում այն մտերմությունը, որ մի ժամանակ կապում էր իրենց:

Համեղ ընթրիքն ու հիշողությունները բավարարվածություն բերեցին երկուսին էլ, ու նրանք լռեցին: Նոյը նայեց ձեռքի ժամացույ-

ցին ու նկատեց, որ արդեն ուշ է: Աստղերը փայլում էին, ինչպես երբեք, գրեթե մարել էր ծղրիդների խմբերգը: Էլլիի հետ զրուցելը միայն հաճույք էր Նոյի համար, բայց նա անհանգստանում էր՝ արդյոք ավելորդ բաներ չի՞ խոսել, և ի՞նչ է արդյոք այժմ Էլլին մտածում իր կյանքի մասին՝ հույս ունենալով, որ դեռ ինչ-որ բան գուցե հրաշքով փոխվի:

Նոյը վեր կացավ տեղից և նորից ջրով լցրեց թեյնիկը: Էլլին միացավ նրան: Նրանք հավաքեցին սեղանը, կեղտոտ ափսեները դրեցին լվացարանում: Նոյը ևս երկու բաժակ եռացրած ջուր լցրեց և երկուսի մեջ էլ մեկական թեյի փաթեթիկ ընկղմեց:

- Ի՞նչ կասես, նորից ծածկապատշգամբ չգնա՞նք,- հարցրեց Նոյը՝ մեկնելով Էլլիին թեյի բաժակը:

Էլլիին համաձայնեց և ուղղվեց ծածկապատշգամբ: Մինչ նրան հետևելը Նոյը բրդյա ծածկոց վերցրեց իր հետ. գուցե Էլլին մրսեր: Շուտով նրանք կրկին օրորվում էին ճոճաթոռներին, իսկ ծածկոցը գրկել էր Էլլիի ոտքերը: Նոյը աչքի պոչով հետևում էր նրան: «Աստվա՞ծ իմ, որքա՞ն գեղեցիկ է նա»,- մտածեց նա: Իսկ սիրտը ցավում էր:

Ընթրիքի ժամանակ տեղի էր ունեցել անթույլատրելին:

Նոյը կրկին սիրահարվել էր Էլլիին: Նա հասկացավ միայն հիմա, երբ նրանք նստած էին կողք կողքի: Նա սիրահարվել էր բոլորովին նոր Էլլիի, այլ ոչ թե նրան, ով վաղուց ապրում էր իր հիշողություններում:

Թեև նա երբեք էլ չէր դադարել նրան սիրել, և հիմա էր հասկանում, որ այդ սերն իր ճակատագիրն էր:

- Սքանչելի երեկո էր,- քնքշությամբ ասաց Նոյը:

- Այո,- հաստատեց Էլլին,- պարզապես հրաշալի:

Նոյը նայեց երկնքին, և աստղերի առկայծող լույսը հուշեց նրան, որ վրա է հասնում գիշերը: Շուտով Էլլին կհեռանար, և այդ մտքից

սարսափելի դատարկություն տիրեց Նոյին: Նա կնախընտրեր՝ այդ գիշերը երբեք չվերջանար: Ինչ ասեր Էլլիին, ինչպես ստիպեր նրան մնալ:

Նա չգիտեր: Ուստի ոչինչ էլ չասաց: Գիտակցեց, որ պարտվել է:

Ամեն մեկն օրորվում էր իր ճոճաթոռին, անշտապ, անխռով: Գետի վրա կրկին հայտնվեցին չղջիկները: Գիշերաթիթեռները համբուրում էին ծածկապատշգամբը լուսավորող լամպը: Երևի ինչ-որ տեղ սիրահար զույգերը սիրով էին զբաղվում:

- Դե, մի բան ասա,- վերջապես խախտեց լռությունը Էլլին:

Նրա ձայնը կրքոտ հնչեց. թե՞ պարզապես թվաց: Նոյն արդեն դժվարանում էր տարբերել ցանկալին իրականությունից:

- Ինչ ասեմ:

- Կարդա՛ ինձ համար, ինչպես այն ժամանակ կաղնու ստվերում:

Եվ Նոյը սկսեց արտասանել հեռավոր տողեր՝ փառաբանելով ջերմ գիշերը: Սկզբում՝ Ուիթմեն և Թոմաս, որովհետև նրանք այնքա՛ն վառ էին պատկերել ամենը, ապա՝ Թենիսոն և Բրաունինգ, որովհետև այն, ինչ նրանք էին երգում, չափազանց հարազատ էր:

Էլլին գլուխը դրեց ճոճաթոռի թիկնակին, փակեց աչքերն ու սկսեց ըմբոշխնել երեկոյի ջերմությունը: Նա խաղաղություն գտավ ոչ թե տողերում, ոչ թե հարազատ ձայնի ելևէջներում, այլ ամենում միաժամանակ: Նա չէր փորձում զատել իրարից դրանք, որովհետև հնարավոր էլ չէ զատել այն, ինչ ստեղծված է իրար լրացնելու համար: Բանաստեղծությունները, ինչպես Էլլին էր մտածում, չեն գրվում վերլուծության ենթարկելու համար: Դրանք գրվում են, որ թև տան քեզ առանց պատճառի, դիպչեն սրտիդ առանց ենթարկվելու որևէ բացատրության:

Նոյից բաժանվելուց հետո՝ քոլեջում ուսանելու տարիներին, Էլլին մի քանի անգամ ներկա էր եղել ընթերցանության երեկոներին:

Նա նստում և լսում էր տարբեր բանաստեղծություններ տարբեր մարդկանց շուրթերից: Բայց ոչ ոք նրանցից չդիպավ Էլիի սրտին ու չստիպեց հավատալ այն անկեղծությանը, որ մատուցում են պոեզիայի իսկական նվիրյալները:

Նոյն ու Էլլին լուռ ճոճվում էին՝ ըմբոշխնելով իրենց թեյը, ամեն մեկը՝ խորասուզված սեփական մտքերի մեջ: Անհանգստությունը, որ բերել էր Էլլիին այստեղ, հուրախություն նրա՝ անհետացել էր, բայց դրան փոխարինելու էին եկել նոր կյանք ստացած զգացմունքներ, որ եռում ու փոթորկվում էին նրա ներսում, ինչպես որսորդի գնդակից խուճապահար փախչող անպաշտպան եղնիկը: Էլլին փորձում էր ուշադրություն չդարձնել, թաքնվում էր սեփական զգացմունքներից, բայց, ի վերջո, ստիպված էր ընդունել, որ դրանք հաճելի են իրեն: Երկար տարիներ արդեն նա չէր զգացել նման բան:

Լոնն այսքան զգացմունք երբևէ չէր արթնացրել Էլլիի սրտում ու թերևս երբեք էլ չէր արթնացնի: Գուցե դա էր պատճառը, որ Էլլին երբեք չէր տրվել նրան: Լոնն ամեն հնարավոր բան փորձել էր՝ սկսած ծաղիկներ նվիրելուց մինչև Էլլիի մեջ մեղքի զգացում արթնացնելը, սակայն Էլլին միշտ արդարացում ուներ. նա ուզում էր սպասել մինչև ամուսնություն: Լոնը, իհարկե, համակերպվել էր այդ մտքի հետ, սակայն Էլլիին շարունակում էր մտահոգել՝ ինչպես կընդուներ փեսացուն, երբ իմանար Նոյի մասին:

Այդուհանդերձ, Էլլիին Լոնի հետ մտերմանալուց այլ բան էր հետ պահում, որ ոչ մի կապ չուներ փեսացուի հետ: Լոնը կլանված էր իր աշխատանքով, և այն միշտ նրա ուշադրության կենտրոնում էր: Աշխատանքը նրա համար առաջին տեղում էր, և նա ժամանակ չուներ բանաստեղծություններ կարդալու, երեկոներն անիմաստ վատնելու և ծածկապատշգամբում աթոռին ճոճվելու համար: Այո, աշխատանքին նվիրվածությունը տալիս էր իր պտուղները. Լոնը հաջողութ-

յուններ էր գրանցում, և Էլլին չէր կարող ակնածանքով չվերաբերվել այդ փաստին: Սակայն նա միշտ զգում էր, որ դա բավարար չէր: Նա մեկ այլ բան էր տենչում, ավելին, քան տալիս էր նրան Լոնը: Հույզեր գուցե կամ մի փոքր ավելի շատ ռոմանտիկա, կամ գուցե խաղաղ զրույցներ մոմի լույսի ներքո: Կամ էլ գուցե ամեն ինչ ավելի պարզ էր, ու նա պարզապես չէր ուզում լինել երկրորդ տեղում:

Նոյը նույնպես մտքերով էր տարվել: Էլլիի հետ անցկացրած երեկոն, անշուշտ, կմեխվեր նրա հիշողության մեջ որպես ամենաայուրահատուկը, որ երբևէ ապրել էր: Երեկոյի ոչ մի մանրուք չէր վրիպել նրա ուշադրությունից, և նա նորից ու նորից էր հիշում դրանք: Էլլիի ամեն մի շարժումը, ամեն մի խոսքը զվարթությամբ էր լցնում Նոյի հոգին, և նա պատրաստ էր բարձունքներ գրավելու:

Էլլիի կողքին նստած՝ Նոյն անվերջ նույն հարցն էր տալիս ինքն իրեն. արդյոք Էլլին երազել է իր մասին բաժանումի այս տասնչորս տարիներին: Երբևէ երազել է կրկին գրկել իրեն ու համբուրել լուսնկա գիշերներին: Իսկ գուցե ավելին է տենչացել՝ ինչպես են նորից ծուլվում իրենց մարմինները՝ տոգորված բաժանման ցավից սնվող անհագ կարոտով:

Նոյը կրկին նայեց աստղերին ու հիշեց հազարավոր միայնակ գիշերները, որ անցկացրել էր Էլլիից հեռու իրենց բաժանման օրից ի վեր: Էլլիի հայտնվելն արթնացրել էր խոր թաղված զգացմունքները, և Նոյը գիտեր, որ անհնար է նորից քնեցնել դրանք: Նա կրկին տենչում էր սիրել ու սիրվել: Ուրիշ էլ ոչինչ հարկավոր չէր նրան:

Բայց նա հասկանում էր նաև, որ անցյալը հետ չէր բերի: Չէ՞ որ Էլլին նշանված էր ուրիշի հետ:

Նոյը լուռ էր, բայց Էլլին գիտեր, որ նա իր մասին էր մտածում, և անասելի հաճույք էր ստանում այդ մտքից: Նա չգիտեր՝ ինչի շուրջ էին պտտվում Նոյի մտքերը, ասենք՝ դա այնքան էլ կարևոր չէր: Էլլիին բավական էր և այն, որ դրանցում ինքը տեղ ուներ:

Էլլին հիշեց իրենց զրույցը ընթրիքի սեղանի շուրջն ու սկսեց մտածել միայնության մասին: Չգիտես ինչու, նա չէր կարողանում պատկերացնել՝ ինչպես է Նոյը կարդում այլ կնոջ համար կամ նույնիսկ՝ ինչպես է կիսում իր մտքերը նրա հետ: Նոյն այդպիսին չէր կամ էլ Էլլին չէր ուզում հավատալ դրան:

Էլլին սեղանին դրեց բաժակը, ապա մատները սահեցնելով մազերի միջով՝ փակեց աչքերը:

- Հոգնե՞լ ես,- հարցրեց Նոյը՝ վերջապես սթափվելով մտքերից:

- Մի փոքր: Ուշ է. պետք է գնամ արդեն:

Նոյը գլխով արեց:

- Գիտեմ,- ասաց նա անխռով ձայնով:

Էլլին, սակայն, չէր շտապում վեր կենալ: Նա վերցրեց բաժակն ու ըմպեց վերջին կում թեյը՝ զգալով՝ ինչպես այն տաքացրեց կոկորդը: Նա փորձում էր երեկոյի պատկերը պահել իր մեջ՝ լուսինը՝ բարձրում, քամին՝ ծառերի կատարներին և շուրջը թևածող զով թարմությունը:

Այնուհետև նա նայեց Նոյին: Նրա այտի սպին տեսանելի էր կողքից: Երևի պատերազմն էր հետք թողել նրա այտին: Տեսնես՝ Նոյը վիրավորվե՞լ էր այնտեղ: Նա այդպես էլ չխոսեց այդ մասին, իսկ Էլլին վախենում էր հարցեր տալուց. չէր ուզում պատկերացնել՝ ինչ ցավի միջով է անցել նա:

- Պետք է գնամ,- վերջապես ասաց նա՝ մեկնելով Նոյին ծածկոցը:

Նոյը գլխով արեց, ապա լուռ վեր կացավ տեղից: Նա վերցրեց ծածկոցը, ու նրանք ուղղվեցին դեպի Էլլիի մեքենան՝ ոտքերի տակ ճռճռացնելով չորացած տերևները: Էլլին ուզում էր հանել վերնաշապիկը, որ Նոյն էր տվել իրեն, բայց Նոյը թույլ չտվեց:

- Թող քեզ մոտ մնա,- ասաց նա՝ բացելով մեքենայի դուռը,- այդպես եմ ուզում:

Էլլին չհարցրեց՝ ինչու, որովհետև նա նույնպես ուզում էր պահել այն իր մոտ: Նա կրկին հագավ այն և ձեռքերը կրծքին խաչեց, ասես քամուց էր պաշտպանվում: Չգիտես ինչու, նա դեռատի աղջնակ զգաց իրեն, որ ավարտական երեկոյից հետո կանգնել է պատշգամբում և սպասում է համբույրի:

- Սքանչելի երեկո էր,- ասաց Նոյը,- շնորհակալ եմ, որ գտար ինձ:

- Իսկապես որ սքանչելի էր,- պատասխանեց Էլլին:

- Վաղը կտեսնեմ քեզ,- վերջապես խիզախեց հարցնել Նոյը:

Պարզ հարց: Էլլին գիտեր՝ ինչ է հարկավոր պատասխանել, հատկապես եթե ուզում էր էլ ավելի չբարդացնել իր կյանքը: «Չեմ կարծում»,- ընդամենը պետք է ասեր նա, և ամեն ինչ կավարտվեր հենց այդտեղ ու հենց այդ պահին: Բայց նա տատանվում էր:

Սատանան գայթակղում էր նրան, ծաղրում, մարտահրավեր նետում: Թվում էր՝ ընտրությունն իրենն էր, բայց ինչո՞ւ չէր կարողանում մերժել: Էլլին չգիտեր: Սակայն երբ նայեց Նոյի աչքերին՝ հույսով այնտեղ գտնել ճիշտ պատասխանը, նա տեսավ այն մարդուն, որին մի ժամանակ սիրահարվել էր, և հանկարծ ամեն ինչ պարզ դարձավ:

- Դեմ չեմ:

Նոյը զարմացած էր: Նա նման պատասխան չէր սպասում: Նա հազիվ զսպեց Էլլիին հպվելու, նրան իր գիրկն առնելու ցանկությունը:

- Կեսօրի կողմ կարո՞ղ ես այստեղ լինել:

- Իհարկե: Ի՞նչ ես մտքիդ դրել:

- Կտեսնես,- ասաց Նոյը,- ես մի հրաշալի տեղ գիտեմ, որ արժե գնալ:

- Ես եղե՞լ եմ այնտեղ նախկինում:

- Ոչ: Բայց յուրահատուկ տեղ է:

- Որտեղ է:
- Չեմ կարող ասել: Անակնկալ է:
- Իսկ ինձ դուր կգա՞ այնտեղ:
- Անկասկած,- պատասխանեց Նոյը:

Էլլին ուղղվեց դեպի մեքենան, մինչ նա կփորձեր համբուրել նրան: Նա չգիտեր՝ արդյոք Նոյը կփորձեր, թե ոչ, բայց գիտեր, որ փորձելու դեպքում հազիվ թե կարողանար դիմադրել: Նա պատրաստ չէր պայքարելու դրա դեմ, առանց այն էլ գլուխը պտտվում էր այդ ամենից:

Նա սահեց մեքենայի մեջ ու ձեռքն առնելով ղեկը՝ թեթևացած շունչ քաշեց: Նոյը փակեց դուռը, և նա գործի գցեց շարժիչը: Մինչ մեքենան կշարժվեր տեղից, Էլլին իջեցրեց ապակին ու նայեց Նոյին:

- Մինչև վաղը,- ասաց նա, և նրա աչքերում արտացոլվեց լուսնի լույսը:

Նոյը ձեռքով արեց, երբ մեքենան վերջապես շարժվեց տեղից: Էլլին նախ մեքենայով հետ գնաց, ապա շրջվեց և բռնեց դեպի քաղաք տանող ճամփան: Նոյը հայացքով հետևեց նրան այնքան, մինչև մեքենայի լույսերն անհետացան հեռավոր կաղնիների հետևում, իսկ շարժիչի աղմուկն ամբողջովին մարեց: Քլեմը մոտեցավ Նոյին, և նա կիսանստեց, որ շոյի շանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրա վզին, քորելով այն հատվածը, որտեղ խեղճ կենդանին այլևս չէր կարողանում հասնել: Մի վերջին անգամ էլ ճանապարհին հայացք գցելով՝ Նոյը շան հետ վերադարձավ ծածկապատշգամբ:

Նա կրկին նստեց ճոճաթոռին, այս անգամ արդեն միայնության մեջ և փորձեց վերապրել երեկոն՝ հիշելով ամեն մի մանրուք՝ գույները, ձայները, պատկերները: Չշտապելով բաց թողնել հուշ դարձող երեկոն՝ նա չէր ուզում ոչ կիթառ նվագել, ոչ էլ կարդալ: Ինքն էլ չէր հասկանում՝ ինչ էր ուզում:

- Նա նշանված է,- ի վերջո շշնջաց Նոյը, ապա կրկին լռեց:

Անցան ժամեր: Լռությունը խախտող միակ ձայնը ճոճաթոռի ճռռոցն էր: Գիշերը խաղաղ էր արդեն, ոչ մի ձայն, ոչ մի շարժում. միայն Քլեմն էր երբեմն հայտնվում ստուգելու համար՝ արդյոք ամեն ինչ կարգի՞ն էր:

Եվ այդ հոկտեմբերյան պարզկա երեկոյից հետո՝ կեսգիշերն անց, տեղի ունեցածը հանկարծ միանգամից տակնուվրա արեց ամեն ինչ, և Նոյին համակեց տխրությունը: Եվ եթե որևիցե մեկը տեսներ նրան այդ պահին, կապշեր՝ ինչպես կարող է մարդն այդքան ծերանալ ընդամենը մի քանի ժամում: Նա մի ամբողջ կյանք ապրած մարդու տեսք ուներ. մեջքը կորացրած իր ճոճաթոռին, գլուխը՝ ձեռքերի մեջ առած, արցունքն՝ աչքերին: Նա չգիտեր, ինչպես զսպեր դրանք:

ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ԶԱՆԳԵՐ

Լոնը կախեց խոսափողը:

Նա զանգել էր Էլլիին նաև ժամը յոթին, հետո՝ ութն անց կեսին: Նորից նայեց ժամացույցին: Արդեն ինն անց էր քառասունհինգ րոպե:

Որտեղ էր նա:

Լոնը գիտեր՝ Էլլին այնտեղ էր, որտեղ խոստացել էր լինել, որովհետև խոսել էր իջևանատան աշխատակցի հետ: Այո, նա կանգ էր առել իջևանատանը, բայց աշխատակիցը վերջին անգամ տեսել էր նրան ժամը վեցի կողմերը և մտածել էր, որ աղջիկն ընթրելու է գնում: Այնուհետև այլևս չէր հանդիպել:

Լոնն օրորեց գլուխն ու հենվեց իր աթոռին: Գրասենյակում լուռ էր, ոչ ոք չկար. սովորության համաձայն՝ նա միշտ վերջինն էր տուն գնում և մինչև ուշ երեկո աշխատում էր, հատկապես դատավարության ժամանակ, եթե նույնիսկ ամեն ինչ հարթ էր ընթանում: Իրավաբանությունը նրա տարերքն էր, և երեկոյան ուշ ժամերը, երբ ոչինչ ու ոչ ոք չէին շեղում նրան, հնարավորություն էին տալիս նրան հանգիստ աշխատելու:

Նա վստահ էր՝ կշահեր գործը, քանի որ վարպետացել էր իր գործում, բացի դրանից՝ գրավել էր ատենակալների սիրտը: Ասենք՝

ինչպես միշտ: Այդ պատճառով էլ հազվադեպ էր տանուլ տալիս: Նրա հաջողության գաղտնիքը մասամբ էլ այնպիսի գործեր վերցնելն էր, որոնք տանուլ տալու հավանականությունը նվազագույնի էր հասցված: Նման հոտառությունը փորձի հետ էր զարգանում: Քաղաքում միայն մի քանի փաստաբաններ կային, որոնք կարող էին պարծենալ այդպիսի հաջողություններով, և դա արտացոլվում էր նրանց մեծ հոնորարներում:

Այնուամենայնիվ, նրա հաջողության գրավականը մնում էր համառ աշխատասիրությունը: Նա միշտ ուշադրություն էր դարձնում մանրուքներին, հատկապես իր կարիերայի սկզբում: Աննշան մանրուքները, որ առաջին հայացքից երբեք չես նկատի, չէին վրիպում նրա ուշադրությունից, և արդյունքում դա սովորություն դարձավ: Անկախ նրանից՝ խոսքը վերաբերում էր օրենքներին, թե հաճախորդի շահերը ներկայացնելուն, նա երբեք ոչինչ անուշադրության չէր մատնում, և այդ սովորության շնորհիվ իր կարիերայի սկզբում նա շահեց մի քանի այնպիսի գործեր, որոնք հաստատ հնարավոր չէր հաղթել:

Այժմ էլ կար մի մանրուք, որ հանգիստ չէր տալիս նրան:

Ոչ, խոսքը գործի մասին չէ: Այդ հարցում ամեն ինչ կարգին էր: Մեկ այլ բան կար, որ մտահոգում էր Լոնին:

Մի բան, որ Էլլիին էր վերաբերում:

Բայց, գրողը տանի, Լոնը չէր կարողանում հասկանալ՝ որն էր խնդիրը: Ամեն ինչ հիանալի էր առավոտյան, երբ Էլլին մեկնեց: Համենայն դեպս, Լոնն այդպես էր կարծում: Բայց Էլլիի զանգից մոտ մեկ ժամ անց, կամ մի փոքր ավելի, ինչ-որ բան կարծես առկայծեց նրա գիտակցության մեջ: Փոքրիկ մանրուք:

Մանրուք:

Որևէ աննշան բան: Թե՞ մի բան, որ կարևոր էր շատ:

«Մտածի՛ր... Մտածի՛ր... Գրողը տանի, ի՞նչ է դա»:

Մտքի հերթական առկայծումը:

Գուցե ինչ-որ... ինչ-որ... ինչ-որ ասված խոսք:

Էլլին ինչ-որ բան այն չէր ասել: Այո, հենց այդտեղ է պետք փնտրել: Անկասկած: Բայց ե՞րբ: Հեռախոսով զրուցելիս: Հենց հեռախոսազրույցից հետո էլ կասկածը պատել էր Լոնին: Նա բառ առ բառ հիշեց իրենց խոսակցությունը: Կարծես թե ոչ մի արտասովոր բան:

Բայց Լոնն արդեն վստահ էր, որ հենց այդ հեռախոսազրույցն էր դարձել իր մտահոգության առարկան: Իսկ ի՞նչ էր ասել Էլլին: Ասել էր, որ տեղ է հասել, ամեն ինչ լավ է, արդեն տեղավորվել է իջևանատանը և որոշ գնումներ արել: Եվ վերջում հեռախոսահամար էր թողել հետադարձ կապի համար: Այդքանը:

Լոնը սկսեց մտածել Էլլիի մասին: Նա սիրում էր նրան. դրանում վստահ էր: Էլլին ոչ միայն գեղեցիկ էր ու հմայիչ, այլև հենարան ու լավ ընկեր էր դարձել նրա համար: Ծանր աշխատանքային օրվանից հետո Էլլին առաջին մարդն էր, որին Լոնը զանգում էր: Նա կարողանում էր լսել իրեն, նրբանկատորեն ծիծաղում ճիշտ այն պահերին, երբ պետք էր, և զգում էր՝ ինչ է ուզում լսել իրենից փեսացուն:

Բայց ամենից շատ Լոնին դուր էր գալիս այն, թե ինչպես էր Էլլին առանց կաշկանդվելու արտահայտում իր մտքերը: Նա հիշեց՝ ինչպես էր մի քանի ժամադրությունից հետո ասել Էլլիին (ինչպես ասում էր բոլոր կանանց, որոնց հետ հանդիպում էր), որ պատրաստ չէ լուրջ հարաբերությունների: Ի տարբերություն մյուս կանանց, սակայն, Էլլին պարզապես գլխով էր արել ու ասել. «Շատ լավ»: Բայց դուրս գալուց առաջ մի պահ կանգ էր առել, շրջվել ու ավելացրել. «Քո խնդիրը ոչ ես եմ, ոչ աշխատանքդ է, ոչ էլ անգամ ազատությունդ կամ մեկ ուրիշ բան: Քո խնդիրն այն է, որ դու մենակ ես: Քո հայրն ամեն ինչ արել է, որ Համոնդների ընտանիքի համար անուն ստեղծի, և բոլորը ողջ կյանքում, հավանաբար, համեմատել են քեզ նրա հետ: Դու երբեք անկախ չես եղել: Հենց դա է պատճառը, որ

տեղդ չես գտնում և անվերջ փնտրում ես այն մարդուն, որ ինչ-որ հրաշքով կլցնի ներսիդ դատարկությունը: Բայց միակ մարդը, որ կարող է դա անել, ինքդ ես»:

Այդ խոսքերը հնչել էին Լոնի ականջներում ողջ գիշեր: Իսկ առավոտյան նա զանգել էր Էլլիին և խնդրել երկրորդ հնարավորություն տալ իրեն: Որոշ ժամանակ անց Լոնին հաջողվել էր համոզել Էլլիին, ու նա, թեև դժկամությամբ, բայց համաձայնել էր նորից հանդիպել:

Այդ ժամանակից անցել էր չորս տարի, և Լոնն այլևս չէր պատկերացնում իր կյանքն առանց Էլլիի: Իհարկե, նա գիտեր, որ պետք է ավելի շատ ժամանակ անցկացներ հարսնացուի հետ, սակայն փաստաբանի աշխատանքը թույլ չէր տալիս նրան վերահսկել իր ազատ ժամանակը: Էլլին միշտ ըմբռնումով էր մոտենում այդ փաստին, բայց, միևնույն է, Լոնն անիծում էր իրեն՝ նրան քիչ ժամանակ տրամադրելու համար: Նա խոստացել էր ինքն իրեն ավելի քիչ աշխատել ամուսնանալուց հետո: Կխնդրեր իր օգնականին կանգ առնել միայն այն գործերի վրա, որոնք ուշադրության արժանի էին...

Կանգ առնել...

Եվ նրա միտքը նորից առկայծեց:

Կանգ առնել... կանգ առնել... ուրեմն՝ կանգ առնել:

Լոնն առաստաղին նայեց: Կանգ է առել իջևանատանը:

Հենց այդպես: Նա փակեց աչքերն ու փորձեց կենտրոնանալ: Ո՛չ: Ոչ մի արտասովոր բան չկար այդտեղ: Այդ դեպքում ինչն այն չէր:

Դե՛, մտածիր... մտածիր, գրողը տանի:

Նյու Բեռն:

Դե, իհարկե: Նյու Բեռն: Փոքրիկ մանրուք, բայց որքա՜ն կարևոր: Բայց ինչ կարող էր թաքցնել այդ անունը:

Նյու Բեռն: Ծանոթ անուն է: Լոնը մի քանի անգամ կանգ էր առել այնտեղ՝ հիմնականում գործի բերումով: Ոչ մի յուրահատուկ բան՝ այդ վայրի հետ կապված: Էլլիի հետ երբեք այնտեղ չէին եղել:

Բայց, այ, Էլլին եղել էր...

Լոնը զգաց՝ ինչպես է ինչ-որ բան խեղդում կոկորդը: Խճանկարի ևս մի կտոր գտավ իր տեղը:

Հերթական կտորը... բայց դեռ էլի կային պակասող տարրեր...

Էլլի, Նյու Բեռն... և... և... ինչ-որ երեկույթ: Ինչ-որ հպանցիկ դիտողություն՝ Էլլիի մորից: Լոնն անգամ ուշադրության չէր արժանացրել այն: Բայց ի՞նչ էր ասել Էլլիի մայրը: Ամեն գնով հիշել էր պետք:

Լոնը հանկարծ գունատվեց... հիշելով այն, ինչ ասվել էր այնքա՜ն վաղուց... հիշելով Էլլիի մոր խոսքերը:

Էլլին մի ժամանակ սիրահարված է եղել մի երիտասարդի Նյու Բեռնից: Էլլիի մայրը մանկական հրապույր էր անվանել դա: Լոնն ընդամենը ժպտացել էր ու դարձել դեպի հարսնացուն:

Էլլիի դեմքին, սակայն, ժպիտ չկար: Նա զայրացած տեսք ուներ: Եվ Լոնի համար պարզ էր դարձել, որ նա շատ ավելի խոր զգացմունքներ է տածել այդ երիտասարդի նկատմամբ, քան կարող էր պատկերացնել նրա մայրը: Գուցե շատ ավելի խոր, քան հենց իր նկատմամբ ունեցած սերն էր:

Եվ հիմա Էլլին Նյու Բեռնում է: Հետաքրքիր զուգադիպություն է:

Լոնը ձեռքի ափերն իրար սեղմեց ու մոտեցրեց շուրթերին, ասես աղոթում էր: Պատահականությո՞ւն: Գուցե ոչինչ էլ չկար, և Էլլին իսկապես գնումներ անելու էր մեկնել, ինչպես և ասել էր, լարվածությունը թոթափելու համար: Հնարավոր է: Միանգամայն հնարավոր:

Իսկ... իսկ... իսկ եթե այդպես չէ՞ր:

Լոնի սիրտը կասկած մտավ, և առաջին անգամ նա իսկապես վախեցավ:

Իսկ եթե... եթե Էլլին նրա հե՞տ է:

Լոնն անիծեց դատական գործը, որ դեռ ընթացքի մեջ էր: Եթե այն չլիներ, նա մենակ չէր թողնի հարսնացուին: Հետաքրքիր էր՝ Էլլին իրեն ճշմարտությունն էր ասել. Լոնն անվերջ հույսեր էր փայփայում, որ այդպես էլ կար:

Նա չէր կարող կորցնել Էլլիին: Նա ամեն ինչ կանի դրա համար: Նա չի կարող ապրել առանց Էլլիի. այդպիսի երկրորդ մեկի հազիվ թե գտնի:

Դողացող ձեռքերով նա հավաքեց Էլլիի թողած հեռախոսահամարը չորրորդ և վերջին անգամ այդ երեկո:

Եվ կրկին ոչ մի պատասխան:

ՆԱՎԱԿՆ ՈՒ ՄՈՌԱՅՎԱԾ ԵՐԱՋԱՆՔՆԵՐԸ

Հաջորդ առավոտյան Էլլին վաղ արթնացավ սարյակների ուրախ դայլայլից: Նա տրորեց աչքերը՝ մարմնում անսովոր ընդարմություն զգալով: Լավ չէր քնել. երազները հանգիստ չէին տալիս, և նա արթնանում էր ամեն երազից հետո ու նայում ժամացույցին: Հիշում էր՝ սլաքների տարբեր դիրքերը փաստում էին, որ ժամանակը չի կանգնում տեղում:

Նոյի վերնաշապիկով էլ քնել էր: Նորից զգալով նրա բույրը՝ Էլլին կրկին հիշեց սքանչելի երեկոն, որ անցկացրին երկուսով: Նորից հիշեց անկեղծ ծիծաղն ու զրույցները, Նոյի խոսքերն իր տաղանդի մասին: Այդ ամենը շատ անսպասելի էր, բայց որքան հաճելի: Նոյի ամեն մի բառն արձագանքում էր Էլլիի մտքերում, և նա հասկանում էր՝ որքան կզղջար, եթե իրենք այլևս չտեսնվեին:

Էլլին պատուհանից դուրս նայեց և նկատեց դայլայլող թռչնակներին, որ, դեսուդեն ընկած, կեր էին փնտրում վաղորդյան արևի ծուլացող շողերի ներքո: Նոյն իսկական արտույտ էր, և յուրովի էր դիմավորում լուսաբացը: Նա դուրս էր գալիս զբոսնելու իր նավակով և հետևում՝ ինչպես էր երկար գիշերվանից հետո կրկին ծագում արևը: Այդպիսի մի զբոսանք էլ նա Էլլիի համար էր կազմակերպել: Միայն թե Էլլին ստիպված էր պատուհանով ծլկել տնից, որովհետև ծնողները ոչ մի դեպքում թույլ չէին տա նրան այդքան վաղ դուրս գալ: Բարեբախտաբար, նրանք

չէին էլ նկատել դստեր բացակայությունը, և Էլլին բախտ էր ունեցել դիմավորելու արևածագը սիրելիի գրկում: «Նայի՛ր»,- շշնջացել էր Նոյը, և Էլլին առաջին անգամ դիմավորել էր լուսաբացը՝ գլուխը նրա ուսին դրած: Մի՞թե կարող էր ավելի մեծ երջանկություն լինել:

Երբ Էլլին վեր կացավ անկողնուց և ուղղվեց լոգարան՝ ոտքերի տակ զգալով սառը հատակը, պատկերացրեց, որ Նոյն այս առավոտ էլ, սովորության համաձայն, անցկացրել էր նավակի վրա՝ հետևելով՝ ինչպես է սկսվում նոր օրը:

Եվ նա ճիշտ էր:

Նոյն արթնացել էր, երբ դեռ մութ էր, արագ հագել նույն ջինսե տաբատը, ինչ նախորդ օրը, շապիկ, ֆլանելե մաքուր վերնաշապիկ, կապույտ բաճկոն և կոշիկներ: Ապա լվացել ատամները, իջել ներքև, արագ մեկ բաժակ կաթ խմել և երկու թխվածքաբլիթ վերցնելով՝ դուրս եկել տնից: Դրսում նրան ողջունել էր Քլեմը, մեկ-երկու անգամ անփութորեն լպստել նրա ձեռքերը: Այնուհետև Նոյն ուղղվել էր դեպի նավամատույց, որտեղ հանգրվանել էր նրա երկար նեղ նավակը: Նրան դուր էր գալիս հանձնվել գետին և թույլ տալ, որ նա իր կախարդանքն անի. թուլացնի մկանները, ջերմացնի մարմինն ու մաքրի միտքը:

Ալիքների հարվածներին դիմակայած հնամաշ նավակը կախված էր երկու ժանգոտ կեռիկներից անմիջապես նավամատույցի մոտ՝ ջրի վրա, խեցգետնակերպերից պաշտպանելու համար: Նոյը հանեց նավակը կեռիկներից, դրեց ոտքերի մոտ և արագ ստուգեց՝ արդյոք ամեն ինչ կարգին էր: Այնուհետև մի քանի հմուտ շարժումներով, որ վաղուց արդեն սովորության էին վերածվել, նա իջեցրեց նավակը ջրի վրա, և շուտով արդեն լողում էր՝ հոսանքն ի վար՝ ծառայելով իր նավակի համար թե՛ որպես ղեկ, թե՛ որպես շարժիչ:

Սառը օդը ծակծկում էր նրա մարմինը՝ թարմություն հաղորդելով, իսկ երկինքը տարբեր գույներով էր ներկված. սաթի պես սև՝ գլխավերևում, ապա կապույտն էր ձգվում իր ամենատարբեր

երանգներով՝ հորիզոնի վրա իր տեղը զիջելով մոխրագույնին: Նոյը մի քանի անգամ խոր շունչ քաշեց՝ ներս առնելով սոճիների ու աղի ջրի բույրը, այնուհետև թույլ տվեց՝ մտքերն իրեն կլանեն: Ահա թե ամենից շատ ինչն էր կարոտում հյուսիսում ապրելու տարիներին: Երկար աշխատանքային օրվա պատճառով նա ժամանակ չէր ունենում ջրի վրայով դեգերելու: Արշավներ, զբոսանքներ ջրի վրա, ժամադրություններ, աշխատանք... ինչ-որ մեկը պետք էր զոհաբերել: Ամեն անգամ ազատ ժամանակ գտնելով՝ Նոյը ճամփա էր ընկնում ոտքով և ուսումնասիրում Նյու Ջերսիի բնությունը՝ քաղաքի աղմուկից հեռու, սակայն տասնչորս տարվա ընթացքում նա այդպես էլ չկարողացավ նավակով զբոսանքի դուրս գալ ջրի վրա: Նյու Բեռն վերադառնալուց հետո առաջին բանը, որ նա արեց, հենց դա էր:

Նոյը վստահ էր՝ ինչ-որ յուրահատուկ, գրեթե առեղծվածային բան կա արևաածագը ջրի վրա դիմավորելու մեջ: Վերադարձի օրվանից ոչ մի այդպիսի լուսաբաց Նոյը գրեթե բաց չէր թողնում՝ անկախ նրանից՝ արևոտ ու պարզ էր օրը, թե ցուրտ ու մռայլ: Երկաթագույն ջրերի վրա խոնարհված՝ նա գործի էր դնում թիերը՝ գլխում պտտելով միշտ նույն հարազատ մեղեդին: Նրան մերթ կրիաների ընտանիք էր հանդիպում, որ իր հանգիստն էր առնում կիսով չափ ջրի մեջ ընկղմված թիի վրա, մերթ թռիչքի պատրաստվող ձկնկուլ, որ թռչկոտում էր ուղիղ ջրի վրայով, մինչև կանհետանար լուսադեմի արծաթե աղջամուղջում:

Նոյը թիավարելով հասավ առվի կենտրոնը և նկատեց՝ ինչպես ջրի վրայով ձգվեց արևի նարնջագույն հետքը: Նա թուլացրեց ճնշումը թիերի վրա՝ գործադրելով այնքան ջանք, որքան պետք էր տեղում մնալու համար, և սկսեց հետևել՝ ինչպես է լույսը սկսում շոյել ծառերի կատարները: Նա սիրում էր կանգ առնել և վայելել այդ պահը, երբ աշխարհն ասես նորից էր ծնվում: Այնուհետև նա կրկին սկսեց ուժ գործադրել և լողալ հոսանքին հակառակ՝ նոր օրվան ընդառաջ:

Իսկ մինչև ափ հասնելը նրա գլխում բազմապիսի հարցեր էին

պտտվում. նրա միտքը ցատկոտում էր մի հարցից մյուսը, ինչպես ջրի կաթիլները՝ շիկացած տապակի վրա: Նա մտածում էր Լոնի մասին. ինչպիսի՞ մարդ էր նա և ինչպե՞ս էր վերաբերվում Էլլիին: Բայց ամենից շատ նրան հանգիստ չէին տալիս Էլլիի մասին մտքերը, և այն հարցը, թե ինչու էր նա վերադարձել:

Տուն հասնելով՝ Նոյն իրեն բոլորովին նոր մարդ էր զգում: Նա նայեց ժամացույցին և զարմացած հայտնաբերեց, որ տնից դուրս գալու պահից արդեն երկու ժամ էր անցել: Թեև ժամանակը միշտ աննկատ էր անցնում գետի վրա, և Նոյը վաղուց արդեն հարմարվել էր ժամանակի այդ անկանխատեսելի հնարքներին:

Նա կախեց նավակը չորանալու, մի քանի անգամ ձգվեց և գնաց խորդանոց, որտեղ պահում էր իր կանոեն: Նա հանեց այն ափ և, շրջվելով դեպի տուն՝ զգաց, որ ոտքերը դեռ մի փոքր ընդարմացած էին:

Առավոտյան մշուշաքողը դեռ ամբողջովին չէր ցրվել, իսկ ոտքերի ընդարմությունն ինչպես միշտ հուշում էր, որ անձրևելու է: Նոյը նայեց երկնքին և արևմտյան հատվածում նկատեց փոթորկաբեր ամպեր՝ ծանր ու թանձր, որ դանդաղ մոտենում էին հեռվից, իսկ քամին, թեև ուժեղ չէր փչում, բայց օգնում էր նրանց այդ հարցում: Միայն այդ թուխպը տեսնելով՝ Նոյը հասկացավ, որ չէր ցանկանա դրսում լինել, երբ երկինքը սկսեր որոտալ ու անձրև տեղալ: Գրողը տանի: Որքա՞ն ժամանակ էր մնացել: Ընդամենը մի քանի ժամ՝ մի քիչ ավելի կամ մի քիչ պակաս:

Նոյը ցնցուղ ընդունեց, հագավ նոր ջինսե տաբատը, կարմիր վերնաշապիկ ու սև կովբոյական կոշիկներ, սանրվեց և իջավ խոհանոց: Նա լվաց ափսեները, որ մնացել էին նախորդ երեկոյից, մի փոքր հավաքեց շուրջը, սուրճ պատրաստեց իր համար և դուրս եկավ ծածկապատշգամբ: Երկինքն ավելի էր մթնել: Նոյը ստուգեց բարոմետրը: Սլաքն անշարժ էր, թեև շուտով այն ներքև կսահեր: Արևմուտքից եկող ամպերը դրա մասին էին վկայում:

Նա դեռ վաղուց էր սերտել, որ եղանակի հետ կատակներ չի կարելի անել, ուստի չգիտեր՝ արդյոք լա՞վ միտք էր երկրորդ անգամ դուրս գալ զբոսանքի ջրի վրա: Անձրևը դատարկ բան է, բայց այ կայծակը, հատկապես երբ ջրի վրա ես, այլ պատմություն է: Կանոնեն լավագույն տեղը չէ, երբ խոնավ օդում ճայթում է կայծակը:

Բայց քանի որ դեռ ժամանակ ուներ, որոշեց ավելի ուշ մտածել դրա մասին և, վերջին կում սուրճն ըմպելուց հետո, գնաց խորդանոց, որտեղ պահում էր գործիքները՝ կացնի հետևից: Բութ մատով ստուգելով սայրի սրությունը՝ նա անմիջապես ձեռքը վերցրեց հեսանաքարը: «Բութ կացինն ավելի վտանգավոր է, քան սուրը»,- ասում էր նրա հայրը: թվագրվում է 1915-ին հետո գրված

Հաջորդ քսան րոպեն Նոյը փայտ էր կոտրատում՝ կոկիկ դասավորելով դրանք իրար վրա, և անում էր այնպիսի թեթևությամբ ու հմուտ շարժումներով, որ անգամ քրտինքի մի կաթիլ չհայտնվեց նրա ճակատին: Փայտի մի քանի կտոր նա մի կողմ դրեց և ավարտելուց հետո տարավ դրանք իր հետ տուն ու դրեց բուխարու կողքին:

Նա կրկին նայեց Էլլիի կտավին և հպվեց դրան՝ փորձելով հավատալ, որ նախորդ երեկոն իրականություն էր: Աստվա՞ծ իմ, ի՞նչ կար Էլլիի մեջ, որ ստիպում էր՝ նրա սիրտն այդքան արագ բաբախեր, անգամ երկար տարիներ անց: Այդ ի՞նչ տարօրինակ իշխանություն ուներ այդ աղջիկն իր վրա:

Նոյը շրջվեց և գլուխն օրորելով՝ դուրս եկավ ծածկապատշգամբ ու կրկին ստուգեց բարոմետրը: Սլաքը տեղից չէր շարժվել: Այնուհետև նա նայեց ձեռքի ժամացույցին:

Ուր որ է՝ Էլլին կգա:

Իսկ Էլլին լոգանք էր ընդունել և արդեն հագնվում էր: Ավելի վաղ նա բացել էր պատուհանն ու ստուգել՝ ինչ եղանակ էր: Դրսում ցուրտ չէր, և նա որոշել էր թեթև մարմնագույն զգեստը հագնել՝ երկար թևքերով ու պարանոցը գրկող: Զգեստը փափուկ էր ու հար-

մար, ընդգծում էր Էլլիի կազմվածքը, և նա հիասքանչ տեսք ուներ դրանով: Իսկ ընդհանուր կերպարը համալրում էին սպիտակ սանդալները:

Նա առավոտն անցկացրել էր քաղաքի կենտրոնում շրջելով: Մեծ ճգնաժամն իր հետքն էր թողել քաղաքի վրա, սակայն արդեն ի հայտ էին գալիս ծաղկումի նշաններ: «Մասոնական» թատրոնը, որ տարածաշրջանի ամենահին գործող թատրոնն էր, լքված տեսք ուներ, սակայն այնտեղ դեռ ցուցադրվում էին մի քանի նոր ֆիլմեր: Իսկ «Ֆորտ Տոտեն» զբոսայգին ընդհանրապես չէր փոխվել. Էլլիին անգամ թվաց, որ դասերից հետո դեպի ճոճանակներն էին շտապում նույն երեխաները, ինչ տասնչորս տարի առաջ: Այդ հիշողությունները ժպիտ բերեցին Էլլիի շուրթերին, և նա մտածեց՝ որքան պարզ էր ամեն ինչ այն ժամանակ: Կամ էլ հիմա էր ամեն ինչ պարզ թվում, երբ հետ ես նայում:

Իսկ հիմա ոչինչ էլ պարզ չէր: Անհավանական էր թվում, բայց կարծես ամեն ինչ իր տեղն էր ընկնում, կարծես հենց այդպես էլ պետք է լիներ: Հետաքրքիր է՝ ինչով զբաղվելիս կլիներ հիմա Էլլին, եթե այդ հոդվածն այդպես էլ չընկներ նրա ձեռքը: Պատկերացնելը դժվար չէր, քանի որ նրա օրերն այնքա՛ն նման էին: Չորեքշաբթի էր, իսկ դա նշանակում էր «Բրիջ» կխաղային քաղաքամերձ ակումբում, իսկ հետո «Կրտսեր կանանց լիգայի» ամենշաբաթյա ժողովին էր հարկավոր մասնակցել, որտեղ, հավանաբար, կկազմակերպվեր հերթական դրամահավաքը որևէ մասնավոր դպրոցի կամ հիվանդանոցի համար: Դրանից հետո այցելություն մայրիկի հետ, ապա կվերադառնար տուն՝ պատրաստվելու Լոնի հետ ընթրիքին, որովհետև չորեքշաբթի օրերին, որպես կանոն, նա յոթին էր ավարտում աշխատանքը: Դա միակ երեկոն էր շաբաթվա ընթացքում, որ Լոնն անվերապահորեն Էլլիին էր նվիրում:

Էլլին զսպեց իրեն համակող տխրությունը՝ հույս փայփայելով, որ մի օր Լոնը կփոխվի: Նա բազմիցս էր խոստացել, որ ավելի

շատ ժամանակ կտրամադրի Էլլիին, սակայն անցնում էր մի քանի շաբաթ, և նա նորից վերադառնում էր իր հին ռիթմին: «Կներես, թանկագի՛նս, այսօր չեմ կարող,- արդարանում էր նա,- իսկապես, չեմ կարող: Մենք անպայման կհանդիպենք, հենց ազատ ժամանակ գտնեմ»:

Էլլին չէր վիճում փեսացուի հետ այդ հարցի շուրջ, որովհետև ինքն էլ գիտեր, որ նա ճիշտն է ասում: Փաստաբանի աշխատանքը մեծ նվիրում է պահանջում և՛ դատավարությանը պատրաստվելիս, և՛ գործը քննելու ընթացքում: Միայն թե Էլլին չէր հասկանում՝ ինչո՞ւ էր Լոնն այդքան ժամանակ ծախսում իր սիրտը գրավելու համար, եթե հետո իրենք գրեթե չէին հանդիպելու:

Էլլին, մտքերով տարված, քիչ էր մնում՝ անցներ պատկերասրահի կողքով, սակայն ժամանակին սթափվեց և հետ դարձավ: Մի պահ մնաց՝ շեմին կանգնած. զարմանալի է՝ որքա՞ն ժամանակ էր անցել, որ նա ոչ մի պատկերասրահ չէր այցելել: Հետաքրքիր է՝ ինչո՞ւ:

Պատկերասրահը բացվել էր Ֆրոնթ Սթրիթի խանութների հիմնական մասի հետ նույն ժամին: Էլլին ներս մտավ և սկսեց ուսումնասիրել կտավները: Դրանց հեղինակներից շատերը տեղացի էին, և նրանց աշխատանքներում գերիշխող էին ծովային տեսարանները՝ օվկիանի գեղեցկությունը, ավազե լողափերը, հավալուսներ, հնաոճ առագաստանավեր, նավաքարշ շոգենավեր, նավամատույցներ, ճայեր և ալիքներ, ալիքնե՛ր, ալիքնե՛ր, որքան սիրտդ ուզեր, ամենատարբեր չափերի, ձևերի և գույների, որ հնարավոր էր միայն պատկերացնել: Որոշ ժամանակ անց Էլլիին սկսեց թվալ՝ այդ բոլոր կտավները նույնն են: Կա՛մ նկարիչները ծուլացել էին ուրույն ձեռագիր ավելացնել մշտական տեսարանին կամ էլ նրանց երևակայությունը չէր բավել:

Պատերից մեկի վրա, սակայն, նրա ուշադրությունը գրավեցին

մի քանի կտավներ, որոնք ամենից շատ դուր եկան Էլլիին: Դրանք բոլորը պատկանում էին միևնույն նկարչի վրձնին՝ Էլեյն անունով, և թվում էր՝ ոգեշնչված էին հունական կղզիների ճարտարապետական լուծումներով: Իրեն ամենից շատ դուր եկած կտավի վրա Էլլին նկատեց, որ նկարիչը տեսարանն ընդգծելու համար կանխամտածված կերպով կերպարներն ավելի փոքր էր պատկերել, քան իրական կյանքում կլինեին, իսկ գույների հարցում այնքան շռայլ էր գտնվել, որ բոլոր սահմանները լղոզված էին: Այնուամենայնիվ, վառ գույների հորձանուտն անխուսափելիորեն գրավում էր այցելուների հայացքները՝ ասես նրբանկատորեն հուշելով՝ որտեղ է պետք կենտրոնացնել ուշադրությունը: Կտավի վրա կյանք կար, որի կողքով անհնար էր անտարբեր անցնել: Որքան շատ էր նայում Էլլին կտավին, այնքան ավելի շատ էր այն դուր գալիս նրան: Նա արդեն ուզում էր գնել այն, երբ հասկացավ, որ կտավն իրեն դուր էր եկել, որովհետև հիշեցնում էր նրան իր սեփական գործերը: Ավելի խորազնին հայացքով կտավն ուսումնասիրելուց հետո Էլլին մտածեց, որ Նոյը գուցե ճիշտ էր, և գուցե ժամանակն էր արդեն, որ նորից սկսեր նկարել:

Էլլին դուրս եկավ պատկերասրահից ժամը ինն անց կեսին և ուղղվեց դեպի «Հոֆման Լեյն» սուպերմարկետ, որ քիչ հեռու էր գտնվում: Մի քանի րոպե անց նա գտավ այն, ինչ փնտրում էր, բայց, ի զարմանս իրեն, գրենական պիտույքների բաժնում. թուղթ, կավճի կտորներ և մատիտներ, բավականին որակյալ, ի դեպ: Հազիվ թե դրանցով արժանի կտավ ստանար, սակայն դա սկիզբն էր, և Էլլին ոգևորված շտապեց տուն: Նա նստեց գրասեղանի մոտ և սկսեց աշխատել առանց որևէ հատուկ մտահղացման, պարզապես ուզում էր դարձյալ զգալ՝ ինչպես են գույներն ու պատկերները հոսում երիտասարդ տարիների հիշողություններից: Մի քանի աբստրակցիաներ պատկերելուց հետո նա փորձեց փողոցի՝ պատուհանից բացվող տեսարանի

ուրվանկարը ստանալ և զարմացավ, որ իրեն հաջողվեց առանց որևէ ջանքի: Կարծես երբեք էլ չէր դադարել նկարել: Ավարտելուց հետո Էլլին հաճույքով նկատեց, որ ջանքերն ապարդյուն չեն անցել: Մտածեց՝ էլ ինչ կարող էր փորձել նկարել և հասկացավ: Քանի որ աչքերի առաջ բնօրինակ արդեն չուներ, փորձեց սկսելուց առաջ պատկերացնել տեսարանը մտքում: Ու թեև այս անգամ ավելի բարդ էր, քան փողոցի ուրվանկարը ստանալը, բայց տեսարանը պակաս բնական չստացվեց ու հետզհետե սկսեց ձև ստանալ:

Ժամանակն արագ էր սահում: Էլլին տարված էր նկարելով, բայց չէր մոռանում նայել ժամացույցին՝ չուշանալու համար Նոյի հետ հանդիպումից: Կեսօրին մոտ նա վերջացրեց նկարելը: Գրեթե երկու ժամ պահանջվեց երևակայական պատկերը ստանալու համար, բայց արդյունքը հաճելիորեն զարմացրեց Էլլիին: Նրան թվաց՝ ավելի երկար ժամանակ է անցկացրել գրասեղանի մոտ՝ հարազատ զբաղմունքով տարված: Նա փաթաթեց նկարը, դրեց պայուսակի մեջ, այնուհետև հավաքեց մյուս իրերը: Դուրս գալիս նա նայեց իրեն հայելու մեջ: Ինքն էլ չհասկացավ՝ ինչու, բայց հայացքում խաղաղություն էր հաստատվել:

Էլլին կրկին իջավ սանդուղքով և ուղղվեց դեպի ելքը: Հասնելով դռանը՝ նա իր թիկունքում ձայն լսեց.

- Մի՞սս:

Էլլին շրջվեց՝ հասկանալով, որ իրեն են դիմում: Իջևանատան այն նույն աշխատակիցն էր, որ նախորդ օրը ևս հերթափոխի էր: Շրջվելով՝ Էլլին անմիջապես հանդիպեց նրա հետաքրքրասեր հայացքին:

- Լսում եմ:

- Նախորդ երեկո Ձեզ մի քանի անգամ զանգել են:

- Իսկապե՞ս,- զարմացավ Էլլին:

- Այո: Բոլոր զանգերը միսթր Համոնդից էին:

«Ա՛հ, Աստված իմ»,- Էլլին մտահոգվեց:

- Լո՞ն է զանգել:

- Այո, մադա՛մ, չորս անգամ: Երկրորդ զանգին ինքս եմ պատասխանել: Նա անհանգստացած էր երևում: Ասաց, որ Ձեր փեսացուն է:

Էլլին ստիպեց իրեն ժպտալ՝ փորձելով թաքցնել զգացածը: Չորս անգամ: Ի՞նչ կարող էր դա նշանակել: Իսկ եթե ինչ-որ բա՞ն էր պատահել իր բացակայության ընթացքում:

- Նա ոչինչ չասա՞ց: Որևէ շտապ բա՞ն:

Աշխատակիցն անմիջապես տարուբերեց գլուխը.

- Ոչինչ, մի՛սս: Փոխարենը՝ նա կարծես թե սաստիկ անհանգստացած էր Ձեզ համար:

Լավ է, մտածեց Էլլին: Դա լավ է: Բայց, միևնույն է, սիրտը հանգիստ չէր: Ի՞նչ հրատապություն էր դա: Ինչո՞ւ էր Լոնն այդքան զանգել: Մի՞թե ինքն ինչ-որ բան այն չէր ասել նախորդ երեկո: Նման համառությունն ամենևին բնորոշ չէր Լոնին:

Մի՞թե նա ինչ-որ բան էր պարզել: Ո՜չ... անհնար էր: Եթե միայն ծանոթներից որևէ մեկը չէր տեսել նրան երեկ ու տեղեկացրել Լոնին... Բայց որևէ բան պարզելու համար պետք է հետևեին Էլլիին մինչև Նոյի տուն, իսկ այդ դեպքում Էլլին անպայման կնկատեր:

Պետք էր զանգել Լոնին, չէր կարող խուսափել նրա հետ խոսելուց: Բայց, չգիտես ինչու, Էլլին ցանկություն չուներ: Սա իր ժամանակն էր, և նա ուզում էր անցկացնել այն՝ ինչպես ինքը կկամենար: Նա չէր ուզում խոսել Լոնի հետ, համենայն դեպս մինչև իջևանատուն վերադառնալը: Նա կարծես զգում էր, որ փեսացուի հետ խոսելը կարող է փչացնել իր օրը: Բացի դրանից՝ ի՞նչ էր ասելու նրան: Ինչպե՞ս էր բացատրելու, որ այդ ուշ ժամին դրսում է եղել: Ուշ է ընթրել, հետո էլ զբոսնելո՞ւ է գնացել: Կամ գուցե կինո՞ է գնացել: Կամ էլ...

- Միսս:

Շուտով կեսօր կլինի: Որտեղ կարող է լինել Լոնն այս ժամին: Գրասենյակում, հավանաբար... Ո՛չ: Պետք է որ դատարանում լինի: Էլլիի ուսերից ասես ծանր քար ընկավ: Նույնիսկ եթե ինքը ցանկանար խոսել փեսացուի հետ, միևնույն է, չէր կարող: Էլլին ինքն էլ զարմացավ՝ ինչպես թեթևացած շունչ քաշեց: Նա իրեն մեղավոր զգաց, սակայն, միևնույն է, դա նրան քիչ էր մտահոգում այդ պահին: Նա նայեց ձեռքի ժամացույցին:

- Ա՛հ, արդեն գրեթե տասներկուսն է,- ձևացնելով, որ ափսոսում է՝ ասաց Էլլին:

Իջևանատան աշխատակիցը նույնպես նայեց իր ժամացույցին ու գլխով արեց.

- Այո, քառորդ է պակաս:

- Ցավոք,- բացատրեց Էլլին,- այս պահին նա դատական նիստի է: Ես չեմ կարող զանգել նրան: Եթե փեսացուս կրկին զանգահարի, կարո՞ղ եք ասել նրան, որ ես գնումների եմ գնացել և երեկոյան կզանգահարեմ նրան:

- Իհարկե,- պատասխանեց աշխատակիցը:

Սակայն Էլլին նրա հայացքում կարդաց անպատասխան մնացած հարցը. «Բայց որտեղ էիք նախորդ երեկո»: Նա շատ լավ գիտեր՝ երբ էր վերադարձել Էլլին. բավականին ուշ միայնակ կնոջ համար այս փոքրիկ քաղաքում:

- Շնորհակալ եմ,- ասաց Էլլին ժպտալով,- երախտապարտ կլինեմ:

Երկու րոպե անց նա արդեն իր մեքենայով Նոյի տան ճանապարհին էր՝ թրթիռը սրտում: Նոր օրվա վայելքը մոռանալ տվեց նրան անգամ հեռախոսային զանգերը, որոնք դեռ երեկ մտահոգություն կպատճառեին նրան: Հետաքրքիր է՝ ինչու էր այդպես:

Չորս րոպե չանցած, երբ Էլլիի մեքենան արդեն կամուրջն էր հատում, Լոնը դատարանից կրկին զանգահարեց իջևանատուն:

ԱԼԻՔՎՈՂ ՁՈՒՐԸ

Նոյը նստած էր իր ճոճաթոռին: Քաղցր թեյն էր վայելում՝ ականջը ճանապարհին, երբ վերջապես լսեց շարժիչի ձայնը: Նա դուրս եկավ դարպասից և տեսավ՝ ինչպես մեքենան մոտեցավ և կրկին կանգ առավ կաղնու տակ՝ նույն տեղում, ինչ երեկ: Քլեմը, հաչելով ու պոչը շարժելով, ողջունեց Էլլիին, իսկ Էլլին մեքենայի միջից ձեռքով արեց Նոյին:

Հետո նա դուրս եկավ մեքենայից, շոյեց շան գլուխն ու ժպտաց Նոյին՝ տեսնելով, որ նա մոտենում է իրեն: Էլլին ավելի հանգիստ էր երևում, քան երեկ, ավելի վստահ: Իսկ Նոյի սիրտը կրկին թրթռաց, երբ տեսավ նրան: Թեև այսօր ամեն ինչ ուրիշ էր: Նոյին նոր զգացում էր համակել, հին զգացմունքները մնացել էին հիշողություններում: Մի գիշերվա մեջ այդ նոր զգացումը հասցրել էր այնքան սաստկանալ, որ Էլլիի ներկայությունը ստիպում էր Նոյին փոքր-ինչ հուզվել:

Էլլին գնաց Նոյին ընդառաջ՝ ձախ ձեռքին մի փոքրիկ պայուսակ: Անսպասելիորեն նա աջ ձեռքով գրկեց Նոյի իրանն ու քնքշորեն համբուրեց նրա այտը:

- Ողջույն,- ասաց նա՝ փայլն աչքերում,- իսկ ո՞ւր է անակնկալը:

Նոյը մի փոքր թոթափեց լարվածությունը.

- Գոնե բարի օր մաղթեիր կամ հարցնեիր՝ ինչպես եմ քնել:

Էլլին ժպտաց: Նա երբեք չէր փայլել համբերատարությամբ:

- Շատ լավ: Բարի օր: Ինչպե՞ս քնեցիր: Իսկ ո՞ւր է անակնկալը:

Նոյն անհոգ ծիծաղեց, իսկ երբ հանդարտվեց, ասաց.

- Էլլի, վատ լուր ունեմ:

- Ի՞նչ է պատահել:

- Ես ուզում էի քեզ մի տեղ տանել, բայց վստահ չեմ, որ ճիշտ է գնալը. ամպերի՞ն նայիր:

- Այսի՞նքն:

- Ամպրոպ է սպասվում: Եթե անձրև սկսվի, կթրջվենք: Բացի դրանից՝ կայծակը վտանգավոր կարող է լինել, երբ ջրի վրա ես:

- Անձրևը դեռ չի սկսվել: Շա՞տ հեռու է այստեղից այդ վայրը:

- Մոտ մեկ մղոն՝ գետն ի վեր:

- Ասում ես՝ երբեք չե՞մ եղել այնտեղ:

- Տարվա այս եղանակին՝ ոչ:

Էլլին մի պահ լռեց ու շուրջը նայելով՝ սկսեց մտածել:

- Այդ դեպքում կգնանք,- ասաց նա վերջապես. նրա ձայնը վճռական հնչեց.- Ես անձրևից չեմ վախենում:

- Վստա՞հ ես:

- Միանգամայն:

Նոյը կրկին նայեց երկնքին. ամպերն աննահանջ մոտենում էին:

- Այդ դեպքում՝ լավ կլինի՝ հենց հիմա դուրս գանք,- ասաց նա,- պայուսակդ տանը թողնե՞նք:

Էլլին գլխով արեց՝ նրան փոխանցելով պայուսակը: Նոյը վազեց դեպի տուն, պայուսակը դրեց հյուրասենյակում՝ աթոռի վրա: Ապա մի փոքր հաց վերցրեց և դնելով պայուսակի մեջ՝ դուրս եկավ տնից: Հետո նրանք միասին ուղղվեցին դեպի կանոեն: Էլլին քայլում էր Նոյի կողքով և երեկվա պես հեռու չէր պահում իրեն:

- Գոնե ասա՞՝ ի՞նչ վայր է դա:

- Կտեսնես:

- Անգամ չե՞ս ակնկարկի:

- Համոզեցիր,- ասաց Նոյը,- հիշո՞ւմ ես՝ ինչպես դիմավորեցինք արևածագը նավակի վրա:

- Այս առավոտ հենց այդ հիշողություններով էի տարվել: Հիշում եմ՝ ինչպես էի արտասվում այդ տեսարանից:

- Այսօրվա տեսածիդ համեմատ՝ այդ արևածագը քեզ գորշ ու միօրինակ կթվա:

- Այդ դեպքում՝ ինձ յուրահատուկ կզգամ:

Նոյը պատասխանեց ևս մի քանի քայլ անելուց հետո միայն.

- Այդպես էլ կա. դու յուրահատուկ ես:

Թվաց՝ Նոյն ավելացնելու բան ուներ, բայց նա լռեց, իսկ Էլլին, ի պատասխան, մեղմորեն ժպտաց նրան: Շրջվելով՝ նա այտերին զգաց քամու հպումը և հասկացավ, որ առավոտյան այն շատ ավելի մեղմ էր:

Մեկ րոպե անց նրանք հասան նավամատույց: Պայուսակը նավակի մեջ նետելուց հետո Նոյն արագ ստուգեց՝ արդյոք որևէ բան չէ՞ր մոռացել: Այնուհետև իջեցրեց կանոեն ջրի վրա:

- Իսկ ե՞ս ինչ անեմ:

- Պարզապես տեղավորվի՛ր:

Էլլին տեղավորվեց, և Նոյը կանոեն հետ հրեց ափից: Այնուհետև ինքն էլ կանգնեց նավակի վրա՝ ոտքերն իրարից հեռու դնելով՝ ճարպկորեն պահելով հավասարակշռությունը, որ նավակը հանկարծ չշրջվեր: Էլլին հիացմունքով հետևում էր նրան՝ լավ հասկանալով, որ այդ ամենը շատ ավելի բարդ էր, քան կարող էր թվալ առաջին հայացքից:

Էլլին տեղավորվեց կանոեի առաջամասում՝ դեմքով դեպի հետ: Սկսելով թիավարել՝ Նոյը զգուշացրեց նրան, որ այդկերպ կարող է շատ բան բաց թողնել տեսադաշտից, սակայն Էլլին օրորեց գլուխը՝ պատասխանելով, որ իր համար այդպես էլ է լավ:

Եվ նա չէր ստում:

Ցանկության դեպքում նա կարող էր շրջել գլուխը՝ տեսադաշտում պահելով ուշադրության արժանի տեսարանները, բայց ամենից շատ նա ուզում էր նայել Նոյին: Այդ նրան էր նա եկել տեսնելու, ոչ թե վտակը: Նոյի վերնաշապիկի ամենավերևի կոճակն արձակած էր, և Էլլին տեսնում էր՝ ինչպես են ամեն շարժման հետ պրկվում նրա կրծքի մկանները: Թևքերն էլ վեր էին ծալված, և ձեռքերի մկանները նույնպես թեթևակիորեն փքվում էին: Ամեն առավոտ ջրի վրա դուրս գալու նրա սովորության շնորհիվ բոլոր մկանները մարզված տեսք ունեին:

Նրա շարժումներն այնքան նրբագեղ էին, այնքան բնական, ասես ջրի վրա լինելը նրա հպատակությունից դուրս էր, ասես հեռավոր նախնիների անտես ժառանգությունն էր թելադրում այն երկխոսությունը, որ ծնվում էր նրա ու ալիքների միջև: Էլլին հետևում էր Նոյին և մտածում՝ երևի բնության հեռավոր անկյունները առաջինը բացահայտող նախամարտիկներն էլ նույն տեսքն են ունեցել:

Նա, սակայն, չէր կարողանում համեմատել Նոյին իր ճանաչած երիտասարդներից և ոչ մեկի հետ: Մի կողմից՝ բարդ ու հակասություններով լի, մյուս կողմից՝ պարզ. տարօրինակ համադրություն, որը, սակայն, անասելիորեն գրավում էր: Առաջին հայացքից նա գյուղացի տղա էր, որի կյանքում մեծագույն իրադարձությունը պատերազմն էր եղել. թերևս հենց այդպիսին էլ տեսնում էր նա ինքն իրեն: Սակայն դա ընդամենը առաջին տպավորությունն էր: Գուցե պոեզիայի նկատմամբ սերն էր նրան յուրահատուկ դարձնում կամ էլ մարդկային արժեքները, որ հայրն էր փոխանցել նրան: Ամեն դեպքում տպավորությունն այնպիսին էր, որ նա ապրում և զգում է կյանքն ավելի լիարժեքորեն, քան մյուսները, և հենց նրա այդ հատկանիշն էր, որ առաջին հայացքից գերել էր Էլլիին:

- Ինչ ես մտածում,- հանկարծ հարցրեց Նոյը:

Էլլին թեթևակիորեն ցնցվեց. Նոյի ձայնն ասես վերադարձրեց նրան իրականություն: Միայն այդժամ Էլլին նկատեց, որ նավակի շարժվելու պահից սկսած գրեթե չէր խոսել: Եվ նա շնորհակալ էր Նոյին այդ լռության համար: Նրբանկատությունը հատուկ էր նրան:

- Լավ բաների մասին,- շշնջաց Էլլին և Նոյի հայացքից հասկացավ, որ նրա համար պարզ էր՝ ում մասին էր մտածում ինքը:

Եվ դա հաճելի էր: Էլլին ուզում էր հավատալ, որ Նոյն էլ իր մասին էր մտածում:

Էլլիի սրտում ինչ-որ բան շարժվեց, ինչպես տարիներ առաջ: Նոյին այդքան մոտ գտնվելը, նրա ամեն մի շարժմանը հետևելն առաջ բերեցին այդ զգացողությունը: Եվ երբ մի կարճ ակնթարթ նրանց հայացքները ձուլվեցին իրար, Էլլին զգաց՝ ինչպես սկսեց այրվել նախ պարանոցը, հետո կուրծքը, և նա արագ շրջվեց, նախքան Նոյը կնկատեր՝ ինչպես են այրվում արդեն նրա այտերը:

- Դեռ որքա՞ն պիտի նավենք,- հարցրեց Էլլին:

- Մոտ կես մղոն: Ոչ ավելի,- պատասխանեց Նոյը:

Նորից լռություն:

- Որքա՞ն գեղեցիկ է այստեղ: Որքա՞ն մաքուր, որքա՞ն խաղաղ: Ասես ժամանակն անզոր է այդ մաքրության դեմ:

- Ինչ-որ իմաստով այդպես էլ կա: Վտակն անտառից է սկիզբ առնում: Վտակի ակունքից մինչև այստեղ ֆերմաներ չկան, և ջուրը երկնքի պես վճիտ է, ինչպես, հավանաբար, միշտ է եղել:

Էլլին խոնարհվեց դեպի Նոյը:

- Ասա՛ ինձ, Նո՛յ, ամենից շատ ի՞նչն է տպավորվել հիշողությանդ մեջ մեր միասին անցկացրած ամառվանից:

- Ողջ ամառը:

- Իսկ հատկապե՞ս:

- Ոչինչ,- պատասխանեց Նոյը:

- Ոչ մի յուրահատուկ բան չեմ հիշում:

Նոյն անմիջապես չպատասխանեց:

- Ո՛չ, սխալ հասկացար ինձ: Երբ ասացի՝ ողջ ամառը, հենց դա էլ նկատի ունեի: Ես հիշում եմ մեր միասին անցկացրած ամեն վայրկյանը, որոնք բոլորն էլ սքանչելի էին յուրովի: Ես իսկապես չեմ կարող առանձնացնել որևէ պահ, որ ավելի կարևոր էր մյուսներից: Ողջ ամառն էր սքանչելի: Բոլորն իրենց կյանքում գոնե մեկ անգամ պետք է այդպիսի ամառ ունենան: Ինչպե՞ս կարելի է ընտրել ամենասքանչելին հազարավոր սքանչելի պահերից: Բանաստեղծները հաճախ են ասում, որ սերը հնարավոր չէ սանձել, այն տիրում է և՛ մեր տրամաբանությանը, և՛ առողջ դատողությանը: Ինձ հետ էլ նույն բանը պատահեց: Մտքովս չէր անցնում, որ այդպես կսիրահարվեմ քեզ, դու նույնպես հազիվ թե նպատակ ունենայիր սիրահարվելու ինձ: Բայց երբ մենք հանդիպեցինք, արդեն ամեն ինչ պարզ էր. երկուսիցս ոչ մեկն ի զորու չէր զսպելու այն, ինչ ծնվեց մեր միջև: Մենք սիրահարվեցինք՝ չնայած մեր տարբերություններին, և ծնվեց մի նոր ու սքանչելի բան, որ ամեն օր չես ապրի: Եթե ինձ հարցնես, կասեմ՝ նման սեր միայն մեկ անգամ է ծնվում մարդու կյանքում: Ահա թե ինչու մեր միասին անցկացրած ամեն մի րոպեն դրոշմվել է հիշողությանս մեջ և չի ջնջվի երբեք:

Էլլին շփոթված անթարթ նայում էր Նոյի աչքերին: Նախկինում երբեք ոչ ոք նման խոսքեր չէր ասել իրեն: Երբեք: Նա չգիտեր ինչ ասել, պապանձվել էր, իսկ այտերը շարունակում էին այրվել:

- Ների՛ր, եթե ստիպեցի՝ անհարմար զգաս, Էլլի: Չէի ուզում: Բայց այդ ամառը մնացել է սրտումս ու թերևս կմնա հավերժ: Գիտեմ՝ անցյալը հետ չենք բերի, բայց դա չի կարող ջնջել այն, ինչ եղել է մեր միջև:

- Անհարմար զգալու ոչինչ չկա, Նո՛յ,- ցածրիկ ասաց Էլլին՝ էլ ավելի կարմրելով,- պարզապես առաջին անգամ եմ նման բառեր

լսում: Այն, ինչ ասացիր, սքանչելի էր: Միայն իսկական բանաստեղծը կարող է նման կերպ արտահայտել զգացածը, և չեմ հոգնի կրկնելուց, որ դու իմ ճանաչած միակ բանաստեղծն ես:

Խաղաղ լռություն իջավ նավակի վրա: Ինչ-որ տեղ՝ հեռվում, ջրարծիվը ճչաց, ափին մոտ ճղփյունով ալիքներին էր զարկվում կեֆալը: Նավակը խաղաղ ճոճվում էր թիերի համաչափ շարժմանը զուգընթաց: Քամին հանդարտվել էր, գորշ ամպերը շարունակում էին խմբվել, իսկ նավակը բռնել էր անհայտի ճամփան:

Էլլիի ուշադրությունից չէր վրիպում ոչինչ. ոչ մի ձայն, ոչ մի միտք: Ասես արթնացել էր խոր քնից ու թարմությամբ լցված՝ մտքում պտտում էր վերջին օրերի ապրածն ու չապրածը: Հիշողության մեջ հառնեցին հուզմունքը, որ բերել էր նրան այստեղ, հոդվածը տեսնելուց հետո ապրած շփոթմունքը, անքուն գիշերները, տագնապով լի օրերը: Դեռ երեկ այնքա՜ն վախեցած էր, ուզում էր փախչել: Իսկ այժմ անհանգստության ոչ մի նշույլ, միայն թաքուն ուրախություն, որ տեղավորվել էր կարմիր հնամաշ կանոեի վրա իջած լռության մեջ:

Այստեղ գալու որոշումը շարունակում էր բավականություն պատճառել Էլլիին. նա ուրախ էր, որ հնարավորություն ունեցավ տեսնելու Նոյին այնպիսին, ինչպիսին կուզենար տեսնել, և այդ վստահությունը կօգներ նրան ավելի հեշտ ապրել այսուհետև: Վերջին մի քանի տարիներին նա այնքան շատ էր հանդիպել տղամարդկանց, որոնց կոտրել էին պատերազմը, ժամանակը կամ էլ աղքատությունը: Այդ ամենից հետո նույն կրքով կյանքը սիրելու համար մեծ ուժ է հարկավոր, իսկ Նոյը գտել էր իր մեջ այդ ուժը:

Ժամանակակից աշխարհում պոեզիան տեղ չուներ, և շրջապատի մարդկանց համար դժվար էր հասկանալ Նոյին: Ամերիկայի տնտեսությունը վերելք էր ապրում, համենայն դեպս թերթերն այդպես էին գրում, և մարդիկ առաջ էին սլանում՝ անցյալում թողնելով պատերազմի սարսափը: Նրանց էլ կարելի էր հասկանալ, սակայն

բոլորը, այդ թվում՝ և Լոնը, անվերջ վազում էին փողի հետևից և ժամեր շարունակ թաղում իրենց աշխատանքի մեջ՝ անտեսելով այն ամենը, ինչը գեղեցկացնում է այս աշխարհը:

Մի՞թե Ռոլիում կգտնվեր մեկը, որ կնվիրեր իր ժամանակը ինչ-որ տուն վերականգնելուն, որ կկարդար Ուիթմեն կամ Էլիոտ՝ երևակայության մեջ պատկերելով այն, ինչ երգում է հոգին: Կամ ո՞վ կորսար լուսաբացն իր հնամաշ կանոնից: Մարդկանց երբեք առաջ չեն մղել նման բաները, բայց Էլլին միշտ էլ իմացել է, որ երբեք անտեսել չի կարելի այն ամենը, ինչի համար հենց արժե ապրել:

Նույնը կարելի էր ասել նաև արվեստի մասին, թեև Էլլին դրա կարևորությունը այստեղ գալով հասկացավ միայն, ավելի ճիշտ՝ հիշեց և անիծեց իրեն՝ մոռանալու համար, որ գեղեցիկը կերտելուց կարևոր ոչինչ լինել չի կարող: Նկարելն իր կոչումն էր: Այժմ նա ավելի քան վստահ էր դրանում: Այն, ինչ ապրեց առավոտյան, դրա վառ ապացույցն էր: Եվ ինչ էլ պատահեր, նա նորից կսկսեր նկարել: Նորից կփորձեր՝ անկախ նրանից, թե ինչպես կվերաբերվեին դրան մյուսները:

Իսկ Լոնն ինչպե՞ս կվերաբերվեր իր որոշմանը: Էլլին հիշեց՝ ինչպես էր իրենց ծանոթությունից մի քանի ամիս անց Լոնին ցույց տվել իր կտավներից մեկը, որում պատկերված աբստրակցիան մտածելու տեղիք պիտի տար: Այն, ինչ-որ իմաստով, հիշեցնում էր նույն կտավը, որ կախված էր Նոյի հյուրասենյակում՝ բուխարու վերևում, այն նույն կտավը, որ Նոյն առանց դժվարության կարողանում էր մեկնել, թեև, Էլլիի կարծիքով, դրա մեջ գուցե ավելի քիչ կյանք կար: Լոնը զննող հայացքով նայել էր կտավին, ապա հարցրել Էլլիին՝ իսկ ի՞նչ է այն արտահայտում: Էլլին, սակայն, անպատասխան էր թողել նրա հարցը:

Էլլին օրորեց գլուխը՝ հասկանալով, որ անարդար է եղել Լոնի հանդեպ: Լոնին սիրելու տասնյակ այլ պատճառներ կային: Թեև

Լոնը Նոյը չէր, բայց նա լավ մարդ էր: Էլլին միշտ նրա նման ամուսին էր պատկերացրել իր կողքին: Լոնի հետ կյանքն անակնկալներ չէր խոստանում, և աներեր ապագայի հույսը սփոփում էր Էլլիի սիրտը: Լոնը լավ ամուսին կլիներ իր համար, իսկ ինքը՝ օրինակելի կին՝ նրա համար: Նրանք կապրեին ընտանիքից ու ընկերներից ոչ հեռու, երեխաներ կունենային և հարգանք կվայելեին շրջապատում: Իր համար Էլլին միշտ էլ նման կյանք էր պատկերացրել, ավելին՝ երազել էր դրա մասին: Ու թեև Լոնի հետ իր հարաբերությունները հեռու էին կրքոտ լինելուց, նա դեռ վաղուց էր համոզել իրեն, որ լիարժեք հարաբերություններ կառուցելու համար կիրքն առաջնային չէ: Այն մարում է ժամանակի ընթացքում, մնում են միայն ընկերությունն ու փոխըմբռնումը, իսկ Լոնը տալիս էր նրան այդ ամենը. ուրիշ էլ ինչ էր հարկավոր իրեն:

Սակայն այժմ, երբ նա հետևում էր՝ ինչպես էր Նոյը հմտորեն թիավարում, հասկանում էր, որ գուցե սխալվել էր իր ենթադրություններում: Նոյը կիրք էր ճառագում, ինչ էլ որ աներ: Նա ինքն էլ կրքի մարմնացում էր: Էլլին նույնիսկ ամոթխածությամբ նկատեց, որ նայում էր Նոյին այնպիսի աչքերով, ինչպես չպետք է նայի տղամարդուն մեկ ուրիշի հետ նշանված աղջիկը: Նա փորձում էր չնայել Նոյին և հաճախ էր փախցնում աչքերը, բայց Նոյի ամեն մի անկաշկանդ շարժումը նորից ու նորից էր գրավում նրա հայացքը:

- Ահա և հասանք,- ասաց Նոյը՝ կանոեն ուղղելով դեպի առափնյա ծառերը:

Էլլին շուրջը նայեց և ոչինչ չտեսնելով՝ հարցրեց.

- Ո՞ւր հասանք:

- Ահա,- նորից ասաց Նոյը՝ ուղղելով կանոեն դեպի մի հինավուրց ծառ, որ տապալվելով ծածկել էր առանց այդ էլ հազիվ տեսանելի մուտքը:

Նոյը կանոեով շրջանցեց ծառը: Երկուսն էլ ստիպված էին իջեցնել գլուխները՝ ծառաբնին չբախվելու համար:

- Փակի՛ր աչքերդ,- շշնջաց Նոյը:

Էլլին ենթարկվեց՝ ափերով ծածկելով դեմքը: Նրա ականջներին էր հասնում թիերի ճղփյունը, և նա զգում էր՝ ինչպես է կանոեն առաջ սահում ջրի վրայով:

- Լա՛վ,- վերջապես ասաց Նոյը՝ հանգիստ թողնելով թիերը,- արդեն կարող ես բացել աչքերդ:

ԿԱՐԱՊՆԵՐ, ԱՄՊՐՈՊ ՈՒ ԷԼԻ ԱՄՊՐՈՊ

Էլլին ու Նոյը նստած էին լճակի մեջտեղում, որ սնվում էր Բրայս Քրիք վտակի ջրերով: Հազիվ հարյուր յարդ տրամագծով այդ լճակը ոչ մի կերպ մեծ չէիր անվանի, բայց Էլլին զարմացած էր՝ ինչպես կարող էր չնկատել այն:

Բացված տեսարանը, սակայն, աննկարագրելի էր: Նավակը բառացիորեն շրջապատված էր վայրի կարապներով ու կանադական սագերով: Հաշվել չէր լինի: Թռչուններն այնքան մոտ էին լողում միմյանց, որ որոշ տեղերում ջուրը չէր երևում: Հեռվից կարապների խմբերն այսբերգ էին հիշեցնում:

- Ա՜հ, Նո՛յ, որքա՜ն գեղեցիկ է,- վերջապես շշնջաց Էլլին, ասես չէր ուզում վախեցնել թռչուններին:

Նրանք երկար ժամանակ լուռ հետևում էին այդ հրաշք արարածներին: Նոյը ցույց տվեց Էլլիին մի ընդհանուր կույտի մեջ խմբված ծագերի, որոնք, երևում է, վերջերս էին դուրս եկել իրենց ձվերից և ամեն գնով փորձում էին հետ չմնալ ափին մոտ լողացող սագերից:

Օդը լցված էր գվվոցներով ու ճռվողյունով: Նոյը զգուշությամբ սահեցնում էր կանոեն ջրի վրայով: Թռչունները, սակայն, կարծես չէին էլ նկատում նավակը, միայն այն ժամանակ էին ուշադրություն

դարձնում, երբ ստիպված էին մի կողմ լողալ և ճանապարհ բացել, երբ կանոնն մոտենում էր նրանց: Բավական էր՝ մեկնեիր ձեռքդ ու կարող էիր շոյել կարապներին: Էլլին այդպես էլ արեց, և մատների տակ զգաց՝ ինչպես են ցից-ցից կանգնում նրանց փետուրները:

Նոյը պայուսակից հանեց հացի կտորն ու տվեց այն Էլլիին: Էլլին փշրեց հացն ու շաղ տվեց փշրանքները՝ մեծ հոգածություն դրսևորելով ձագուկների նկատմամբ: Նա ժպիտով էր հետևում փոքրիկ թռչնակներին, որոնք շրջաններ էին գծում ջրի վրա սննդի հետքերով լողալիս:

Նոյն ու Էլլին մնացին լճակի վրա այնքան ժամանակ, մինչև հեռվում ճայթեց ամպրոպը՝ հազիվ նկատելի, բայց ավելի քան ուժեղ: Երկուսն էլ լուռ համաձայնությամբ հասկացան, որ ժամանակն է վերադառնալու:

Նոյը շրջեց կանոնն ու սկսեց թիավարել հոսանքի ուղղությամբ՝ ավելի արագացնելով ընթացքը: Էլլին չէր դադարում տեսարանով հիանալ:

- Նո՛յ, ինչպե՞ս են այս բոլոր թռչունները հայտնվել այստեղ:

- Չգիտեմ: Գիտեմ միայն, որ կարապները ձմռանն ընդառաջ հյուսիսից չվում են դեպի Մաթամուսկիտ լիճ. երևում է, այս անգամ նրանք այս լիճն են ընտրել՝ ձմռանը հանգրվանելու: Չեմ կարող բացատրել՝ ինչու: Գուցե եղանա՞կն է ստիպել, գուցե ճանապարհի՞ց են շեղվել: Ո՞վ իմանա: Ամեն դեպքում՝ նրանք, անշուշտ, կգտնեն վերադարձի ճանապարհը:

- Նրանք չե՞ն մնա այստեղ:

- Հազիվ թե: Բնազդն է առաջնորդում նրանց, իսկ սա նրանց համար օտար վայր է: Գուցե սագերի մի մասը ձմեռի այստեղ, բայց կարապները կշարունակեն ճանապարհը դեպի Մաթամուսկիտ լիճ:

Նոյը թիավարում էր, որքան ուժ ուներ. մութ ամպերը խմբվում

էին ուղիղ նրանց գլխավերևում: Անձրև սկսեց տեղալ, սկզբում մանրիկ կաթիլներով, հետո աստիճանաբար վարարեց: Ամպերի միջից փայլին տվեց կայծակը... կարճ դադարից հետո կրկին որոտաց երկինքը: Այս անգամ ավելի բարձր և շատ մոտ. վեց կամ յոթ մղոն հեռավորության վրա: Անձրևն ավելի հորդացավ, Նոյը կրկնապատկեց ուժերը՝ թիերի ամեն շարժման հետ պրկելով մկանները:

Կաթիլներն արդեն անհամեմատ խոշոր էին...

Կա՛թ...

Կա՛թ...

Կա՛թ...

Քամին սաստկանում էր... անձրևը՝ հորդանում... Նոյը ջանք չէր խնայում... փորձում էր առաջ անցնել երկնքից... բայց թրջվում ու թրջվում էր... անիծում էր ինքն իրեն... պարտվում էր Մայր բնությանը...

Անձրևը միտք անգամ չուներ դադարելու: Էլլին հետևում էր՝ ինչպես էր անձրևը մարտահրավեր նետում ձգողության ուժին ու թեք-թեք թափվում ջրի վրա՝ օգնության կանչելով արևմտյան քամիներին, որոնք սուրում էին ծառերի կատարներին: Երկինքն ավելի մթնեց, և ամպերը սկսեցին արտասվել խոշոր ու ծանր կաթիլներով, որ հողմ էին գուժում:

Էլլին վայելում էր անձրևը: Մի պահ նույնիսկ գլուխը հետ գցեց՝ թույլ տալով՝ կաթիլները հանգրվանեն այտերին: Նա գիտեր, որ զգեստը հաշված վայրկյանների ընթացքում կթրջվեր, բայց հոգ չէր: Հետաքրքիր է՝ Նոյը կնկատե՞ր: Թաց զգեստը հազիվ թե վրիպեր նրա ուշադրությունից:

Էլլին սահեցրեց մատները թաց մազերի միջով: Էլլին հոյակապ էր զգում իրեն, ամեն բան հոյակապ էր: Անգամ անձրևը չէր խանգարում, որ նա զգար Նոյի ծանրացած շնչառությունը, և այդ ձայնը նրա մեջ արթնացնում էր կիրքը, որ վաղուց չէր հիշեցրել իր մասին:

Ամպրոպը ճայթեց անմիջապես նրանց գլխավերևում, և անձրևը սկսեց թափվել ավելի մեծ ուժգնությամբ: Էլլին առաջին անգամ էր հեղեղի տակ հայտնվում: Նա նայեց վերև ու ծիծաղեց՝ մի կողմ թողնելով չոր մնալու բոլոր փորձերը: Նոյի մտահոգությունը տեղի տվեց: Նա կարծում էր՝ հողմը կվախեցներ Էլլիին, թեև նա ինքն էր համոզել Նոյին գալ այստեղ:

Մի քանի րոպե անց նրանք նավամատույց հասան, և Նոյը մոտեցրեց կանոեն այնքան, որ Էլլին կարողանար ափ դուրս գալ: Նախ՝ նա օգնեց նրան, հետո ինքն էլ դուրս եկավ և քարշ տվեց կանոեն՝ ափն ի վեր, որպեսզի ջուրը չքշեր այն: Ապահովության համար նա կապեց այն նավամատույցից՝ մտածելով՝ անձրևի տակ մեկ րոպե ավելի, թե մեկ րոպե պակաս մնալը ոչինչ չէր փոխի արդեն:

Կանոեն կապելիս նա բարձրացրեց գլուխը և մի պահ շունչը պահած՝ նայեց Էլլիին: Նա անհավատալի գեղեցիկ էր այդ պահին, համբերատար սպասում էր Նոյին՝ ամենևին չանհանգստանալով, որ անձրևի տակ է կանգնած: Նա չէր փորձում պաշտպանվել անձրևից կամ թաքնվել Նոյի հայացքից, և Նոյը տեսնում էր՝ ինչպես էր մարմինը պիրկ գրկած թաց զգեստի տակից ուրվագծվում նրա կուրծքը: Ու թեև անձրևը տաք էր, բայց Էլլիի ստինքները լարվել ու դեպի վեր էին ձգվել՝ սուր ցցված ժայռերի պես: Նոյը զգաց, որ չի կարող դիմադրել և արագ շրջվեց շփոթմունքը թաքցնելու համար՝ ուրախ, որ անձրևը խլացնում էր իր փնթփնթոցը: Երբ նա ավարտեց գործը և կանգնեց, Էլլին անսպասելիորեն բռնեց նրա ձեռքը: Չնայած անձրևը ներքև էր թափվում նույն ուժգնությամբ, բայց նրանք չէին շտապում տուն վերադառնալ, և Նոյը մի պահ պատկերացրեց՝ որքան սքանչելի կլիներ, եթե այդ գիշերն իրենք միասին անցկացնեին:

Էլլին նույնպես դրա մասին էր մտածում: Նա զգում էր Նոյի ձեռքերի ջերմությունը և պատկերացնում՝ ինչպես են դրանք դանդաղ սահում իր ողջ մարմնի վրայով: Միայն այդ մասին միտքը ստիպում

էր նրան կորցնել գլուխը: Նա խոր շունչ քաշեց ու զգաց՝ ինչպես է այրվում կուրծքը, և ինչպես է այդ ջերմությունը տարածվում դեպի ներքև:

Էլլիի համար պարզ էր արդեն, որ այստեղ գալուց հետո ամեն ինչ փոխվել էր: Ու թեև նա չէր կարողանում հստակ մատնանշել՝ երբ և որտեղ՝ երեկ ընթրիքից հետո՞, թե՞ այսօր նավակի վրա, թե՞ լճակի վրա կարապներով հմայվելիս կամ գուցե հենց հիմա՞, երբ իրենք քայլում էին՝ ձեռք ձեռքի տված, բայց մի բան հստակ էր. նա նորից սիրահարվել էր Նոյ Թեյլոր Քելհունին կամ գուցե երբեք էլ չէր դադարել նրան սիրել:

Էլլին և Նոյն արդեն վաղուց անհարմար չէին զգում միմյանց ներկայությամբ: Հասնելով դռանը՝ նրանք ներս մտան և մի պահ կանգ առան միջանցքում. երկուսի հագուստից էլ ջուր էր կաթում:

- Ուրիշ զգեստ վերցրե՞լ ես քեզ հետ,- հարցրեց Նոյը:

Էլլին օրորեց գլուխը՝ փորձելով թաքցնել հուզմունքը:

- Մի բան կգտնեմ քեզ համար: Գուցե քո չափսը չլինի, բայց պետք է փոխես թաց զգեստդ ու որևէ տաք բան հագնես:

- Կարևոր չէ,- ասաց Էլլին:

- Շուտով կվերադառնամ:

Նոյը հանեց կոշիկներն ու աստիճաններով վազեց վերև: Մեկ րոպե չանցած՝ վերադարձավ՝ մի ձեռքին բամբակե տաբատ ու երկար թևքերով շապիկ, մյուս ձեռքին՝ ջինսե տաբատ ու կապույտ վերնաշապիկ:

- Ահա,- ասաց նա՝ մեկնելով Էլլիին բամբակե տաբատն ու շապիկը,- կարող ես ննջասենյակում փոխվել: Լոգասենյակը նույնպես երկրորդ հարկում է, եթե ցանկանաս լոգանք ընդունել: Այնտեղ սրբիչ ևս կգտնես:

Էլլին շնորհակալություն հայտնեց՝ ժպիտը դեմքին և աստիճաններով բարձրացավ երկրորդ հարկ՝ իր վրա շարունակ զգալով Նոյի

հայացքը: Նա մտավ ննջասենյակ ու փակեց դուռը: Այնուհետև Նոյի տված տաբատն ու շապիկը դրեց նրա մահճակալի վրա ու սկսեց հանվել: Պահարանում կախիչ գտնելով՝ նա կախեց թաց զգեստը և տարավ այն լոգարան, որ ջուրը չկաթեր փայտե հատակին: Նա թաքուն հուզմունք էր ապրում այն մտքից, որ բոլորովին մերկ քայլում է այն նույն սենյակում, որտեղ քնում էր Նոյը:

Էլլին չցանկացավ լոգանք ընդունել անձրևի տակ լինելուց հետո: Նրան դուր էր գալիս մաշկի փափկությունը, որ հիշեցրեց նրան, թե ինչպես էին ապրում մարդիկ տարիներ առաջ: Բնության հետ ներդաշնակ: Ինչպես Նոյը: Նա հագավ Նոյի տաբատն ու շապիկը և նայեց հայելու մեջ: Տաբատը մեծ էր վրան, բայց նա շապիկը դրեց դրա տակ, իսկ ներքևի հատվածները ծալեց, որպեսզի դրանք քարշ չգան: Շապիկը պարանոցի հատվածում մի փոքր պատռված էր ու կախվում էր ուսի վրա, բայց, միևնույն է, Էլլիին դուր եկավ իր տեսքը դրանով: Շապիկի թևքերը նա նույնպես ծալեց գրեթե մինչև արմունկները, ապա դարակներից մեկում մի զույգ գուլպա գտավ, հագավ և գնաց լոգարան՝ սանրի հետևից:

Նա անցկացրեց սանրը խճճված թաց մազերի միջով և թողեց՝ ազատ իջնեն ուսերի վրա: Նայեց հայելու մեջ և ափսոսաց, որ իր հետ մազակալ չի վերցրել:

Թարթիչաներկը թարմացնելն էլ չէր խանգարի: Ինչ կարելի էր անել: Աչքերին դեռ մի փոքր մնացել էր առավոտյան շպարից, ուստի Էլլին մի փոքր ուղղեց այն, ինչ արդեն կար:

Ավարտելուց հետո մի վերջին քննող հայացք գցեց հայելու մեջ և, անկախ ամեն ինչից, գոհ մնալով իր տեսքից՝ իջավ հյուրասենյակ:

Նոյը, բուխարու առաջ կքանստած, փորձում էր ամեն գնով վառել կրակը: Տեսնելով, որ նա իրեն չի նկատել, Էլլին կանգնեց ու սկսեց հետևել նրան: Նոյը նույնպես փոխել էր հագուստը, և Էլլիին մնում էր հիանալ նրա տեսքով. նրա հայացքը նախ՝ կանգ առավ

Նոյի լայն թիկունքի, օձիքի վրա կախված թաց մազերի, ապա՝ մարմինը պիրկ գրկած տաբատի վրա:

Նոյը տեղաշարժեց իրար վրա դասավորված փայտի կտորները ու մի քանի ցախ էլ ավելացրեց: Էլլին հենվեց դռան կողափայտին, խաչեց ոտքերն ու շարունակեց հետևել Նոյին: Մի քանի րոպե անց կրակն արդեն բոցկլտում էր բուխարու մեջ, համաչափ ու աներեր: Նոյը շրջվեց, որպեսզի բուխարու կողքին դասավորեր չօգտագործված փայտի կտորները և աչքի պոչով նկատեց, որ Էլլին կանգնած էր այնտեղ ու հետևում էր իրեն: Նա անմիջապես բարձրացրեց գլուխը:

Նույնիսկ իր հագուստով Էլլին սքանչելի տեսք ուներ: Այնքա՜ն սքանչելի, որ Նոյն ամաչելով շրջեց հայացքը և ձևացրեց, որ զբաղված է՝ փայտը դասավորելով:

- Չեմ նկատել՝ ինչպես ես ներս մտել,- ասաց նա՝ փորձելով թաքցնել շփոթմունքը:

- Գիտեմ: Աննկատ մտա:

Էլլին հասկացավ Նոյի շփոթմունքի պատճառը, և այն միտքը, որ Նոյը բոլորովին չէր փոխվել, հաճույք պատճառեց նրան: Նրա առջև ասես նույն ամաչկոտ երիտասարդն էր:

- Վաղո՞ւց ես այստեղ կանգնած,- հարցրեց Նոյը:

- Մի քանի րոպե:

Նոյը ձեռքերը սրբեց տաբատի վրա, ապա ձեռքը մեկնելով դեպի խոհանոցը՝ հարցրեց.

- Թեյ կուզե՞ս: Ջուրն արդեն եռացրել եմ, մինչ փոխվում էիր:

Ոչինչ չնշանակող խոսակցություն, միայն թե չլռեր, միայն թե կարողանար ցրվել: Բայց, գրողը տանի, որքան գեղեցիկ էր նա...

Տեսնելով՝ ինչ աչքերով է Նոյը նայում իրեն, Էլլին զգաց, որ չի կարողանում դիմադրել հին զգացմունքներին:

- Ավելի թունդ բան չկա՞, թե՞ դեռ շատ շուտ է խմելու համար:

- Մի քիչ բուրբոն ունեմ կարծես: Կխմե՞ս,- պատասխանեց Նոյը ժպտալով:

- Հոյակապ տարբերակ է:

Նոյը գնաց խոհանոց՝ մատները սահեցնելով թաց մազերի միջով:

Երկինքը բարձր որոտաց, և անձրևը նորից վարարեց: Անձրևի կաթիլները թակում էին տանիքը, բուխարու մեջ ճարճատում էին փայտի կտորները, իսկ կրակն աղոտ լուսավորում էր սենյակը: Էլլին շրջվեց դեպի պատուհանը, և հենց այդ պահին կայծակը շանթեց մռայլ երկինքը: Մի քանի վայրկյան անց ամպրոպի հերթական ճայթյունը: Այս անգամ շատ մոտ: Էլլին բազմոցից ծածկոց վերցրեց ու նստեց բուխարու առաջ՝ գորգի վրա: Ոտքերը խաչելով ու հարմար տեղավորվելով՝ նա սկսեց հետևել միմյանց հետ պար բռնած կրակի լեզուներին:

Նոյը վերադարձավ խոհանոցից և տեսնելով Էլլիին բուխարու մոտ՝ ինքն էլ տեղավորվեց նրա կողքին: Նա ձեռքի երկու գավաթները դրեց հատակին և բուրբոն լցրեց դրանց մեջ: Իսկ դրսում երկինքը շարունակում էր մթնել:

Նորից ամպրոպ: Խլացնող: Մոլեգնած հողմը մրրկասյուներով անձրև էր թափում աջ ու ձախ:

- Իսկական փոթորիկ է,- ասաց Նոյը՝ հայացքն անձրևի կաթիլներին, որոնք ուղղահայաց հոսքերով բախվում էին պատուհանին ու գլորվում ներքև:

Նոյը նստած էր Էլլիի կողքին՝ նրան շատ մոտ, թեև նրանք չէին հպվում իրար: Էլլիի կուրծքը բարձրանում ու իջնում էր ամեն մի շնչի հետ: Նոյը կրկին պատկերացրեց, ինչպես է հպվում նրա մարմնին, և նախքան գայթակղությունը կհաղթեր, նա արագ հեռու վանեց անթույլատրելի մտքերը:

- Ինձ դուր է գալիս,- ասաց Էլլին՝ մի կում խմելով բուրբոնից,- միշտ էլ սիրել եմ ամպրոպը, նույնիսկ երբ փոքր էի:

- Ինչո՞ւ,- պարզապես ասաց Նոյը:

Նա փորձում էր գոնե ինչ-որ բան ասել, միայն թե չկորցներ գլուխը:

- Չգիտեմ: Այն միշտ ռոմանտիկ է թվացել ինձ,- Էլլին մի պահ լռեց, և Նոյը նկատեց՝ ինչպես էր խաղում կրակի արտացոլանքը նրա զմրուխտե աչքերում:- Հիշո՞ւմ ես այն ամպրոպը. մեր բաժանումից մի քանի օր առաջ էր:

- Իհարկե:

- Ես այդ երեկոն հաճախ էի հիշում, երբ արդեն Ռոլի էինք վերադարձել: Հիշում էի՝ ինչ տեսք ունեիր այդ օրը: Հենց այդպիսին էլ մնացել էիր հիշողությանս մեջ:

- Իսկ ես շա՞տ եմ փոխվել:

Էլլին մի կում էլ խմեց բուրբոնից՝ զգալով՝ ինչպես այն տաքացրեց իր ներսը: Նա ձեռքը դրեց Նոյի ձեռքին:

- Այնքան էլ չէ: Իմ հիշողության մեջ ապրող նույն Նոյն ես: Իհարկե, ավելի հասուն ես, ավելի շատ կյանք ունես ապրած, բայց, միևնույն է, աչքերիդ փայլը չի փոխվել: Չես դադարել բանաստեղծություններ կարդալ ու ամեն օր նավակով զբոսանքի դուրս գալ: Իսկ աչքերիդ մեջ կարելի է տեսնել նույն բարությունը, որ անգամ պատերազմը չի կարողացել խլել քեզնից:

Էլլին մատները քնքշությամբ սահեցրեց Նոյի ձեռքի վրայով՝ անշտապ շրջաններ գծելով նրա ափին:

- Է՛լլի, նավակի վրա ինձ հարցրիր՝ ամենից շատ ի՞նչն է տպավորվել հիշողությանս մեջ մեր միասին անցկացրած ամառվանից: Իսկ քո մեջ ի՞նչն է տպավորվել:

Էլլին անմիջապես չպատասխանեց, հետո սկսեց խոսել այնքան ցածր, որ թվում էր՝ նրա ձայնը հեռվից էր գալիս:

- Հիշում եմ՝ ինչպես էինք սիրով զբաղվում: Ահա թե ինչն է մեխ-

վել հիշողությանս մեջ: Դու իմ առաջին տղամարդն էիր, և ես պատկերացնել անգամ չէի կարող, որ սիրվելն այդքան սքանչելի կարող է լինել:

Նոյը խմեց բուրբոնից, և հիշողություններն ու քնած զգացմունքները հեղեղի պես դուրս հորդեցին իրենց թաքստոցից: Նա կտրուկ օրորեց գլուխը: Դիմադրելն արդեն անհնար էր դառնում: Էլլին շարունակեց.

- Հիշում եմ՝ այնքան էի վախենում, անգամ դողում էի, բայց միևնույն ժամանակ սաստիկ հուզվում էի: Ուրախ եմ, որ հենց դու եղար առաջինը, դու պարգևեցիր ինձ այդ երջանկությունը:

- Ես նույնպես ուրախ եմ:

- Դո՞ւ էլ էիր ինձ պես վախենում:

Նոյը լուռ գլխով արեց, և նրա անկեղծությունը կրկին ժպիտ բերեց Էլլիի շուրթերին:

- Այդպես էլ գիտեի: Միշտ էլ ամաչկոտ ես եղել: Հատկապես սկզբում: Հիշում եմ՝ մի անգամ հարցրիր՝ ընկեր ունե՞մ, և երբ պատասխանեցի, որ ունեմ, բառ անգամ չէիր փոխանակում ինձ հետ:

- Ես չէի ուզում կանգնել ձեր երկուսի միջև:

- Այո, չէիր ուզում, բայց ի վերջո կանգնեցիր,- Էլլին կրկին ժպտաց,- և ես ուրախ եմ դրա համար:

- Իսկ ե՞րբ պատմեցիր նրան մեր մասին:

- Տուն հասնելուն պես:

- Երևի դժվար էր:

- Ամենևին: Ես սիրահարված էի քեզ:

Էլլին սեղմեց Նոյի ձեռքը, բաց թողեց այն և ավելի մոտ նստեց նրան: Գլուխը դրեց նրա ուսին: Նոյը զգաց նրա բույրը՝ անձրևի պես նուրբ ու տաքուկ:

- Հիշո՞ւմ ես՝ ինչպես տուն ճանապարհեցիր ինձ փառատոնից հետո,- շարունակեց Էլլին նույն ցածրիկ ձայնով,- հարցրի քեզ՝ ուզո՞ւմ ես նորից ինձ տեսնել: Դու պարզապես լուռ գլխով արեցիր,

ասես քեզ համար միևնույն էր՝ կհանդիպեինք նորից, թե ոչ:

- Ես առաջին անգամ էի իմ կյանքում հանդիպում քեզ նման մեկին: Չէի կարողանում խոսել: Չգիտեի ինչ ասել:

- Գիտեմ: Զգացմունքներդ թաքցնել երբեք չես կարողացել: Աչքերդ միշտ մատնում էին քեզ: Իմ հանդիպած ամենասքանչելի աչքերը:

Էլլին լռեց, բարձրացրեց գլուխը Նոյի ուսից ու նայեց ուղիղ նրա աչքերի մեջ:

- Ինձ թվում է,- շշնջաց նա,- ոչ ոքի այնպես չեմ սիրել, ինչպես քեզ:

Կայծակը կրկին լուսավորեց երկինքը: Եվ մինչ որոտը կխախտեր լռությունը, նրանց հայացքները, ձուլվելով իրար, փորձում էին ջնջել բաժանումի տասնչորս տարիները: Նրանք երկուսն էլ զգում էին, որ երեկվանից ի վեր ամեն ինչ փոխվել է: Երբ ամպրոպը վերջապես որոտաց, Նոյը հառաչեց և հեռացնելով հայացքն Էլլիից՝ նայեց պատուհանների ուղղությամբ:

- Երանի կարդացած լինեիր նամակներս,- ասաց նա:

Էլլին երկար ժամանակ լուռ էր:

- Ես նույնպես գրել եմ քեզ, Նո՛յ: Այդ մասին չեմ խոսել, բայց Ռոլի վերադառնալուց հետո տասնյակ նամակներ եմ գրել և այդպես էլ չեմ ուղարկել քեզ:

- Ինչո՞ւ,- զարմացավ Նոյը:

- Ես շատ էի վախենում:

- Ինչի՞ց:

- Վախենում էի, որ գուցե մեր սերն ընդամենը իմ հորինածն էր: Վախենում էի, որ մոռացած կլինես ինձ:

- Ես երբեք քեզ չեմ մոռացել: Միայն քո մասին էի մտածում:

- Հիմա եմ դա հասկանում, երբ աչքերիդ եմ նայում: Բայց այն ժամանակ այնքան բան կար, որ ես չէի հասկանում: Հիմար աղջ-

նակի մտքով ինչ ասես կարող է անցնել:

- Ի՞նչ է դա նշանակում:

Էլլին մի պահ լռեց, փորձեց հավաքել մտքերը:

- Քեզնից ոչ մի նամակ չստանալով՝ չգիտեի ինչ մտածել: Լավագույն ընկերուհուս պատմեցի ամռանը մեր միջև տեղի ունեցածի մասին, իսկ նա ասաց, որ դու ստացել ես քո ուզածը, և զարմանալի չէ, որ չես գրում: Ես չէի հավատում, որ դու կարող էիր օգտագործել ինձ, չէի հավատում, որ այդքան ստոր ես: Բայց այլ է, երբ դրա մասին քեզ կողքից են ասում: Բացի դրանից՝ մեր միջև շատ տարբերություններ կային: Եվ այդ ամենը ստիպեց ինձ կասկածել, որ այդ ամառը գուցե միայն ինձ համար էր այդքան կարևոր, իսկ քեզ համար ոչինչ չէր նշանակում: Եվ այդ ամենը կարծես քիչ էր, Սառայից լսում եմ, որ դու հեռացել ես Նյու Բեռնից:

- Ֆինն ու Սառան միշտ իմացել են, որտեղ էի ես...

Էլլին ձեռքի շարժումով թույլ չտվեց Նոյին շարունակել.

- Գիտեմ, բայց ես երբեք չեմ հարցրել այդ մասին: Կարծում էի՝ Նյու Բեռնից հեռացել ես նոր կյանք սկսելու համար, որտեղ ես տեղ չունեի: Ուրիշ էլ ինչո՞ւ չպետք է գրեիր ինձ: Կամ զանգեիր: Կամ գայիր ինձ տեսնելու:

Նոյը շրջեց հայացքը և ոչինչ չպատասխանեց:

Էլլին շարունակեց.

- Ես չգիտեի այդ հարցերի պատասխանները: Ժամանակի հետ ցավը սկսեց մեղմանալ, և ես որոշեցի մոռանալ մեր միջև եղածը: Համենայն դեպս, ես կարծում էի, որ այդպես ավելի լավ կլինի: Բայց մեր բաժանումից հետո մի քանի տարի շարունակ, ամեն անգամ որևէ տղայի հետ հանդիպելիս հայտնաբերում էի, որ նրանց մեջ քեզ եմ փնտրում: Եվ երբ չէի կարողանում դիմադրել ցավին, նոր նամակ էի գրում քեզ: Բայց չէի ուղարկում քեզ, որովհետև վախենում էի իրականությանը բախվելուց: Մտածում էի՝ արդեն նոր կյանք ես սկսել, և սարսափում էի այն մտքից, որ կարող ես մեկ

ուրիշին սիրել: Ես ուզում էի սրտումս պահել միայն մեր միասին անցկացրած երջանիկ ամռան պատկերը: Չէի ուզում, որ իրականությունը, որին կարող էի բախվել, փչացներ նաև այդ հիշողությունը:

Էլլիի խոսքերում այնքան քնքշություն ու անմեղություն կար, որ Նոյը հազիվ զսպեց իրեն, որ չհամբուրի նրան, որովհետև հասկանում էր, որ ժամանակը չէր: Թեև սաստիկ դժվար էր դիմադրել Էլլիի գեղեցկությանը, նրա ամեն մի հպմանը...

- Վերջին նամակը մի քանի տարի առաջ եմ գրել: Լոնին հանդիպելուց հետո հայրիկիդ գրեցի, որպեսզի իմանամ՝ որտեղ ես: Բայց այնքան ժամանակ էր անցել մեր բաժանումից, որ վստահ չէի՝ հայրիկդ այստեղ կլիներ: Մյուս կողմից էլ՝ պատերազմը...

Նրա ձայնը մարեց: Երկուսն էլ լռեցին՝ յուրաքանչյուրը մենակ մնալով իր մտքերի հետ: Կայծակը հերթական անգամ լուսավորեց երկինքը, և Նոյը, համարձակություն հավաքելով, խախտեց լռությունը.

- Երանի ուղարկած լինեիր այդ նամակը:

- Ինչո՞ւ:

- Գոնե մի լուր կլսեի քեզնից: Կիմանայի՝ ինչով ես զբաղվում:

- Վախենամ՝ կհիասթափվեիր: Իմ կյանքը հեռու է հետաքրքիր լինելուց: Բացի դրանից՝ ես շատ եմ փոխվել: Քո ճանաչած Էլլին չեմ այլևս:

- Ավելի լավն ես, քան իմ ճանաչած Էլլին էր:

- Որքա՜ն սիրալիր ես, Նո՛յ:

Նոյը հույս ուներ, որ եթե լռեր ու թույլ չտար՝ զսպված զգացմունքները բառերի տեսքով դուրս հորդեին, իրեն կհաջողվեր չկորցնել գլուխը, ինչպես հաջողվում էր վերջին տասնչորս տարիներին: Բայց արթնացած զգացմունքներն անհնար էր արդեն սանձել, և Նոյն անձնատուր էր եղել դրանց՝ հույս փայփայելով, որ դրանք

ինչ-որ հրաշքով ի չիք կդարձնեն բաժանման երկարուձիգ տարիները:

- Սիրալիր չեմ, Էլլի, պարզապես սիրում եմ քեզ: Սիրում եմ և միշտ եմ սիրել: Ավելի շատ, քան կարող ես պատկերացնել:

Փայտի ծղանները սկսեցին ճարճատել՝ ծխնելույզ ուղարկելով կայծերի մի ողջ քարավան: Երկուսն էլ նկատեցին գրեթե մինչև վերջ այրված ածխի մխացող կտորները: Կրակը թեժացնել էր պետք, բայց նրանցից ոչ մեկը չէր շտապում շարժվել տեղից:

Էլլին մի կում էլ խմեց բուրբոնից և սկսեց արդեն զգալ դրա ազդեցությունը: Բայց միայն խմիչքը չէր, որ ստիպում էր նրան ավելի ամուր սեղմվել Նոյին ու տենչալ նրա ջերմությունը: Իսկ պատուհանից դուրս երկինքն ավելի էր մթնում:

- Պետք է կրակը թեժացնել,- վերջապես ասաց Նոյը՝ ժամանակ շահելով մտքերը հավաքելու համար:

Էլլին բաց թողեց նրան: Նոյը մոտեցավ բուխարուն, բացեց դռնակն ու փայտի մի քանի կտոր ավելացրեց: Այնուհետև կրակխառնիչով դասավորեց դրանք այնպես, որ հեշտությամբ սկսեն այրվել:

Կրակը նորից բռնկվեց, և Նոյը վերադարձավ իր տեղը: Էլլին կրկին սեղմվեց նրան ու գլուխը դրեց ուսին, ինչպես րոպեներ առաջ: Եվ առանց որևէ բառ ասելու զգուշորեն սկսեց շոյել Նոյի կուրծքը: Նոյը խոնարհվեց ու շշնջաց նրա ականջին.

- Ամեն ինչ ասես առաջվա պես լինի...

Էլլին ժպտաց. Նոյը կրկին կարդում էր իր մտքերը: Նրանք, իրար գրկած, շարունակում էին հետևել կրակին:

- Նո՛յ, երբեք չես հարցրել, բայց ուզում եմ՝ իմանաս:

- Ինչ իմանամ:

- Իմ կյանքում երբեք ուրիշ մեկը չի եղել, Նո՛յ,- Էլլիի ձայնն այնքա՛ն քնքուշ էր հնչում,- դու իմ առաջին ու միակ տղամարդն ես

եղել: Կարող ես ոչինչ չասել: Պարզապես ուզում էի, որ իմանաս այդ մասին:

Նոյը լուռ էր, հայացքը՝ բուխարուն: Էլլին նույնպես նայում էր կրակին ու ջերմանում: Նրա ձեռքը սահեց Նոյի վերնաշապիկի տակ, ու նա մատների տակ զգաց նրա ամուր մկանները:

Հենց այդպես՝ իրար սեղմված, նրանք նստած էին նաև տարիներ առաջ՝ հրաժեշտի շեմին, ալեհատի վրա, որ նախագծված էր Նյուս գետի ջրերը զսպելու համար: Էլլին արտասվում էր, որովհետև չգիտեր՝ արդյոք նորից կհանդիպեին իրենք, և ինչպես է ապրելու ինքն այսուհետև: Պատասխանի փոխարեն Նոյը Էլլիի ձեռքի մեջ մի նամակ դրեց, որ նա կարդաց տունդարձի ճանապարհին միայն: Էլլին պահել էր այդ նամակն ու ժամանակ առ ժամանակ կարդում էր այն ամբողջությամբ, երբեմն էլ միայն պատառիկներ: Հատվածներից մեկը նա անգիր էր հիշում, որովհետև կարդացել էր հարյուրավոր անգամ: Եվ, չգիտես ինչու, այն պտտվում էր նրա գլխում նաև հիմա:

Բաժանումը ծանր է, որովհետև մեր հոգիները հավետ կապված են միմյանց: Գուցե միշտ է այդպես եղել, և այլևս ոչինչ չի փոխվի: Գուցե հազար կյանք ենք ապրել, մինչև այս աշխարհ կգայինք, և հազար անգամ էլ գտել ենք իրար: Եվ գուցե ամեն անգամ ստիպված ենք եղել բաժանվել նույն պատճառներով: Իսկ դա նշանակում է, որ մենք հրաժեշտ ենք տալիս հազարերորդ անգամ և գուցե դեռ առջևում ունենք ևս հազար կյանք:

Այնքա՜ն գեղեցիկ ես ու նրբագեղ, որ թվում է՝ ծաղկում ես ամեն նոր կյանքի հետ: Երբեմն էլ թվում է՝ հազար կյանք եմ փնտրել քեզ: Հենց քեզ, որովհետև մեր հոգիները ճանաչում են իրար անգամ հազար կյանք անդին: Բայց մենք ստիպված ենք կրկին հրաժեշտ տալ իրար, և երկուսիցս ոչ մեկը չի հասկանում՝ ինչու:

Երանի՜ կարողանայի խոստանալ, որ ամեն ինչ լավ կլինի, և ես

ամեն ինչ կանեմ, որ մենք միասին լինենք: Բայց եթե սա իսկապես մեր վերջին հանդիպումն է, միևնույն է, ես վստահ եմ, որ մենք կհանդիպենք նորից, միայն թե այլ կյանքում: Նորից կգտնենք իրար, և գուցե այդժամ աստղերը թույլ տան մեզ սիրել իրար արդեն հավերժ սիրով:

«Մի՞թե նման բան հնարավոր է,- մտածում էր Էլլին,- մի՞թե Նոյը ճիշտ էր կանխազգում»:

Էլլին երբեք լուրջ չէր վերաբերվել այդ խոսքերին: Այդ նամակը պարզապես փրկօղակ էր նրա համար ծանր ժամանակներում: Սակայն այժմ Նոյի գրկում նստած՝ նա մտածում էր, որ իրենց գուցե իսկապես վիճակված է միշտ լինել իրարից բաժան, եթե միայն աստղերը թույլ չտան...

Բայց Էլլին չէր ուզում ոչինչ ստուգել: Նրա համար բավական էր և այն, որ Նոյի գրկում է: Նրա մարմինը սկսեց դողալ նույն սպասման մեջ, երբ առաջին անգամ էր տրվում Նոյին:

Այնքան ճիշտ էր ամեն բան: Բուխարու մեջ ճարճատող կրակը, մարմինը տաքացնող բուրբոնը, դրսում մոլեգնող փոթորիկը... ավելի կատարյալ չէին կարող լինել: Եվ ինչ-որ հրաշքով նրանց բաժանումի տարիներն իսկապես ի չիք դարձան:

Պատուհանից այն կողմ կայծակը ճեղքեց երկինքը: Կրակի լեզուները պար էին բռնել սպիտակելու աստիճանի շիկացած փայտի կտորների վրա ու ջերմություն էին տարածում: Աշնան անձրևը ծեծում էր պատուհանները՝ խլացնելով մյուս բոլոր ձայները:

Եվ նրանք անձնատուր եղան զսպված զգացմունքներին, որոնց դեմ կռիվ էին տվել ամբողջ տասնչորս տարի: Էլլին բարձրացրեց գլուխը Նոյի ուսից և նայեց նրան մշուշված աչքերով: Նոյը քնքշորեն համբուրեց նրա շուրթերը: Էլլին ձեռքը մոտեցրեց Նոյի դեմքին ու մատները մեղմիկ սահեցրեց նրա այտի վրայով: Նոյը դանդաղ խոնարհվեց դեպի Էլլին և կրկին համբուրեց նրան, քնքուշ ու նուրբ:

Էլլին պատասխանեց համբույրին՝ զգալով՝ ինչպես են բաժանումի տարիները տեղի տալիս կրքին:

Նա փակեց աչքերն ու շուրթերը հեռացրեց իրարից՝ զգալով, որ Նոյի ձեռքը դանդաղ, մեղմ հպումներով սահում է իր ձեռքերի վրայով, մերթ վերև, մերթ ներքև: Նոյը համբուրեց նրա պարանոցը, այտը, կոպերը, և Էլլին զգում էր նրա շունչն այնտեղ, որտեղ դիպչում էին նրա թաց շուրթերը: Նա բռնեց Նոյի ձեռքը, սեղմեց այն իր կրծքին ու մեղմ հառաչեց, երբ զգաց նրա հպումը շապիկի բարակ գործվածքի միջով:

Աշխարհն իսկական անուրջ թվաց, երբ Էլլին հետ քաշվեց: Կրակը լույսով էր ողողել նրա դեմքը: Եվ առանց որևէ բառ ասելու նա սկսեց արձակել Նոյի վերնաշապիկի կոճակները:

Նոյը լուռ հետևում էր նրա շարժումներին՝ ականջ դրած նրա ամեն մի շնչին: Ամեն կոճակն արձակվելիս նա զգում էր՝ ինչպես են Էլլիի մատները դիպչում իր մարմնին: Արձակելով վերջին կոճակը՝ Էլլին ժպտաց ու ձեռքերը նրբորեն սահեցրեց Նոյի տաք ու փոքր-ինչ քրտնած կրծքի վրայով՝ մատների արանքում զգալով նրա մարմնի մազերի խաղը: Նա խոնարհվեց դեպի Նոյն ու մեղմիկ համբուրելով նրա պարանոցը՝ ուսերից գցեց նրա վերնաշապիկը: Ապա թույլ տվեց՝ Նոյն իրեն համբուրի, մինչ թափ էր տալիս ուսերը՝ փորձելով ազատել ձեռքերը վերնաշապիկի թևքերից:

Վերջապես ազատվելով՝ նա դանդաղ բարձրացրեց Էլլիի շապիկն ու մատները սահեցնելով նրա մարմնի վրայով՝ հանեց այն: Էլլիի շունչը կտրվեց, երբ Նոյը համբուրեց իր կուրծքը, ապա համբույրներով պատեց պարանոցը: Նրա ձեռքերը քնքշորեն շոյում էին հարազատ իրանը, ձեռքերը, ուսերը, և հանկարծ Էլլին զգաց՝ ինչպես իրենց այրվող մարմինները սեղմվեցին իրար: Նոյը շարունակում էր համբույրներով պատել նրա պարանոցը, երբեմն էլ նրբորեն կծում էր: Էլլին արձակեց տաբատի կոճակն ու թույլ տվեց՝ Նոյը

հանի այն: Թվում էր՝ մի ողջ հավերժություն անցավ, մինչև նրանց մերկ մարմինները կհպվեին իրար՝ սարսուռով հիշելով այն երջանկությունը, որ ապրել էին տարիներ առաջ:

Նոյը շարունակում էր համբույրներ տեղալ Էլլիի պարանոցին, մինչ ձեռքերը սահում էին նրա կրծքի վրայով դեպի ներքև, ավելի ներքև, այնուհետև նորից վերև: Նա դարձյալ զգաց՝ որքա՛ն գեղեցիկ էր այդ աղջիկը, որի մասին երբեք չէր դադարել մտածել: Էլլիի վարսերը անդրադարձնում էին կրակի լույսն ու արծաթին տալիս: Փայլում էր նաև մաշկը՝ փափուկ ու անթերի: Իսկ ձեռքերը շոյում էին Նոյի մեջքն ու խենթացնում նրան:

Նրանք պառկեցին բուխարու մոտ: Կրակը տաքացնում էր օդը. շնչելը դժվար էր: Էլլիի իրանը թեթևակիորեն ցնցվեց, երբ Նոյն ընդամենը մեկ սահուն շարժումով հայտնվեց նրա վրա: Նոյը խոնարհվեց՝ ծնկներով սեղմելով նրա կոնքերը: Էլլին բարձրացրեց գլուխն ու համբուրեց Նոյի կզակը, պարանոցը, ապա ծանր շնչելով՝ շուրթերը հպեց նրա ուսերին՝ բերանում զգալով նրա մարմինը պատած քրտինքի համը: Նա սահեցրեց մատները Նոյի մազերի միջով՝ մարմնի վրա զգալով նրա՝ լարվածությունից պրկված մկանների հպումը: Գերող ժպիտով նա մոտ քաշեց նրան, բայց Նոյը դիմադրեց: Ապա ինքն իջավ ներքև և կրծքով հպվեց Էլլիի կրծքին այնպես, որ վերջինիս մարմինը հաճույքից ցնցվեց: Նոյը կրկնեց նույն շարժումը նորից ու նորից, մինչ համբույրներով էր ծածկում Էլլիի ողջ մարմինը՝ յուրաքանչյուր հպման հետ վայելելով նրա ամեն մի մեղմիկ հառաչը:

Նոյը չդադարեց նրան շոյել այնքան ժամանակ, մինչև վերջնականապես խելքահան արեց նրան: Եվ երբ վերջապես նրանց մարմինները ծուլվեցին, Էլլին ճչաց և գրկելով Նոյի մեջքը՝ եղունգները մխրճեց նրա մաշկի մեջ, իսկ երեսը թաղեց պարանոցի մեջ՝ զգալով նրան իր ներսում: Ուժեղ ու միաժամանակ այդքա՛ն նուրբ տղամարդը տրվել էր իրեն ողջ մարմնով ու հոգով: Էլլին ներդաշնակ

շարժումներով ուղեկցում էր Նոյին՝ թույլ տալով նրան տանել իրեն հեռու՝ երկնքից էլ անդին:

Վերջապես նա բացեց աչքերը և նայեց Նոյին, որ կրակի լույսի տակ ավելի գեղեցիկ էր իր ձիգ մարմնով ու ներդաշնակ շարժումներով: Մարմնի վրա բյուրեղի պես փայլում էին քրտինքի կաթիլները, որ գլորվում էին նրա կուրծքն ի վար և ընկնում Էլլիի մարմնին, ինչպես անձրևն էր թափվում պատուհանից այն կողմ: Եվ ամեն մի կաթիլի, ամեն մի շնչի հետ Էլլին զգում էր՝ ինչպես են վերանում բոլոր կապանքներն ու ջնջվում այն կյանքի սահմանները, որից անմասն էր մնացել Նոյը:

Նրանց մարմիններն ալիքվում էին վայելքի մեջ, երբ Էլլին համակվեց մի երանելի զգացողությամբ, որի գոյության մասին անգամ չգիտեր: Այն թափանցեց նրա ողջ մարմինը՝ ստիպելով դողալ հարազատ գրկում այնքան ժամանակ, մինչև վերջնականապես կմարեր: Բայց հազիվ էր Էլլին հասցրել շունչ քաշել, երբ հաճույքի ալիքը վերստին առավ նրան իր թևերին՝ նորից ու նորից տանելով ամպերից էլ վեր: Անձրևը դադարել էր, իսկ արևը վաղուց արդեն թողել էր երկնակամարը: Էլլին ուժասպառ էր, բայց անկարող՝ չենթարկվելու իր մարմնին:

Օրվա մնացած մասը նրանք մեկ րոպեով անգամ չհեռացան իրարից: Մերթ սիրով էին զբաղվում բուխարու կողքին, մերթ իրար գրկած հետևում՝ ինչպես են կրակի լեզուները պար բռնում ծղանների շուրջը: Նոյը կարդում էր իր սիրելի տողերից, իսկ Էլլին, նրա կողքին պառկած, վայելում էր՝ աչքերը փակ ու զգում Նոյի շուրթերից հնչած ամեն մի բառը: Իսկ հետո նրանց մարմինները նորից էին ձուլվում, և Նոյը շոյում ու սիրո խոսքեր էր շշնջում Էլլիին համբույրների միջև:

Ողջ երեկո Էլլին և Նոյը փորձում էին հետ բերել բաժանումի կորցրած տարիները, և այդ գիշեր նրանք քնեցին միմյանց գրկում: Ժամանակ առ ժամանակ Նոյն արթնանում էր ու նայում Էլլիին՝ ու-

ժասպառ ու երջանիկ, և զգում էր, որ աշխարհում ամեն բան հանկարծ իր տեղն է ընկել:

Լուսաբացից առաջ, երբ Նոյն արթնացել ու հերթական անգամ նայում էր նրան, Էլլիի կոպերը դողացին, ու նա հանկարծ բացեց աչքերը, ժպտաց ու ձեռքով շոյեց Նոյի այտը: Նոյը հուշիկ մատը դրեց նրա շուրթերին, որպեսզի չխախտվեր երանելի լռությունը, և երկար ժամանակ նրանք պարզապես նայում էին իրար ու չէին հագենում:

Երբ հուզմունքը փոքր-ինչ տեղի տվեց, Նոյը շշնջաց Էլլիի ականջին.

- Դու իմ բոլոր աղոթքների պատասխանն ես... իմ մեղեդին ես, իմ անուրջը, իմ գաղտնիքը: Ես չգիտեմ՝ ինչպես եմ այսքան երկար ապրել առանց քեզ: Սիրում եմ քեզ, Էլլի, ավելի, քան երբևէ կարող ես պատկերացնել: Սիրել եմ, սիրում եմ և կսիրեմ միշտ:

- Ա՛հ, Նո՛յ,- հառաչեց Էլլին և նորից ձգվեց դեպի Նոյը:

Այժմ նա ավելի շատ էր սիրում նրան, տենչում և ձգտում, քան երբևէ իր ամբողջ կյանքում:

Այս գիրքը թվայնացրել է 1915.info կայքը: Կայքում կարող եք գտնել բազմաթիվ այլ անվճար գրքեր ինչպես նաև ցանկության և հնարավորության դեպքում կարող եք աջակցել մեզ օգնելով ավելի շատ գրքեր թվայնացնել:

ԽՆԴՐԱՆՔ ԴԱՏԱՎՈՐԻՆ

Ավելի ուշ՝ նույն առավոտյան, երեք մարդ՝ երկու փաստաբան և դատավորը, նստած էին դատարանի շենքի աշխատասենյակներից մեկում: Լոնն ավարտեց խոսքը, սակայն դատավորը չէր շտապում պատասխանելու նրան:

- Անսովոր խնդրանք է,- վերջապես ասաց նա՝ կշռադատելով իրավիճակը:- Կարծում՝ էի՝ այսօր կավարտենք այս գործի քննությունը: Ասում եք՝ այնքան շտապ հարց է, որ չե՞ք կարող սպասել մինչև ուշ երեկո կամ վաղը:

- Ոչ, Ձերդ մեծություն, չեմ կարող,- անհամբեր պատասխանեց Լոնը:

«Հավաքի՛ր քեզ,- ասաց նա ինքն իրեն,- խոր շունչ քաշի՛ր»:

- Եվ դա ոչ մի կապ չունի՞ քննվող գործի հետ:

- Ոչ, Ձերդ մեծություն: Անձնական հարց է: Գիտեմ՝ մեծ բան եմ խնդրում, բայց ոչ մի կերպ հետաձգել չեմ կարող:

«Այ այդպես, շատ լավ էր»,- գոտեպնդեց ինքն իրեն Լոնը:

Դատավորը հենվեց աթոռի թիկնակին և գնահատող հայացքով նայեց Լոնին:

- Մի՛սթր Բեյթս, իսկ Դո՞ւք ինչ կասեք,- հարցրեց նա:

Երկրորդ փաստաբանը մաքրեց կոկորդը և պատասխանեց.

- Միսթր Համոնդն ինձ զանգահարել էր այս առավոտյան, և ես արդեն խոսել եմ իմ հաճախորդների հետ: Նրանք համաձայն են հետաձգել նիստը մինչև երկուշաբթի:

- Հասկանալի է,- ասաց դատավորը,- կարծում եք՝ դա Ձեր հաճախորդների շահերից է բխում:

- Այո, կարծում եմ,- ասաց միսթր Բեյթսը,- միսթր Համոնդը համաձայնել է կրկին քննարկման դնել այն հարցը, որը դատական գործի շրջանակներից դուրս է:

Դատավորը խոժոռվեց ու քննող հայացքով սկսեց նայել իր դիմաց նստած փաստաբաններին:

- Ինձ դուր չի գալիս այս ամենը,- վերջապես ասաց նա,- ամենևին դուր չի գալիս: Բայց միսթր Համոնդն առաջին անգամ է նման խնդրանքով դիմում ինձ. ենթադրում եմ՝ հարցն իսկապես շատ հրատապ է,- դատավորը մի պահ լռեց, որ ավելի մեծ տպավորություն գործի, ապա իր գրասեղանին դրված մի քանի փաստաթղթերը ուսումնասիրելով՝ ավելացրեց,- տալիս եմ համաձայնությունս հետաձգելու դատական նիստը մինչև երկուշաբթի: Առավոտյան ժամը իննից ոչ ուշ:

- Շնորհակալ եմ, Ձերդ մեծություն,- ասաց Լոնը:

Երկու րոպե անց նա արդեն դուրս էր եկել դատարանից և շտապում էր դեպի իր մեքենան, որ կայանել էր փողոցի մյուս կողմում: Նա նստեց մեքենան ու դողացող ձեռքերով գործի դնելով շարժիչը՝ բռնեց Նյու Բեռնի ճանապարհը:

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀՅՈՒՐ

Մինչ Էլլին քնած էր հյուրասենյակում, Նոյը նախաճաշ պատրաստեց նրա համար: Ոչ մի արտասովոր բան. բեկոն, թխվածքաբլիթներ և սուրճ: Երբ Էլլին արթնացավ, Նոյը սկուտեղը դրեց նրա կողքին: Իսկ նախաճաշելուց հետո նրանք կրկին սիրով զբաղվեցին՝ անկարող հագենալ միմյանցից: Իրանը հետ ճկելով՝ Էլլին ձայնի ողջ ուժով բղավեց՝ հաճույքի վերջին ալիքից սարսռած, ապա գրկեց Նոյին, և նրանք անուժ սկսեցին վայելել միմյանց տաք շունչը:

Հետո նրանք միասին լոգանք ընդունեցին, և Էլլին հագավ իր զգեստը, որ գիշերվա ընթացքում հասցրել էր չորանալ: Նա առավոտն անցկացրեց Նոյի հետ: Նրանք միասին կերակրեցին Քլեմին, ստուգեցին պատուհանները՝ համոզվելու համար, որ անվնաս են մնացել: Հողմը երկու սոճի էր տապալել միայն, թեև ոչ մեկը ոչինչ չէր ավերել, և մի քանի կղմինդր էր պոկվել տանիքից, իսկ ընդհանուր առմամբ տունը մեծ վնաս չէր կրել:

Նոյը ողջ առավոտ գրեթե բաց չթողեց Էլլիի ձեռքը: Նրանք անկաշկանդ զրուցում էին, իսկ երբեմն էլ Նոյը լռում էր ու պարզապես հիանում Էլլիով: Նրա հայացքից Էլլին շփոթվում էր, փորձում էր որևէ բան ասել, սակայն նրա մտքով ոչ մի կարևոր բան չէր անցնում, և նա պարզապես համբուրում էր Նոյին:

Կեսօրին մոտ նրանք մտան տուն ճաշելու: Երկուսն էլ սաստիկ քաղցած էին, քանի որ նախորդ օրը գրեթե ոչինչ չէին կերել: Ստիպված էին բավարարվել ձեռքի տակ եղածով. հավ տապակեցին, էլի բլիթներ թխեցին ու նստեցին վայելելու ճաշը ծածկապատշգամբում՝ ծաղրասարյակի գիշերերգի ընկերակցությամբ:

Մինչ նրանք զբաղված էին խոհանոցում ափսեները լվանալով, դուռը թակեցին: Նոյը գնաց բացելու, բայց մինչև կհասներ դռան մոտ, նորից թակոց լսվեց:

- Գալի՛ս եմ,- ասաց Նոյը:

Թակոցները, սակայն, ոչ միայն չէին դադարում, այլև ավելի ուժգնանում էին:

- Ասացի՝ գալիս եմ,- կրկնեց Նոյը՝ բացելով դուռը,- Աստվա՛ծ իմ:

Նա քարացավ տեղում: Նրա դիմաց կանգնած էր հիսունը բոլորած գեղեցիկ մի կին, կին, որին նա կճանաչեր, որտեղ էլ հանդիպեր: Նոյը պապանձված շարունակում էր նայել տիկնոջը:

- Ողջո՛ւյն, Նո՛յ,- վերջապես ասաց հյուրը. Նոյը շարունակում էր լռել,- կարո՞ղ եմ ներս գալ,- հարցրեց նա անխռով ձայնով՝ փորձելով չմատնել իրեն:

Նոյն ինչ-որ բան կմկմաց և ճանապարհ տվեց հյուրին: Վերջինս իսկույն ներս մտավ և կանգ առավ ուղիղ սանդուղքի ներքևում:

- Այդ ո՞վ է,- բղավեց Էլլին խոհանոցից:

Տիկինը շրջվեց նրա ձայնի ուղղությամբ:

- Մայրդ է,- վերջապես պատասխանեց Նոյը և անմիջապես լսեց՝ ինչպես Էլլիի ձեռքից ափսեն ընկավ ու կոտրվեց:

- Գիտեի, որ այստեղ կլինես,- ասաց Էնն Նելսոնը դստերը, երբ նրանք երեքն էլ տեղավորվեցին հյուրասենյակի սուրճի սեղանի շուրջը:

- Որտեղի՞ց այդքան վստահություն:

- Դու իմ դուստրն ես: Մի օր, երբ ինքդ էլ երեխաներ կունենաս, կհասկանաս ինձ,- ասաց Էլլիի մայրը ժպտալով, բայց նրա ձայնում լարվածություն կար. Նոյը պատկերացրեց՝ որքան դժվար էր նրա համար հանգստություն պահպանելը:- Ես նույնպես տեսել էի այդ հոդվածը: Տեսնում էի նաև՝ որքան լարված էիր վերջին մի քանի շաբաթվա ընթացքում: Եվ երբ ասացիր, որ գնումների ես գնում ծովափնյա խանութներում, ես անմիջապես հասկացա՝ ինչ կար մտքիդ:

- Հայրիկն էլ գիտի:

Միսիս Նելսոնն օրորեց գլուխը.

- Ո՛չ, ես ոչինչ չեմ ասել ոչ հայրիկիդ, ոչ էլ ուրիշ որևէ մեկին: Ոչ էլ ասել եմ՝ ուր եմ գնում այսօր:

Սեղանի շուրջը մի պահ լռություն տիրեց. Նոյը և Էլլին, շունչները պահած սպասում էին, սակայն միսիս Նելսոնը շարունակում էր լռել:

- Ինչո՞ւ ես եկել,- վերջապես հարցրեց Էլլին:

- Կարծում էի՝ ես պետք է այդ հարցը քեզ տամ,- զարմացավ նրա մայրը:

Էլլին գունատվեց:

- Ես եկել եմ, որովհետև այլ կերպ չէի կարող,- ասաց միսիս Նելսոնը,- նույն պատճառով էլ, վստահ եմ, դու ես այստեղ: Ճիշտ չե՞մ:

Էլլին գլխով արեց:

Միսիս Նելսոնը դարձավ դեպի Նոյը.

- Վերջին մի քանի օրը երևի անակնկալների պակաս չես ունեցել:

- Այո,- պարզապես ասաց Նոյը:

Էլլիի մայրը ժպտաց.

- Գիտեմ՝ չես հավատա, բայց դու ինձ միշտ դուր ես եկել, Նո՛յ: Ես պարզապես կարծում էի, որ դստերս համապատասխան չես: Հասկանո՞ւմ ես ինձ:

- Ո՛չ, այնքան էլ չեմ հասկանում,- ասաց Նոյը լրջագույն տոնով,- Դուք անարդար էիք իմ նկատմամբ, անարդար էիք Էլլիի նկատմամբ: Հակառակ դեպքում նա այստեղ չէր լինի:

Միսիս Նելսոնն աչքը չէր կտրում Նոյից, բայց ոչինչ չկարողացավ պատասխանել նրան: Էլլին, զգալով, որ վեճ է հասունանում, միջամտեց.

- Ինչ նկատի ունես՝ ասելով, որ եկել ես, որովհետև այլ կերպ չէիր կարող: Չե՞ս վստահում ինձ:

- Իմ այստեղ գալը վստահության հետ որևէ կապ չունի,- ասաց Էլլիի մայրը՝ դառնալով դեպի դուստրը,- երեկ երեկոյան Լոնն էր զանգահարել մեր տուն և Նոյից էր հարցուփորձ անում: Նա նույնպես ճանապարհին է և ուր որ է՝ կհասնի այստեղ: Նրա ձայնը սաստիկ հուսահատ էր հնչում: Մտածեցի՝ ճիշտ կլինի՝ իմանաս այս մասին:

- Լոնը ճանապարհի՞ն է,- շնչակտուր կրկնեց Էլլին:

- Նա ինքն այդպես ասաց: Նույնիսկ դատական նիստն է տեղափոխել մյուս շաբաթ: Եթե անգամ դեռ Նյու Բեռնում չէ, ապա շուտով հաստատ կլինի:

- Ինչ ես ասել նրան:

- Առանձնապես ոչինչ: Բայց նա ամեն ինչ հասկացել էր՝ հիշելով՝ տարիներ առաջ Նոյի մասին պատմածս:

Էլլին հազիվ կուլ տվեց թուքը:

- Ասել ես նրան, որ այստե՞ղ եմ:

- Ոչ: Եվ չեմ էլ պատրաստվում ասելու: Դա ձեր երկուսի գործն է: Բայց ճանաչելով նրան՝ վստահ եմ, որ նա կգտնի քեզ այստեղ, եթե հենց հիմա չհեռանաս: Ընդամենը մի քանի հեռախոսազանգ է հարկավոր ճիշտ մարդկանց: Չէ՞ որ ինձ հաջողվեց գտնել քեզ:

Էլլին, թեև ակնհայտորեն անհանգստացած, ժպտաց մորը:

- Շնորհակալ եմ,- ասաց նա:

Միսիս Էննը բռնեց դստեր ձեռքը:

- Գիտեմ, Էլլի, մենք տարբեր ենք և նույն հայացքով չենք նայում շատ բաների: Ես կատարյալ չեմ, բայց ես ջանք չեմ խնայել քո դաստիարակության հարցում: Ես քո մայրն եմ և միշտ կլինեմ: Իսկ դա նշանակում է, որ ոչ մի դեպքում չեմ դադարի քեզ սիրել:

Էլլին մի փոքր մտածելուց հետո ասաց.

- Ինչ անեմ, մայրիկ:

- Չգիտեմ, Էլլի: Ինքդ պետք է որոշում կայացնես: Բայց քո փոխարեն ես մի լավ կմտածեի: Կմտածեի ու կհասկանայի՝ ինչ եմ իրականում ուզում:

Էլլին շրջվեց՝ թաքցնելով մորից հայացքը: Մեկ վայրկյան անց նրա այտով արցունքի կաթիլ սկսեց գլորվել:

- Ես չգիտեմ...- հազիվ արտաբերեց Էլլին. մայրը սեղմեց նրա ձեռքը:

Միսիս Նելսոնը նայեց Նոյին, որ ողջ ընթացքում նստած էր՝ գլուխը կախ և ուշադիր լսում էր նրանց: Ասես անսալով նրա լուռ խնդրանքին՝ Նոյը գլխով արեց և դուրս եկավ հյուրասենյակից:

Երբ նա գնաց, Էննը շշնջաց դստերը.

- Սիրո՞ւմ ես նրան:

- Սիրում եմ,- կամացուկ ասաց Էլլին:

- Իսկ Լոնի՞ն:

- Լոնին նույնպես սիրում եմ, բայց բոլորովին ուրիշ սիրով: Նա թանկ է ինձ համար, բայց նրա հետ ես նույնը չեմ զգում, ինչ Նոյի հետ:

- Ոչ ոք այլևս քեզ չի կարող ստիպել զգալ նույնը,- ասաց Էլլիի մայրն ու բաց թողեց նրա ձեռքը,- ես չեմ կարող քո փոխարեն որոշել, Էլլի: Սա քո կյանքն է: Բայց ես ուզում եմ՝ իմանաս, որ սիրում եմ քեզ և միշտ կսիրեմ: Գիտեմ, որ իմ սիրով չեմ կարող օգնել քեզ, բայց քեզ սիրելն ամենն է, ինչ կարող եմ անել:

Նա բացեց պայուսակն ու այնտեղից նամակների տրցակ հանեց. ծրարները մաշված էին ու փոքր-ինչ դեղնած:

- Սրանք այն նամակներն են, որ Նոյն է քեզ գրել: Ես պահել եմ դրանք, բայց երբեք թույլ չեմ տվել ինձ բացել որևէ մեկը: Գիտեմ՝ իրավունք չունեի թաքցնելու դրանք քեզնից, և սաստիկ զղջում եմ այդկերպ վարվելուս համար: Բայց ես ընդամենը փորձում էի պաշտպանել քեզ: Ես չէի հասկանում...

Էլլին շփոթված վերցրեց մոր ձեռքից նամակների կապոցը:

- Պետք է գնամ, Էլլի: Դու պետք է որոշում կայացնես, շատ ժամանակ չունես: Ուզո՞ւմ ես՝ սպասեմ քեզ քաղաքում:

Էլլին օրորեց գլուխը.

- Ոչ, ես ինքս պետք է լուծեմ այս հարցը:

Էննը գլխով արեց և մտքերով տարված՝ աչքը չէր կտրում աղջկանից: Այնուհետև վերջապես վեր կացավ տեղից, մոտեցավ Էլլիին, խոնարհվեց ու համբուրեց նրա այտը: Դստեր աչքերում տարակուսանք կար. նա զգաց այդ, երբ Էլլին վեր կացավ սեղանի մոտից ու գրկեց իրեն:

- Ի՞նչ ես պատրաստվում անելու,- հարցրեց մայրը՝ հետ քաշվելով:

Էլլին երկար ժամանակ լուռ էր:

- Չգիտեմ,- նույնիսկ երկար խորհելուց հետո նա պատասխան չուներ:

Մայր ու դուստր ևս մեկ րոպե մնացին կանգնած՝ պարզապես միմյանց փաթաթված:

- Շնորհակալ եմ, որ եկար,- ասաց Էլլին,- սիրում եմ քեզ:

- Ես էլ քեզ եմ սիրում:

Մորը դեպի դուռն ուղեկցելիս Էլլիին թվաց, ինչպես մայրը շշնջաց. «Անսա՛ սրտիդ ձայնին»: Բայց նա վստահ չէր. գուցե իսկապես ընդամենը թվա՞ց:

թվագրված է 1915-ին գրված

ՃԱՄՓԱԲԱԺԱՆ

Նոյն ուղեկցեց միսիս Նելսոնին մինչև դուռը:

- Ցտեսություն, Նո՛յ,- ասաց Էլլիի մայրը ցածր ձայնով:

Նոյը լուռ գլխով արեց: Ասելու ոչինչ չկար այլևս. երկուսն էլ գիտեին: Միսիս Նելսոնը դուրս եկավ՝ փակելով դուռն իր հետևից: Նոյը հայացքով հետևեց նրան, մինչև նա հասավ իր մեքենային, նստեց և հեռացավ առանց հետ նայելու: Նոյին նա ուժեղ կին թվաց. պարզ էր արդեն՝ ում էր նմանվել Էլլին:

Նոյն աննկատ հյուրասենյակի դռնից ներս նայեց. Էլլին նստած էր՝ գլուխը ներքև իջեցրած: Ապա հետնադռնով դուրս եկավ ծածկապատշգամբ՝ հասկանալով, որ նրան հարկավոր էր մենակ թողնել: Նոյը լուռ նստեց իր ճոճաթոռին և սկսեց հետևել վարգող ալիքներին:

Նրան թվաց՝ մի ամբողջ հավերժություն է նստել այդպես, մինչև Էլլին կբացեր դուռը: Նոյը չշրջվեց. ինքն էլ չհասկացավ ինչու, բայց չկարողացավ նայել նրան: Էլլին դուրս եկավ և նստեց նրա կողքին:

- Ների՛ր ինձ,- ասաց նա,- մտքովս չէր անցնի, որ նման բան կարող է լինել:

- Ներողություն խնդրելու կարիք չկա,- ասաց Նոյը՝ գլուխն օրորելով,- երկուսս էլ գիտեինք, որ երջանիկ պահերը հավերժ չեն:

- Միևնույն է, դժվար է կրկին վերադառնալ իրականություն:

- Գիտեմ,- ասաց Նոյը՝ վերջապես դառնալով դեպի Էլլին ու բռնեց նրա ձեռքը,- կարող եմ ինչ-որ կերպ հեշտացնել ապրումներդ:

- Չեմ կարծում, Նոյ: Պետք է մենակ անցնեմ այս ամենի միջով: Բացի դրանից՝ դեռ չգիտեմ՝ ինչ եմ ասելու նրան,- Էլլին գլուխը կախեց ու շարունակեց գրեթե շշուկով, ասես ինքն իր հետ էր խոսում միայն,- նրանից է կախված թերևս, թե որքան բան գիտի Լոնը: Եթե մայրս ճիշտ է, ապա նա ընդամենը կասկածներ ունի, բայց ոչ մի բանում վստահ չէ:

Նոյի սիրտը սեղմվեց:

- Դու չես պատրաստվում պատմել նրան մեր մասին, այնպես չէ՞,- վերջապես ասաց նա վստահ ձայնով, որի մեջ Էլլին, սակայն, անասելի ցավ զգաց:

- Չգիտեմ: Իսկապես չգիտեմ: Հյուրասենյակում շարունակ նույն հարցն էի տալիս ինքն ինձ՝ ինչ եմ իսկապես ուզում,- Էլլին սեղմեց Նոյի ձեռքը,- և գիտե՞ս՝ որն էր պատասխանը: Այո, ես ուզում եմ քեզ հետ լինել, ուզում եմ՝ միասին լինենք: Ես սիրում եմ քեզ և միշտ եմ սիրել,- նա խոր շունչ քաշեց, ապա միայն շարունակեց.- Բայց ես չեմ ուզում ոչ ոքի ցավեցնել: Երջանիկ ավարտ եմ ուզում մեր պատմությանը: Բայց գիտեմ՝ եթե մնամ այստեղ, մեծ ցավ կպատճառեմ ինձ հարազատ մարդկանց, հատկապես Լոնին: Ես չէի ստում, երբ ասում էի, որ սիրում եմ նրան: Ճիշտ է՝ ես նրա հետ չեմ զգում նույնը, ինչ քեզ հետ, բայց ինձ համար միևնույն չէ՝ ինչ կլինի նրա հետ, և ես անարդար կլինեմ նրա նկատմամբ, եթե այսկերպ հեռանամ: Թեև այստեղ մնալս կդժբախտացնի նաև ընտանիքիս ու ընկերներիս: Ես ինձ դավաճան կզգամ:

... իսկ դավաճանել ես ոչ ոքի չեմ ուզում:

- Չես կարող ողջ կյանքդ ուրիշների համար ապրել: Պետք է ապրես քո կյանքով, եթե անգամ դա ցավեցնում է սիրելի մարդկանց:

- Գիտեմ,- պատասխանեց Էլլին,- բայց ինչ որոշում էլ ընդունեմ, պետք է ապրեմ դրա հետ: Մինչև կյանքիս վերջ: Պետք է առաջ շարժվեմ ու այլևս հետ չնայեմ: Հասկանո՞ւմ ես:

Նոյն օրորեց գլուխն ու փորձեց այնպես խոսել, որ ձայնը չմատներ հուզմունքը:

- Այնքան էլ չէ: Ոչինչ էլ չեմ հասկանա, եթե ստիպված լինեմ նորից կորցնել քեզ: Երկրորդ անգամ չեմ դիմանա սրան:

Էլլին ոչինչ չասաց, միայն գլուխը կախեց: Նոյը շարունակեց.

- Իսկապես կարող ես կրկին թողնել ինձ՝ առանց հետ նայելու:

- Չգիտեմ,- պատասխանեց Էլլին՝ կծելով շուրթը. նրա ձայնը սկսեց դողալ:- Երևի չեմ կարող:

- Արդար կլինի՞ Լոնի նկատմամբ, եթե մնաս նրա հետ, բայց չմոռանաս ինձ:

Էլլին անմիջապես չպատասխանեց: Նա վեր կացավ տեղից, ափերով տրորեց աչքերը, մոտեցավ ու հենվեց բազրիքին: Խաչեց ձեռքերը կրծքին ու հայացքը ալիքներին՝ վերջապես շշնջաց.

- Ոչ:

- Ամեն ինչ ուրիշ է հիմա, Էլլի,- ասաց Նոյը,- մենք այլևս փոքր չենք, ընտրությունը մերն է, ինչի հնարավորությունը չունեինք տարիներ առաջ: Մենք ստեղծված ենք իրար համար: Ժամանակը չի կարող փոխել դա:- Նոյը մոտեցավ Էլլիին ու գրկելով նրա ուսերը՝ ավելացրեց.- Չեմ ուզում մնացած կյանքս վատնել ափսոսանքների վրա՝ երազելով քո մասին ու մտածելով, որ ամեն ինչ այլ կերպ կարող էր լինել: Մնա՛ ինձ հետ, Էլլի, խնդրում եմ:

Էլլիի աչքերն արցունքով լցվեցին:

- Չգիտեմ, իսկ եթե չկարողանամ,- վերջապես շշնջաց նա:

- Կկարողանաս, Էլլի... ես չեմ կարող երջանիկ լինել՝ իմանալով, որ դու մեկ ուրիշի հետ ես: Դա կսպանի ինձ: Այն, ինչ կա մեր միջև, բացառիկ է: Չի կարելի վերցնել ու հրաժարվել այդ հրաշքից:

Էլլին լուռ էր: Նոյը քնքշորեն դարձրեց նրան դեպի իրեն, բռնեց նրա ձեռքերը և նայեց աչքերին: Էլլին նույնպես նրան հառեց թաց աչքերը: Երկար լռությունից հետո Նոյը քնքշությամբ սրբեց Էլլիի արցունքները՝ նրա աչքերի մեջ կարդալով այն, ինչ նա չկարողացավ ասել:

- Որոշել ես հեռանալ, այնպես չէ՞,- հազիվ ժպտալով՝ ասաց Նոյը,- ուզում ես մնալ, բայց չես կարող:

- Ա՛հ, Նո՛յ,- ասաց Էլլին, ու արցունքները կրկին գլորվեցին նրա աչքերից,- խնդրում եմ՝ փորձի՛ր հասկանալ...

Նոյն օրորեց գլուխը՝ ստիպելով Էլլիին լռել:

- Արդեն որոշել ես, գիտեմ. լռում ես, բայց աչքերդ քո փոխարեն խոսում են: Ների՛ր, բայց չեմ ուզում ոչինչ հասկանալ, Է՛լլի: Չեմ ուզում՝ ամեն ինչ այսկերպ ավարտվի: Երկուսս էլ գիտենք՝ եթե հեռանաս, մենք այլևս չենք հանդիպի:

Էլլին նետվեց Նոյի գիրկն ու ազատություն տալով արցունքներին՝ սկսեց հեկեկալ, մինչ Նոյը զսպում էր սեփական հոգու ճիչը:

Նա ամուր գրկեց Էլլին:

- Է՛լլի, ես չեմ կարող քեզ ստիպել մնալ ինձ հետ: Բայց ինչ էլ լինի, ես երբեք չեմ մոռանա քեզ հետ անցկացրած այս երկու օրը: Տարիներ շարունակ երազել եմ սրա մասին:

Նոյը քնքշությամբ համբուրեց Էլլիին, և նրանք գրկախառնվեցին ճիշտ այնպես, ինչպես երկու օր առաջ, երբ Էլլին իջավ մեքենայից, և նրանք հանդիպեցին երկար բաժանումից հետո: Վերջապես Էլլին բաց թողեց Նոյին և սրբեց արցունքները:

- Պետք է իրերս հավաքեմ, Նո՛յ:

Նոյը ներս չգնաց նրա հետ: Ուժասպառ ընկավ իր ճոճաթոռին, ու նրա ականջին հասավ՝ ինչպես Էլլիի ոտնաձայները շուտով մարեցին: Մի քանի րոպե անց Էլլին դուրս եկավ տնից՝ իրերը ձեռքին, և գլուխը կախ՝ մոտեցավ Նոյին, մեկնեց նրան նախորդ առավոտ-

յան պատկերած նկարը: Նոյը վերև նայեց. Էլլիի աչքերից շարունակում էին գլորվել արցունքները:

- Քեզ համար եմ նկարել, Նո՛յ:

Նոյը վերցրեց նկարն ու զգուշորեն բացեց գալարը, որ հանկարծ այն չպատռվի:

Նա իրար վրա լողացող երկու պատկեր տեսավ: Առջևից ինքն էր՝ այնպիսին, ինչպիսին հիմա էր, այլ ոչ թե տասնչորս տարի առաջ: Նոյը նկատեց, որ Էլլին նկարել էր իր դեմքն ամենայն մանրամասնությամբ՝ չմոռանալով նաև սպիի մասին, ասես արտապատկերել էր այն վերջերս արված լուսանկարից:

Իսկ հետին պլանում տան առաջամասն էր: Այստեղ ևս Էլլին ջանք չէր խնայել մանրուքների հարցում, ասես նկարել էր՝ կաղնու տակ նստած՝ առջևում ունենալով տան պատկերը:

- Սքանչելի է, Էլլի, շնորհակալ եմ,- Նոյը փորձեց ժպտալ,- ասում էի, չէ՞, դու տաղանդ ունես:

Էլլին գլխով արեց՝ հայացքը գետնին, շուրթերը սեղմելով: Ժամանակն էր հեռանալու:

Նրանք միասին դանդաղ քայլերով ուղղվեցին դեպի Էլլիի մեքենան: Երկուսն էլ լուռ էին: Երբ հասան մեքենային, Նոյը կրկին գրկեց Էլլիին՝ անզոր այլևս զսպելու սեփական արցունքները: Նա համբուրեց Էլլիի շուրթերը, ապա՝ այտերը, այնուհետև մատներով քնքշորեն սրբեց իր համբույրի հետքերը:

- Սիրում եմ քեզ, Էլլի:

- Ես էլ քեզ:

Նոյը բացեց մեքենայի դուռը, և նրանք կրկին համբուրվեցին: Ապա Էլլին, հայացքը չհեռացնելով Նոյից, նստեց ղեկին: Նամակների կապոցն ու պայուսակը դրեց իր կողքը և ձեռքը տանելով դեպի բանալին՝ գործի գցեց շարժիչը, որն իսկույն անհամբեր սկսեց շչալ: Մոտ էր հեռանալու ժամը:

Նոյը երկու ձեռքով հրելով փակեց մեքենայի դուռը, և Էլլին ներքև իջեցրեց պատուհանը: Մի վերջին անգամ էլ հայացք գցելով նրա բազուկներին, մեղմ ժպիտին, արևից թխացած դեմքին՝ նա մեկնեց ձեռքը, և Նոյը մի կարճ ակնթարթ ջերմացրեց այն իր ափերով:

«Մնա՛ ինձ հետ»,- անձայն թախանձեց Նոյը:

Էլլիի համար ցավոտ էր նրա շուրթերին դա կարդալը, ավելի ցավոտ, քան պատկերացնում էր: Արցունքները հեղեղի պես թափվեցին նրա աչքերից՝ խեղդելով իրենց մեջ բոլոր խոսքերը: Ի վերջո, նա դժկամորեն շրջվեց և հետ քաշեց ձեռքը, ապա սեղմեց գազի ոտնակը: Եթե չհեռանար հենց հիմա, այլևս ուժ չէր ունենա հեռանալու: Նոյը հետ քայլեց՝ ճանապարհ բացելով մեքենայի համար:

Նա չէր կարողանում հավատալ իրականությանը: Տեղում քարացած՝ հետևում էր՝ ինչպես մեքենան դանդաղ շարժվեց տեղից, և անիվների տակ սկսեց ճռթճռթալ մանրախիճը: Մեքենան շրջվեց դեպի քաղաք տանող ճանապարհը: Հեռանում էր... Էլլին հեռանո՛ւմ էր... Նոյը զգաց՝ ինչպես է հողը փախչում ոտքերի տակից:

Մեքենան անցավ նրա կողքով...

Էլլին մի վերջին անգամ ձեռքով արեց. Նոյը հազիվ բարձրացրեց ձեռքը պատասխան հրաժեշտ տալու ու տեսնելով Էլլիի անժպիտ աչքերը՝ ուզում էր ողջ ուժով բղավել. «Մի՛ հեռացիր»: Բայց բառերը խեղդվեցին կոկորդում, և մեկ րոպե անց մեքենայի հետքն անգամ չկար. միայն ճանապարհին ձգվող անվահետքն էր հուշում, որ Էլլին վայրկյաններ առաջ այստեղ էր:

Նոյը երկար ժամանակ անշարժ կանգնած մնաց: Էլլին չքացավ իր կյանքից նույնքան անսպասելի, որքան հայտնվել էր: Այս անգամ առհավետ: Անվերադարձ:

Նոյը փակեց աչքերն ու նորից տեսավ՝ ինչպես է ճանապարհի ընկնում մեքենան, ինչպես է հեռանում Էլլին՝ իր հետ տանելով նրա սիրտը, առանց անգամ հետ նայելու, ինչպես իր մայրը:

ՆԱՄԱԿ ԱՆՅՅԱԼԻՑ

Արցունքների հեղեղի միջից մեքենան վարելը դժվար էր, բայց Էլլին կանգ չառավ՝ հույսով, որ ճանապարհն ինքը կտաներ իրեն դեպի քաղաք: Նա պատուհանը բաց էր թողել՝ մտածելով, որ թարմ օդը կմաքրեր միտքը, սակայն ոչինչ չէր օգնում: Նա հոգնած էր և չգիտեր՝ ուժերը կներե՞ն արդյոք Լոնի հետ խոսելու: Իսկ ի՞նչ պետք է ասեր նրան: Էլլիի մտքով ոչինչ չէր անցնում, բայց նա հույս ուներ՝ ճիշտ բառերն իրենք կհայտնվեին, երբ ժամանակը գար:

Երանի՜ թե...

Հասնելով Ֆրոնթ Սթրիթ տանող բացովի կամրջին՝ Էլլին զգաց, որ վերագտնում է վերահսկողությունը: Ճիշտ է՝ հուզմունքը դեռ ամբողջովին չէր հաջողվել հաղթահարել, բայց նա հույս ուներ, որ արդեն կարող էր հանգիստ խոսել Լոնի հետ:

Երթևեկությունը խիտ չէր, և Էլլին անշտապ առաջ էր ընթանում Նյու Բեռնի փողոցներով՝ ուսումնասիրելով պատահական անցորդներին, որոնք շտապում էին իրենց գործերով: Գազալցակայանում ավտոմեխանիկը հայացք էր գցում նոր մեքենայի կապոտից ներս, իսկ նրա կողքին կանգնած էր մեկ այլ տղամարդ՝ ենթադրաբար մեքենայի տերը: Երկու կին, երեխաների մանկասայլակները հրելով, տարված քննարկում էին խանութների փեղկերին ցուցադրված

հագուստները: Ոսկյա իրերի խանութի կողքով փութալով քայլում էր պատշաճ հագնված մի տղամարդ՝ պորտֆելը ձեռքին: Հաջորդ շրջադարձին Էլլին հանդիպեց մեկ այլ երիտասարդի, որ մթերք էր դատարկում փողոցի մի մեծ հատված զբաղեցրած բեռնատարից: Այդ տղայի շարժուձևում կար մի բան, որ հիշեցրեց նրան Նոյին՝ նավամատույցի ծայրին ծովախեցգետիններ հավաքելիս:

Երբ մեքենան կանգնած էր կարմիր լույսի տակ, Էլլին փողոցի ծայրին նկատեց իջևանատունը: Կանաչ լույսը տեսնելուն պես՝ նա խոր շունչ քաշեց և դանդաղ մոտեցավ ավտոկայանատեղիին, որ իջևանատունը կիսում էր մի քանի այլ ընկերությունների հետ: Էլլին անմիջապես նկատեց Լոնի մեքենան, որ կանգնած էր առաջին շարքում: Թեև անմիջապես դրա կողքին ազատ տեղ կար, բայց Էլլին նախընտրեց իջևանատան մուտքից մի փոքր հեռու կայանել:

Նա պտտեց բանալին, և շարժիչն իսկույն լռեց: Այնուհետև բացեց պահախցիկը և սկսեց հայելի ու սանր փնտրել՝ ի վերջո գտնելով երկուսն էլ Հյուսիսային Կարոլինայի քարտեզի վրա: Նայելով իրեն հայելու մեջ՝ Էլլին տեսավ, որ աչքերը դեռ կարմիր էին և ուռած: Եվ կրկին, ինչպես երեկ՝ անձրևից հետո, նա ափսոսաց, որ իր հետ դիմահարդարման ոչ մի պարագա չէր վերցրել, թեև կասկածում էր արդեն, որ որևէ բան կարող էր փրկել: Նա փորձեց մազերը հետ տանել դեպի ձախ, հետո դեպի աջ և, ի վերջո, հանձնվեց:

Նա վերցրեց պայուսակը, բացեց այն ու ևս մեկ անգամ հայացք գցեց թերթի պատառիկին, որ բերել էր իրեն այստեղ: Հոդվածը կարդալուց ի վեր այնքան բան էր տեղի ունեցել, որ դժվար էր հավատալ, որ ընդամենը երեք շաբաթ է անցել այդ օրվանից: Անհավանական էր թվում նաև այն, որ ընդամենը երկու օր առաջ էր Նյու Բեռն եկել: Ասես մի ողջ կյանք էր անցել երկար բաժանումից հետո Նոյի հետ կրկին հանդիպելու պահից:

Ծառերի վրա ճռվողում էին սարյակները: Ամպերը սկսել էին

ցրվել, և ճերմակի տակ տեղ-տեղ արդեն երևում էր երկնագույնը: Ճիշտ է՝ ամպերը դեռ ստվերում էին արևը, բայց Էլլին գիտեր՝ դա ժամանակավոր էր: Արևոտ օր էր սպասվում:

Օր, որ Էլլին կուզենար Նոյի հետ անցկացնել: Նրա մասին մտածելով՝ Էլլին հիշեց նամակները, որ մայրն էր բերել իր հետ:

Նա վերցրեց տրցակը, քանդեց կապը և գտավ առաջին նամակը, որ Նոյը գրել էր իրեն: Նա բացեց այն, բայց չկարդաց. ժպիտով պատկերացրեց՝ ինչ կարող էր նա գրած լինել: Անկասկած որևէ պարզ բան, առանց ձևականությունների, իր առօրյայից կամ միասին անցկացրած ամռան հիշողություններից, գուցե հարցեր՝ ուղղված իրեն: Չէ՞ որ նա սպասում էր, որ Էլլին կպատասխաներ իրեն: Էլլին նորից նամակը դրեց ծրարի մեջ և փոխարենը գտավ Նոյի վերջին նամակը, կապոցի ամենաներքևում: Հրաժեշտի նամակը: Այս մեկը հետաքրքրում էր Էլլիին անհամեմատ ավելի շատ, քան մյուսները: Ի՞նչ բառերով էր Նոյը հրաժեշտ տվել իրեն: Իսկ ի՞նչ բառեր կընտրեր հրաժեշտի համար ինքը՝ Էլլին:

Ծրարը բարակ էր: Նամակը թերևս երկար չէր. մեկ, գուցե երկու էջ ընդամենը: Էլլին առաջին հերթին ստուգեց ծրարի հետին կողմը: Ոչ մի անուն, միայն Նյու Ջերսիում գտնվող հասցե: Նա, շունչը պահած, եղունգի օգնությամբ սկսեց բացել այն:

Վերջապես բացելով ծրարը՝ Էլլին տեսավ՝ նամակը թվագրված էր 1935 թվականի մարտին: Նոյը գրել էր իրեն երկուսուկես տարի շարունակ՝ չստանալով գեթ մեկ պատասխան իր նամակներին:

Էլլին պատկերացրեց նրան հին գրասեղանի մոտ նստած նամակ գրելիս, նամակ, որ վերջինը պետք է լիներ: Էլլիին թվաց՝ նամակի վրա արտասուքի հետքեր կային: Բայց երևի ընդամենը իր երևակայությունն էր:

Էլլին ողղեց նամակը և սկսեց կարդալ արևի նվաղ լույսի տակ, որ ներս էր թափանցել պատուհանի միջով:

Իմ սիրելի՛ Էլլի,

Չգիտեմ նույնիսկ ինչ գրել: Ողջ գիշեր չկարողացա քնել: Ինձ հանգիստ չէր տալիս այն միտքը, որ մեր պատմությունն ավարտվել է: Տարօրինակ զգացում է, որի հետ դժվար է հաշտվելը, բայց հետ նայելով՝ հասկանում եմ, որ այլ կերպ չէր կարող լինել:

Դու և ես տարբեր ենք: Մենք տարբեր աշխարհներից ենք, բայց դա չխանգարեց քեզ ճանաչել տալ ինձ սիրո իրական արժեքը: Դու ցույց տվեցիր ինձ՝ ինչ է նշանակում հոգ տանել մեկ ուրիշի համար, և ես գիտեմ, որ հիմա ավելի լավ մարդ եմ հենց քո շնորհիվ: Ուզում եմ՝ երբեք չմոռանաս այդ մասին:

Պատահածն ինձ չի դառնացրել: Ընդհակառակը: Վստահ եմ՝ այն, ինչ տեղի ունեցավ մեր միջև, ավելի քան իրական էր, և ես երջանիկ եմ, որ մենք միասին ենք եղել թեկուզ կարճ ժամանակով: Եվ եթե ինչ-որ հեռավոր անկյունում երբևիցե հանդիպենք կրկին, ես կժպտամ քեզ, և սիրտս ուրախությունից կթրթռա: Կհիշեմ միասին անցկացրած ամռան յուրաքանչյուր ակնթարթը՝ կաղնիների տակ և ոչ միայն: Մենք իրարից շատ բան ենք սովորել, բայց ամենակարևոր բանը, որ սովորել ենք, սիրելն էր: Եվ գուցե մի կարճ ակնթարթ դու նույնպես զգաս այն, ինչ ես, և այդժամ ժպտաս ի պատասխան՝ թաթախվելով նույն հիշողություններով, որ հավերժ կկապի մեզ իրար:

Սիրում եմ քեզ, Է՛լլի:

Նոյ:

Էլլին նորից կարդաց նամակը, այս անգամ ավելի դանդաղ: Կարդաց նաև երրորդ անգամ, նախքան հետ կդներ այն ծրարի մեջ: Եվս մեկ անգամ նա պատկերացրեց Նոյին այդ նամակը գրելիս և ուզում էր բացել հաջորդ ծրարը, երբ հասկացավ, որ այլևս չի կարող ուշանալ: Լոնն իրեն էր սպասում:

Էլլին իջավ մեքենայից և զգաց, որ ոտքերն ասես չէին ենթարկվում իրեն: Նա կանգ առավ, խոր շունչ քաշեց և ուղղվելով դեպի իջևանատուն՝ հասկացավ, որ դեռևս չգիտեր՝ ինչ պետք է ասեր Լոնին:

Պատասխանը ծնվեց միայն այնժամ, երբ նա բացեց մուտքի դուռը ու տեսավ Լոնին նախասրահում իրեն սպասելիս:

ՁՄԵՌ ԵՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Պատմությունն ավարտվում է այստեղ, և ես փակում եմ հուշատետրը, հանում ակնոցս և սրբում աչքերս: Նրանք հոգնած են և արյունով լցված, բայց մինչև օրս չեն դավաճանել ինձ: Թեև վստահ եմ՝ հեռու չէ նաև այդ օրը: Ոչ աչքերս, ոչ էլ ես հավերժ չենք:

Ես նայում եմ նրան նաև պատմությունն ավարտելուց հետո, բայց պատասխան հայացքի այդպես էլ չեմ արժանանում: Նրա հայացքը գամված է պատուհանից դուրս՝ դեպի բակ, որտեղ այստեղի բնակիչները հանդիպում են իրենց ընկերներին ու ընտանիքի անդամներին:

Իմ հայացքը նույնպես կանգ է առնում այնտեղ, ուր նրա հայացքն է, և մենք միասին ենք հետևում դրսում կատարվողին: Այս բոլոր տարիներին մեր առօրյան չի փոխվել: Ամեն առավոտ՝ նախաճաշից մեկ ժամ հետո, սկսում են ժամանել երիտասարդները, մենակ կամ ընտանիքի հետ, գալիս են այցելելու նրանց, ովքեր այստեղ են ապրում: Նրանք լուսանկարներ ու նվերներ են բերում իրենց հետ, նստում են նստարաններին կամ զբոսնում են ծառուղով, որ բնության պատառիկ է հիշեցնում: Այցելուներից ոմանք ավելի երկար են մնում, բայց մեծ մասը հեռանում է մի քանի ժամից: Եվ երբ նրանք հեռանում են, տխրություն է իջնում հոգուս վրա նրանց համար, ովքեր այդքան երկար սպասում են ընդամենը այդ

մի քանի ժամվա համար: Երբեմն հետաքրքիր է դառնում՝ ինչ են մտածում ընկերներս, երբ տեսնում են՝ ինչպես են հեռանում իրենց սիրելիները, բայց գիտեմ՝ դա իմ գործը չէ: Եվ ես նրանց երբեք ոչինչ չեմ հարցնում, որովհետև ժամանակի ընթացքում սովորում ես, որ բոլորը գաղտնիքների իրավունք ունեն:

Բայց շուտով ձեզ հետ կկիսեմ իմ գաղտնիքներից մեկը:

Հուշատետրն ու խոշորացույցը դնում եմ կողքիս՝ սեղանի վրա. ոսկորներս ցավում են, և ես դարձյալ հասկանում եմ՝ որքան սառն է մարմինս: Առավոտյան արևի տակ ընթերցելն անգամ չի փոխում ոչինչ: Բայց ես այլևս չեմ զարմանում, որովհետև վերջին օրերին մարմինս իր կանոններն է թելադրում արդեն:

Այսուհանդերձ, ես այնքան էլ դժբախտ չեմ: Այստեղ աշխատող մարդիկ ճանաչում են ինձ, գիտեն իմ բոլոր ցավերի մասին և ամեն ինչ անում են ինձ օգնելու համար: Մահճակալի կողքի սեղանիկին ինձ համար տաք թեյ են թողել, և ես երկու ձեռքով ամուր բռնում եմ թեյնիկն ու փորձում մի բաժակ թեյ լցնել ինձ համար: Չեմ դժգոհում, որովհետև գիտեմ՝ թեյը հարկավոր է, որ մի փոքր տաքանամ, իսկ շարժվելը չէր խանգարի ոսկրոտած ծերուկիս: Թեև օրեցօր զգում եմ, որ ավելի դժվար է ինձ համար շարժվելը, և ես ինձ նույնքան ժանգոտած եմ զգում, որքան ճահճացած գետում քսան տարի առաջ լքված մետաղե ջարդոնը:

Այս առավոտ նույնպես կարդացի նրա համար՝ սովորության համաձայն, որովհետև պետք է կարդայի: Ոչ, ինձ համար սա պարտականություն չէ, թեև շատերը հավատացած են, որ այդպես էլ կա: Մեկ այլ, ավելի խորհրդավոր պատճառ կա: Գուցե ճիշտ կլիներ բացահայտել այն հենց հիմա, բայց դեռ վաղ է: Ես առայժմ անկարող եմ տրվել զգացմունքներին, համենայն դեպս մինչև ճաշի ժամը: Բացի դրանից՝ չգիտեմ՝ օրն ինչ է խոստանում, և, անկեղծ ասած, հույսս դեռ չեմ կորցնում:

Այժմ մենք ամեն Աստծո օր միասին ենք անցկացնում, բայց գիշերն ամեն անգամ բաժանում է մեզ: Բժիշկները չեն թույլատրում ինձ հանդիպել նրան մութն ընկնելուց հետո: Ես լիովին հասկանում եմ պատճառները, ու թեև համաձայն եմ նրանց հետ, բայց երբեմն խախտում եմ կանոնները: Ուշ գիշերով, երբ տրամադրությունս թույլ է տալիս, ես ծլկում եմ իմ սենյակից, գնում նրա սենյակը և նայում նրան, մինչ նա քնած է: Նա չի էլ կասկածում: Գալիս եմ, հետևում նրա շնչառությանը և հասկանում, որ եթե նա չլիներ, ես այդպես էլ չէի ամուսնանա: Իսկ երբ նայում եմ նրա դեմքին, որն ավելի լավ գիտեմ, քան իմ սեփականը, հասկանում եմ, որ ես նրա համար նույնքան կարևոր եմ եղել, եթե ոչ ավելին: Եվ այդ գիտակցումն ավելի մեծ նշանակություն ունի ինձ համար, քան երբևէ կարող եմ նկարագրել բառերով:

Երբեմն էլ նրան նայելիս մտածում եմ՝ որքան երջանիկ եմ գրեթե քառասունինը տարի նրան որպես կին ունենալու համար: Այո, հաջորդ ամիս կլրանա մեր ամուսնության քառասունինը տարին: Առաջին քառասունհինգ տարին նա ամեն գիշեր ստիպված էր լսել՝ ինչպես եմ խռմփացնում, բայց արդեն չորս տարի է՝ մենք առանձին սենյակներում ենք քնում: Ես առանց նրա լավ չեմ քնում: Անվերջ շուռումուռ եմ գալիս, տենչում նրա ջերմությունը և գիշերվա մեծ մասը պառկում՝ աչքերս լայն բացած ու հետևում՝ ինչպես են ստվերները պար բռնում առաստաղին, ինչպես դաշտագլորներն[1] են դեգերում անապատում: Եթե բախտ է վիճակվում, երկու ժամ քնում եմ, բայց, միևնույն է, արթնանում եմ՝ լույսը չբացված: Թեև անելու ոչինչ չունեմ:

Շուտով այս ամենը կավարտվի: Ես գիտեմ դա: Իսկ նա չգիտի:

1 Դաշտագլոր - անապատային մի քանի այնպիսի խոտաբույսերի ընդհանուր անվանումը, որոնք հասունանալուց հետո պոկվում են արմատից և քամուց տարվում:

Օրագրիս գրառումներն օրեցօր ավելի կարճ են և թղթին հանձնելու համար շատ ժամանակ չեն պահանջում: Շատ բան չեմ գրում. միանման օրերի մասին երկար չես գրի: Բայց այսօր երևի կարտագրեմ այն բանաստեղծությունը, որ բուժքույրերից մեկն է գտել ինձ համար՝ կարծելով, որ այն ինձ դուր կգա: Ահա այն.

Հոգիս կիսատ էր՝ որպես գունատ մահիկ,
Մինչև չփիրեց նրան սերը քաղցրահամ.
Նա ժպտաց ինձ ինչպես անուշ մի ծաղիկ՝
Անդարձ գերելով սիրտս անպաշտպան:

Երեկոյան ես ազատ եմ, և հարևան սենյակների բնակիչները խնդրում են ինձ այցելել իրենց: Սովորաբար չեմ մերժում այդ խնդրանքը, այցելում եմ ու կարդում նրանց համար, որովհետև նրանք ունեն դրա կարիքը, համենայն դեպս այդպես են ասում: Ես քայլում եմ միջանցքում և ընտրում՝ այս անգամ ում պետք է այցելեմ, քանի որ շատ ծեր եմ հստակ ցուցակի հետևելու համար, թեև սրտի խորքում միշտ գիտեմ՝ ով ունի իմ կարիքը: Բոլորն իմ ընկերներն են: Ես բացում եմ հերթական դուռը, և իմ առջև բացվում է միշտ նույն տեսարանը: Այստեղ բոլոր սենյակները նման են իրար՝ նույն կահույքով, միշտ կիսամութ, լուսավորված միայն թրթռացող լույսով, որ արձակում է հեռուստացույցը հերթական հաղորդաշարը կամ ֆիլմը բարձր ձայնելիս, որովհետև այստեղ ոչ ոք լավ չի լսում:

Տղամարդ, թե կին՝ բոլորը ժպտում են ինձ, երբ ներս եմ մտնում, և հեռուստացույցն անջատելով՝ նրանք շշնջում են. «Այնքան ուրախ եմ, որ եկել ես»: Իսկ հետո հարցուփորձ են անում կնոջիցս: Երբեմն պատասխանում եմ նրանց հարցերին: Հիշում եմ նրա քնքշությունն ու հմայքը: Պատմում եմ՝ ինչպես է նա սովորեցրել ինձ նկատել՝ որքան գեղեցիկ է այն աշխարհը, որում ապրում ենք: Կամ էլ պատմում եմ

այն տարիներից, երբ երիտասարդ էինք դեռ. ինչպես էինք գոհանում ամենով, ինչ ունեինք, երբ գրկում էինք իրար աստղազարդ երկնքի տակ: Իսկ երբ տրամադրությունս շատ բարձր է լինում, պատմում եմ մեր արկածների մասին, Նյու Յորքում ու Փարիզում կազմակերպված ցուցահանդեսների կամ քննադատների հիացական արձագանքների մասին, որոնց գրածները ես երբեք չէի հասկանում: Բայց նրանց հարցերին ի պատասխան՝ ամենից հաճախ պարզապես ժպտում եմ ու ասում, որ կինս ամենևին չի փոխվել: Այդժամ նրանք թաքցնում են ինձնից իրենց հայացքները, քանի որ այն մատնում է նրանց: Նրանք նորից հիշում են, որ իրենց ժամանակն էլ մոտ է: Եվ ես նստում եմ նրանց կողքին և կարդում այնքան, մինչև բոլոր վախերը կնահանջեն:

Մի կողմ թող տագնապդ, ձեռքդ տուր ինձ ու անհոգ եղիր...
Քանի դեռ արևը երես չի թեքել քեզնից, ես այստեղ եմ՝ քեզ հետ,
Քանի դեռ ջրերը քեզ համար են ալիքվում,
Քանի դեռ քեզ համար են սոսափում տերևները,
Իմ բառերն անվերջ կալիքվեն ու կսոսափեն քեզ համար՝
Ես այստեղ եմ՝ քեզ հետ:

Իսկ այս մեկն էլ կարդում եմ, որ նրանք ինձ ճանաչեն.

Թափառում եմ ողջ գիշեր իմ տեսիլքներում...
Անքուն հայացքով հպվում
Անդորր գրած փակ կոպերին:
Շվարած ու հուսահատ,
Ինքս ինձ հետ անվերջ անհաշտ,
Դադար առնում, հայում վերստին,
Խոնարհվում ու քարանում:

Եթե կարողանար, կինս անպայման կընկերակցեր ինձ իմ երեկոյան զբոսանքի ժամանակ, քանի որ նրա բազում սերերից մեկն էլ պոեզիան էր: Թոմաս, Ուիթմեն, Էլիոտ, Շեքսպիր և սաղմոսների թագավոր Դևիդ: Պոեզիայի ծառաները, լեզու քերթողները: Երբ հետ եմ նայում, զարմանում եմ՝ որքան եմ տարված եղել պոեզիայով, բայց հիմա երբեմն զղջում եմ դրա համար: Պոեզիան չքնաղ գույներ է հաղորդում կյանքին, բայց և անասելի մեծ տխրություն է բերում իր հետ, և հիմա եմ հասկանում, որ իմ տարիքում պոեզիան լավագույն ընտրությունը չէ: Մարդն իր վերջին օրերը պետք է արևի ջերմությունը վայելի, ոչ թե ինձ պես լամպի լույսի տակ բանաստեղծություններ կարդա:

Քստքստացնելով մոտենում եմ և նստում նրա մահճակալի կողքին դրված բազկաթոռին: Մեջքս ցավում է: Հարյուրերորդ անգամ հիշեցնում եմ ինքս ինձ, որ պետք է նոր բարձ խնդրեմ այս աթոռի համար: Մեկնում եմ ձեռքս ու բռնում նրա նուրբ ու ոսկրացած ձեռքը: Ի պատասխան՝ նա ցնցվում է, բայց հետզհետե ընտելանում է ու մատներով քնքշորեն սկսում է շոյել ձեռքիս ափը: Արդեն սովորել եմ, որ առաջինը նա պետք է խոսի: Եվ այդպես էլ օրերս անցնում են լռության մեջ, մինչև արևը մայր կմտնի, և մնում եմ ձեռնունայն, անլուր նրանից:

Մի քանի րոպե անց նա վերջապես շրջվում է դեպի ինձ: Կրկին լալիս է: Ժպտում եմ, բաց թողնում նրա ձեռքն ու գրպանիցս թաշկինակ հանելով՝ սրբում նրա արցունքները: Նա աչքը չի կտրում ինձնից. տեսնես՝ ի՞նչ է մտածում:

- Սքանչելի պատմություն էր:

Սկսում է անձրևել: Մանրիկ կաթիլները զգուշորեն թակում են պատուհանը: Կրկին բռնում եմ նրա ձեռքը: Երևում է՝ լավ օր է սպասվում, շատ լավ օր: Հրաշք օր: Անկախ ինձնից՝ ժպիտ է հայտնվում դեմքիս:

- Այո,- ասում եմ նրան:

- Դո՞ւք եք գրել այն,- շշնջում է նա, ինչպես մեղմ զեփյուռն է տարածում տերևների թաքուն սոսափը:

- Ես եմ գրել,- պատասխանում եմ:

Նա շրջվում է դեպի մահճակալի կողքին դրված սեղանիկը, որի վրա թղթե փոքր բաժակներով դրված են մեր դեղահաբերը՝ իմ ու նրա: Ծիածանի գույներով հաբեր են, այնպես որ, հազիվ թե մոռանանք ընդունել դրանք: Իմ բաժինը նույնպես նրա սենյակ են բերում, թեև արգելված է:

- Ծանոթ պատմություն է, գուցե առաջին անգամ չեմ լսում:

- Առաջին անգամ չէ, այո,- ասում եմ նորից ու նորից, ինչպես միշտ:

Սովորել եմ համբերատար լինել:

Նա սկսում է ուսումնասիրել դիմագծերս: Նրա աչքերը օվկիանոսի ալիքների պես կանաչ են:

- Այն ինձ ստիպում է ավելի քիչ վախենալ,- ասում է նա:

- Գիտեմ,- գլխով եմ անում:

Նա կրկին շրջվում է: Ես համբերատար սպասում եմ: Նա բաց է թողնում ձեռքս ու վերցնում է ջրով լի բաժակը, որ դրված է հաբերով բաժակի կողքին՝ սեղանիկի վրա: Մի կում խմում է ջրից:

- Իրակա՞ն պատմություն է,- նա կիսանստում է իր անկողնում և մի կում էլ ջուր խմում. ուժերը դեռ հերիքում են,- նկատի ունեմ՝ ճանաչո՞ւմ էիք այդ մարդկանց:

- Այո,- ասում եմ հերթական անգամ:

Կարող եմ ավելին ասել, բայց, ինչպես միշտ, լռում եմ: Տարիները չեն կարողացել խլել նրա գեղեցկությունը: Նա շարունակում է հարցեր տալ. հարցնում է այն, ինչ առանց այդ էլ ակնհայտ է:

- Իսկ ո՞ւմ հետ ամուսնացավ, ի վերջո, մեր հերոսուհին:

Պատասխանում եմ.

- Նրա հետ, ում ճիշտ էր համարում:

- Եվ ո՞ւմ հետ:

Ժպտում եմ:

- Շուտով կիմանաք,- ասում եմ կամացուկ,- օրն առջևում է, դեռ կիմանաք:

Նա լավ չի հասկանում՝ ինչ եմ ուզում ասել, այնուամենայնիվ այլևս հարցեր չի տալիս: Բայց տեղը չի գտնում, չգիտի՝ ինչպես ձևակերպի հաջորդ հարցը: Ի վերջո որոշում է սպասել հարմար պահի և ձեռքը մեկնում է դեղահաբերին:

- Սա ի՞մն է:

- Ոչ, այս մեկն է,- պատասխանում եմ ու ձգվելով դեպի նրան հրում իր հաբերը. նույնիսկ բաժակը բռնել չեմ կարող, մատներս չեն ծալվում:

Նա ձեռքն է առնում թղթե բաժակն ու նայում հաբերին: Նրա հայացքից երևում է, որ նա գաղափար անգամ չունի՝ ինչի համար են դրանք: Երկու ձեռքով մի կերպ վերցնում եմ բաժակս և հաբերը դատարկում բերանիս մեջ: Նա հետևում է ինձ: Այսօր պայքարելու կարիք չկա: Ուսերիցս բեռ է ընկնում: Բարձրացնում եմ թեյիս բաժակը ծաղրական մի շարժումով, ասես պատրաստվում եմ կենաց ասել, բայց ընդամենը ուզում եմ՝ թեյը մաքրի բերանումս մնացած ավազահամը: Թեյն արդեն հովացել է: Իսկ նա հաբերը ջրով է խմում:

Պատուհանից այն կողմ դայլայլ է լսվում. երկուսս էլ շրջվում ենք դեպի ձայնը: Որոշ ժամանակ լուռ վայելում ենք, բայց հետո թռչնակը լռում է, և կինս հառաչում է:

- Պետք է մի բան էլ հարցնեմ,- ասում է:

- Հարցրեք՝ ինչ ուզում եք, կփորձեմ պատասխանել:

- Դժվար է այդ մասին խոսել:

Նա ինձ չի նայում, և ես չեմ կարողանում տեսնել նրա աչքերը: Այդպես նա թաքցնում է ինձնից իր մտքերը: Կան բաներ, որ երբեք չեն փոխվում:

- Կարող եք չշտապել,- ասում եմ:

Գիտեմ՝ ինչ է նա հարցնելու:

Վերջապես նա հայացքն ինձ է դարձնում ու նայում ուղիղ աչքերիս մեջ: Փորձում է ժպտալ, քնքշորեն, ինչպես երեխայի կժպտաս, այլ ոչ թե սիրեցյալիդ:

- Չեմ ուզում վիրավորել Ձեզ, որովհետև Դուք այնքան սիրալիր եք իմ նկատմամբ, բայց...

Լուռ սպասում եմ: Վախենամ՝ նրա խոսքերը ցավ կպատճառեն ինձ, վերք կհասցնեն սրտիս ու սպի կթողնեն:

- Ո՞վ եք Դուք:

Երեք տարի է արդեն, ինչ ապրում ենք Քրիքսայդ խնամքի կենտրոնում: Այստեղ գալը կնոջս որոշումն էր, որովհետև այն հեռու չէր մեր տնից, բացի դրանից էլ, նա կարծում էր՝ այսպես ավելի հեշտ կլինի ինձ համար: Տունը վարձակալության հանձնեցինք, որովհետև ոչ ես, ոչ էլ կինս չկարողացանք հաշտվել այն վաճառելու մտքի հետ: Ինչ-որ փաստաթղթեր ստորագրելուց հետո ողջ կյանքի ընթացքում վաստակած ազատության սահմանափակման դիմաց ստացանք հնարավորություն ապրելու և մեռնելու այստեղ:

Կինս ճիշտ որոշում կայացրեց, իհարկե: Ես միայնակ գլուխ չէի հանի, որովհետև տկարությունն ինձ էլ չշրջանցեց: Մեր կյանքն ավարտին է մոտենում, ժամացույցի սլաքներն են անգամ այդ մասին հուշում: Օրեցօր ավելի բարձր: Հետաքրքիր է՝ միայն ե՞ս եմ լսում այդ ձայնը:

Ցավը շանթում է մատներս ու հիշեցնում, որ այստեղ գալուց ի վեր մեր մատները չեն հյուսվել իրար: Տխուր է, բայց դա իմ մեղքն է, ոչ թե նրա: Գրողի տարած ռևմատոիդ արթրիտը: Ձեռքերս այլանդակվել են ու գրեթե միշտ դողում են, երբ արթուն եմ: Երբ նայում եմ դրանց, ուզում եմ՝ կտրեն, ազատեն ինձ այդ անվերջանալի տենդին հետևելուց, բայց այդ դեպքում ես չեմ կարողանա անել այն

չնչին բաներն անգամ, որ պարտավոր եմ անել: Ի՞նչ է մնում ինձ անել. միայն հաշտվել ճանկերիս հետ, ինչպես երբեմն սիրում եմ անվանել, ու չնայած ցավին՝ դրանց մեջ առնել նրա ձեռքերն ու ոչ մի դեպքում բաց չթողնել, որովհետև հենց դա է նրա ուզածը:

Թեև Աստվածաշունչն ասում է, որ մարդը կարող է ողջ լինել մինչև 120 տարի, միևնույն է, ես չեմ ուզում ապրել այդքան: Եթե նույնիսկ ցանկություն էլ լիներ, հազիվ թե մարմինս դիմակայեր այդքան: Հիվանդությունը խժռում է ինձ ներսից ու դրսից, քայքայում, սպանում բջիջ առ բջիջ: Ձեռքերիցս օգուտ չկա, երիկամներս դադարում են գործել, իսկ սիրտս ամեն ամսվա հետ ավելի թույլ է զարկում: Իսկ ամենասարսափելին այն է, որ կրկին քաղցկեղ ունեմ: Այս անգամ շագանակագեղձի: Սա աներևույթ թշնամու հետ իմ երրորդ գոտեմարտն է, որն ի վերջո տանուլ կտամ, թեև ոչ ավելի վաղ, քան ինքս կհամարեմ, որ ժամանակն է: Ի տարբերություն ինձ՝ բժիշկներն անհանգստանում են իմ վիճակի համար, իսկ ես մտահոգվելու ժամանակ չունեմ կյանքիս աղջամուղջին:

Մեր հինգ երեխաներից չորսը դեռևս ողջ են, ու թեև նրանց համար դժվար է այստեղ գալը, բայց, միևնույն է, նրանք հաճախ են այցելում մեզ: Եվ ես այնքա՜ն շնորհակալ եմ: Իսկ երբ այստեղ չեն, միևնույն է, նրանցից յուրաքանչյուրի պատկերը միշտ աչքերիս առջև է, ողջ ընտանիքիս պատկերը, մեր ամեն մի ժպիտն ու արցունքը: Սենյակիս պատերը տասնյակ նկարներ են զարդարում: Երեխաներս իմ ընծան են այս աշխարհին. ես հպարտ եմ այն ժառանգությամբ, որ թողնում եմ: Տեսնես՝ կինս տեսնո՞ւմ է նրանց երազում, ի՞նչ է մտածում նրանց մասին կամ արդյոք երազներ տեսնո՞ւմ է առհասարակ: Այնքա՜ն բան կա նրա հետ կապված, որ ես այլևս չեմ հասկանում:

Հետաքրքիր է՝ հայրս ինչ կարծիք կունենար ապրածս կյանքի մասին ու ինչ կաներ նա իմ փոխարեն: Հիսուն տարի է, ինչ նա չկա, նրանից միայն աղոտ հիշողություն է մնացել: Չեմ կարողա-

նում հիշել անգամ՝ ինչպիսին էր նա. դեմքն այնքան մութ է, ասես պայծառ լույս է նրա թիկունքում:

Չգիտեմ՝ հիշողությունս է դավաճանում, թե պարզապես ժամանակն է սրբել, տարել նրա պատկերը: Միայն մի լուսանկար է պահպանվել նրանից, այն էլ սաստիկ խունացած: Տասը տարի հետո այդ նկարի վրայից էլ կչքանա հորս պատկերը, ու դրա հետ միասին կչքանամ ես էլ, իսկ նրա մասին հիշողությունը կջնջվի ավազին թողած երկտողի պես: Եթե օրագրերս չլինեին, պատրաստ կլինեի երդվելու, որ երկու անգամ ավելի քիչ եմ ապրել, քան իրականում: Կյանքիս մի մասն ասես ջնջված լինի հիշողությունիցս: Նույնիսկ հիմա, երբ հատվածներ եմ կարդում, ինքս ինձ հարց եմ տալիս՝ մի՞թե ես եմ եղել այն մարդը, որ գրի է առել դրանք, որովհետև ինձ հետ պատահած իրադարձությունները չեմ կարողանում հիշել: Հետաքրքիր է՝ ո՞ւր են չքվել այդ հիշողությունները:

- Անունս,- ասում եմ,- Դյուք է:

Միշտ էլ Ջոն Ուեյնի երկրպագուն եմ եղել:

- Դյուք,- կրկնում է նա շշուկով՝ խոժոռելով ճակատն ու լուրջ հայացքով չափելով ինձ,- Դյուք...

- Այո,- ասում եմ,- Ձեր կողքին եմ:

«Եվ միշտ կլինեմ»,- մտածում եմ, բայց չեմ բարձրաձայնում:

Իմ պատասխանը ստիպում է նրան շիկնել: Աչքերից սկսում են արցունքներ գլորվել: Սիրտս ցավում է նրա համար, և արդեն հազարերորդ անգամ մտածում եմ, թե ինչով կարող եմ օգնել նրան:

- Ներողություն եմ խնդրում,- ասում է նա,- բայց բոլորովին չեմ հասկանում՝ ինչ է կատարվում ինձ հետ այս պահին: Ոչինչ չեմ հիշում: Նույնիսկ Ձեզ: Երբ լսում եմ Ձեզ, ինձ թվում է՝ գիտեմ Ձեզ, բայց չեմ կարողանում հիշել: Անգամ սեփական անունս չեմ հիշում,-

նա սրբում է արցունքներն ու աղերսում,- օգնեք ինձ, Դյուք, օգնեք հիշել՝ ով եմ: Կամ գոնե ով եմ եղել: Կորցրել եմ ինձ:

Ողջ հոգով նետվում եմ նրան օգնելու, բայց ստում եմ և թաքցնում եմ նրա իսկական անունը, ինչպես և իմը: Պատճառ ունեմ այդպես վարվելու:

- Հաննա է Ձեր անունը, Դուք սիրահարված եք կյանքին, իսկ երջանիկ է նա, ով իր կյանքում բախտ է ունեցել վայելելու Ձեր ընկերությունը: Դուք անուրջ եք, երջանկության մարմնացում, իսկական նկարիչ, որի կտավները գերել են հազարավոր սրտեր: Դուք լեցուն կյանք եք ապրել, ոչ մի բանի կարիք չեք ունեցել, որովհետև անհրաժեշտ ամեն բան գտնելու համար բավական է եղել միայն հայացք գցել դեպի ներս: Բարի եք ու հավատարիմ և ունակ եք տեսնելու գեղեցիկն այնտեղ, որտեղ մյուսները ոչինչ չեն տեսնում: Ձեզնից անվերջ կարելի է սովորել՝ ինչպես նկատել գեղեցիկը: Եվ, ի վերջո, Դուք երդվյալ երազող եք:- Ես մի պահ լռում եմ՝ շունչս պահելով, ապա ավելացնում,- Հաննա, Դուք պատճառ չունեք Ձեզ կորցնելու, որովհետև.

Ոչինչ այս կյանքում չի կորսվում անդարձ,
Ոչ ծնունդ, ոչ գոյ, ոչ փեսիլ, հենց այնպես՝ հանկարծ...
Ոչ կյանք, ոչ ուժ, ոչ աչքի փեսած...
Իսկ մարմինը՝ հեղգ, սառը, զառամյալ,
Երբեմնի կրակն է, միայն մոխրացած,
Ու երբ ժամը գա,
Դեռ նոր լույսով է բռնկվելու դարձյալ:

Իմ խոսքերը նրան մտածելու տեղիք են տալիս: Լռությունը ստիպում է ինձ նայել պատուհանից դուրս. անձրևը դադարել է: Արևի լույսն է սկսում թափանցել սենյակ:

- Ձեր տողերն են,- հարցնում է:

- Ոչ: Ուոլթ Ուիթմենն է հեղինակը:

- Ո՞վ է նա:

- Բառերի հավերժ սիրահար, մտքերին մարմին տվող է նա:

Նա ոչինչ չի ասում: Լուռ նայում է ինձ այնքան, մինչև մեր շնչառությունը դառնում է ներդաշնակ: Շունչ: Արտաշունչ: Շունչ: Արտաշունչ: Խոր շունչ, դանդաղ արտաշունչ: Տեսնես՝ գիտի՞ արդյոք, որ թաքուն հմայվում եմ իրենով:

- Մի քիչ էլ կմնա՞ք ինձ հետ,- վերջապես հարցնում է:

Ժպտում եմ ու գլխով անում: Նա նույնպես պատասխանում է ժպիտով: Քնքշությամբ բռնում է ձեռքս ու ձգում դեպի իրեն: Աչքը չի կտրում այլանդակված մատներիցս ու մեղմորեն շոյում է կոշտացած հանգույցները: Մինչև հիմա հրեշտակային ձեռքեր ունի նա:

- Եկեք,- ասում եմ՝ մեծ դժվարությամբ կանգնելով,- գնանք զբոսնելու: Օդը թարմ է, թռչուններն էլ մեզ են սպասում: Սքանչելի օր է:

Վերջին բառերն արտաբերելիս հայացքս չեմ կտրում նրանից:

Նա շիկնում է, և ես վերստին ինձ երիտասարդ եմ զգում:

Նա մեծ հռչակ էր վայելում, անխոս: Նրան քսաներորդ դարի՝ հարավի լավագույն նկարիչներից էին համարում, իսկ ես հպարտ էի և հպարտ եմ նրանով: Այն դեպքում, երբ ամենապարզ քառատողն անգամ մեծ դժվարությամբ էր տրվում ինձ, կինս կարողանում էր կերտել գեղեցիկը նույնքան հեշտությամբ, որքան Արարիչը՝ երկիրը: Նրա կտավները զարդարում են աշխարհի տարբեր պատկերասրահների պատերը. դրանցից միայն երկուսն եմ պահել ինձ մոտ: Ամենաառաջինը և ամենա-

վերջինը: Այդ կտավներն իմ սենյակում են կախված և լցնում են ուշ երեկոներս. ես նստում եմ ու երկար նայում դրանց, երբեմն էլ արտասվում եմ, չգիտես ինչու:

Եվ այդպես անցան տարիներ: Մենք ապրում էինք, աշխատում, արարում, երեխաների դաստիարակությամբ զբաղվում, սիրում իրար: Հիշողությունների պես լուսանկարներն եմ թերթում. Սուրբ Ծնունդ, ընտանեկան ճամփորդություններ, ավարտական երեկոներ, հարսանիքներ: Լուսանկարների միջից ինձ են ժպտում մեր թոռների ուրախ մռութիկները: Ահա և մենք, ժամանակի հետ ճերմակում են մեր մազերը, ու ամեն նոր լուսանկարի հետ ավելի խոր խորշոմներ են հայտնվում մեր դեմքերին: Մի ամբողջ կյանք է հառնում աչքերիս առաջ, թվում է՝ սովորական կյանք, բայց որքա՜ն յուրահատուկ՝ մեզ համար:

Մենք չէինք կարող կանխատեսել ապագան, իսկ կա՞մ մեկը, որ կարող է: Ես իմ ծերությունն այսկերպ չէի պատկերացնում: Իսկ ինչպե՞ս էի պատկերացնում: Թոշակ: Այցելություններ թոռներիս: Գուցե ավելի շատ ճանապարհորդություններ: Կինս շատ էր սիրում ճանապարհորդել: Ինչ-որ նոր հոբբի կգտնեի ինձ համար, չգիտեմ, երևի նավերի մոդելներ կպատրաստեի: Շշերի մեջ: Փո՛քր, ամեն մի դետալը՝ մտածված: Այս ձեռքերով վաղուց պետք է մտքիցս հանեի այդ ամենը: Բայց ես չեմ դառնանում:

Կյանքը, անկասկած, չի կարելի չափել վերջին տարիներով: Ափսոս, որ ավելի շուտ չեմ հասկացել՝ ինչ ավարտ է սպասում մեզ: Երբ հետ եմ նայում, ամեն ինչ այնքան ակնհայտ է թվում: Բայց այն ժամանակ կնոջս անսովոր պահվածքն ինձ համար բացատրության կարիք չուներ: Թվում էր՝ ի՞նչ կա որ, ընդամենը մոռացել է՝ որտեղ է թողել բանալիները, ո՞վ չի մոռանում: Հարևանի անո՞ւնն էր մոռանում: Բայց չէ՞ որ հարևանն օտար մարդ է: Երբեմն չեկագրքույկում սխալ տարեթիվ էր գրում: Բայց ես այդ

ամենը դասում էի սովորական սխալների շարքը, որ մարդ թույլ է տալիս, երբ միտքն այլ բաներով է զբաղված:

Եվ միայն երբ կնոջս տարօրինակ պահվածքն ակնհայտ դարձավ, սրտումս բույն դրեց կասկածը: Արդուկը՝ սառնարանում, հագուստը՝ սպասք լվացող մեքենայում, գրքերը՝ գազօջախում: Ու նման շատ այլ դեպքեր: Իսկ առաջին անգամ սարսափեցի, երբ գտա կնոջս տնից երեք թաղամաս այն կողմ. մեքենայի անիվն էր ծակվել, և նա երեխայի պես լաց էր լինում ու պատկերացում չուներ՝ ինչպես կարող էր տուն հասնել: Նա նույնպես սաստիկ վախեցած էր, քանի որ երբ թակեցի մեքենայի պատուհանը, նա շրջվեց ու ասաց. «Ա՛հ, Աստվա՛ծ իմ, ի՞նչ է կատարվում ինձ հետ: Խնդրում եմ, օգնի՛ր ինձ»: Կուրծքս սեղմվեց, բայց ես դեռ հույս ունեի, որ ամեն ինչ այնքան էլ վատ չէր:

Վեց օր անց մենք բժշկի այցելեցինք, և կինս մի շարք անալիզներ հանձնեց: Ես դրանցից գլուխ չէի հանում, ասենք՝ հիմա էլ բան չի փոխվել: Գուցե պատճառն այն է, որ պարզապես չեմ ուզում ոչինչ իմանալ: Բժիշկ Բարնուելը գրեթե մեկ ժամ զննում էր նրան: Հաջորդ օրը նորից գնացինք հիվանդանոց: Կյանքիս ամենաերկար օրն էր: Թերթում էի ամսագրերն առանց կարդալու, փորձում էի լուծել գլուխկոտրուկները, որոնք անզոր էի հասկանալու: Վերջապես բժիշկ Բարնուելը երկուսիս էլ կանչեց իր աշխատասենյակ և խնդրեց նստել: Կինս ամուր բռնել էր ձեռքս, իսկ իմ ձեռքերը վախից դողում էին. այսօրվա պես հիշում եմ:

- Ցավում եմ, որ նման լուր պետք է հայտնեմ Ձեզ,- սկսեց բժիշկ Բարնուելը,- բայց, ամենայն հավանականությամբ, Ձեզ մոտ Ալցհայմերի հիվանդություն է զարգանում:

Գիտակցությունս մթագնեց. լուսավոր էր թվում միայն մեր գլխավերևում կախված լամպը: Բժշկի խոսքերն արձագանքեցին գլխումս. «*Ձեզ մոտ Ալցհայմերի հիվանդություն է զարգանում...*»:

Աշխարհը փլվում էր աչքերիս առաջ: Ես միայն զգացի՝ ինչպես Էլլին սեղմվեց ինձ ու գրեթե անձայն շշնջաց. «Ա՛հ, Նո՛յ... Նո՛յ...»:

Եվ երբ արցունքները սկսեցին գլորվել աչքերիցս, կրկին այդ անունը շանթեց միտքս... *Ալցհայմեր...*

Անողոք հիվանդություն, անապատի պես դատարկ ու անկյանք... հոգիների, սրտերի ու հիշողությունների հափշտակիչ: Կինս հեկեկում էր՝ կրծքիս սեղմված, իսկ ես չգիտեի՝ ինչ բառերով սփոփեմ նրան: Ինձ մնում էր միայն ամուր գրկել նրան ու օրորել հետ ու առաջ, հետ ու առաջ:

Բժիշկը մռայլ տեսք ուներ: Նա լավ մարդ էր, և նրա համար իսկապես դժվար էր այդ լուրը հայտնելը: Նա իմ կրտսեր որդուց էլ երիտասարդ էր, ուստի նրա ներկայությամբ ես ինձ ավելի ծեր զգացի: Հոգիս այլայլված էր, սերս՝ դողդոջուն, իսկ գլխումս անվերջ պտտվում էր.

Ոչ մի խեղդվող մարդ չգիտե՝ ջրից անդին
Որ կաթիլը կխլի իր շունչը վերջին...

Մի իմաստուն բանաստեղծի տողեր են, բայց դրանք սփոփանք չբերեցին հոգուս: Չգիտեմ՝ ինչ կար թաքնված այդ տողերի տակ, ու չգիտեմ՝ ինչու էի հիշել դրանք:

Մենք օրորվում էինք միասին, հետ ու առաջ, և Էլլին՝ իմ անուրջը, իմ հավերժ գեղեցկությունը, արցունքն աչքերին՝ ներում էր խնդրում: Բայց ինչի՞ համար: «Ամեն ինչ լավ կլինի»,- շշնջում էի, բայց ներքուստ վախեցած էի: Այդ պահին ես ինձ այնքա՜ն դատարկ էի զգում, դատարկ, ինչպես մրրիկին դիմակայել փորձող տերևաթափ ծառը: Ոչինչ չունեի առաջարկելու:

Միայն պատառիկներ եմ հիշում բժիշկ Բարնուելի բացատրութ-

յուններից. «Այն քայքայիչ հիվանդություն է, որն ազդում է հիշողության ու անհատականության վրա... չկա որևէ բուժում... Հնարավոր չէ կանխատեսել՝ ինչպես կզարգանա հիվանդությունը... բոլորի մոտ այն տարբեր ընթացք է ունենում... Ցավում եմ, բայց ավելին չեմ կարող ասել... Կլինեն օրեր, երբ ամեն ինչ այնքան էլ վատ չի թվա... ժամանակի հետ, սակայն, հիվանդի վիճակն ավելի կվատթարանա... Ցավում եմ, որ ստիպված եմ հայտնել ձեզ այս լուրը...»:

Ցավում եմ...

Ցավում եմ...

Ցավում եմ...

Բոլորն էին ցավում: Երեխաներս հուսահատ էին, ընկերներս վախենում էին միայն իրենց համար: Չեմ հիշում՝ ինչպես դուրս եկանք բժշկի աշխատասենյակից, ինչպես հասանք տուն: Այդ օրվա հետ կապված հիշողություններս ասես ջնջված լինեն: Այս հարցում կիսում եմ կնոջս բաժին հասած բախտը: Չորս տարի է անցել այդ օրից, և մենք փորձում ենք իրողության հետ հաշտ ապրել, եթե միայն հնարավոր է: Էլլին ամեն ինչ կազմակերպեց, ինչպես հատուկ էր նրան: Նրա որոշումով մենք հեռացանք տնից ու տեղափոխվեցինք այստեղ: Նա կտակ կազմեց և գրավոր հրահանգներ թողեց՝ իր թաղման հետ կապված: Դրանք գրասեղանիս ներքևի դարակում են: Բայց ես ոչինչ չեմ կարդացել: Ամեն ինչ կազմակերպելուց հետո կինս սկսեց նամակներ գրել՝ ընկերներին, երեխաներին, եղբայրներին, քույրերին, զարմիկներին, զարմուհիներին ու հարևաններին: Իսկ վերջին նամակն ինձ էր ուղղված:

Երբեմն, երբ տրամադրություն եմ ունենում, վերընթերցում եմ նամակը, և այն ինձ տանում է դեպի ցուրտ ձմռան երեկոներ, երբ Էլլին նստում էր բուխարու կողքին՝ մի բաժակ գինու ընկերակցությամբ, ու կարդում այն նամակները, որ ես էի գրել նրան տարիներ շարունակ: Նա պահում էր իմ բոլոր նամակները, իսկ հիմա ես եմ

պահում դրանք, որովհետև խոստացել եմ նրան: Էլլին ասաց ինձ, որ ինքս կհասկանամ ինչ անել դրանք: Նա չէր սխալվում. ես սիրում եմ պատառիկներ կարդալ այդ նամակներից, ինչպես կինս էր անում: Նամակներն ինձ նոր հույս են տալիս. կարդում եմ ու հասկանում, որ սերն ու կիրքը տարիք չեն ճանաչում: Նայում եմ Էլլիին հիմա և մտածում, որ երբեք ավելի շատ չեմ սիրել նրան, բայց երբ նորից եմ կարդում նամակները, հասկանում եմ, որ միշտ այդ նույն զգացողությունն եմ ունեցել:

Վերջին անգամ կարդացել եմ դրանք երեք օր առաջ՝ ուշ գիշերով, երբ վաղուց արդեն քնած պետք է լինեի: Արդեն գրեթե ժամը երկուսն էր, երբ մոտեցա գրասեղանիս ու դարակից հանեցի նամակների խունացած հաստ կապոցը: Բացեցի փաթեթը, որն արդեն գրեթե կես դար կյանք էր ապրել, և հանեցի նամակները, որ Էլլիի մայրը երկար ժամանակ թաքցրել էր նրանից, ինչպես նաև դրանից հետո գրվածները: Նամակներ, որոնցում իմ ողջ կյանքն էր զետեղված, իմ սերը և սիրտը: Ժպիտը դեմքիս՝ մերթ մեկն էի հանում կապոցից, մերթ մյուսը, և ի վերջո ընտրությունս կանգ առավ մեր ամուսնության առաջին տարեդարձին գրված նամակի վրա:

Մի հատված կարդացի.

Այժմ, երբ նայում եմ քեզ և տեսնում՝ որքան զգույշ ես, հոգատար, երբ գիտես, որ ներսումդ նոր կյանք է ծնվում, ուզում եմ՝ իմանաս՝ որքան կարևոր ես ինձ համար, և որքան մեծ նշանակություն ունեցավ իմ կյանքում վերջին տարին: Չկա աշխարհում ավելի երջանիկ մարդ, քան ես եմ, սիրում եմ քեզ իմ ողջ սրտով:

Մի կողմ դրեցի նամակն ու կապոցից մեկ ուրիշը հանեցի՝ գրված ձմռան մի ցուրտ երեկո՝ երեսունինը տարի առաջ:

Կողքիդ նստած, մինչ մեր կրտսեր դուստրը երգում է Սուրբծննդյան հերթական դպրոցական ներկայացմանը՝ թեկուզև ընտրելով սխալ նոտաներ, նայում էի քեզ և տեսնում էի այն հպարտությունը, որ կարող է ծնվել միայն այն սրտում, որն ունակ է սիրել անմնացորդ: Նման պահերին ես ավելի քան վստահ եմ, որ չկա աշխարհում ավելի բախտավոր մարդ, քան ես:

Իսկ երբ մահացավ մեր որդին, որ ամենից շատ էր նման իր մայրիկին... ծանր ժամանակներ էին, որոնց միջով ստիպված եղանք անցնել... որքան ցավ կա այս տողերում.

Ցավի ու տխրության պահերին ես միշտ կողքիդ կլինեմ, կբռնեմ ձեռքդ, կօրորեմ քեզ ու կառնեմ ցավդ: Երբ արտասվում ես դո՛ւ, արտասվում եմ ես, երբ ցավում է քո՛ սիրտը, ցավում է ի՛մ սիրտը: Միասին կփորձենք զսպել արցունքի ծովն ու վիատության մեջ անգամ շարունակել մեր ճանապարհը կյանքի ավեր ճանապարհներով:

Որդուս մասին հիշողությունները ստիպեցին մի պահ դադար առնել: Նա ընդամենը չորս տարեկան էր: Ես քսան անգամ ավելի շատ եմ ապրել, քան նա, բայց եթե ինձ հարցնեին, առանց վարանելու կյանքս կտայի, միայն թե նա ապրեր: Սարսափելի բան է զավակիդ մահը տեսնելը, ողբերգություն, որ թշնամուս անգամ չէի կամենա:

Մեծ դժվարությամբ զսպեցի արցունքներս, տխուր մտքերը վանելու համար փորփրեցի նամակներն ու ևս մեկը գտա՝ մեր ամուսնության քսաներորդ տարեդարձին գրված.

Երբ տեսնում եմ քեզ, սիրելի՛ս, առավոտյան՝ ցնցուղ ընդունելուց առաջ կամ քո արվեստանոցում՝ ամբողջովին ներկերի մեջ թա-

թախված, խճճված մազերով ու հոգնած աչքերով, միևնույն է, վստահ եմ, որ աշխարհի ամենագեղեցիկ կինն ես:

Նամակները մեր կյանքի ու սիրո վկան էին, որոնք մերթ ցավոտ հիշողություններ էին արթնացնում, մերթ ջերմացնում հոգիս: Ժամը երեքն էր մոտենում. տասնյակ նամակներ վերընթերցելուց հետո դժվար էր պայքարել հոգնածության դեմ, բայց ես արդեն վերջին էի հասել: Կապոցի ամենաներքևում մի նամակ էր մնում, վերջին նամակը, որ գրել էի Էլլիին, և որն ինձ ստիպեց այլևս կանգ չառնել:

Ծրարից հանելով նամակը՝ երկրորդ թերթը մի կողմ դրեցի և պահելով առաջինը լույսի տակ՝ սկսեցի կարդալ.

Իմ թանկագին Էլլի

Նստած եմ ծածկապատշգամբում ու ականջ եմ դնում ստվերներին. փորձում եմ դրանց հետ կիսել այս լռությունը: Տարօրինակ է, բայց բառեր չեմ գտնում: Թեև քո ու քեզ հետ ապրած կյանքի մասին մտածելիս հիշողությունները միմյանց հերթ չեն տալիս, բայց չգիտեմ՝ արդյոք կարող եմ զետեղել մի ողջ կյանք բառերի մեջ: Ափսոս, բանաստեղծ չեմ, որովհետև միայն բանաստեղծությամբ կարելի է արտահայտել այն, ինչ զգում եմ քո հանդեպ:

Միտքս դեգերում է: Հիշում եմ՝ այսօր առավոտյան սուրճ պատրաստելիս գլխովս անցած մտքերը: Քեյթն ու Ջեյնը խոհանոցում էին, և երբ ներս մտա, երկուսն էլ լռեցին: Ես նկատեցի՝ նրանց աչքերը թաց էին, և առանց բառ անգամ ասելու նստեցի նրանց կողքին՝ սեղանի մոտ, և բռնեցի նրանց ձեռքերը: Եվ գիտե՞ս՝ ինչ տեսա, երբ նայեցի նրանց: Տեսա քեզ՝ այնպիսին, ինչպիսին մեր հրաժեշտի օրն էիր՝ տարիներ առաջ: Նրանք այնքա՛ն նման էին քեզ, չքնա՛ղ, հուզված ու ցավն աչքերում, ասես նրանցից ինչ-որ կարևոր

բան էին խլել: Ու ինքս էլ չհասկանալով՝ ինչու՝ որոշեցի մի պատմությամբ կիսվել երեխաների հետ:

Ջեֆին ու Դևիդին նույնպես կանչեցի խոհանոց, և երբ նրանք արդեն պատրաստ էին լսելու, ես պատմեցի նրանց մեր պատմությունը՝ ինչպես վերադարձար ինձ մոտ տարիներ առաջ: Հիշեցի մեր զբոսանքը և ինչպես քեզ համար ընթրիքին ծովախեցգետիններ պատրաստեցի, և նրանք, ժպիտները շուրթերին, հետաքրքրությամբ լսում էին կանոեով մեր արկածների մասին, թե ինչպես էինք, բուխարու մոտ նստած, վայելում միմյանց ներկայությունը, երբ դրսում մոլեգնում էր փոթորիկը: Պատմեցի նրանց նաև՝ ինչպես հաջորդ առավոտյան հայտնվեց մայրդ ու զգուշացրեց, որ Լոնն այստեղ է գալիս. նրանք նույնքան զարմացած էին, որքան մենք՝ այդ օրը: Եվ այո, ես նույնիսկ պատմեցի նրանց այն, ինչ տեղի ունեցավ երեկոյան, երբ վերադարձար Ռոլի:

Այդ օրը երբեք չի ջնջվել հիշողությունիցս, անգամ այսքան տարիներ անց: Ես կողքիդ չէի, բայց այն, ինչ պատմեցիր հետո, սրիպեց ինձ էլ ավելի հիանալ քեզնով, այն տոկունությամբ, որ սրիպված էիր դրսևորել: Հազիվ թե երբևէ կարողանամ պատկերացնել՝ ինչ էր կատարվում ներսումդ, երբ ներս մտար ու նախասրահում տեսար Լոնին կամ ինչպես կարողացար բառեր գտնել նրան ամեն ինչ բացատրելու համար: Դու ասացիր ինձ, որ երկուսով դուրս եկաք իջևանատնից և նստեցիք հինավուրց եկեղեցու կողքին՝ նստարանին: Լոնը բաց չթողեց ձեռքդ, նույնիսկ երբ ասացիր նրան, որ պետք է մնաս:

Գիտեմ, որ քեզ համար դժվար էր այդ որոշումը նրան հայտնելը: Իսկ Լոնի համար դժվար էր քո որոշումն ընդունելը: Եվ ինչպե՞ս ընդուներ, որ կորցնում է քեզ: Ինչպե՞ս: Նույնիսկ երբ ասացիր նրան, որ երբեք չես դադարել ինձ սիրել և անարդար կվարվեիր, եթե նրան չսիրելով՝ մնայիր նրա հետ, միևնույն է, նա բաց չթողեց

ձեռքդ: Նա վիրավորված ու բարկացած գրեթե մեկ ժամ փորձում էր համոզել քեզ հետ կանգնել որոշումիցդ, բայց երբ պնդեցիր ու ասացիր, որ չես կարող վերադառնալ իր մոտ, նա հասկացավ, որ որոշումդ վերջնական է: Նա պարզապես գլխով արեց, և դուք երկուսով երկար ժամանակ շարունակեցիք լուռ նստած մնալ: Միշտ ինքս ինձ հարց եմ տվել՝ ինչ էր զգում նա՝ կողքիդ նստած: Եվ միշտ մի պատասխան եմ գտնում այդ հարցին. նույնը, ինչ ես էի զգում ժամեր առաջ: Հիշում եմ՝ ասացիր նաև, որ երբ վերջապես Լոնն ուղեկցեց քեզ դեպի քո մեքենան, ասաց, որ ես բախտավոր մարդ եմ: Նա իսկական տղամարդու պես պահեց իրեն, և միայն այդ ժամանակ հասկացա՝ ինչու երկուսիս միջև ընտրությունն այդքան դժվար տրվեց քեզ:

Հիշում եմ՝ երբ վերջացրի պատմությունը, երեխաները շարունակում էին լուռ մնալ, մինչև Քեյթը վերջապես վեր կացավ տեղից ու նետվեց գիրկս: «Ա՛հ, հայրիկ»,- ասաց նա՝ արցունքն աչքերին: Ու թեև պատրաստ էի պատասխանելու նրանց բոլոր հարցերին, բայց ոչ մի հարց չհետևեց: Փոխարենը՝ նրանք ինձ հետ ավելի արժեքավոր բանով կիսվեցին:

Մենք զրուցեցինք ևս չորս ժամ, նրանցից յուրաքանչյուրը խոստովանեց՝ որքան կարևոր ենք եղել մենք՝ երկուսս, նրանց համար: Նրանք պատմեցին ինձ վաղուց մոռացված պատմություններ մեր կյանքից: Իսկ վերջում ես անզոր էի զսպել արցունքներս, որովհետև հասկացա՝ որքան լավ մարդիկ ենք դաստիարակել մենք: Այնքան հպարտ էի նրանցով, հպարտ էի քեզնով և այնքա՛ն երջանիկ մեր ապրած կյանքով: Եվ աշխարհում ոչինչ երբեք չի կարող խլել այդ ամենը: Ոչինչ: Երանի՜ դու էլ ներկա լինեիր և ինձ հետ ապրեիր այդ զգացողությունը:

Երեխաների գնալուց հետո ես նստեցի ճոճաթոռին ու սկսեցի հիշել մեր միասին անցկացրած օրերը: Նման պահերին դու միշտ

ինձ հետ ես, իմ սրտում, և անհնար է պատկերացնել, որ մի ժամանակ այլ կերպ է եղել: Ես չգիտեմ՝ ով կդառնայի, եթե այդ օրը դու չվերադառնայիր ինձ մոտ, բայց կասկած չունեմ, որ կապրեի ու կմեռնեի՝ ափսոսանքը սրտումս: Շնորհակալ եմ, որ ստիպված չեղա ափսոսալ ապրածս կյանքի համար:

Ես սիրում եմ քեզ, Է՛լլի: Քո շնորհիվ է միայն, որ ես այն եմ, ինչ կամ: Դու իմ հույսն ես, երբևէ ունեցած իմ երազանքը, և կարևոր չէ՝ ինչ է պատրաստել մեզ համար ապագան, քեզ հետ անցկացրած ամեն մի օրը կյանքիս լավագույն օրն է: Ես միշտ կլինեմ քոնը:

Իսկ դու, թանկագի՛նս, առհավետ կլինես իմը:

Նոյ

Թերթերը մի կողմ դնելով՝ հիշեցի այն օրը, երբ ծածկապատշգամբում նստած՝ Էլլին առաջին անգամ կարդաց այս նամակը: Մենք նստած էինք կողք կողքի: Մոտենում էր երեկոն, հորիզոնում կարմրին էր տալիս վերջալույսը, և ամռան հերթական օրը դժկամորեն զիջում էր դիրքերը: Երկինքը չէր շտապում սև հագնել. արևի վերջին շողերին հրաժեշտ տալով՝ կրկին փորձում էի որսալ այն կարճ ակնթարթը, երբ վրա է հասնում գիշերը:

Ու հանկարծ այդ պահին հասկացա, որ աղջամուղջն ընդամենը պատրանք է, որովհետև արևը կա՛մ հորիզոնից վերև է, կա՛մ՝ նրանից անդին: Իսկ դա նշանակում է, որ ցերեկն ու գիշերը կապված են միմյանց անտես թելերով. առանց իրար գոյություն չունեն, բայց միաժամանակ չեն կարող հայտնվել: Հիշում եմ՝ անվերջ փորձում էի հասկանալ՝ ինչպե՞ս կարելի է միշտ լինել միասին, բայց հավետ բաժան:

Ու չգիտես ինչու, այդ հարցը ծագեց գլխումս հենց այն ժամանակ, երբ Էլլին կարդում էր իմ նամակը: Հիմա, երբ հետ եմ նայում, հասկանում եմ՝ որքան հեգնանք կար այդ պահի մեջ զետեղված:

Այո, հեգնանք, որովհետև այժմ ես գիտեմ հարցիս պատասխանը: Գիտեմ՝ ինչ է նշանակում լինել ցերեկ ու գիշեր, միշտ միասին, բայց հավետ բաժան:

Ես ու Էլլին նստած ենք վտակի մոտ. այսօր շատ գեղեցիկ է այստեղ: Ինչը կարող է լինել առավել հաճելի կյանքիս այս մռայլ օրերին: Բոլորն են այստեղ՝ թռչունները, բադերը, ընկերներս: Նրանք սահում են սառը ջրի վրայով ու երփնաթույր փետուրներով հպվելով իրենց արտացոլանքին՝ ավելի մեծ են թվում, քան իրականում են: Էլլին նույնպես, շունչը պահած, հետևում է մեր առջև բացված հրաշք տեսարանին, և մենք քայլ առ քայլ նորից ենք սկսում ճանաչել իրար:

- Այնքան հաճելի է Ձեզ հետ զրուցելը: Ձգում եմ, որ դրա կարիքը շատ ունեի, թեև այնքան էլ երկար ժամանակ չի անցել մեր վերջին զրույցից:

Ես անկեղծ եմ, և նա գիտի դա, բայց դեռ զգուշանում է ինձնից: Չէ՞ որ ես անծանոթ մարդ եմ նրա համար:

- Իսկ մենք հաճա՞խ ենք զրուցում,- հարցնում է,- հաճա՞խ ենք նստում այստեղ ու հետևում թռչուններին: Նկատի ունեմ՝ մենք իրար լա՞վ ենք ճանաչում:

- Եվ այո, և՛ ոչ: Ամեն մեկս մեր գաղտնիքներն ունենք, բայց մենք, արդեն երկար տարիներ է, ճանաչում ենք իրար:

Նա նայում է իր ձեռքերին, հետո՝ իմ: Մի պահ մտքերով է տարվում: Նա այնպիսի դիրքով է նստած, որ երիտասարդ Էլլիին է հիշեցնում ինձ: Մենք մեր ամուսնական մատանիները չենք կրում: Դա նույնպես իր պատճառն ունի: Նա հարցնում է.

- Երբևէ ամուսնացած եղե՞լ եք:

Գլխով եմ անում:

- Եղել եմ:

- Ինչպիսին էր Ձեր կինը:

Ես պատասխանում եմ, ինչպես եղել է:

- Նա իմ երազանքների կինն էր: Նրա շնորհիվ է, որ ես այն եմ, ինչ կամ: Նրան իմ գիրկն առնելն ինձ համար ավելի բնական էր, քան սեփական սրտի զարկերը: Նա միշտ իմ մտքերում է: Նույնիսկ հիմա, երբ նստած եմ այստեղ, կրկին նրա մասին եմ մտածում: Նրա նման երկրորդը չկար:

Էլլին նորից լռում է: Ես չգիտեմ՝ ինչպես նա ընդունեց իմ խոսքերը: Վերջապես նա սկսում է խոսել քնքուշ, հրեշտակային ձայնով: Հետաքրքիր է՝ նա զգում է՝ ինչ եմ մտածում այդ պահին:

- Նա մահացել է:

Իսկ ինչ է մահը: Անցնում է մտքովս, իսկ բարձրաձայն ասում եմ.

- Կինս ապրում է իմ սրտում և միշտ կապրի:

- Դուք դեռ սիրում եք նրան, այնպես չէ՞:

- Իհարկե: Բայց ես նաև շատ այլ բաներ եմ սիրում: Սիրում եմ նստել այստեղ Ձեզ հետ: Սիրում եմ կիսել այս գեղեցկությունն ինձ համար կարևոր մարդու հետ: Սիրում եմ հետևել՝ ինչպես է ջրարծիվը նետվում դեպի ջուրը՝ սնունդ հայթայթելու:

Էլլին կրկին լուռ է, հայացքը՝ հեռվին, այնպես որ ես չեմ տեսնում նրա դեմքը: Սովորություններ կան, որ երբեք չեն փոխվում:

- Ինչո՞ւ եք անում սա:

Նրա հարցի մեջ վախ չկա, միայն հետաքրքրություն: Սա արդեն լավ է: Ես գիտեմ՝ նա ինչ նկատի ունի, բայց, միևնույն է, հարցնում եմ.

- Ինչը:

- Ինչո՞ւ եք օրն ինձ հետ այստեղ անցկացնում:

Ժպտում եմ:

- Ես այստեղ եմ, որովհետև հենց այստեղ պետք է լինեմ: Ոչ մի

բարդ բան չկա: Մենք երկուսս էլ լավ ժամանակ ենք անցկացնում: Մի՛ անհանգստացեք, ես Ձեզ հետ եմ անցկացնում իմ ժամանակը, որովհետև ինքս եմ ուզում: Նստում ենք միասին, զրուցում, և ինքս ինձ ասում եմ՝ մի՞թե ավելի հաճելի բան կարող էր լինել:

Նա նայում է աչքերիս մեջ, և մի պահ, ընդամենը մի կարճ ակնթարթ նրա աչքերում փայլ է հայտնվում, իսկ շուրթերին հազիվ նշմարվող ժպիտ է ուրվագծվում:

- Ձեզ հետ հաճելի է, և եթե Ձեր նպատակն իմ հետաքրքրասիրությունը շարժելն էր, ապա ասեմ, որ Ձեզ հաջողվեց: Խոստովանում եմ՝ Ձեզ հետ իսկապես հաճելի է զրուցել, բայց ես ոչինչ չգիտեմ Ձեր մասին: Ես չեմ պնդում, որ պատմեք ինձ Ձեր կյանքի պատմությունը, բայց չեմ հասկանում՝ ինչո՞ւ եք այդչափ խորհրդավոր:

- Մի գրքում կարդացել եմ, որ կանայք սիրում են խորհրդավոր անծանոթների:

- Չպատասխանեցիք իմ հարցին: Ճարպկորեն խուսանավում եք գրեթե բոլոր իմ հարցերից: Իսկ առավոտյան անգամ չասացիք՝ ինչպես ավարտվեց այն պատմությունը, որ կարդում էիք ինձ համար:

Ուսերս եմ թոթվում: Կարճատև լռությունից հետո հարցնում եմ.

- Իսկ դա ճի՞շտ է:

- Ի՞նչը:

- Որ կանանց դուր են գալիս խորհրդավոր անծանոթները:

Նա ծիծաղում է, ապա ինձ պես խուսափում ուղիղ պատասխան տալուց:

- Կարծում եմ՝ որոշ կանանց դուր են գալիս:

- Իսկ Ձե՞զ:

- Ինձ անհարմար դրության մեջ մի՛ գցեք: Մենք այնքան էլ լավ չենք ճանաչում իրար, որ ես պատասխանեմ այդ հարցին:

Նա խաղում է ինձ հետ, և դա ինձ դուր է գալիս:

Մենք լռում ենք և շուրջը նայում: Մի ամբողջ կյանք պահանջվեց, որ մենք սովորենք լռել իրար կողքի: Երևի միայն ծերերն են ունակ նստելու իրար կողքի և հաճույքով կիսելու լռությունը: Երիտասարդներն ավելի տաքարյուն են ու անհամբեր և միշտ խախտում են լռությունը: Եվ իզուր, որովհետև լռությունը մաքուր է: Լռությունը սուրբ է: Այն մտերմացնում է մարդկանց, միայն թե լռել կարող ես լոկ այն մարդու կողքին, որի հետ հոգիդ խաղաղ է: Մեծագույն պարադոքս:

Անցնում է ժամանակ, և մեր շնչառությունը նորից դառնում է ներդաշնակ, ինչպես առավոտյան. խոր շունչ ու խաղաղ արտաշունչ: Մի պահ Էլլին նույնիսկ ննջեց, ինչպես մի մարդ, որ վստահում է իր ուղեկցին: Երիտասարդները հազիվ թե հասկանան՝ որքան երջանկություն կա նման պահերում: Էլլին արթնանում է, և օ, հրաշք:

- Տեսնո՞ւմ եք այն թռչունը:

Լարում եմ տեսողությունս ու նայում նրա մատի ուղղությամբ: Հրաշք է, որ տեսնում եմ. արևի պայծառ լույսի շնորհիվ է:

- Կասպյան որոր է,- ասում եմ ես, և մենք սևեռում ենք մեր ուշադրությունն ու հետևում՝ ինչպես է այն ճախրում Բրայս Քրիքի վրայով:

Եվ հին սովորության համաձայն՝ ձեռքս դնում եմ նրա ծնկին, իսկ նա չի հեռացնում այն:

Էլլին ճիշտ նկատեց, որ ես խուսափում եմ նրա հարցերին պատասխանելուց: Նման օրերին, երբ միայն հիշողությունն է դավաճանում նրան, ես զգույշ եմ իմ խոսքերում, որովհետև վերջին տարիներին լեզվիս անուշադիր սայթաքումներով բազմիցս եմ նրան ցավեցրել և չեմ կարող թույլ տալ՝ այդ ամենը նորից կրկնվի: Ուստի սովորել եմ լեզուս զսպել և պատասխանում եմ միայն ինձ տրված հարցերին, այն էլ ոչ միշտ եմ մինչև վերջ անկեղծ:

Այդ որոշումն ինձ դժվարությամբ է տրվել, որովհետև չգիտեմ՝ արդյունքում շահում եմ, թե պարտվում, բայց այն անհրաժեշտ էր, որովհետև ճշմարտությունը ցավ է պատճառում Էլլիին: Եվ այդ ցավից նրան ազատելու համար ես սովորել եմ լռել: Լինում են օրեր, երբ նա այդպես էլ չի իմանում, որ երեխաներ ունի կամ մենք ամուսնացած ենք: Ծանր է այս փաստի հետ հաշտվելը, բայց ես այլ կերպ չեմ կարող:

Միթե ես անազնիվ եմ Էլլիի նկատմամբ: Գուցե: Բայց ես այլևս չեմ ուզում տեսնել նրան հուսահատ վիճակում, որում նա հայտնվում է, երբ ես թույլ եմ տալիս՝ մեր կյանքի պատմությունն ամբողջ ծանրությամբ ընկնի նրա վրա: Կարո՞ղ էի ինքս կարմրած աչքերով ու դողացող կզակով նայել հայելու մեջ՝ իմանալով հանդերձ, որ մոռացել եմ ինձ համար կարևոր ամեն բան: Չէի կարող, և նա նույնպես չի կարող: Երբ մեր անիծյալ ոդիսականը սկսվեց, ես ամեն ինչ պատմում էի նրան: Նրա կյանքի մասին, մեր ամուսնության, երեխաների մասին: Նրա ընկերների ու աշխատանքի մասին: Հարցերին հետևում էին պատասխանները, ինչպես հեռուստատեսային թոք շոուի ժամանակ:

Սկզբնական շրջանում երկուսիս համար էլ ծանր էր: Ես պատասխանների քայլող պահեստարան էի՝ զրկված ամեն զգացմունքից, ստիպված էի ինձ վրա ընդունել բոլոր հարցերը՝ «ով», «ինչ», «որտեղ», երբ իրականում իմաստ ունեին միայն «ինչուները», որոնց պատասխանը ես չունեի: Էլլին հայացքը հառում էր երեխաների նկարներին, ձեռքերում պտտում վրձինները, որոնք այլևս ոգեշնչման աղբյուր չէին, և կարդում սիրով լցված մեր նամակները, որոնք այլևս ուրախություն չէին բերում նրան: Անցնում էին ժամեր, իսկ նա ավելի էր թուլանում, գունատվում, դառնանում, և օրն ավարտվում էր ավելի վատ, քան սկսվել էր: Ես կորցնում էի մեր օրերը, կորցնում էի նրան և եսասիրաբար թույլ էի տալիս նաև կորցնել ինքս ինձ:

Ահա թե ինչու որոշեցի փոխել ամեն ինչ: Ես դարձա Մագելան կամ էլ Կոլումբոս, սկսեցի բացահայտել մտքի առեղծվածային հեռուները, ու թեև անփույթ ու դանդաղ քայլերով, բայց սովորեցի ու հասկացա՝ ինչ պետք է անել: Սովորեցի այն, ինչ երեխայի համար պարզից էլ պարզ է: Որ մեր կյանքը պարզապես փոքրիկ կյանքերի ամբողջություն է, որոնցից յուրաքանչյուրը մեկ օր է ձգվում: Որ ամեն մի օրը պետք է ապրել՝ զմայլվելով ծաղիկների ու պոեզիայի գեղեցկությամբ, զրուցելով կենդանիների հետ: Որ չկա ավելի լավ օր, քան այն, որն անցկացնում ես՝ զեփյուռի թևին անրջելով ու մայրամուտին հետևելով: Եվ ընդհանրապես, օրը երջանիկ կարելի է համարել, եթե հնարավորություն ունես պարզապես նստելու նստարանին՝ սիրելիիդ կողքին, և ձեռքդ դնելու նրա ծնկին, իսկ եթե բախտդ բերի, նորից թաթախվելու սիրով:

- Ինչի՞ մասին եք մտածում,- հարցնում է նա:

Մթնշաղ է արդեն: Մենք թողել ենք մեր նստարանն ու քստքստացնում ենք մեր կենտրոնի շուրջը գալարվող արահետներով: Նա քայլում է՝ ինձ թևանցուկ, իսկ ես ուղեկցում եմ նրան: Դա նրա առաջարկն էր: Երևում է, ինձ հաջողվել է հմայել նրան: Կամ էլ գուցե նա վախենում է, որ ես կընկնեմ: Ամեն դեպքում ես երջանիկ եմ:

- Ես Ձեր մասին եմ մտածում:

Նա չի պատասխանում, միայն սեղմում է ձեռքս, բայց դա էլ բավական է հասկանալու համար, որ նրան դուր եկավ այն, ինչ ասացի: Միասին անցկացրած տարիները սովորեցրել են ինձ տեսնել այն, ինչ անգամ Էլլին չգիտի իր մասին: Շարունակում եմ.

- Գիտեմ՝ չեք հիշում՝ ով եք, բայց ես հիշում եմ և կասեմ, որ միայն Ձեր ներկայությունն արդեն ինձ ստիպում է ավելի լավ զգալ:

Նա շոյում է ձեռքս ու ժպտում.

- Դուք բարի մարդ եք ու մեծ սիրտ ունեք: Նախկինում նույնպես ինձ լավ եմ զգացել Ձեզ հետ թերևս, ինչպես հիմա:

Մենք շարունակում ենք մեր զբոսանքը լռության մեջ, որն ի վերջո նա է խախտում:

- Ես Ձեզ ասելու բան ունեմ:

- Լսում եմ:

- Ինձ թվում է՝ ես երկրպագու ունեմ:

- Երկրպագո՞ւ:

- Այո:

- Պարզ է:

- Չե՞ք հավատում ինձ:

- Հավատում եմ:

- Զարմանալի չէ:

- Ինչո՞ւ:

- Որովհետև իմ կարծիքով այդ երկրպագուն Դուք եք:

Ես խորհում եմ նրա ասածի շուրջ, մինչ մենք թևանցուկ անցնում ենք բակով և մտնում պարտեզ: Շուրջն ամենուր դաշտային ծաղիկներ են: Ես կանգ եմ առնում: Գունագեղ փունջ եմ հավաքում. կարմիր, վարդագույն, դեղին, մանուշակագույն: Նվիրում եմ նրան, և նա անմիջապես մոտեցնում է փունջը քթին ու աչքերը փակելով՝ ագահաբար ներս առնում անկրկնելի բույրը:

- Սքանչելի ծաղիկներ են,- շշնջում է:

Բոլորը մեզ են հետևում. նրանց համար մենք քայլող հրաշք ենք, համենայն դեպս, լսել եմ, որ այդպես են խոսում մեր մասին: Ինչ-որ իմաստով նրանք ճիշտ են, թեև դա ինձ երջանկություն չի բերում:

- Ուրեմն՝ կարծում եք՝ այդ ե՞ս եմ,- վերջապես հարցնում եմ:

- Այո:

- Ինչո՞ւ:

- Որովհետև ես գտել եմ այն, ինչ թաքցրել էիք:

- Ի՞նչ եք գտել:

- Ահա,- ասում է նա՝ ինձ մեկնելով թղթի մի պատառիկ,- ես գտել եմ սա բարձիս տակ:

Ես կարդում եմ.

Մարմինը պաղում է ցավից կարեվեր,
բայց իմ խոստումը
Չի մարի անգամ մեր կյանքի վերջալույսին,
Նուրբ հպումը՝ սիրո վայելքի բանբեր,
Կդառնա ընկեր համբույրից ծնված իմ վերջին հույսին:

- Այս մեկն է,- հարցնում եմ:

- Սա էլ վերարկուիս գրպանից եմ գտել:

Իմացի՛ր՝ մեր սրտերը հավետ կապված էին իրար,
Ու պետք չէր մեզ էլ ուրիշ աշխարհ,
Արշալույսը սրբում է աչքերիցդ գիշերվա վիշտը,
Ես ծգվում եմ դեպի քեզ ու գտնում իմ սիրտը:

- Պարզ է,- ասում եմ ես:

Արևը սկսում է իջնել, բայց մենք շարունակում ենք զբոսնել: Արծաթագույն աղջամուղջը նախանշում է օրվա ավարտը, իսկ մենք դեռ զրուցում ենք պոեզիայից, որն ինձ օգնում է հերթական անգամ գրավել նրա սիրտը:

Վերադառնում ենք: Սաստիկ հոգնած եմ: Էլլին զգում է դա և կանգնեցնելով ինձ՝ շրջվում է և նայում աչքերիս մեջ: Ես նույնպես շրջվում եմ և հասկանում՝ որքան է ծռվել մեջքս: Մենք հիմա նույն հասակին ենք: Երբեմն անգամ ուրախանում եմ, որ նա չի հիշում ինձ և չի տեսնում՝ որքան եմ փոխվել: Նա աչքը չի կտրում ինձնից:

- Ինչ է պատահել,- հարցնում եմ:

- Չեմ ուզում մոռանալ Ձեզ և այս օրը, ուստի փորձում եմ հիշողությանս մեջ գամել Ձեր պատկերը:

Կհաջողվի՞ դա նրան այս անգամ: Իհարկե, ոչ: Թեև ոչինչ չեմ ասում նրան: Միայն ժպտում եմ, որովհետև նրա խոսքերն այնքա՜ն քաղցր են:

- Շնորհակալ եմ,- ասում եմ:

- Ես իսկապես չեմ ուզում կրկին մոռանալ Ձեզ: Դուք նման չեք մյուսներին: Չգիտեմ՝ ինչ էի անելու առանց Ձեզ այսօր:

Կոկորդս սեղմվում է: Նրա ձայնի մեջ անթաքույց ջերմություն կա, ջերմություն, որով լցվում է սիրտս ամեն անգամ նրա մասին մտածելիս: Ահա թե ինչն է ստիպում ինձ ապրել: Որքա՜ն մեծ է սերս նման պահերին: Այնպես եմ ուզում կրկին ուժեղ լինել ու ձեռքերիս վրա տանել նրան դեպի դրախտ:

- Ոչինչ մի՛ ասեք,- ասում է նա,- եկեք պարզապես ապրենք այս պահը:

Եվ ես ապրում եմ... և զգում եմ ինձ դրախտում:

Նրա հիվանդությունն օրեցօր զարգանում է, թեև Էլլին տարբերվում է մյուս հիվանդներից: Այստեղ ևս երեքը կան, որոնց չի շրջանցել այս հիվանդությունը, և ես անմասն չեմ մնում նաև նրանց կյանքից: Ի տարբերություն Էլիի՝ նրանք Ալցհայմերի հիվանդության զարգացման վերջին փուլերում են և գրեթե ոչինչ չեն հիշում: Նրանք արթնանում են հալյուցինացիաների մեջ ու բոլորովին շփոթված: Նրանք անվերջ նույն բանն են կրկնում: Նրանցից երկուսն այլևս չեն կարողանում ինքնուրույն սնվել և շուտով կլքեն այս աշխարհը: Իսկ երրորդն անվերջ դուրս է գալիս և մոլորվում: Մի անգամ էլ նրան գտան կենտրոնից քառորդ մղոն հեռու՝ մի անծանոթի մեքենայում: Այդ օրից ի վեր նրան կապում են անկողնուց:

Պատահում է՝ այս հիվանդությամբ տառապող մարդիկ չարանում են աշխարհի դեմ, իսկ հաջորդ պահին ասես շփոթված երեխա լինեն՝ տխուր ու մենակ: Նրանք հազվադեպ են ճանաչում բուժանձնակազմին կամ իրենց սիրող մարդկանց: Անողոք հիվանդություն է, ահա թե ինչու է նրանց և մեր երեխաների համար այդքան դժվար այցելության գալ:

Էլլին, իհարկե, նույնպես զերծ չի մնում խնդիրներից: Խնդիրներ, որոնք ժամանակի ընթացքում թերևս ավելի կբարդանան: Առավոտյան նա սաստիկ վախեցած է արթնանում ու անդադար հեկեկում. նրան ոչ մի կերպ չես սփոփի: Նա պայքարում է իր տեսիլքների թզուկների հետ ու անվերջ բղավում, որ չքվեն իր աչքից: Նա սիրով է լոգանք ընդունում, բայց ոչ միշտ է ուտելու ախորժակ ունենում: Նա այնքա՜ն է նիհարել իմ աչքին, և այն օրերին, երբ լավ է զգում, ես ամեն ինչ անում եմ, որ նա լավ սնվի:

Այսքանով Էլլիի և մյուս հիվանդների նմանություններն ավարտվում են: Ահա թե ինչու են բոլորը հրաշք համարում այն, որ նրա վիճակը լավանում է, երբ կարդում եմ նրա համար, թեկուզև խիստ հազվադեպ է պատահում: Որևէ բացատրություն, սակայն, չկա սրան: «Անհնար է,- ասում են բժիշկները,- Ալցհայմերի հիվանդության պարագայում նման բան չի կարող լինել: Նա հիվանդ չէ»: Բայց փաստն այն է, որ անհիծյալ հիվանդությունը ներխուժել է մեր կյանք: Ամեն առավոտ ես համոզվում եմ դրանում: Ճշմարտությունից չես փախչի:

Մյուս կողմից՝ ինչո՞վ բացատրել Էլիի վիճակի փոփոխությունը: Ինչո՞ւ է իմ կարդալուց հետո նա իրեն ավելի լավ զգում: Ես գիտեմ պատճառը, որովհետև պատասխանը սրտումս եմ փնտրում, այլ ոչ թե գիտության մեջ: Բայց բժիշկներն ինձ չեն հավատում: Արդեն չորս անգամ մասնագետների խումբ է ժամանել Չեփըլ-Հիլից պատասխանի հետևից: Ես նրանց ասում եմ. «Դուք պարզապես ոչինչ

չեք կարողանա հասկանալ, եթե միայն ձեր փորձին ու գրքերին ապավինեք»: Բայց նրանք միայն օրորում են գլուխներն ու պատասխանում. «Ալցհայմերի հիվանդության պարագայում հնարավոր չէ զրույց վարել, առավել ևս մեկ օրվա ընթացքում նկատելիորեն լավ զգալ: Մոռացեք այդ մասին»:

Իսկ Էլլիին հաջողվում է հաղթել հիվանդությանը: Ոչ ամեն օր, իհարկե, ոչ հաճախ և, անշուշտ, ավելի հազվադեպ, քան առաջ: Բայց երբեմն ես ունենում եմ այդ երջանկությունը: Եվ նման օրերին նրան միայն հիշողությունն է դավաճանում, ինչպես ամնեզիայի դեպքում: Իսկ հույզերն ու մտքերը կառավարելի են: Եվ այս օրերին ես վստահ եմ, որ ամեն ինչ ճիշտ եմ անում:

Մեր վերադարձին նրա սենյակում մեզ ընթրիքն է սպասում: Նման օրերին բժիշկները թույլ են տալիս միասին ընթրել: Ավելին ինչ կարող եմ խնդրել: Այստեղ աշխատող մարդիկ ամեն ինչի համար հոգ են տանում: Նրանք լավ են վերաբերվում ինձ, և ես անսահման շնորհակալ եմ նրանց:

Սեղանի վրա երկու մոմ կա դրված, իսկ մեղմ երաժշտությունը ներդաշնակ է աղոտ լուսավորությանը: Բաժակներն ու ափսեները պլաստիկատից են. ինչ արած, պետք է ենթարկվենք կանոններին, բայց հոգ չէ: Գրաֆինը լցված է խնձորի հյութով: Էլլին, աչքերը լայն բացած ու շունչը պահած, շուրջն է դիտում:

- Ձեր ձեռքի գործն է:

Գլխով եմ անում, և մենք ներս ենք մտնում: Ձեռքս եմ առաջարկում և ուղեկցում նրան պատուհանի մոտ: Նա ձեռքս բաց չի թողնում, երբ հասնում ենք: Որքա՜ն հաճելի է նրա կողքին կանգնելն ու գարնանային բյուրեղյա երեկոն ըմբոշխնելը: Պատուհանը կիսաբաց է, և այտերիս վրա զգում եմ զեփյուռի խաղը: Եվ մենք դեռ երկար հետևում ենք՝ ինչպես է երկինքը ողողվում լուսնի արծաթագույն լույսով:

- Երբեք նման գեղեցկության ականատես չեմ եղել,- ասում է Էլլին, և ես համաձայնում եմ:

- Ես նույնպես,- ասում եմ, բայց իմ հայացքն այլ հասցեատեր ունի:

Նա հասկանում է՝ ինչ նկատի ունեմ, և նրա շուրթերին ժպիտ է հայտնվում: Մեկ վայրկյան անց նա շշնջում է.

- Ինձ թվում է՝ ես գիտեմ՝ ում է ընտրում Էլլին պատմության վերջում:

- Իսկապե՞ս:

- Այո:

- Եվ ո՞ւմ:

- Նոյին:

- Վստա՞հ եք:

- Միանգամայն:

Ես ժպտում եմ ու գլխով անում.

- Ճիշտ եք. նա վերադառնում է Նոյի մոտ:

Էլլին պատասխանում է իմ ժպիտին: Նա ուրախությունից փայլում է:

Դժվարությամբ հետ եմ քաշում աթոռներից մեկը, նա նստում է, իսկ ես նստում եմ նրա դիմաց: Էլլին սեղանի վրայով մեկնում է ձեռքը, և ես այն իմ ձեռքերի մեջ եմ առնում: Եվ ինչպես տարիներ առաջ, նա մատներով սկսում է շոյել ձեռքս: Ես երկար ժամանակ պապանձված նրան եմ նայում՝ ապրելով ներկա պահը և վերապրելով կյանքիս բոլոր երջանիկ պահերը, որոնք մեկ առ մեկ կենդանանում են հիշողության մեջ ու նորից իրական դառնում: Կոկորդս սկսում է սեղմվել, ու ևս մեկ անգամ գիտակցում եմ՝ որքան եմ սիրում նրան:

- Այնքա՞ն գեղեցիկ եք,- ասում եմ, և ձայնս դողում է:

Էլլիի հայացքը մատնում է նրան. նա հասկանում է՝ ինչպես եմ վերաբերվում իրեն, և ինչ կա թաքնված իմ այդ խոսքերի տակ:

Նա չի պատասխանում: Իջեցնում է հայացքը, և ես չգիտեմ՝ ինչ

է նա մտածում: Ոչ մի նշան, ոչ մի ակնարկ նրա կողմից: Ես քնքշորեն սեղմում եմ նրա ձեռքը: Եվ սպասում: Բոլոր անուրջներս են սպասում, և ես գիտեմ, որ շուտով ականատես կլինեմ հրաշքի:

Եվ հրաշքը տեղի է ունենում:

Մոմերը շարունակում են լուսավորել սենյակը, իսկ Գլեն Միլլերի մեղեդին ջերմացնում է մեր սրտերը: Էլլին հետզհետե հանձնվում է ներսում արթնացող զգացմունքներին: Տաքուկ ժպիտ է ուրվագծվում նրա շուրթերին, ժպիտ, որի համար արժե ապրել: Նա բարձրացնում է մշուշոտ հայացքն ու նայում աչքերիս մեջ: Սեղմում է ձեռքս:

- Դու անկրկնելի ես...- քնքշորեն շշնջում է Էլլին:

Եվ այդ պահին նա կրկին սիրով է լցվում իմ նկատմամբ: Ես վստահ եմ. չէ՞ որ արդեն հազար անգամ եմ ականատես եղել սրան:

Էլլին այլևս ոչինչ չի ասում. կարիք էլ չկա: Նա ինձ է նայում սիրող հայացքով, ինչպես այն ժամանակ, և ես ինձ կրկին լիարժեք եմ զգում: Ես նույնպես ժպտում եմ՝ չթաքցնելով ներսումս արթնացող կիրքը, և մենք լուռ նայում ենք իրար, մինչ մեր սրտերում օվկիանոսի ալիքների պես փոթորկվում են հույզերը: Շուրջս եմ նայում, հետո՝ առաստաղին, այնուհետև նորից Էլլիին, և նրա հայացքը սիրտս ջերմությամբ է լցնում: Եվ հանկարծ ինձ նորից երիտասարդ եմ զգում: Այլևս այն հիվանդ, դողացող, կռացած մեջքով ու կիսակույր ծերուկը չեմ: Ուժեղ եմ ու հպարտ, աշխարհիս երեսին ամենաբախտավոր մարդն եմ, և այդ զգացողությունը ողջ երեկոյի ընթացքում անբաժան կմնա ինձնից:

Մոմերի մեկ երրորդն արդեն այրվել է, և ես որոշում եմ խախտել լռությունը:

- Սիրում եմ քեզ անսահման և հույս եմ փայփայում, որ հիշում ես...,- ասում եմ ես:

- Իհարկե, հիշում եմ,- շշնջում է Էլլին շնչակտուր,- ես միշտ սիրել եմ քեզ, Նո՛յ:

Նոյ, լսում եմ կրկին: *Նոյ*: Անունս անվերջ արձագանքում է ականջներումս: *Նոյ... Նոյ:* Նա գիտի... նա հիշում է՝ ով եմ ես...

Նա հիշում է...

Այնքան չնչին բան է թվում, բայց ինձ համար Աստծո պարգև է դա, և ես նորից հիշում եմ մեր միասին անցկացրած տարիները, որ լավագույնն են եղել իմ կյանքում:

- Նոյ... իմ սիրելի Նոյ...- շշնջում է էլլին:

Եվ ես, որ ոչ մի կերպ չէի հավատում բժիշկների խոսքերին, կրկին ինձ հաղթանակած եմ զգում, թեկուզ մի կարճատև ակնթարթ: Ես ազատվում եմ խորհրդավորության քողից ու համբուրում եմ նրա ձեռքը, մոտեցնում այն այտիս ու շշնջում նրա ականջին.

- Դու լավագույնն ես, որ երբևէ պատահել է ինձ:

- Ա՛հ, Նոյ,- ասում է նա՝ արցունքն աչքերում,- ես նույնպես սիրում եմ քեզ:

Եթե այս գեղեցիկ օրը նման ավարտ ունենար, ես ամենաերջանիկ մարդը կլինեի:

Բայց ամեն ինչ այնքան էլ հեշտ չէ: Վայրկյանները սահում են, և ես Էլլիի դեմքին մտահոգության նշաններ եմ նկատում:

- Ինչ է պատահել,- հարցնում եմ:

- Այնպես եմ վախենում,- շշնջում է նա,- վախենում եմ նորից մոռանալ քեզ: Անարդար է... Ես այլևս չեմ կարող դիմանալ սրան:

Նրա ձայնը դողում է, բայց ես չգիտեմ ինչ ասել: Գիտեմ՝ երեկոն ավարտին է մոտենում, և ես ոչինչ չեմ կարող անել անխուսափելին կանխելու համար: Այս հարցում ես անզոր եմ: Վերջապես ասում եմ նրան.

- Ես միշտ կողքիդ կլինեմ: Այն, ինչ ունենք, ոչ ոք և ոչինչ չի խլի մեզնից:

Նա հասկանում է, որ ես ավելին չեմ կարող ասել, որովհետև ոչ մեկս չենք սիրում դատարկ խոստումներ: Բայց նրա հայացքից հասկանում եմ, որ նա ուզում է ավելին լսել:

Ծղրիդները մեզ են նվիրում իրենց գիշերերգը, և մենք սկսում ենք ընթրել: Երկուսս էլ քաղցած չենք, բայց ես փորձում եմ օրինակ ծառայել, որ Էլլին նույնպես մի բան ուտի: Նա փոքր պատառներ է դնում բերանը և երկար ծամում, բայց այն, որ նա ուտում է, արդեն իսկ ուրախություն է պատճառում ինձ: Վերջին երեք ամսում նա շատ է նիհարել:

Ընթրիքի ավարտին, անկախ իմ կամքից, սկսում եմ լարվել: Գիտեմ՝ պետք է ավելի զվարթ լինեմ, որովհետև այսօր ևս մեկ անգամ համոզվեցի, որ մեր սերը կարող է հրաշքներ գործել: Բայց ես գիտեմ՝ հեռու չէ այն ժամը, երբ կառքը նորից դդմի կվերածվի: Արևն արդեն վաղուց մայր է մտել, և ես ամեն վայրկյան սպասում եմ գողի մոտենալուն՝ քաջ իմանալով, որ ոչինչ չեմ կարող անել նրան կանգնեցնելու համար: Ինձ մնում է միայն նայել Էլլիին ու վայելել վերջին երջանիկ րոպեները՝ ամփոփելով նրանց մեջ խղճուկ կյանքս:

Ամեն ինչ լավ է...

Վայրկյանները սահում են:

Խաղաղ է...

Ես գրկում եմ նրան:

Ոչինչ չկա...

Նա դողում է, և ես սիրո խոսքեր եմ շշնջում նրա ականջին:

Ոչինչ...

Վերջին անգամ եմ շշնջում այս երեկո, որ սիրում եմ նրան:

Եվ վերջ. գողը երևում է:

Միշտ զարմանում եմ՝ որքան արագ է տեղի ունենում ամեն ինչ: Նույնիսկ հիմա, երբ այսքան ժամանակ է անցել: Էլլին դեռ իմ գրկում է, բայց սկսում է արագ թարթել աչքերն ու տարուբերել գլուխը: Ապա շրջվում է ու հայացքը հառում սենյակի անկյունում ինչ-որ անորոշ կետի: Նրա հայացքում տագնապ կա:

Ո՛չ: Հոգիս ճչում է: *Ոչ հիմա: Միայն թե ոչ հիմա... երբ մենք*

այսքան մոտ ենք իրար: Ոչ այսօր: Յանկացած այլ օր պատրաստ եմ, միայն թե ոչ այսօր... Խնդրում եմ: Բառերը խեղդվում են ներսումս: *Այլևս չեմ դիմանա: Անարդար է... Անարդա՛ր է...*

Բայց դարձյալ ամեն ինչ ի չիք է դառնում:

- Այդ մարդիկ,- վերջապես ասում է Էլլին՝ ցույց տալով սենյակի անկյունը,- նրանք ինձ վախեցնում են: Խնդրում եմ, ասա նրանց, որ չնայեն ինձ:

Թզուկները:

Հոգումս դատարկություն է հաստատվում, որը ոչնչով չես լցնի: Շունչս մի պահ կտրվում է, բերանս չորացել է, սիրտս թրթռում է: Վերջ, չեմ սխալվում: Վերջալույս: Երեկոյան հալյուցինացիաները Ալցհայմերի հիվանդության ամենասարսափելի նշաններն են: Ես կրկին կորցնում եմ նրան և չգիտեմ՝ արդյոք էլի հնարավորություն կունենանք իրար սիրելու:

- Այնտեղ ոչ ոք չկա, Էլլի,- ասում եմ ես՝ փորձելով վանել անխուսափելին:

Բայց նա ինձ չի հավատում:

- Նրանք ինձ են նայում:

- Ո՞չ,- շշնջում եմ՝ օրորելով գլուխս:

- Չե՞ս տեսնում նրանց:

- Ոչ,- իմ պատասխանը ստիպում է նրան մի պահ մտածել:

- Ահա, նրանք այնտեղ են,- ասում է նա ու հրում ինձ,- նրանք ինձ են նայում:

Նա սկսում է խոսել ինքն իր հետ, և քիչ անց, երբ փորձում եմ հանգստացնել նրան, նա աչքերը չռում է վրաս:

- Ո՞վ եք Դուք,- բղավում է նա՝ խուճապի մատնված, սկսում է գունատվել,- ի՞նչ գործ ունեք այստեղ:

Էլլին սկսում է վախենալ: Անզորությունից ուզում եմ բղավել: Նա հետ է քաշվում, ձեռքերով փորձում պաշտպանվել ինձնից: Իսկ հետո լսում եմ այն, ինչ վերջնականապես կոտրում է սիրտս:

- Հեռացեք: Հեռու մնացեք ինձնից,- բղավում է նա:

Նա սարսափած հեռու է վանում իրենից թզուկներին՝ մոռանալով իմ ներկայության մասին:

Ես վեր եմ կենում ու մոտենում նրա մահճակալին: Ինձ թույլ եմ զգում արդեն, ոտքերս ցավում են, կողքս է ծակում. նման ցավ առաջին անգամ եմ զգում: Պետք է սեղմեմ կանչի կոճակը, բայց դա իսկական փորձություն է ինձ համար, որովհետև մատներս դողում են ու այնպես են սառել, որ չեմ կարողանում պոկել իրարից, բայց, ի վերջո, ինձ հաջողվում է կանչել քույրերին: Նրանք շուտով այստեղ կլինեն: Քարացել եմ սպասման մեջ, հայացքս չեմ հեռացնում կնոջից:

Տասը...

Տասներկու...

Երեսուն վայրկյան է արդեն անցել, և ես շարունակում են նայել Էլլիին՝ մտքումս վառ պահելով այն պահերը, որ ապրել եմ նրա հետ այսօր: Բայց այդ ողջ ընթացքում նա ոչ մի անգամ չի նայել ինձ, և ես ստիպված եմ հետևել՝ ինչպես է նա պայքարում իր աներևույթ թշնամիների հետ:

Նստում եմ մահճակալի ծայրին՝ մի կերպ դիմանալով մեջքիս ցավին և ձեռքս վերցնելով հուշատետրը՝ սկսում եմ արտասվել: Էլլին ոչինչ չի նկատում: Գիտակցությունն արդեն լքել է նրան:

Հուշատետրից մի քանի թերթ է պոկվում ու ընկնում գետնին: Խոնարհվում եմ ու վերցնում: Այնպես եմ հոգնել: Նորից մնացել եմ մենակ: Երբ քույրերը ներս են մտնում, ստիպված են արդեն հոգ տանել երկուսիս համար: Երևակայական չարքերի վախից դողացող կնոջ և մի ծերուկի, որ իր կյանքից առավել է սիրում նրան և, գլուխն առած ձեռքերի մեջ, անկյունում նստած՝ լուռ արտասվում է:

Երեկոյի մնացած մասն անցկացնում եմ իմ սենյակում: Դուռը կիսաբաց է, և ես տեսնում եմ միջանցքով անցնող մարդկանց, ոմանք՝ անծանոթ, ոմանք՝ ընկերներիցս: Եթե լսողությունս լարեմ,

կլսեմ՝ ինչի մասին են նրանք խոսում. ընտանիք, աշխատանք, հանգիստ: Առօրյա խոսակցություններ, ոչ մի արտասովոր բան, բայց ես նախանձում եմ նրանց, որովհետև նրանք ջանք չեն թափում միմյանց հետ զրուցելու համար: Եվս մեկ մահացու մեղք եմ վերցնում ինձ վրա, գիտեմ, բայց երբեմն ոչինչ չեմ կարող անել դրա դեմ:

Բժիշկ Բարնուելը նույնպես այստեղ է, զրուցում է քույրերից մեկի հետ: Հետաքրքիր է՝ հիվանդներից ում վիճակն է ծանր, որ բժիշկն այս ժամին դեռ տուն չի գնացել: Նա չափազանց շատ է աշխատում: Ես դրա մասին ասում եմ նրան: Ասում եմ՝ պետք է շատ ժամանակ անցկացնել ընտանիքի հետ, որովհետև կգա ժամանակ, երբ նրանք կողքիդ չեն լինի: Բայց նա չի լսում ինձ: Ասում է, որ հիվանդներն իր կարիքն ունեն, ու անհրաժեշտության դեպքում նա պետք է այստեղ լինի: Ասում է՝ այլ տարբերակ չունի: Նա չի հասկանում, որ չի կարող լինել իր հիվանդներին նվիրված լավ բժիշկ և միաժամանակ ընտանիքին նվիրված հայր: Ժամանակը չի բավի երկուսի համար, բայց նա դեռ չի հասկանում դա: Նրա ձայնը մարում է միջանցքում, և ես սկսում եմ մտածել՝ որ մեկի վրա կանգ կառնի նրա ընտրությունը: Կամ էլ գուցե, ցավոք, նրա փոխարեն կյանքն ընտրություն անի:

Նստում եմ պատուհանի մոտ ու հիշում այսօրվա իրադարձությունները: Միաժամանակ երջանիկ ու տխուր օր էր, սքանչելի ու ծանր: Հակասական հույզերս երկար ժամերով գամում են ինձ աթոռին ու ստիպում գրկել լռությունը: Այս երեկո ոչ ոքի համար չեմ կարդացել: Չէի կարող, որովհետև ամեն մի տողը կստիպեր ինձ արտասվել: Միջանցքները հետզհետե դատարկվում են: Միայն պահապանների ոտնաձայներն են լսվում: Ժամը տասնմեկին ծանոթ ոտնաձայներ եմ լսում, որոնց, չգիտես ինչու, սպասում էի:

Կիսաբաց դռան հետևից երևում է բժիշկ Բարնուելը:

- Նկատեցի, որ Ձեր լույսը վառ է: Դեմ չեք, եթե ներս գամ:

- Ոչ,- ասում եմ՝ օրորելով գլուխս:

Նա ներս է մտնում և շուրջը նայելով՝ նստում ինձնից ոչ հեռու:

- Լսել եմ,- ասում է նա,- լավ օր եք անցկացրել Էլլիի հետ:

Նրա դեմքին ժպիտ է հայտնվում: Նա վաղուց է հետևում մեզ և մեր հարաբերություններին: Չգիտեմ՝ արդյոք մենք նրան միայն մասնագիտական տեսանկյունից ենք հետաքրքրում:

- Երևի:

Նա օրորում է գլուխն ու ինձ նայում:

- Ամեն ինչ կարգին է, Նոյ: Լավ տեսք չունեք:

- Ամեն ինչ լավ է: Պարզապես մի փոքր հոգնած եմ:

- Ինչպե՞ս էր Էլլին այսօր:

- Լավ էր: Մենք գրեթե չորս ժամ զրուցել ենք:

- Չորս ժամ: Նոյ... անհավատալի է:

Ես միայն գլխով կարող եմ անել: Գլուխը տարուբերելով՝ նա շարունակում է.

- Երբեք չեմ հանդիպել նման երևույթի և ոչ էլ լսել եմ: Այ թե ինչի է ունակ սերը: Դուք երկուսդ միմյանց համար եք ստեղծված: Նա երևի շատ է սիրում Ձեզ: Այնպես չէ՞:

- Այդպես է,- պարզապես պատասխանում եմ:

- Ի՞նչն է Ձեզ անհանգստացնում, Նոյ: Էլլին ինչ-որ բան է ասել կամ արել, որ վիրավորել է Ձեզ:

- Ո՛չ: Նա սքանչելի էր, ինչպես միշտ: Պարզապես հիմա... ինձ այնքան միայնակ եմ զգում:

- Միայնա՞կ:

- Այո:

- Ոչ ոք միայնակ չէ:

- Ես միայնակ եմ,- շարունակում եմ պնդել և նայելով ժամացույցիս՝ մտածում, որ բժիշկը հիմա պետք է իր տանը լիներ՝ խաղաղ քնած իր ընտանիքի հետ,- ինչպես և Դուք:

Հաջորդ մի քանի օրերն անցան առանց որևէ փոփոխության: Էլլին ոչ մի անգամ չճանաչեց ինձ, իսկ ես, խոստովանում եմ, ուժերս չէի լարում նրա հիշողությունը վերականգնելու համար, որովհետև ժամանակի մեծ մասը մտքերս ինձ տանում էին դեպի հետ՝ միասին անցկացրած վերջին սքանչելի օրը: Ու թեև միշտ ամեն ինչ շատ արագ է վերջանում, բայց դա չխանգարեց, որ ևս մեկ անգամ ճաշակեմ երջանիկ լինելու օրհնությունը:

Իսկ հաջորդ շաբաթ կյանքս քիչ, թե շատ սովորական հունի մեջ մտավ: Եթե կարելի է, իհարկե, ընդհանրապես սովորել նման կյանքի: Ես կարդում էի Էլլիի համար, կարդում էի ընկերներիս համար, թափառում միջանցքներով: Գիշերները պառկում էի՝ աչքերս բաց, իսկ առավոտներս անցկացնում էի տաքացուցչի կողքին նստած: Տարօրինակ է, բայց ես սփոփանք եմ գտնում կյանքիս կանխատեսելիության մեջ:

Միասին անցկացրած օրվանից ութ օր հետո՝ մի զով մշուշոտ առավոտ, ես, սովորության համաձայն, վաղ արթնացա ու գրասեղանիս մոտ նստած՝ սկսեցի թերթել լուսանկարներն ու նամակները, որ գրվել են շատ տարիներ առաջ: Փորձեցի կարդալ: Բայց դժվարությամբ էի կենտրոնանում, որովհետև ուժեղ գլխացավ ունեի, ուստի մի կողմ դրեցի նամակներն ու որոշեցի նստել պատուհանի մոտ ու հետևել՝ ինչպես է ծագում արևը: Մի քանի ժամից Էլլին նույնպես կարթնանար, և ես ուզում էի թարմանալ, որովհետև ողջ օրը կարդալն ավելի կսաստկացներ գլխացավս:

Ես մի քանի րոպե փակեցի աչքերս՝ փորձելով ճնշել գլխիս մերթ ուժգնացող, մերթ տեղի տվող ցավը: Այնուհետև բացեցի դրանք ու սկսեցի նայել հին ընկերոջս՝ պատուհանի տակ գալարվող առվին: Ի տարբերություն Էլլիի՝ ինձ այնպիսի սենյակ են տրամադրել, որտեղից երևում է վտակը, որ մի անգամ չէ, որ գոտեպնդել է ինձ: Պարզապես հրաշք է այս վտակը. արդեն հարյուր հազար տարե-

կան է, բայց ամեն անձրևի հետ ասես նորից է ծնվում: Այդ առավոտ ես շշնջացի նրան՝ վտակին.

- Դու օրհնված ես, ընկերս, ես նույնպես օրհնված եմ, որովհետև ինձ բաժին է հասել քեզ հետ դիմավորելու գալիք օրերս:

Ալիքները մեղմորեն ծփում էին՝ ի նշան համաձայնության: Ծագող արևի գունատ լույսն արտացոլում էր ջրերում այն աշխարհը, որ մենք ենք կիսում: Ես ու վտակը, որ երբեք կանգ չի առնում, վարարում է ու նահանջում: Ջրին նայելը կյանք է տալիս: Մարդն այնքա՛ն բան կարող է սովորել ջրից:

Ես նստած էի աթոռիս: Արևն արդեն ժպտում էր հորիզոնից: Ձեռքս սկսեց ծակծկել: Նախկինում նման բան չէր եղել: Փորձեցի բարձրացնել այն, բայց չկարողացա, որովհետև հենց այդ պահին գլխումս սուր ցավ զգացի, այս անգամ՝ պարզապես անտանելի, ասես մուրճով հարվածեցին գլխիս: Փակեցի աչքերս և ուժեղ սեղմեցի կոպերս: Ձեռքս դադարեց ծակծկել և սկսեց կտրուկ թմրել, ասես դաստակիս շրջանում բոլոր նյարդաթելերս հանկարծ կտրված լինեին: Դաստակս վերջնականապես անշարժացավ, երբ գլխումս նորից բռնկվեց ցավն ու ասես պարանոցովս սահեց ներքև՝ չխնայելով մարմնիս և ոչ մի բջիջ, ինչպես ալիքն է մակընթացության ժամանակ ավերում ամեն բան, որ հանդիպում է իր ճանապարհին:

Ես միանգամից կուրացա, ականջներումս թնդաց որոտը, ասես անմիջապես կողքովս գնացք սլացավ: «Կաթվա՛ծ»,- իսկույն փայլատակեց գլխումս: Ցավը կայծակի պես շանթեց ողջ մարմինս, ու նախքան կկորցնեի գիտակցությունս, աչքերիս առաջ հառնեց՝ ինչպես է Էլլին, անկողնում պառկած, սպասում այն պատմությանը, որ այլևս երբեք չեմ կարդա նրա համար, շփոթված ու մոլորված, բացարձակապես անզոր ու անօգնական: Ինչպես և ես:

«Ա՛հ, Աստվա՛ծ իմ, ինչի՞ համար»,- հասցրի միայն մտածել և կորցրի գիտակցությունս:

Օրեր շարունակ անգիտակից վիճակում էի, իսկ այն հազվադեպ պահերին, երբ գիտակցության էի գալիս, հայտնաբերում էի ինձ՝ սարքավորումներով շրջապատված, որոնցից խողովակներ էին միացված քթիս և կոկորդիս, իսկ մահճակալիս կողքից հեղուկով լցված երկու պարկ էր կախված: Ինձ հասնում էր այդ սարքերի խուլ գվվոցը, որոնք մերթ միանում էին, մերթ անջատվում, իսկ երբեմն էլ չէի հասկանում՝ ինչ ձայներ են արձակում: Դրանցից մեկը ծվծվում էր սրտիս զարկերին համաչափ, և ես, չգիտես ինչու, սփոփանք էի գտնում այդ ձայնի մեջ՝ նորից ու նորից սլանալով դեպի անանց աշխարհ:

Բժիշկներին անհանգստացնում էր իմ վիճակը: Ես տեսնում էի նրանց մտահոգ հայացքները, երբ նրանք մռայլ դեմքով ուսումնասիրում էին ցուցանիշներն ու վերակարգավորում կյանքս պահպանող սարքերը: Նրանք փսփսում էին իրար հետ՝ կարծելով՝ չեմ լսում իրենց: «Կաթվածը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ,- ասում էին նրանք,- հատկապես այս տարիքում»: Եվ մռայլ դեմքով բարձրաձայնում էին իրենց ենթադրությունները. «Խոսելու, շարժվելու անկարողություն, անդամալուծություն»: Հիվանդության պատմությանը ևս մեկ անգամ հայացք գցելուց հետո նրանք հեռացան՝ այդպես էլ չկասկածելով, որ ես լսել եմ նրանց ամեն մի բառը, իսկ սարքերը շարունակեցին գվվալ... Բժիշկների հեռանալուց հետո ես վանեցի բոլոր վատ մտքերը, փոխարենը՝ փորձում էի վառ պահել Էլլիի պատկերը հիշողությանս մեջ: Ողջ հոգով նրան էի ձգտում և ամեն գնով փորձում զգալ նրա ներկայությունը, նրա հպումը, լսել նրա ձայնը, տեսնել նրա դեմքը, և երբ ինձ հաջողվում էր, արցունքները գլորվում էին աչքերիցս, որովհետև չգիտեի՝ կկարողանայի՞ արդյոք նորից գրկել նրան, սիրո խոսքեր շշնջալ, զրուցել նրա հետ, զբոսնել ու կարդալ նրա համար: Ես իմ պատմության ավարտն այսկերպ չեմ պատկերացրել: Ես միշտ հույս եմ փայփայել, որ մենակ չեմ թողնելու Էլլիին: Այսպես չպետք է լիներ:

Եվ այսպես մի քանի օր շարունակ մերթ կիսարթմնի, մերթ անուրջներիս մեջ պայքարում էի այս անարդարության դեմ, մինչև մի մշուշոտ առավոտ Էլլիին տված խոստումս նորից ինձ ուշքի բերեց: Ես բացեցի աչքերս ու հայտնաբերեցի ինձ՝ ծաղիկներով շրջապատված, և նրանց բույրն ավելի շատ թարմություն հաղորդեց ինձ: Ձգվեցի դեպի կանչի կոճակն ու ողջ ուժերս լարելով՝ սեղմեցի այն: Երեսուն վայրկյան անց հայտնվեց բուժքույրը, նրա հետևից էլ՝ բժիշկ Բարնուելը՝ լայն ժպիտը դեմքին:

- Ծարավ եմ,- ասացի խռպոտ ձայնով:

- Բարի վերադարձ,- ի պատասխան՝ ասաց բժիշկը,- գիտեի, որ սա էլ կհաղթահարեք:

Երկու շաբաթ անց ես կարող եմ արդեն դուրս գրվել հիվանդանոցից, թեև կես մարդ եմ դարձել հիմա: Եթե «Կադիլակ» լինեի, անվերջ պտույտներ կգործեի տեղում, որովհետև միայն մի անիվս կպտտվեր. այսպես եմ խոսում, որովհետև այժմ մարմնիս աջ մասն ավելի թույլ է, քան ձախը: Բժիշկներն ասում են՝ բախտս դեռ բերել է, որովհետև կարող էի ողջ մարմնով անդամալույծ դառնալ: Երբեմն ինձ թվում է՝ անուղղելի լավատեսներով եմ շրջապատված:

Իսկ վատ նորությունն այն է, որ այս ձեռքերով ոչ ձեռնափայտից կարող եմ օգտվել, ոչ էլ անվասայլակից ու հավասարակշռությունս պահելու համար սեփական ուրույն քայլվածքն ունեմ: Աջ ոտքս առաջ եմ դնում, ապա ձախը քարշ տալիս աջի հետևից: Քայլող լեգենդի եմ վերածվել: Բոլորի ուշադրությունն ինձ վրա է, երբ դուրս եմ գալիս միջանցքներում դեգերելու: Սրանից դանդաղ հնարավոր չէ: Եվ սա ասում է այն մարդը, որ դեռ կաթվածից առաջ ունակ չէր անգամ կրիայից առաջ անցնելու:

Հիվանդանոցից ուշ երեկոյան եմ վերադառնում: Իսկ երբ հասնում եմ իմ սենյակ, հասկանում եմ, որ քնել չեմ կարող: Խոր շունչ եմ

քաշում և զգում եմ գարնան՝ պատուհանից ներս թափանցած խեն-թացնող բույրը: Ինչ-որ մեկն այն բաց է թողել: Սառը օդը հաճելի թարմություն է հաղորդում մարմնիս: Էվելինը՝ այստեղ աշխատող տասնյակ բուժքույրերից մեկը, որ երեք անգամ երիտասարդ է ինձ-նից, օգնում է նստել պատուհանի մոտ դրված աթոռին, և երբ ուզում է փակել պատուհանը, ես թույլ չեմ տալիս: Դժկամությամբ, բայց հա-մաձայնում է բաց թողնել այն. չի ուզում վիճել ինձ հետ: Լսում եմ՝ ինչպես է բացվում պահարանս, և մեկ վայրկյան անց ուսերս գրկում է տաք սվիտերը: Այդ հոգատարությունը ստիպում է նորից ինձ երե-խա զգալ: Բուժքույրը ձեռքը դնում է ուսիս ու քնքշությամբ սեղմում: Նա լուռ է, և ես գիտեմ, որ նա պատուհանից դուրս է նայում: Երկար ժամանակ անշարժ կանգնած է մնում, ոչինչ չի ասում: Տեսնես՝ ինչ է մտածում: Բայց ես ոչինչ չեմ հարցնում: Վերջապես լսում եմ նրա հա-ռաչը: Ուզում է հեռանալ, բայց մի պահ կանգ է առնում, խոնարհվում ու համբուրում այտս նույն քնքշությամբ, ինչպես թոռնուհիս է համ-բուրում ինձ: Զարմացած նրան եմ նայում:

- Լավ է, որ վերադարձաք,- շշնջում է նա,- Էլլին կարոտել է Ձեզ, բոլորս ենք կարոտել: Անդադար աղոթում էինք Ձեզ համար, որով-հետև առանց Ձեզ ոչինչ առաջվանը չէր:

Նա ժպտում է և շոյում այտս: Ապա դուրս է գալիս սենյակից: Ռո-պեներ անց միջանցքից ականջիս են հասնում սայլակի ճռռոցն ու Էվելինի ձայնը, որ մեկ այլ բուժքրոջ հետ է խոսում: Շուտով նրանց ձայներն էլ են մարում:

Երկինքն այսօր թանաքագույն է ու անաստղ: Ծղրիդների երգը խլացնում է մյուս բոլոր ձայները: Տեսնես՝ ինչ-որ մեկը դրսից տես-նո՞ւմ է ինձ՝ սեփական մարմնի կողմից բանտարկվածիս: Աչքերս ծառեր են որոնում, բակը, նստարանների կողքին ցատկոտող բա-դերի, բայց ոչինչ չի երևում: Կյանքի ոչ մի նշան: Անգամ վտակն է համրացել: Մթի մեջ այն ասես անվերջ ձգվող դատարկություն

լինի: Զգում եմ՝ ինչպես եմ անձնատուր լինում այդ առեղծվածին, որ ժամեր շարունակ գամում է ինձ իմ աթոռին, ու ես անթարթ հետևում եմ՝ ինչպես են ամպերը կախվում ջրի վրա ու հիանում սեփական արտացոլանքով: Ամպրոպ է սպասվում: Եվ հետզհետե երկինքն արծաթագույն է ներկվում, ինչպես աղջամուղջի ժամանակ:

Կայծակը ճեղքում է անձեռակերտ երկինքը, և միտքս նորից հետ է սլանում: Ովքե՞ր ենք մենք, ես և Էլլին: Դարավոր նոճի ու նրա վրա փաթաթված բաղե՞ղ, թե՞ միմյանց կապված շիվ ու տերև, որ չեն կարող ապրել իրարից բաժան: Չգիտեմ: Կայծակի հերթական փայլատակումը լուսավորում է կողքիս սեղանն ու դրա վրա դրված լուսանկարը: Էլլիի իմ ամենասիրելի լուսնակարը: Մի քանի տարի առաջ այն ապակյա շրջանակի մեջ եմ դրել՝ հույս փայփայելով, որ այն հավերժ կյանք կունենա: Ես վերցնում եմ շրջանակն ու մոտեցնում աչքերիս: Երկար ժամանակ չեմ կարողանում հայացքս կտրել դրանից: Էլլին քառասունմեկ տարեկան էր, երբ այս լուսանկարն արվեց: Նայում եմ նկարին ու հասկանում՝ նա երբեք ավելի գեղեցիկ չի եղել: Այնքան հարցեր են կուտակվել սրտումս, բայց գիտեմ՝ լուսանկարը չի կարող պատասխանել դրանց, և ես հուսահատ վերադարձնում եմ այն իր տեղը:

Թեև գիտեմ, որ Էլլիից ինձ ընդամենը մի քանի սենյակ է բաժանում, բայց ես ինձ միայնակ եմ զգում: Այսուհետև ես միշտ մենակ եմ: Այս միտքն ինձ հանգիստ չէր տալիս, երբ պառկած էի հիվանդանոցում, հանգիստ չի տալիս նաև հիմա, երբ նայում եմ պատուհանից դուրս ու հետևում հողմաբեր ամպերի երթին: Թախծում եմ մեզ բաժին հասած բախտի համար՝ հիշելով, որ մեր վերջին ժամադրության ժամանակ այդպես էլ չհամբուրեցի նրա շուրթերը: Գուցե այլևս երբեք չհամբուրեմ: Այս անիծյալ հիվանդությունն անկանխատեսելի է: Ինչո՞ւ են նման մտքեր այցելում ինձ:

Վերջապես կանգնում եմ, մոտենում գրասեղանիս ու վառում լամպը: Չէի կարծում, որ այս պարզ գործողության համար այսքան

ջանք է պահանջվում, ուստի պատուհանի մոտ չեմ վերադառնում: Նստում եմ գրասեղանիս մոտ և ուսումնասիրում դրա վրա դրված լուսանկարները: Ընտանեկան, երեխաների նկարները, նկարներ հանգստյան օրերից: Էլլիի և իմ լուսանկարները: Հիշում եմ միասին անցկացրած ժամանակները՝ երեխաների հետ կամ միայն երկուսով, ու նորից ինձ ինչ-որ հնություն եմ զգում:

Քաշում եմ դարակն ու այնտեղ գտնում տարիներ առաջ Էլլիին նվիրած ծաղիկները՝ թորշոմած ու կապված իրար մի կտոր խունացած ժապավենով: Ծաղիկներն ինձ պես չորացած են ու փխրուն, և դժվար է դիպչել դրանց առանց վնասելու: Էլլին է պահել ծաղիկները: Ես չէի հասկանում՝ ինչու նա դեն չէր նետում դրանք, բայց նա ինձ ուշադրություն չէր դարձնում: Ու երբեմն երեկոյան տեսնում էի Էլլիին՝ չորացած ծաղիկները ձեռքին. նա այնպիսի սրբությամբ էր վերաբերվում փնջին, ասես դրա մեջ էր ամփոփված կյանքի գաղտնիքը: Ա՜խ, կանա՛յք, կանայք:

Քանի որ այս գիշեր հիշողություններն իրենց գիրկն են բացել իմ առաջ, ես փորփրում եմ ամենավերևի դարակն ու կտորե անձեռոցիկի մեջ փաթաթված գտնում իմ ամուսնական մատանին: Չեմ կարող այլևս կրել այն, քանի որ հոդերս ուռել են, իսկ մատներս՝ ծռմռվել: Բացում եմ անձեռոցիկը: Ոչինչ չի փոխվել: Նույն մատանին է ինձ նայում՝ մեր սիրո խորհրդանիշը, մեր սիրո վկան, որի զորությունն անհնար է չզգալ: Եվ ես գիտեմ... գիտեմ, որ ուրիշ մեկը չէր կարող լինել: Գիտեի այնժամ, գիտեմ և հիմա:

- Ես դեռ քոնն եմ, Էլլի, թագուհի՛ս, իմ անմար գեղեցկություն: Միշտ եղել ես և կմնաս լավագույնը իմ կյանքում:

Երանի՜ նա լսեր ինձ: Սպասում եմ որևէ նշանի: Բայց... ոչինչ:

Ժամը տասնմեկն անց կես է: Ես փնտրում եմ նամակը, որ նա գրել էր ինձ: Ես այն կարդում եմ ամեն անգամ, երբ մենակ եմ զգում ինձ: Նամակը գտնում եմ այնտեղ, որտեղ թողել եմ վերջին անգամ:

Մի քանի անգամ ձեռքերումս շուռումուռ տալուց հետո բացում եմ: Ձեռքերս դողում են: Վերջապես սկսում եմ կարդալ.

Սիրելի՛ Նոյ

Գրում եմ քեզ մոմի լույսի ներքո, մինչ դու խաղաղ քնած ես մեր անկողնում, որ մենք կիսում ենք մեր ամուսնության օրից ի վեր: Ու թեև հիմա չեմ լսում քո մեղմ շնչառությունը, բայց գիտեմ, որ այդտեղ ես, և շուտով ես նորից կպառկեմ կողքիդ, ինչպես ամեն գիշեր: Հարմար կտեղավորվեմ կողքիդ ու կզգամ ջերմությունդ, և քո տաք շունչն ինձ կրկին կտանի դեպի անուրջներ, որոնցում ես ապրում եմ իմ կյանքը քեզ պես սքանչելի մարդու հետ:

Մոմի կրակը հիշեցնում է ինձ տարիներ առաջ բուխարու մեջ կայծկլտացող մեկ այլ կրակ, որ ջերմացնում էր մեզ: Հիշո՞ւմ ես՝ ես քո հագուստով էի, դու՝ ջինսե տաբատով: Այդ պահին ես արդեն գիտեի, որ մենք միշտ միասին ենք լինելու, թեև հաջորդ առավոտյան ինձ կասկածն էր տանջում: Իմ սիրտը գերել էր հարավի պոետը, և հոգուս խորքում գիտեի, որ այն միշտ քեզ է պատկանել: Ո՞վ էի ես, որ կասկածի տակ դնեի այն սերը, որ թևածում էր ընկնող աստղերի վրա ու որոտում փշրվող ալիքների պես: Որովհետև այլ կերպ չես կարող նկարագրել այն սերը, որ ծնվել էր մեր մեջ մի ժամանակ ու ապրում է մինչև օրս:

Հիշում եմ այն օրը, երբ վերադարձա քեզ մոտ մորս այցելությունից հետո՝ հաջորդ առավոտյան: Սաստիկ վախենում էի, որովհետև վստահ էի, որ երբեք չես ների ինձ հեռանալուս համար: Երբ դուրս եկա մեքենայից, ողջ մարմնով դողում էի, բայց բոլոր վախերս ի չիք դարձան, երբ ժպիտը դեմքիդ՝ մեկնեցիր ձեռքդ ու պարզապես ասացիր. «Սուրճ չխմե՞նք»: Եվ միասին անցկացրած երկար տարիների ընթացքում գեթ մեկ անգամ չհիշեցիր այդ մասին: Երբեք:

Ու անգամ հարցեր չէիր տալիս, երբ հաջորդող օրերին հեռա-

նում էի ու երկար զբոսնում միայնակ: Իսկ երբ արցունքն աչքերիս վերադառնում էի, դու միշտ գիտեիր՝ արդյոք պետք է գրկել ու սփոփել ինձ, թե մենակ թողնել մտքերիս հետ: Չգիտեմ՝ որտեղից գիտեիր, բայց գիտեիր և ամեն ինչ անում էիր, որ ինձ համար ավելի հեշտ լինի: Հետո, երբ մենք գնացինք մեր տան մոտ գտնվող փոքրիկ եկեղեցին, փոխանակվեցինք մատանիներով և հավերժ միասին լինելու երդում տվեցինք, ես նայեցի աչքերիդ մեջ ու հասկացա, որ ճիշտ ընտրություն եմ կատարել: Ավելին, ինձ կատարյալ հիմար էի զգում, որ երբևէ մտածել եմ ուրիշ մեկի հետ կյանքս կապելու մասին:

Մենք հոյակապ կյանք ենք ապրել միասին: Շատ եմ մտածում այդ մասին հիմա: Երբեմն փակում եմ աչքերս ու տեսնում քեզ՝ ճերմակին տվող մազերով, ծածկապատշգամբում նստած՝ կիթառ նվագելիս, որի մեղեդու ներքո ցատկոտում ու ծափ են զարկում մեր փոքրիկները: Երկար աշխատանքից հետո հոգնել ես, իսկ հագուստդ՝ ճմռթվել ու կեղտոտվել: Ու թեև առաջարկում եմ գնալ ու հանգստանալ, միևնույն է, ժպտում ես ու ասում. «Հենց դա էլ անում եմ հիմա»: Ինձ դուր է գալիս՝ ինչպես ես սիրում մեր երեխաներին: Իսկ երբ նրանք քնում են, ասում եմ քեզ. «Ավելի լավ հայր չէի էլ երազի երեխաներիս համար»: Իսկ քիչ անց մենք սկսում ենք համբուրվել ու ազատվում ենք մեր հագուստներից՝ կորցնելով գլուխներս ու չհասկանալով՝ ինչպես հայտնվեցինք անկողնում:

Ես քո մեջ շատ բան եմ սիրում, հատկապես ներսումդ այրվող կրակն այն ամենի համար, ինչ իսկապես կարևոր է կյանքում. սերը, պոեզիան, երեխաները, ընկերությունը, գեղեցիկն ու բնությունը: Եվ այնքան ուրախ եմ, որ այդ ամենը փոխանցում ես մեր երեխաներին՝ պատրաստելով նրանց ավելի լավ կյանքի: Նրանք միշտ նշում են՝ որքան յուրահատուկ ես դու իրենց համար, և նման պահերին ես ինձ զգում եմ աշխարհի ամենաերջանիկ կինը:

Դու ինձ էլ ես սովորեցրել նկատել ու գնահատել գեղեցիկը, ոգեշնչման աղբյուր ես եղել ինձ համար, աջակցել իսկական նկարիչ դառնալուս ճանապարհին: Երբեք չես կարող պատկերացնել՝ որքան մեծ նշանակություն է ունեցել դա ինձ համար: Իմ ստեղծագործություններն այժմ զարդարում են թանգարանների պատերը և անհատական հավաքածուները, ու թեև եղել են ժամանակներ, երբ հուսալքված ու շփոթված եմ ինձ զգացել քննադատների կարծիքներին բախվելիս, միշտ կողքիս ես եղել ու ճիշտ բառեր գտել ինձ գոտեպնդելու համար: Դու հասկացար նաև, որ ինձ սեփական արվեստանոց է հարկավոր, որտեղ կարող եմ ինքս ինձ հետ մենակ մնալ: Եվ երբեք ուշադրություն չէիր դարձնում հագուստիս, մազերիս, երբեմն էլ կահույքի վրայի ներկի հետքերին: Գիտեմ, որ հեշտ չէր: Իսկական տղամարդը միայն կարող է հանդուրժել այդ ամենը: Իսկ դու հանդուրժում ես, արդեն քառասունհինգ տարի: Քառասունհինգ սքանչելի տարի:

Դու և՛ ընկեր ես ինձ համար, և՛ սիրեցյալ, ու ես չգիտեմ՝ ինչն եմ առավել արժևորում քո մեջ: Թերևս երկուսն էլ, ինչպես արժևորում եմ մեր միասին ապրած կյանքը: Քո մեջ կա մի բան, որ դարձնում է քեզ հմայիչ ու ուժեղ բոլորի աչքում: Բարությունը, Նո՛յ: Ահա թե ինչ եմ տեսնում ես, երբ նայում եմ քեզ: Ահա թե ինչ են տեսնում բոլորը: Բարություն: Դու ամենաներողամիտ ու խաղաղասեր մարդն ես աշխարհիս երեսին: Ասփված երբեք մենակ չի թողնի քեզ: Այլ կերպ չի կարող լինել, որովհետև դու հրեշտակ ես, որ կաս:

Գիտեմ՝ ինձ խենթ էիր համարում, երբ տնից վերջնականապես հեռանալուց առաջ ստիպեցի, որ գրի առնենք մեր պատմությունը, բայց ես իմ պատճառներն ունեի և շնորհակալ եմ քեզ այդչափ համբերատար լինելուդ համար, թեև այդպես էլ չստացար պատասխանն այն հարցի, թե ինչիս էր պետք այդ ամենը: Բայց հիմա ժամանակն է, որ իմանաս:

Մենք սքանչելի կյանք ենք ապրել միասին, որ բոլորին չի բախտ վիճակվում: Բայց, միևնույն է, երբ նայում եմ քեզ, սարսափում եմ այն մտքից, որ շուտով մեր երջանկությանն էլ վերջ կգա: Երկուսս էլ գիտենք իմ հիվանդության մասին, և ինչ է սպասում մեզ: Տեսնում եմ արցունքներդ ու ավելի շատ քեզ համար է սիրտս ցավում, քան ինձ, որովհետև գիտեմ՝ ինչ ցավի միջով ես ստիպված լինելու անցնել: Չգիտեմ՝ ինչ բառերով արտահայտեմ սիրտս մաշող կսկիծը:

Իմ սերն այնքան մեծ է, որ հնարավոր չէ այն չափել, և չնայած այս անիծյալ հիվանդությանը՝ ես ճանապարհ կգտնեմ քեզ մոտ վերադառնալու համար. խոստանում եմ, սիրելի՛ս: Ահա թե ինչի համար էի ուզում՝ գրի առնենք մեր պատմությունը: Երբ ես կկորցնեմ ինքս ինձ ու միայնակ կզգամ, կարդա՛ այն ինձ համար, ինչպես պատմում էիր մեր երեխաներին: Եվ իմացի՛ր, որ ինչ-որ հրաշքով ես կհասկանամ, որ այն հենց մեր պատմությունն է: Եվ գուցե, այո, գուցե կգա մի պահ, որ մենք նորից միասին կլինենք:

Խնդրում եմ, չբարկանաս ինձ վրա այն օրերին, երբ չհիշեմ քեզ: Երկուսս էլ գիտենք, նման օրեր գալու են: Իմացի՛ր, որ սիրում եմ քեզ ու միշտ կսիրեմ: Եվ ինչ էլ պատահի, չմոռանաս, որ քեզ հետ ես ամենաերջանիկ կինն եմ եղել:

Ամեն անգամ այս նամակը կարդալիս մտածի՛ր, որ ես գրում եմ քեզ հենց հիմա: Հավատա՛ ինձ, Նո՛յ, որտեղ էլ լինես, և ինչ էլ պատահի մեզ, ես սիրում եմ քեզ: Սիրում եմ քեզ և՛ այնժամ, երբ գրում եմ քեզ, և՛ այնժամ, երբ կարդում ես իմ նամակը: Ների՛ր ինձ, եթե ինքս չկարողանամ ասել քեզ այդ մասին: Սիրում եմ քեզ անսահման, իմ սիրելի՛ ամուսին: Դու եղել ես և միշտ կլինես իմ անուրջը:

Էլլի

Նամակը կարդալուց հետո մի կողմ եմ դնում այն: Վեր եմ կենում գրասեղանի մոտից և հողաթափերիս հետևից գնում մահ-

ճակալիս մոտ: Պետք է նստեմ դրանք հագնելու համար: Հագնում եմ, այնուհետև կանգնում ու գնում դեպի դուռը: Զգուշորեն գլուխս դուրս եմ հանում, որ տեսնեմ՝ ով կա միջանցքում: Ջենիսն է այսօր հերթապահում: Համենայն դեպս, ինձ թվում է, որ Ջենիսին տեսա: Ստիպված եմ նրա սեղանի մոտով անցնել Էլլիի սենյակ գնալու համար, բայց այս ժամին արգելված է սենյակներից դուրս գալը: Իսկ Ջենիսը երբեք աչք չի փակի կանոնները խախտելու վրա: Նրա ամուսինն իրավապաշտպան է:

Սպասում եմ. գուցե նա հեռանա: Սակայն նա կարծես թե չի ուզում շարժվել տեղից: Համբերությունս սպառվում է: Դուրս եմ գալիս սենյակից ու քարշ տալիս ինձ աջ ոտքիս հետևից: Մի ողջ կյանք է պետք բուժքրոջ սեղանին հասնելու համար, բայց ինչ-որ հրաշքով նա չի նկատում՝ ինչպես եմ մոտենում:

Ասես անձայն հովազ լինեմ, որ գաղտագողի առաջ է ընթանում ջունգլիներով: Ես նույնքան անտեսանելի եմ, որքան աղավնու ձագերն իրենց բնում:

Ի վերջո, սակայն, բուժքույրն ինձ նկատում է: Զարմանալի չէ: Չէ՞ որ ես արդեն կանգնած եմ նրա դիմաց:

- Նո՛յ,- ասում է նա,- ի՞նչ եք անում այստեղ:

- Զբոսնում եմ,- պատասխանում եմ,- չեմ կարողանում քնել:

- Ախր գիտեք, որ արգելված է:

- Գիտեմ:

Բայց տեղիցս չեմ շարժվում: Վճռական եմ տրամադրված:

- Իրականում զբոսանքի չեք դուրս եկել, այնպես չէ՞: Էլլիին այցելելու եք գնում:

- Այո,- պատասխանում եմ:

- Նո՛յ, ախր գիտեք՝ ինչ պատահեց նախորդ անգամ, երբ այցելեցիք նրան գիշերը:

- Հիշում եմ:

- Ուրեմն՝ պետք է հասկանաք, որ չպետք է նման բան անեք:

- Կարոտել եմ նրան,- ասում եմ՝ փորձելով փախչել պատասխանից:

- Գիտեմ, բայց չեմ կարող թույլ տալ՝ այցելեք նրան:

- Այսօր մեր ամուսնության քառասունիններորդ տարեդարձն է,- փորձում եմ համոզել նրան:

Ես չեմ ստում. մեկ տարուց մեր ոսկե հարսանիքը կլինի:

- Հասկանալի է:

- Ուրեմն՝ կարող եմ գնա՞լ:

Բուժքույր Ջենիսն ինձ չի նայում, իսկ երբ սկսում է խոսել, նրա ձայնն անսովոր կերպով ավելի մեղմ է հնչում: Ես զարմացած եմ, քանի որ նա երբեք զգացմունքային կնոջ տպավորություն չի թողել ինձ վրա:

- Նո՛յ: Արդեն հինգ տարի է՝ ինչ աշխատում եմ այս խնամքի տանը, իսկ դրանից առաջ մեկ այլ նման կենտրոնում եմ աշխատել: Հարյուրավոր զույգերի եմ հանդիպել, որոնք պայքարում էին վշտի ու հուսահատության դեմ, բայց Ձեր և Էլլիի դեպքն այլ է: Ոչ ոք այստեղ՝ ոչ բժիշկները, ոչ էլ բուժքույրերը, երբեք չեն բախվել նման բանի,- նա մի պահ լռում է, և որքան էլ տարօրինակ լիներ ինձ համար, նրա աչքերն արցունքով են լցվում. նա մատներով սրբում է դրանք ու շարունակում.- Ես չեմ էլ կարողանում պատկերացնել՝ ինչպես եք կարողանում հաղթահարել ձեզ բաժին հասած դժվարություններն ու ամեն օր տոգորվում նոր հույսով: Ես չգիտեմ՝ ինչպես է դա ձեզ հաջողվում: Ձեզ անգամ հաջողվում է նրա հիվանդությանը երբեմն հաղթել: Մինչ բժիշկները գլուխ են կոտրում հասկանալու համար՝ ինչ հրաշքով եք դուք դա անում, մենք՝ բուժքույրերս, գիտենք, որ սերն է այդ հրաշքը: Սերը և վերջ. աշխարհի ամենապարզ բանն ու միաժամանակ անբացատրելի այդ զգացմունքը:

Փղձուկը խեղդում է կոկորդս: Կանգնել եմ պապանձված, զինաթափ:

- Բայց, Նոյ, ես չեմ կարող թույլ տալ Ձեզ այցելել Էլլիին: Այնպես որ, խնդրում եմ՝ Ձեր սենյակ վերադառնաք,- այնուհետև մեղմ ժպիտը դեմքին՝ նա փորփրում է սեղանի վրայի փաստաթղթերն ու ավելացնում,- իսկ ես իջնում եմ սուրճ պատրաստելու: Խնդրում եմ՝ այդ ընթացքում հիմարություններ չանեք:

Նա վեր է կենում տեղից, քնքշորեն սեղմում ձեռքս և ուղղվում դեպի սանդուղքը՝ առանց հետ նայելու: Հանկարծ մնում եմ մենակ: Չգիտեմ ինչ մտածել: Նայում եմ սեղանին և տեսնում սուրճով լի բաժակը, որի վրայից դեռ գոլորշի է բարձրանում, ու ևս մեկ անգամ երախտագիտությամբ նկատում, որ աշխարհը զուրկ չէ լավ մարդկանցից:

Վերջին տարիներին առաջին անգամ մարմնումս ջերմություն եմ զգում, երբ ուղղվում եմ դեպի Էլլիի սենյակ: Կրիայի քայլերով եմ առաջ շարժվում, բայց, միևնույն է, ոտքերս արդեն հոգնել են: Ստիպված եմ հենվել պատին, որ չընկնեմ: Գլխավերևումս գվվում են լամպերը: Անբնական լույսից աչքերս ցավում են, ու ես անընդհատ կկոցում եմ դրանք: Անցնում եմ տասնյակ մութ սենյակների կողքով, սենյակներ, որոնց բնակիչների համար կարդում էի մի ժամանակ: Նրանք իմ ընկերներն են, որոնց դեմքերը շատ լավ եմ ճանաչում: Ուրախ եմ, որ նորից եմ տեսնելու նրանց: Բայց վաղը, ոչ այսօր, որովհետև ժամանակ չկա կանգ առնելու: Ես առաջ եմ ընթանում, և շարժումն արյունով է լցնում լքված զարկերակներս: Ամեն քայլի հետ ինձ ավելի ուժեղ եմ զգում: Թիկունքումս դռան բացվելու ձայն եմ լսում, բայց ոտնաձայներ չկան, ուստի շարունակում եմ ճանապարհս: Ես տարագիր եմ այժմ, և ինձ կանգնեցնել չի լինի: Քույրերի սենյակից զանգի ձայն է լսվում, և ես առաջ եմ նետվում, որ ոչ ոք ինձ չնկատի: Դեղին լուսինն է իմ ընկերը: Ես կեսգիշերային ելուզակ եմ, հուսաբեկ հեծյալ, որ ծպտված փախչում է քուն մտած դատարկ քաղաքներից՝ թամբին ամրացրած տանելով

մի պարկ ոսկե փոշի: Ես երիտասարդ եմ ու ավյունով լի, ինձ համար դժվար չէ մի զարկով տապալել դուռն ու ձեռքերիս մեջ առնելով նրան՝ տանել հեռու՝ դրախտային մի անկյուն:

Ո՞ւմ եմ ես խաբում:

Ոչ մի հեծյալ էլ չեմ: Հիմար ծերուկ եմ՝ ընդմիշտ հավատարիմ իմ սիրուն, անհույս անրջող ու երազում եմ միայն կարդալ Էլլիի համար ու գրկել նրան, երբ բախտ ունենամ: Ես մեղսավոր եմ՝ անթիվ սխալներով, որ հավատում է հրաշքներին: Բայց ես չափազանց ծեր եմ փոխվելու համար ու չափազանց ծեր՝ այդ ամենով մտահոգվելու համար:

Երբ վերջապես հասնում եմ նրա սենյակին, մարմնումս անասելի թուլություն եմ զգում: Ոտքերս դողում են, աչքերս պղտորվել են, իսկ սիրտս, թվում է, դուրս կթռչի կրծքիցս: Փորձում եմ սեղմել դռան բռնակը. հաջողվում է միայն երկու ձեռքով, այն էլ երրորդ փորձից: Դուռը բացվում է, և միջանցքի լույսը լցվում է սենյակ՝ լուսավորելով մահճակալը, որի վրա քնած է նա: Նայում եմ Էլլիին ու հասկանում, որ ես նրա համար ընդամենը պատահական անցորդ եմ լեփ-լեցուն քաղաքում. հանդիպեցիր ու անմիջապես էլ մոռացար:

Սենյակում լուռ է: Էլլին քնած է՝ կիսով չափ վերմակը մի կողմ քաշած: Նա շրջվում է կողքի, և մահճակալի ճռճռոցը երջանիկ հիշողություններ է արթնացնում: Նա այնքան փոքր է երևում իր անկողնում: Նայում եմ նրան և հասկանում, որ մեր միջև ամեն ինչ վերջացած է արդեն: Օդը հեղձուցիչ է: Դողում եմ: Այս վայրը մեր գերեզմանն է դարձել:

Մեր ամուսնության տարեդարձն է, տենչում եմ կիսել նրա հետ կարոտս, բայց անշարժ եմ ու լուռ. չեմ ուզում արթնացնել նրան: Բացի դրանից էլ՝ ամեն ինչ թղթի հերթական պատառիկի վրա եմ գրել, որը կթողնեմ նրա բարձի տակ: Ինչ եմ գրել: Ահա.

Սերն այնքան քաղցր է ու մաքուր
Վերջալույսի այս ժամին,
Մնա՛ ինձ հետ, ձեռքդ տուր,
Նորից ապրենք լույսից անդին:

Միջանցքից ոտնաձայներ են հասնում ականջիս: Ես արագ մտնում եմ սենյակ ու փակում դուռը իմ հետևից: Թանձրացած մթության մեջ ապավինելով հիշողությանս՝ հասնում եմ պատուհանին: Մի կողմ եմ տանում վարագույրը: Գիշերվա պահապանը՝ ահռելի լիալուսինը, ինձ է նայում: Դառնում եմ Էլլիին ու նորից անուրջներով տարվում: Ու թեև գիտեմ, որ սխալ է, բայց նստում եմ նրա անկողնու վրա ու երկտողը խցկում նրա բարձի տակ: Ապա քնքշորեն հպվում եմ մետաքսի պես նուրբ դեմքին, շոյում եմ վարսերը, ու շունչս կտրվում է. որքան գեղեցիկ է նա, Աստվա՛ծ իմ: Ես ինձ զգում եմ ինչպես մի երաժիշտ, որ առաջին անգամ է իր համար բացահայտում Մոցարտի երաժշտությունը: Էլլին արթնանում է: Բացում է աչքերն ու թեթև կկոցում: Իսկույն զղջում եմ այդքան հիմար գտնվելուս համար, որովհետև գիտեմ՝ նա շուտով կսկսի հեկեկալ ու բղավել, ինչպես ամեն անգամ, երբ արթնանում է գիշերով: Որքա՛ն թուլակամ եմ ու անհամբեր, գիտեմ, բայց, միևնույն է, ուզում եմ անհնարինն անել, և խոնարհվում եմ նրա վրա՝ դեմքս մոտեցնելով նրա դեմքին:

Ու երբ շուրթերս հանդիպում են նրա շուրթերին, անծանոթ սարսուռ եմ զգում, որ նախկինում երբեք չեմ զգացել, բայց կանգ չեմ առնում: Ու հանկարծ, հրա՛շք. զգում եմ՝ ինչպես են շարժվում նրա շուրթերը, ու ես կրկին հայտնվում եմ դրախտում, անփոփոխ ու հարատև, ինչպես աստղերը: Զգում եմ նրա մարմնի ջերմությունը, ու երբ նա պատասխանում է համբույրիս, ես թույլ եմ տալիս

ինձ դուրս գալ ջրի վրա զբոսանքի, ինչպես տարիներ առաջ: Փակում եմ աչքերս ու դառնում եմ ամուր առագաստանավ, որ կռիվ է տալիս փոթորկվող ալիքների հետ, ուժեղ ու անվախ, իսկ Էլլին իմ առագաստն է, որ պաշտպանում է աննկուն քամուց: Ես քնքշությամբ շոյում եմ նրա դեմքի ուրվագիծը, ապա բռնում ձեռքը: Համբուրում եմ շուրթերը, այտերը ու ականջ դնում շնչառությանը:

- Ա՛հ, Նո՛յ...- շշնջում է նա,- որքա՜ն էի կարոտել:

Հերթական հրաշքը... ամենաանհավանականը բոլորից: Արցունքներս զսպել անկարող եմ: Ինձ թվում է՝ մենք արդեն դրախտում ենք, որովհետև Էլլիի մատները սկսում են սահել կրծքիս վրայով, և նա դանդաղ մեկ առ մեկ արձակում է վերնաշապիկիս կոճակները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրաշքներ 5
Անցյալի ուրվականները 10
Հին ծանոթների հանդիպումը 40
Անպատասխան զանգեր 81
Նավակն ու մոռացված երազանքները 87
Ալիքվող ջուրը 98
Կարապներ, ամպրոպ ու էլի ամպրոպ 108
Խնդրանք դատավորին 128
Անսպասելի հյուր 130
Ճամփաբաժան 136
Նամակ անցյալից 142
Ձմեռ երկուսի համար 147

Նիկոլաս Սպարքս

Nicholas Sparks

ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

THE NOTEBOOK

թվագրված է 1915-ին հոգեկան կայքի

Անգլերենից թարգմանեց Տաթևիկ Թումանյանը
Խմբագիր-սրբագրիչ՝ Մարգարիտ Արիստակեսյան
Համակարգչային ձևավորումը՝ Լիանա Մինասյանի
Կազմի ձևավորումը՝ Արաբո Սարգսյանի

EDIT PRINT
43 D.Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am